

Սյունյաց երկիր մշակութային

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

№13, 30 ՄԱՐՏԻ 2024Թ.



Եվ նորից թափառ մի ցեղ
Մեզ մեզնից իլել է ուզում,
Մեր ազնիվ արյունը տար
Թեյի տեղ իմել է ուզում:
Մեր արտը դարձնել արոտ,
Մեր վիզը ծռել է ուզում...

Հրաչյա Աբովյան

...Ինքը
Հայաստանն էր

ISSN 2738-2540
2100.1 >
9 772738 254000



Ապրիլի 14-ը բանաստեղծական անզուգական խոսքի խորախորհուրդ վարպետ Զամո Սահյանի ծննդյան օրն է

Զամո Սահյանի հուշարձանը Սիսիանում (բացումը՝ 17 ապրիլի 2004 թ.): Զանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան:



Երկաթ, բետոն, քար, ծեփում, հեղինակ՝ Գետիկ Բաղդասարյան



ՀՈՒՆՐՁԱՆԻ ՄԱՆՐԱԿԵՐՏԸ. պահվում է Լորի միջնակարգ դպրոցում, հեղինակ՝ Գետիկ Բաղդասարյան



ԴԻՍԱՔԱՆՂԱԿ. հեղինակ Սուրեն Նազարյան, բանաստեղծի Նորաստեղծ տուն-թանգարանին է նվիրել Կիմ Հովհաննիսյանի ընտանիքը



Քանդակի հեղինակ՝ Հարություն Հալիկյան




Քանդակի հեղինակ՝ Տիգրան Մուրադյան

**ԿԵՐՊԱՐՎԵՍ
ԵՎ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ
ԱՐՎԵՍ**



**ՓԱՐԱՎՈՆ
ՄԻՐՉՈՅԱՆ**

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ
ԴԻՄԱՆԿԱՐԸ (2002)



Այս աշխատանքն առան-
ձնահատուկ է նրանով,
որ նկարիչը բացառիկ
կերպով կտավին է
հաղորդել ոչ թե իր, այլ
բնորոշի ներաշխարհն ու
Եներգետիկան՝ ի ցույց
դնելով նրա էությունն ու
նույնիսկ մտածումները:
Պատկերասրահում
ներկայացված են բազ-
մաթիվ դիմանկարներ,
սակայն հենց այս կտավն
առանձնանում է իր արտա-
հայտչական լուծումներով:
Նկարը ցուցադրված
է Համո Սահյանի
ծննդավայրում՝ ՀԱԴԻ-ի
Սիսիանի մասնաճյուղում:




**ԳԵՏԻԿ
ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**

Հուշատախտակ՝
Երևանի Կասյան
3 հասցեի շենքի
պատին



**ՌՈՒԲԵՐՏ
ԿԱՄՈՅԱՆ**

Հ. Սահյանի
դիմանկարը,
կտավ, յուղաներկ,
85 X 83, 2011թ.



ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՍԵՐՆԵ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սահյանի համար Սյունիքն է «աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր դիտակետը» (Սամվել Ալեքսանյան) 8

Կերպարվեստ և մոնումենտալ արվեստ 2

Համարի ֆոտոալբոմը 4, 17, 18, 32, 33, 124, 125, 126

Համո Սահյան. կենսագրության էջեր (հատված Դավիթ Գասպարյանի «Համո Սահյան. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունից) 12

ՀԱՅ ՈՉՈՒՆ ՈՐԴԵՎԻՑ ԳՄՐՁԱԾ ՍԱՀՅԱՆԱԿԱՆ ՊՈՒՅՑԻՄԱՆ

Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուների (հայերեն և ռուսերեն) ցանկը 19

«Հայաստանը երգերի մեջ» 20

«Մայրամուտից առաջ» 21

«Քարափների երգը» 22

«Սեզամ բացվիր» 23

«Իրիկնահաց» 24

«Կանաչ-կարմիր աշուն» 25

«Դաղձի ծաղիկ» 26

«Ինձ բացակա չղնեք» 27

Հայրեններ 28

Քառյակներ 29


ԴԱՏԵԽՆԻՈՆԱԳՐՈՒՄ



**Համարի
աջակիցը և
հովանավորը**

«Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսը տպագրվում է 2021 թվականից՝ ՀՀ ԿԳՄՍ Նախարարության աջակցությամբ: Հանդեսի սույն համարը տպագրվում է «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության հովանավորությամբ, որի համար երախտագիտություն ենք հայտնում ընկերության գլխավոր տնօրեն **Սասուն Սլավիկի Ավետիսյանին:**

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Համո Սահյանի մասին

Հատվածներ Հրանտ Մաթևոսյանի հոդվածներից

46

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Արցախը՝ Համո Սահյանի հոգում և պոեզիայում

Հարիստ Սառաջյան

79

**Սյունյաց երկիր
մշակութային**

📍 3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
☎ (+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

ՀԻՆԱՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻԶ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2021Թ. ՄԱՐՏԻ 30-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՁԱՆՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

Հղումը «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականին պարտադիր է: Հրատարակվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 16 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 20.03.2024թ.:

📧 syuniacyerkir@mail.ru
🌐 www.syuniacyerkir.am

ՀԱՍՈՒՄԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎԵՐԱԾՎԱԾ ԵՐԳԻ



Տիգրան Մանսուրյանի և Համո Սահյանի երկխոսությունը

■ Զրույցը՝ Զովհաննես Այվազյանի

96

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Արքմենիկ Նիկողոսյան. «Սահյանի պոեզիան, իր՝ հատկապես քնարական, խոհափիլիսոփայական մասով, տեղով մեղեդի է»

■ Զարցագրույցը՝
Սամվել Ալեքսանյանի

100

Տրիպլետներ..... 30
Թարգմանություններ (Արսենի Տարկովսկի,
Ալեքսանդր Պուշկին, Լև Օզերով)..... 31

ՀՈԳԵՎՈՐ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Համո Սահյան. «Ես ինձ համարում եմ բուն
ժողովրդական և ոգեղեն գծի մեջտեղի
բանաստեղծը»..... 34
Արևը բարձրանում է սարից (Համո Սահյան)..... 35

ՍՅՈՒՆՅԱՅ ԱԵՒՄՐԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐԸ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուխտասար..... 37
Դարբասի ձոր..... 38
Աղոթարան (Սալվարդ)..... 39
Գյազբել, Արամազդ..... 40
Որոտնավանք, Որոտնաբերդ..... 41
Մեծ Իշխանասար և Իշխանա լիճ..... 42
Տատնա կիրճ..... 43
Որոտան, Որոտանի կիրճ..... 44
Չորաց քարեր, Շաբեի ջրվեժ..... 45

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյանի մասին (հատվածներ Հրանտ
Մաթևոսյանի հոդվածներից)..... 46

Քարե պատարագ (Դավիթ Գասպարյան)..... 49
Հայ մեծ բանաստեղծի զարմանահորաշ տեսակը
(Տիգրան Գրիգորյան)..... 53

Մորուս Հասարթյանը և ազգային ճակատագիրը
Համո Սահյանի վերջին ժողովածուում
(Ալեխտա Դուրխանյան)..... 54

Համո Սահյան. նախնականի և հավիտենականի
սահմանին (Լիլիթ Սեյրանյան)..... 56

Համո Սահյանին նվիրված հուշագրության
լեզվական հիմքերը (Աշոտ Գալստյան)..... 61

Համո Սահյան՝ 100 և 10 տարի
(Նաիրա Խաչատրյան)..... 62

Հայրենի տունը և հարազատները Համո Սահյանի
պոեզիայում (Սեյրան Գրիգորյան)..... 65

Տազնապետի անընդհանրությունը
(Ֆելիքս Բախչիյան)..... 67

Նորահայտ դրվագներ Համո Սահյանի և Սիմոն
Սիմոնյանի լիբանանյան առնչություններից
(Թեմիկա Մարության)..... 68

ԻՆՔՆ ԱՊՐՈՍ ԷՐ ԱՐԳԱՆՈՎ, ԻՍԿ ԱՐԳԱՆՑԻՆ ԻՐԵՆ ԳՈՐԱՅԱԾ ԷՐ

ԳՈՍՄ ՍԱՀՅԱՆՈՎ

Մի Սահյան կա աշխարհում (Վարդան Հակոբյան) 74
Մտքիցս չէն գնում Դարաբաղում ընկած մեր եղ
տղաները (Խոսում է Համո Սահյանը՝

ըստ Հարություն Յովնաթանի)..... 77

Արցախը՝ Համո Սահյանի հոգում և պոեզիայում
(Չարինե Սառաջյան) 79

Մենք ապրելու ենք... (Նաիրա Խաչատրյան) 81

«Գերված աղբյուր Գյուլիստանի, //
Քո կարոտը մարդ կսպանի»..... 83

ՆԱՍՏԱՎԱՆԻ

Ռուբեն Չարյանի նամակը Համո Սահյանին 84

Սերո Խանգաղյանի նամակը Համո Սահյանին..... 84

Գուրգեն Մահարու նամակը և Համո Սահյանի
պատասխանը..... 84

Նամակ Համո Սահյանին (Լև Օգերով) 86

ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԵՏ

Համո Սահյան. «Գլխավորը Շուշիի ազատագրումն է»
(Հարցազրույցը՝ Չորի Բալայանի)..... 89

Համո Սահյան. «... Չորյանն ինձ համար այնպիսի
հեղինակություն է, նա մեծ գրող է, եվրոպական
մասշտաբի» (Հարցազրույցը՝
Կարինե Ռաֆայելյանի) 91

Միակ իրականը հոգեկան անկախությունն է
(Հատված Պետրոս Դեմիրճյանի հարցազրույցից). 94

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎԵՐԱԾՎԱԾ ԵՐԳԻ

Տիգրան Մանսուրյանի և Համո Սահյանի
երկխոսությունը (Չրույցը՝ Յովհաննես Այվազյանի)96

«Մայրամուտի երգեր» վոկալ շարքը..... 99

Արքմենիկ Նիկողոսյան. «Սահյանի պոեզիան,
իր՝ հատկապես քնարական, խոհափիլիսոփայական
մասով, տեղով մեղեդի է»
(Հարցազրույցը՝ Սամվել Ալեքսանյանի)100

Երգեր Համո Սահյանի բանաստեղծությունների
հիման վրա (Սատուն Պասկեփյան).....103

Երգիչներ, ովքեր կատարել, կատարում են
Համո Սահյանի բանաստեղծությունների
տեքստերով երգեր104

ՀՈԳՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՄԱՐԻՆ

Հարցազրույց Գետիկ Բաղդասարյանի հետ
(Սամվել Ալեքսանյան)105

Հարցազրույց Համո Սահյանի ավագ որդու՝
Նաիրի Սահյանի հետ (Սամվել Ալեքսանյան).....108

Խոնարհում և երկրպագություն այն հողին, որը
հանճարեղ զավակ է պարզևել ազգին
(Եվելինա Թաղևոսյան).....110

Մամուլներում... չկորան արահետ ու անուն
(Յովհաննես Պապիկյան).....112

Համո Սահյանն իմ հուշերում (Սոկրատ Խանյան) 113

«ԻՆՑ ՎԿԻՇԵՆ ԱՄԵՆ ԱՆՉԱՍ ՕՐԸ ԲԱՅՎԵԼԻՄ»

Լորը՝ «... Իմ կանաչ Լորը, // Իմ փառավորը, իմ

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**Մտքիցս չեն գնում
Ղարաբաղում ընկած մեր Էդ
տղաները**

Խոսում է Համո Սահյանը՝
ըստ Հարություն Յովնաթանի

77

բախտավորը» (Աննա Ալեքսանյան)114

Համո Սահյանը 1971 թ. հոկտեմբերի 27-ին
Գորիսի գավառագիտական թանգարանին նվիրեց
բանաստեղծությունների ձեռագրեր.
դրանց մի մասը՝ ստորև116

Համո Սահյանի բանաստեղծական գլուխգործոց
«Պապի» հերոսը՝ բրոնզաձույլ արձանի տեքստը
(Սամվել Ալեքսանյան)118

«Սյունյաց երկրի» հատուկ համարը՝
նվիրված բանաստեղծի 90-ամյակին121

«Սյունյաց երկրի» հատուկ համարը՝
նվիրված բանաստեղծի 100-ամյակին122

Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում
կանգնեցվեց Համո Սահյանի կիսանդրին123

Օրինյալ եգեթ (բանաստեղծի ծննդավայրը).....127

...Բարի աչքով նայես, Աստված, //
Իմ այս մի բուռ Հայաստանին (Համո Սահյանի
բանաստեղծությունը՝ «Անունդ տալիս»)128

ԳՐԱՅԻՆ

Սահյանի համար Սյունիքն է «աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր դիտակետը»

Համո Սահյանին «Սյունյաց երկրի» հատուկ համար ենք նվիրել բանաստեղծի 90 և 100-ամյակների առիթով: Եվ թվում էր, թե լրագրային ձևաչափով այլևս ասելիք չունենք, բայց...



...Սահյանը երբեք այսքան մոտ չի եղել մեզ, նա բացառիկ ճշգրտությամբ է կատարել հայ մարդու հոգու թարգմանի աստվածատուր իր դերը... Ու հիմա նրա տաճարը մտնելու կարիք ունենք:



ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ժամանակի ընթացքում համոզվեցինք՝ Սահյանի պոեզիան, նրա գրական ճանապարհը նորովի իմաստավորման կարիք ունի. հայոց հայրենիք Արցախ ենք կորցրել, արցախահայությունն է հայրենագուրկ դարձել, մեր հայրենական տուն Սյունիքն է անդամահատվել և (ինչ-որ առումով) անորոշության մեջ հայտնվել, մեր ազգային արժեքներն են փորձության առաջ կանգնել, հազարավոր մեր տղաներն են սահառակությամբ հայրենիքի զոհասեղան բարձրացել, հայոց պետականությունն է ավերախումբների մեջ հայտնվել...

Եվ առերեսվեցինք իրականության հետ՝ Սահյանը երբեք այսքան մոտ չի եղել մեզ, նա բացառիկ ճշգրտությամբ է կատարել հայ մարդու հոգու թարգմանի աստվածատուր իր դերը... Ու հիմա նրա տաճարը մտնելու կարիք ունենք:

Սյուն կողմից՝ հայագիտության ոլորտում իրականացվող տարակուսելի քաղաքականությունն իր անդրադարձներն է ունեցել և ունենում նաև գրականագիտության վրա: Ուստի և՛ հանդեսի սույն համարով փորձում ենք ևս մեկ ու յուրօրինակ արահետ բացել դեպի Սահյանի պոետական աշխարհ:

Սահյանը մեր նորագույն պոեզիայի

առանցքային երևույթներից է: Սփյուռքահայ գրականագետ Պողոս Սևապյանը, օրինակ, այսպես է բնութագրում Սահյանի տեղը հայոց բանարվեստում. **«Մեր մեջ, Հարենցեն ետք, գրելու արարքը գրականության վերածած ամենն հետաքրքրական բանաստեղծը եղաւ ու կը մնայ Համօ Սահեան»:**

Սահյանի պոեզիայի գեղագիտական ու ճանաչողական նշանակությանը վերստին ծանոթանում ենք հայ արձակի նշանավոր վարպետ Հրանտ Մաթևոսյանի հոդվածների, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Գասպարյանի նոր մենագրության, Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի խոսքի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՀԽՅ-ի հայոց հին և միջնադարյան գրականության ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Անիտա Դուրյանյանի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Սեյրանյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանի, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նախորդ տարիների, ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեյրան Գրիգորյանի, գրականագետ Ֆելիքս Բախչիկյանի հոդվածների օգնությամբ:

Սահյանը խղճի բանաստեղծ է... Նրա պոեզիան, մանավանդ այսօր, ինքներս մեզ հետ հանդիպելու, ինքներս մեզ հետ առերեսվելու ամենաճիշտ տեղն է:

Նրա պոեզիան հայի մեր վարքն ազգային մեր արժեհամակարգի համապատկերի վրա դիտարկելու ճշգրիտ կշեռքն է:

Եվ ընդհանրապես՝ Սահյանի գրական ժառանգության մեջ քաղաքացիական պոեզիան մեծ տեղ ունի, որի դրսևորումներին հանդիպում ենք գրեթե բոլոր ժողովածուներում:

Սակայն քաղաքացիական պոեզիան, առավել խտացված և նորովի, տեսնում ենք բանաստեղծական վերջին ժողովածուում՝ «Ինձ բացակա չղնեք»։ Արցախում ազգային ազատագրական պատերազմ էր, Խորհրդային Միության փլուզման հետ փորձության էր ենթարկվում դարերով ձևավորված մեր ազգային արժեհամակարգը...

Ժողովածուին անդրադառնում են Դավիթ Գասպարյանը, Աելիտա Դուրխանյանը, Նաիրա Խաչատրյանը...

* * *

«Հայ ոգուն ուղեկից դարձած սահյանական պոեզիան» բաժնում վերստին անդրադառնում ենք բանաստեղծի գրական ժառանգությանը:

Նախ ներկայացնում ենք Սահյանի բանաստեղծական ժողովածուների (հայերեն և ռուսերեն) ցանկը:

Այնուհետև՝ բանաստեղծական հիմնական ժողովածուներից յուրաքանչյուրին տրամադրում ենք հանդեսի մեկական էջ՝ այդպես ընթերցողին հիշեցնելով ժողովածուի անունը, ծավալը, տպագրության ժամկետը: Այսպես՝ «Հայաստանը երգերի մեջ», «Մայրամուտից առաջ», «Քարափների երգը», «Սեզամ բացվիր», «Իրիկնահաց», «Կանաչ-կարմիր աշուն», «Դաղձի ծաղիկ» և «Ինձ բացակա չղնեք»:

Այնուհետև՝ մեկական էջի չափով ներկայացնում ենք պատահիկներ հայրեններից, քառյակներից, տրիոլետներից, թարգմանություններից:

* * *

Հայրենագրությունը, հայերգությունը, իբրև գլխավոր արյունատար անոթ, անցնում է Սահյանի ամբողջ պոեզիայի վիճակ: Նրա համար ավելի թանկ իրողություն, քան Հայաստանն է, չկա. Հայաստանն ասեմ, շիկնեմ ամռանից, Հրճվանքից հալվեմ և արցունք դառնամ,

Այդ պարզ արցունքով լվանամ հոգիս, Գարգռության խորհուրդ և ակունք դառնամ:

Միևնույն ժամանակ բանաստեղծը տեսնում է այն սպառնալիքները, որոնք ուղղված են Հայաստանի աշխարհի ու հայ ժողովրդի դեմ: Ուստի և զգուշացնում է մերօրյա վաչկատուններին ու Հայաստանի համար արդթե բարձրացնում առ Աստված:

Քար կկտրեք, թե քարով տաք Իմ քարակուռ Հայաստանին, Խղճի տաճար, խնկի խորան, Մեռնի գուռ Հայաստանին...

Վաչկատուններ դուք մերօրյա, Թող մոռ չգան իաշները ձեր Դեռ Էն գլխից դրախտավայր, Դրախտի դուռ Հայաստանին:

Չի կաչեյու մի բիծ անգամ Ձեր ստերի ունջ ու մրից Ձեռքը ճարտար, քրափնքն արդար, Միրտը մաքուր Հայաստանին:

Մի բիծ անգամ չի կաչեյու Ձեր նենգության կուտը ու ձյուրից Հոգու թոփչը, սրտի մորմոք Միրտ սարսուռ Հայաստանին:

Գտա՞ք մեկին, որ հավատար, Թե դեռ բրդե խանձարուրից Մատուցել էք բերդ ու ոստան, Վանք ու մատուռ Հայաստանին:

Իսանձարուր էլ դեռ չունեիք, Երբ ծանոթ էր աշխարհն արար Մեսրոպի լույս, Դևոնդի խաչ, Վարդանի թուր Հայաստանին:

Էլ ինչ մեյիք կհանդգնի Հրով, սրով ծնկի բերել Իմ Մասնա տուն, իմ Մասնա սար, Իմ Մասնա ծուռ Հայաստանին:

Շատ է տեսել արյուն ու ցավ, Ինչ կլինի այսուհետև Բարի աչքով նայես, Աստված, Իմ այս մի բուռ Հայաստանին:

* * *

Ապրում էր Արցախով, արցախցին էլ իրեն գորացած էր զգում Սահյանով. համարի մի ամբողջ բաժին այդ մասին է:

Երջանկահիշատակ Վարդան Հակոբյանի խոսքն է՝ տարիներ առաջ գրված՝ «Մի Սահյան կա աշխարհում» վերևագրով:

Չարինե Սառաջյանն էլ պատմում է, որ 2023-ի սեպտեմբերյան զուլուժի օրերին հասցրեց իր հետ վերցնել արցախյան մի բուռ հող, Նարեկացու «Մատյանը» և Սահյանի «Ինձ բացակա չղնեք» ժողովածուն: Ներքին համոզմունք ուներ՝ այդ նշխարները կպաշտպանեն

իրեն ու իր զավակներին, այդ նշխարների գործությամբ երբևէ կվերադառնան իրենց օջախ՝ հայոց Արցախ:

Թեման շարունակում է Նաիրա Խաչատրյանը...

«Ստեղծա չեն գնում Ղարաբաղում ընկած մեր էդ տղաները» վերնագրի ներքո բանաստեղծի խոհերն են Արցախի մասին (ըստ Հարություն Չովևաթանի): Եվ եզրակացություն՝ «Սենք ենք մեր օգնականները, մեր հույսը մեր ինքնապաշտպանությունն է»:

Ստահագություններ, իրավիճակից բխող տագնապներ՝ «Գուժեր են գալիս Ղարաբաղից», «Խուլ տնքոց եմ լսում հեռու Դեր-Չորից», «Եվ Նորից թափառ մի ցեղ/Մեզ մեզկից խել է ուզում»...

Այս տագնապի մեջ անգամ Սահյանը չի կորցնում հավատը վաղվա օրվա հանդեպ: Գյուլիստանի աղբյուրն է՝ կանչում ու չի հանգստանում՝ «- Աչքդ, ասեմ, ուր էլ գնաս, //Չեռվից կեռու պահիր վրաս»: «Աչքալուսանք Իտանք շուտով/Ես ցուրտ, իսկ դուք տաք շշուկով...»:

* * *

Սահյանը բանարվեստի իր տաճարը կառուցեց՝ հիմքում ունենալով Սյունիքը: Նրա համար պատմական Սյունիքն աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր և հուսալի դիտակետն է:

– Եթե նկատի ունեք պատմական Սյունիքը, ապա նա միակ և հիմնական ակունքն է, ինձ համար աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր և հուսալի դիտակետը: Նաև այն հավելյալ իրականությունը, որ պահպանել է իմ ինքնությունն այս խառն ու խրթին աշխարհում, - ասում է բանաստեղծը:

Մարդ-սարի գլխին վառվող խարույկ, Մարդ-սարի փեշից կախված մանուկ, Մարդ-սարերն ի վեր թռչող նոսրագ, Մարդ-սարի համար պերճանք ու փայլ,

Մարդ-սարի շողքից շիկնած եղբայր, Մարդ-սարի մեջքին կանգնած ընկեր, Մարդ-սարի համար թիկունք ու տեր, Մարդ-սարերն ի վեր թռիչք ու ջանք, Մարդ-սարի համար գլբեթ ու զանգ, Մարդ-սարերի սուրբ Աղոթարան, Մարդ-սարերից վեր Իշխանիկ Մեծ, Մարդ-Գյազրեյ, գլուխն աստղերի մեջ, Մարն-Արամազդ, Տատան, սարն՝ Արևիս...

Իսկապես, Սյունյաց աշխարհը նրա համար ոգեշնչման աղբյուր է, ստեղծագործելու ակունք, երգ ու տարերք, հայրենի տուն ու պատմություն:

Նրա գրչի տակ ժամանակների մեջ քնած դարերն են անգամ արթնանում, հավիտենությունից գաղթած և հավիտենությունը հաղթած սարերն են քնար դառնում, մեր եզերքի ամեն քար ու սրբավայր լե-





ԳՐԱՆՈՒՅԵՐ



զու ետ առնում, մասրենին է մեզ հետ գրույցի բռնվում:

Ավելին՝ Սահյանի պոեզիան մեզ դուրս է բերում հայրենաճանաչության մի նոր հանգրվան՝ Արամազդ-Գյազբեյից մինչև Աղոթարան ու Սավարո, Որոտանի կիրճից մինչև Տատնա կիրճ ու Դռնապանի ձոր, Լորագետից մինչև Չորգոր, Դարբասի ձորից մինչև Որոտնաբերդ ու Որոտնավանք, Շաբեի ջրվեժից մինչև Չորաց քարեր և Ուխտասար...

Եվ մեր կարոտն առ հայոց հայրենիք Արցախ, Մեծ Իշխանասար ու Մթնաձորի արևելյան խորքեր առնում ենք նաև Սահյանի պոեզիայի միջոցով:

Սյունիքը բանաստեղծի համար Ավետյաց երկիր էր: Եվ ուրեմն՝ «Մենք այստեղ պիտի ճախրենք ու մնանք, // Թե մահ կա, այստեղ պիտի մահանանք»:

Սյունիքի ավերակ յուրաքանչյուր բերդ ու տաճար մի-մի Յայաստան են նրա համար: Սյունյաց բարձրիկ կատարներն էլ նրան էին կարոտում, կանչում և բանաստեղծին նոր ուժ տալիս, Աստծու զուլալ արտասուքով իր վերքերը լվանալու, իր երգերը կատարների մեջ թաթախելու հնարավորություն տալիս: Ու խոստանում է՝ «Իմ սար ու ձորից ձեռք չեմ քաշելու...», ինչպես և եղավ:

Խոստովանում է՝ «ուր լինի, ինչ էլ դառնա»՝ Սյունյաց աշխարհի մատաղի գառն է:

*Ի՞նչ ասեմ, Սյունիք աշխարհ,
Հիշո՞ւմ ես դու հին հոտաղիդ,
Որ հիմա հասակն առել
Ու հոգնած ջրկիրն է տաղիդ:
Ծխով է ներշնչված նա
Ամեն մի երդիդ ու թաղիդ,*

*Ուր լինի, ինչ էլ դառնա,
Իմացիր՝ գառն է մատաղիդ:*

Այդքանով հանդերձ՝ բանաստեղծը մտահոգված է Սյունիքի ճակատագրով և ինքնապաշտպանությունն է համարում մեր երկրամասի լինելիության գլխավոր գրավականը՝ «Թող նժդեհանա ռազմի մեր ոգին, // Սյունյաց լեռները պահելու գնա»: Ընթերցողն այդ ամենը կտեսնի համարի և՛ լուսանկարներում, և՛ հողվածներում, և՛ բանաստեղծի քերթվածքներում...

* * *

Հանդեսի բաժիններից մեկն էլ Սահյանի այն բանաստեղծությունների մասին է, որոնք վերածվել են երգի: Այս հարցին նախկինում էլ, տարբեր առիթներով, անդրադարձել ենք: Ուստի և փորձեցինք թեման ընդհանրացնել:

Տիգրան Մանսուրյանի «Մայրամուտի երգեր» վոկալ շարքն է՝ «Ա՛խ, ինձ ծլել չթողին», «Մայրամուտ Մասյաց գագաթին», «Գալու է աշունը դարձյալ», «Հոգի ունեմ տալու»:

Տիգրան Մանսուրյանի և Համո Սահյանի երկխոսությունն է (գրառումը՝ Յովհաննես Այվազյանի): Հազար անգամ կարդում ու չես հագնում: Տիգրան Մանսուրյանն էլ չափազանց տպավորված է՝ «Մի օր, որ գնամ այս աշխարհից, Կոմիտասին ասելու եմ այս օրը եղել եմ Համո Սահյանի հետ»: Իսկ գրականագետ Արթուրյանի Լիկոլոսյանը մեզ հետ ունեցած զրույցում հիմնավորում է՝ «Սահյանի պոեզիան, իր՝ հատկապես քնարական, խոհափիլիսոփայական մասով, տեղով մեկ մեղեդի է»:

ՀՀ ժողովրդական արտիստ Սասուն Պասկևիչյանի հետ զրույցն է: Նա իր մեղեդիներով հավելյալ թւեր է տվել Սահյանի մի քանի բանաստեղծությունների,

որոնք ճախրում-թևածում են և թևածելու-ճախրելու են մեզանում՝ «Դու իմ միակն էիր, ինչպես Յայաստանս»... «Արագիլները», որ չվելուց առաջ տառապում էին, բայց և հավատում վերադարձին... Եվ, իհարկե, երգիչ-երգչուհիներից մի քանիսը, ովքեր կատարել կամ կատարում են Սահյանի բանաստեղծություններով երգերը:

Սահյանի հետ տարիների ընթացքում բազմաթիվ և շատ հետաքրքիր հարցազրույցներ են կայացել: Դրանք յուրօրինակ տեղ են գրավում Սահյանի սթայլի քննարկության գրականագիտական ու մատենագիտական տիրույթում: Այդ հարցազրույցները չեն կորցրել իրենց արդիականությունը: Դրանցից երեքը ներկայացնում ենք ընթերցողին՝ համոզված լինելով, որ զրույցներում յուրովի է բացահայտվում բանաստեղծը, մտածողը, մարդը:

Չորի Բալայանի հարցազրույցն է, որի ընթացքում բանաստեղծը չի թաքցնում իր հրճվածքը՝ «Գլխավորը Շուշիի ազատագրումն է»:

Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի վարիչ Կարինե Ռաֆայելյանի հարցազրույցն է՝ «... Չորյանն ինձ համար այնպիսի հեղինակություն է, նա մեծ գրող է, եվրոպական մասշտաբի»:

Գրականագետ Պետրոս Դեմիրճյանի հարցազրույցն է՝ «Միակ իրականը հոգեկան անկախությունն է»:

Նամականի բաժնում բանաստեղծին առնչվող բազմաթիվ նամակներից չորսն ենք ներկայացնում...

Սերո Խանգադյանի նամակն է (1965 թ.)՝ գրված Փարիզից: Դրանով մեծ արձակագիրը շարունակում է իր մտերմիկ գրույցը Սահյանի հետ, նաև մի քանի խնդրանք-պատվիրան հղում: Օրինակ, Գորիսում լինելու դեպքում՝ «Բաբուն Տիգրանին անպայման կտեսնես, կհետաքրքրվես՝ թոշակն ավելացրի՞ն, թե՞ չէ»:

Երեք նամակ է Զովհաննես Պապիկյանն է տրամադրել՝ Ռուբեն Չարյանի նամակը, Գուրգեն Մահարու նամակը և Սահյանի պատասխանը:

Յետաքրքիր է ռուս բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ Լև Օզերովի նամակը Յամո Սահյանին, որն առաջին անգամ չէ, որ ներկայացնում ենք: Ի դեպ, 20-րդ դարի 2-րդ կեսից Սահյանի պոեզիան հետևողականորեն թարգմանվել է ռուսերեն: Դրանում մեծ է այնպիսի պոետ-թարգմանիչների դերը, ինչպիսիք են Բորիս Պաստերնակը, Մարիա Պետրովիչը, Վերա Զվյագինսկան, Արսենի Տարկովսկին, Նաում Գրեբլյովը, Միխայիլ Դուդինը, Օլեգ Զոլոտնիկովը, Ալլա Մարչենկոն, Օլգա Իվինսկայան, Տատյանա Սպենդիարովան:

Սահյանի ռուսերեն թարգմանված բանաստեղծությունների ժողովածուն լույս է տեսել 1971-ին (Երևան, «Յայաստան» հրատարակչություն, 151 էջ, տպաբանակը՝ 5000): Առաջաբանը գրել է ռուս թարգմանչուհի Ալլա Մարչենկոն, ժողովածուն կազմել է Լևոն Սկրտչյանը:

Յամարի նախապատրաստման ընթացքում, ինչպես և սպասվում էր, բազմաթիվ նոր նյութեր ծնվեցին՝ նաև գեղարվեստական խոսքի սահմաններից դուրս: Դրանց մի մասը միայն կարողացանք զետեղել համարում:

Հարցազրույցներ Յամո Սահյանի ավագ որդու՝ Նաիրի Սահյանի, քանդակագործ, պրոֆեսոր Գեոիկ Բաղդասարյանի հետ, Սիսիանի հրաշալի դուստր Էվելինա Թադևոսյանի խոսքը, որով խոնարհում ու երկրպագություն է բերում մեր ազգին Յամո Սահյան հանձարեղ զավակ պարզևած հողին, Յովհաննես Պապիկյանի հողվածը, Յամո Սահյանի վաղեմի բարեկամ, հայոց Արցախի զավակ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի հուշերը...

Ներկայացնում ենք Յամո Սահյանի կենսագրությունը՝ հեղինակությամբ Դավիթ Գասպարյանի:

Յամարի այդ բաժինն ամբողջացվում է լուսանկարային լրացումներով՝ Սահյանի դայու գերդաստանը, հայ գրականության նշանավոր ներկայացուցիչների հետ հանդիպումներից դրվագներ, ծննդավար Լորի համայնապատկերը, բանաստեղծի տունը, բանաստեղծի կերպարը մոնումենտալ արվեստում և կերպարվեստում:

Մեծ բանաստեղծը ելադրում էր՝ «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս»... Այդպես էլ եղավ, այդպես էլ կա...

Անթիվ, անհամար են Սահյանին ու նրա պոեզիային նվիրված միջոցառումներն ամբողջ հանրապետությունում: Եվ, կարծեք, նշանակություն չունի՝ տարին հորեյանակա՞ն է, թե՞ ոչ:

2015 թ. հոկտեմբերի 17-ին Սահյանի բանաստեղծական գլուխգործոց «Պապի» հերոսը՝ բրոնզածույլ արձանի տեսքով, կանգնեցվեց Դարբաս գյուղում:

2023-ի հուլիսի 17-ին բանաստեղծի մի խումբ երկրպագուների հետ այցելեցինք Լոր: Սահյանի մահվան 30-րդ տարելիցն էր: Աննա Ալեքսանյանն է ներկայացնում...

2023-ի հոկտեմբերին Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում կանգնեցվեց Սահյանի կիսանդրին:

Եվ նման շատ իրադարձություններ, բոլորին անդրադառնալ հնարավոր չէր:

Իսկ 2024-ը մեր խմբագրության նախաձեռնությամբ Սյունիքում հայտարարվել է Սահյանական տարի, որի շրջանակում syuniacyerkir.am կայքում և կայքի Syuniac Yerkir Newspaper ֆեյսբուքյան էջում շաբաթական պարբերությամբ նյութեր ենք հրատարակում: Նաև շարադրությունների, հողվածների, ակնարկների մրցույթ ենք հայտարարել՝ «Հայոց հայրենիք Արցախը՝ Յամո Սահյանի հողում և պոեզիայում» թեմայով: Պարզվեց նաև՝ Սահյանը 1971 թ. հոկտեմբերի 27-ին Գորիսի գավառագիտական թանգարանին է նվիրել իր բանաստեղծությունների ձեռագրերի մի ամբողջ փունջ, որից մի քանիսը նույնպես ներկայացնում ենք:

Յամո Սահյանի պոեզիային նորովի հայացք ձգելով՝ համոզվում ենք վերստին՝ հայ ժողովուրդը (ի վերջո) արժանապատվորեն է դուրս գալու ներկայիս ծանրագույն վիճակից: Եվ անպայման վերադարձ է լինելու ինքներս մեզ, և այդ վերադարձը լինելու է նաև Սահյանով...

Ու իրականություն է դառնալու նրա երազանքը, որ արժանապատիվ ամեն մի հայի բաղձանքն է.

*Մայրամուտ Մայաց գագաթին
Խարույկը վառած մեռնեի,
Արևից, հողից, հողմերից,
Կարտոտը առած մեռնեի:
Իմ վերջին հառաչքի միջից
Գոհություն ճիշդ բողբոջեր,
Արտերս, արտերս վարած,
Պարտքերս մարած մեռնեի:*

Բայց այդ երազանքի իրականացման ճանապարհին հայ մարդը, ով Սահյանի քնարական հերոսն է, կոչված է և նույնիսկ պարտավոր է լինել երկրի իրական տերը, քանզի՝

Մենք դեռ հազար հոգեվարք ենք մերժելու

*(Քեռու կանչն է լսել Դավիթը հորում):
Թե մեռնել կա, հայերեն ենք մեռնելու,
Ինչպես մաքուր զորենի հունդը հողում...*

Եվ այդ ամենի հետ մեկտեղ՝

*Պատը շարվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Պարտքը մարվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Նախնյաց տուրք հավատի
Մատուցների դիմաց
Ծունկը ծալվի պիտի,
Ուրիշ հնար չկա...*

Ահա այսքանն էինք ուզում ասել, երբ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր մասնագետ, մեր մշակույթի իսկական նվիրյալ Տաթևիկ Սուբիայանի հետ մտմտում էինք «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի՝ մեծ բանաստեղծ Յամո Սահյանի 110-ամյակին նվիրված համարի ծրագիրը: ●

ԿՅՆՔԸ

ՀԱՄՈՍԱՀՅԱՆ. Կենսագրության Էջեր

Ի Զատված Դավիթ Գասպարյանի «Համո Սահյան. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունից

Համո Սահյանը (Հմայակ Գրիգորյան) ծնվել է 1914թ. ապրիլի 14-ին Սիսիանի շրջանի Լոր գյուղում:

Ինչպես հայրը՝ Սահակ Անտոնի Գրիգորյանը (1880, Լոր-1966, Լոր), որտեղից էլ նրա Սահյան ազգանունը, այնպես էլ մայրը՝ Գայանե Լալազարի Լալազարյանը (1890, Շենաթաղ-1935, Լոր), եղել են բնաշխարհիկ պարզ, արդար, աշխատավոր մարդիկ՝ լծված իրենց տան հոգսին և շարունակվող կյանքի ուրախությանը: 3. Սահյանից բացի, նրանք ունեցել են չորս երեխա՝ 3սամիկ (ծնվ. 1923թ.), 3այկանուշ (1925-1993), 3ավետ (1927-1977), Ելենա (ծնվ. 1929թ.): Գայանեի մահից հետո Սահակն ամուսնացել է ծագումով Գորիսի Շինուհայր գյուղից, բայց Աշխաբադում ծնված Լիզա Իվանի Գրիգորյանի «1895-1953» հետ, որից ունեցել է երկու դուստր՝ Պայծառ (ծնվ. 1937թ.) և Սեդա (ծնվ. 1942թ.): 3.Սահյանի հոր և մոր գլխավորում կանգնած էին պապն ու տատը, իսկ հեռվից նրանց էր ուղեկցում Խաչի պապի (Խաչիպապ) հիշատակը: Նրան շրջապատում էր մի ամբողջ նահապետական գերդաստան՝ իր վարք ու բարքով, իր ամենօրյա աշխատանքային կենցաղով:

Լորը լեռնային գյուղ էր, նույն է նաև այսօր՝ կենտրոններից կտրված, ինչն իր մեջ ձորում փակված, մրգատու այգիների մեջ թաղված: Ժողովրդի ապրուստը՝ անասնապահություն, այգեգործություն:

1908-1911թթ. գործել է ծխական դպրոց, որը գործունեությունը շարունակել է հետագա տարիներին: Լորի դպրոցում, որտեղ 1915-1916 ուսումնական տարում աշխատել էր Ա.Բակունցը, 3. Սահյանն ստանում է տարրական կրթություն: Բայց այս տարիները նրա համար կարևոր են ոչ այնքան տառաճանաչ ու գրաճանաչ դառնալու տեսակետից, որքան, որպես գյուղի տղա, հոտն ու նախիրն առաջն արած, սար ու ձոր չափչփելու, ծառ ու ծաղիկ ճանաչելու և բնության այբուբենն ու գյուղի աշխատավորական կենցաղը կենսաբանորեն ապրելու առումով: 3ետո՞ր միայն

պիտի իմաստավորվեին այս տարիների տպավորություններն ու կուտակումները: Ահա այս տարիների հիշողությամբ գրեց. «Հիշում եմ, մասուկ օրերիս հայրս ինձ վեր էր կացնում մուրճ ու լուսին, ինքը նստում էր էջի վրա, խուրջինը տալիս էր շալակս, ու գնում էինք, որ մինչև լույսը բացվի՝ հասնենք մեր արտատեղը՝ գործը չմա:

– Այս ի՞նչ դաժան մարդ է հայրս, – մտածում էի, – թող թողնի մի քիչ էլ ես նստեմ էջին կամ էլ խուրջինն ուսիցս առնի:

Բայց՝ երբեք: Մենք գնում էինք այդպես ամեն օր, նա նստած, ու ես ոտքով՝ բեռը շալակիս: Եվ հիմա, որ կյանքիս ճանապարհների շատ դժվար արահետներ եմ անցել, թվում է, հորս օրհնությունն էր վրաս, որ դիմացել եմ»³: Դժվարություն, հացի ամենօրյա կռիվ հող ու ջրի հետ և այդ պայմաններում մեծացող բանաստեղծական հոգի: Մանկական տարիների այս տպավորությունները հետագայում բազմիցս արթնացել ու վրձնել են պահը, վիճակը, կյանքի դրվածքն ու ոգու հայտնությունը՝ «Լույսը բացվեց».

Լույսը բացվեց... Ի՞նչ տանեմ դաշտ: Տանն ի՞նչ ունենք, որ ի՞նչ տանեմ, – Հոր նախատինքն, պապի խրատ, Մոր ձեռքի հոտ, հոգս ու համեմ: Մթնեց... Ի՞նչ եմ բերում դաշտից, – Կանաչ կանչեր, արև ու ամպ – Մագ-մախաղիս, ծոցիս, սրտիս Եվ աչքերիս տարողությամբ:

Մանկության տարիներին նա անդրադարձել է հաճախակի: Իսկ գյուղի մանկանն ու պատանուն կերակրող ոչ միայն տան հացն էր, այլև հանդի բարիքը: Մի առիթով հիշում է, որ դաշտերում կակաչի կոկոններ են կերել, որին «պուտածիճ» են ասել. «Այդպես հողը մոր պես մեզ ծիծ էր տալիս...»⁴: Եվ հետևում է եզրակացությունը. «Չիներ այդ դժվար և դժվարության մեջ երջանիկ մանկությունը, ինքնավոր է, որ ես բանաստեղծ չդառնայի: 3նարավոր է, որ արդեն հասուն տարիքում չգրեի. Գնամ մխրճվեմ խորքերն անտառի, Մոռորվեմ մեռնող տերևների մեջ, Գլուխս դնեմ մամուռն մի քարի

Մոռանամ ամեն աղաղակ ու վեճ: Բույն տամ սրտիս մեջ բույն փնտրող հավքին, Լոսած անտառի ականջը դառնամ, Ծնչառությունը լսեմ մեղմագին Տերևների տակ խոր քնած գարնան»⁵:

Համո Սահյանի մանկության տարիների «գյուղն այնպիսին էր, ինչպիսին եղել էր երկար ու երկար հարյուրամյակների ընթացքում»⁶:

Միջանկյալ մտաբերեմք, որ «Սամվել»-ը գրելու դժվարությունների կապակցությամբ նույնն էր ասում նաև Րաֆֆին. «Եթե մենք այսօր տեսնում ենք 3այաստանում Քսենոփոնի 24 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները, եթե մենք այսօր տեսնում ենք 3այաստանում 3երոդոտոսի 24 դար առաջ նկարագրած մաշկապաստ կամակները եփրատի վրա, ինչո՞ւ պետք է չմտածել, որ դեռ շատ բան չէ փոխվել հայոց աշխարհում: Նոր քաղաքակրթությունը կարող էր ոչնչացնել ինչ որ նախնական էր, ինչ որ հին դրոշմ էր կրում: Բայց 3այաստանում դեռ մնացել են այնպիսի առանձնացած տեղեր, ուր ժողովուրդը դեռ ապրում է յուր վաղեմի ավանդական սովորություններով: Այդ տեղերը ես առիթ եմ ունեցել տեսնելու և նրանց կյանքը ուսումնասիրելու»:

Րաֆֆին իր ճանապարհորդությունների ժամանակ եղել է նաև Սիսիանի գյուղերում, ուսումնասիրել հնադարյան կենցաղով ապրող ժողովրդի այդ հատվածի կյանքը: Ըստ վկայությունների՝ նա եղել է Դարպաս գյուղում և արկածի ենթարկվել⁷: Իսկ Րաֆֆու «Սամվել»-ի (1887) և 3.Սահյանի մանկության տարիների միջև ընկած է շուրջ երեքուկես տասնամյակ տևող ժամանակ:

Այդ ժամանակվա գյուղն ըստ երկրային փակ բնատնտեսություն էր, որ կերակրվում ու ապրում էր անասնապահական և հողագործական աշխատանքների հաշվին: «Ամբողջ գյուղի հագուստը տնայնագործական էր, տնտեսությունը՝ նախնական», – շարունակում է բանաստեղծը: Գյուղը, անանցանելի լեռների մեջ փակված, կտրված էր մեծ աշխարհից: Զորավանջերին հողն այնքան սակավ էր, որ անգամ դպրոցի շենք շինելու տեղ չկար, և ստիպված այն կառուցում են գյուղի... գերեզմանոցի տեղում: Իսկ նախկին դպրոցը Զիթանի ձորավանջին կրապատ մի շինություն էր, որ ուներ ընդամենը երկու դասասենյակ: Սահյանի մանկության տարիներին, երբ նա դեռ հինգ տարեկան էր, դպրոցը չէր գործում: Ժամանակներն այն չէին: Իսկ դա այն դպրոցն էր, որտեղ 1915-ի նոյեմբերից մինչև 1916-ի մայիսը ուսուցչու-

յուն եր արել Ալեքսանդր վարժապետը՝ Ալսել Բակունցը, և թողել բարի անուն: Յենց ևս էլ՝ արդեն որպես գավառի գյուղատնտես, միջամտում է Լոր և հարևան Շենաթաղ գյուղերի միջև ծագած տարիների պատմությունն ունեցող հողային վեճի լուծմանը: Այս պատմությունն էլ հիմք է դառնում նրա «Ծիրանի տափ» պատմվածքի համար:

Սահյանի մանկության տարիների տպավորությունների մեջ, ահա, անչնչելի է մտում Ա.Բակունցի կերպարը: «Ես տեսա իմ երագած մարդուն՝ Ալեքսանդր վարժապետին: «...» Եվ հուշերիս մեջ նրա ասպետական կերպարի առաջ իրենց ճերմակ գլուխներն են խոնարհում իմ ծննդավայրի երախտապարտ լեռները»⁹, – հետագայում մտաբերում է նա:

Գյուղում նա տեսել է նաև ժամանակի բոլոր փորձաքնները՝ 1918-ի տիֆն ու ժանտախտը, 1920-ի իշխանավոխությունը, 1921-ի սովը:

Սահյանը, բնական է, չի իդեալականացնում այս տնայնագործական տնտեսությունը, գյուղի կտրվածությունից եկող ինքնամոտավածությունը, հետամնացությունը, բայց իդեալականացնում է գյուղի մարդու բարոյականությունը՝ աշխատասեր, արդարադատ ու արդարախոս... Ահա այդ գյուղը.

*Ոլոր կածանը որպես պարան
Ժայռի պտուկից իջնում էր գետ.
Լոկ այդ պարանն է ձիգ ու բարակ
Կապում իմ գյուղը աշխարհի հետ...*

Այս գեղջկական համալսարանը կյանքի բարոյական մեծ դասեր էր տալիս: Տոհմը, ցեղը հավաքական համայնք էր գյուղական ավելի մեծ համայնքի մեջ: Բանաստեղծը մտաբերում է. «Հիշում եմ. ես մեր գերդաստանում 31-րդն էի: Յացի էինք նստում բոլորս միասին: Սպասում էինք, մինչև պապս ձեռքի գործը վերջացնում էր, լվացվում, նստում սեղանի գլխավերևում, և նոր միայն ձեռքներս մեկնում էինք հացին: Կար հարգանք միմյանց միջև, ակնածանք տոհմի մեծերի հանդեպ, ու նրանց օրինակը, որով սնուցում էինք մեր հոգին»¹⁰:

Այստեղից էլ՝ գրականության խնդիրները. «Տագնապ՝ բարոյական կորուստների մտահոգությամբ, վերադարձ դեպի բնությունը, մարդու ինքնաճանաչում, պարտք անցյալի, ներկայի ու ապագայի հանդեպ, ահա հարցեր, որոնք կարոտ են գեղարվեստական առավել լայն արտացոլման ու մարմնավորման»¹¹:

Մանկության տարիների պաշարներով բանաստեղծը երկար է ապրել: Վերջին հարցազրույցներից մեկում այդպես էլ ասել է. «Հիմա ութսունի մատուցներում էլ ապրում եմ մանկությանս պաշարներով»¹²:

Սա նշանակում է, որ արմատները խոր են մխրճվել գոյության ընդերքի մեջ: Սա նշանակում է, որ կյանքի մնացած տարիները եղել են անցողիկ ու մոռացվող տպավորությունների շարքեր: Միակ մնայունը բնաշխարհից վերցրածն է, որ դառնում է և՛ չափ ու չափանիշ, և՛ հավերժական ժամանակի մեջ իր ժամանակն առանձնացնելու նախապայման:

Բնածինն ու ընդօժինն այս դեպքում նույնն են, որ արյունակցական հարազատությամբ են մարդուն կապում իր ծննդավայրի ու երկրի հետ: Եվ, իրոք, այս դեպքում բնությունը մայր է, հայրենիքը՝ հայր, երկունս էլ՝ որպես ծնող ու ծննդաբերող:

Մանկության տարիները նաև բնությունից դասեր առնելու և ոգու դաստիարակության ժամանակներ էին: 10-12 տարեկան դպրոցականը նաև տուն պահող էր՝ հորթարած էր կամ արտ մշակող: Այս տարիներին էլ նրա մեջ ներծծվում է հայոց ոգին, նախ՝ բնաշխարհի, ապա՝ հայոց գրի, հայոց պատմության և հայոց երգի տեսքով: 10-12 տարեկան հորթարած տղաները նաև Կոմիտաս էին երգում. «Այսպես, «Սոնա յար» ենք երգում և չգիտենք, որ երգը հեղինակ ունի, և այդ հեղինակի անունը Կոմիտաս է: Կարծում էինք երգը հեղինակ չունի, ինչպես հեղինակ չունեն օդը, ջուրը, քամին, որոտը, ծաղիկն ու ծիածանը, մայրենի լեզուն»¹³:

Սա բնաշխարհի երգն էր՝ բնաշխարհի մեջ և ոչ թե մարդաբանության երաժշտական դպրոցներում, ուր ամեն ինչ արվում է կարգ ու կանոնի մեջ տաղանդի արտ+ա+կարգ+ությունը ոչնչացնելու համար, որ նշանակում է արտ-ա-կարգը կարգի բերել, այսինքն՝ սահմանափակել: Ժամանակ էր պետք Կոմիտասի երգը բնաշխարհից առանձնացնելու և ժողովուրդ-հեղինակի կողքին տեսնելու այդ երգը նրան վերադարձնողին: «Տարիներ էին պետք, ուսման ու աշխատանքի փորձի ու փորձառության տարիներ, որպեսզի իմ սերունդը ճանաչեր ու հասկանար Կոմիտասին, որպեսզի հասկանար, թե ինչ ասել է «Գարուն ա, ձուն ա արել», որպեսզի հասկանար, թե ինչ ասել է «Սիրտս նման է ես փլած տներ»: Ո՛ւ ճանաչեցինք, ո՛ւ հասկացանք, ո՛ւ լցվեցինք, ո՛ւ հարստացանք Կոմիտասով: «...» Կոմիտասը մեր ոգու ինքնության դրոշմն է...»¹⁴:

Մանկության տարիների տպավորությունները եղել են նրա և՛ կենդանի դպրոցը, և՛ բնության իմացությունների համալսարանը: Նրա ամբողջ պոեզիան ըստ էության գալիս է այդ տարիների դիտում-կուտակումներից, որոնք հետագայում բեկվում են տարիքի ու փորձի հայելիների մեջ: Նորից վերա-

կանգնեք այդ տարիների պատկերը, որ արդեն ինքն է վերականգնում առաջացած տարիների պատրանքի մեջ՝ «Կածանն ինձ տաներ անտառը՝ ցախի,

*Անտառն իմ գլխին ուլունքներ
թափեր:*

*Մուլոցի փոխվեր սարսուռն իմ վախի,
Եվ ոչ մի շշուկ ոտքս չկապեր:*

*Կացինս թողած կաղնու փչակում,
Պարանս ժայռի փեշերին թողած,
Ծապիկիս թևքը՝ մարտնու ճանկում,
Փեշը՝ մոշենու փշերին թողած,*

*Թռչեի թրջված հավքի ետևից
Եվ չբռնեի մինչև իրիկուն...
Հարցնեի հողից, ջրից, աստղերից. -
Գտնեի կածանն ու դառնայի տուն:*

*Հայրս ինձանից բան չհարցներ,
Չնայեր ոչ մի խնդիրք ու լացի,
Ինձ «պարան, կացին ու ցախ
դարձներ»...*

Եվ մայրս կանչեի իրիկնահացի:

Մանկության տարիներին են կուտակվել նաև աշխարհաճանաչողության այլ պաշարներ: Ահա այդ դրվագներից մեկը ևս. «Երբ ես դեռ փոքր էի, և մենք ապրում էինք խոր ձորի մեջ, մեզ համար արևի ճանապարհը կարճ էր, երկու իրար շատ մոտիկ հանդիպակց սարերի զագաթից զագաթ ընկած մի անտեսանելի կամուրջ: Մի օր մենք որոշեցինք բարձրանալ սարը և տեսնել, թե ո՞ւր է գնում արևը»¹⁵:

Եվ բարձրանում են ու տեսնում... մայրամուտի գույներով վառվող լեռնագագաթները: Շլացուցիչ այդ պատկերն այնքան է հուզում ապագա գրողի մասունկ հոգին, որ՝ «Ես ուզում էի այդ մասին պատմել մարդկանց»: Երևի թե հենց այս պահին էլ ծնվել է բանաստեղծը: Իր տեսած հրաշքը մարդկանց պատմելու զգացողությունը թե՛ է տվել նրա երևակայությանը:

Այստեղ կա Յ.Սահյանի բնութագրական երկու հատկանիշ՝ տեսածը պատմել: Տեսածը պատմել ոչ թե իբրև պատմություն, այլ որպես առարկայական աշխարհի հոգեկան անդրադարձ, որպես սեփական կենսագրություն: Այս տեսակետից Յ.Սահյանի պոեզիան հոգու մի ամբողջական պատմություն է: Բնաշխարհի հայելային արտացոլյալ հոգու բազմակիստ անդրադարձի մի նիստի վրա է, մնացած նիստերի մեջ այն նոր անդրադարձներ է տալիս, կորցնում լուսանկարչական նույնականությունը, բայց պահպանում նմանությունը: Այս նմանությունը Յ.Սահյանի ստեղծած բանաստեղծական աշխարհը և Աստուծո ստեղծած բնաշխարհը դարձնում են մեկ ու նույ-





և՛ր, բայց տարբեր ձևերի մեջ մի տեղում մարդու կյանքն է բնության մեջ, մյուս տեղում բնության կյանքն է իր իսկ՝ բնության ինքնաստեղծ տարերքի մեջ:

1927թ. Յ.Սահյանը տեղափոխվել է Բաբու: Դեռևս XIX դարի կեսերից՝ Բաբվի նավթարդյունաբերության զարգացումից հետո, Հայաստանի հարավի ու արևելքի՝ Այրևիքի ու Արցախի բնակչությունը ապրուստը հոգալու նպատակով շարժվում էր դեպի Կասպից ծովի նախ՝ արևելյան, ապա՝ նաև արևմտյան ափերը: Քանի՛-քանի՛ սերունդներ են այնտեղ թողել իրենց աշխատանքի ու կյանքի հետքերը: Այդ ճանապարհը բանուկ էր նաև 1920-1930-ական թթ., մանավանդ որ Բաբվում գործում էին հայկական կառույցներ՝ միջնակարգ դպրոցներ, մանկավարժական ինստիտուտի հայկական բաժին, թերթ, ամսագիր, մշակութային օջախներ և այլն: Գյուղից դուրս եկողի ուղիղ ու միակ ճանապարհը Բաբվի նավթահանքերն էին: Նավթահանքերում էին աշխատում նաև Սահյանի հորերը այրները: Իրիկնահացին բոլորը հավաքվում էին իրար գլխի՝ «լսելու նրանց պատմությունները»¹⁶:

Բաբվի Ստեփան Շահումյանի անվան թիվ 9 հայկական դպրոցում Սահյանն ստանում է միջնակարգ կրթություն: 1937-ին նա ավարտում է Բաբվի երկամյա ուսուցչական դպրոցը, 1939-ին՝ հեռակա ուսուցմամբ՝ Բաբվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժանմունքը: Բաբվում տասը տարի անցկացնելուց հետո վերադառնում է հայրենիք և 1937-1938թթ. աշխատում «Սիսիանի հարվածային» շրջանային թերթում:

1939-ին դարձել է ԽՍՀՄ գրողների միության անդամ:

Նորից տեղափոխվում է Բաբու և 1939-1941-ին աշխատում «Խորհրդային գրող» ամսագրի խմբագրությունում: Այս պարբերականի, ինչպես նաև «Կոմունիստ» հայկական թերթի էջերում տպագրվում են նրա գործերը: Առաջին բանաստեղծության տպագրության տարբեր թվականներ է հիշատակում՝ 1935 (Բաբվի «Կոմունիստ» թերթում), 1938, 1939... Նաև գրում է. «Չգիտեմ ինչո՞ւ և ինչպե՞ս սկսվեց իմ գրական մուտքը: Երբ արդեն հասկացել էի, որ Չարենցի կողքին բանաստեղծություն գրելն ավելորդ է, արդեն ուշ էր, որովհետև Չարենցը հավանել էր իմ ոտանավորները և բարի ճանապարհ մտղթել»¹⁷: Այս հույժ կարևոր փաստին Սահյանն այլ առիթներով երբեք չի անդրադարձել, մինչդեռ այս դրվագը մանրամասնելու պահանջ է զգացվում, ինչպե՞ս և ե՞րբ են Սահյանի բանաստեղծություններն ընկել Չարենցի ձեռքը, Չարենցը ո՞ւմ է իր դրական

կարծիքը հայտնել: Անորոշություն և անհստակություն կա, որ այս հիշատակությունը դարձնում են թեական և հարցականներ առաջացնում:

Իր գրական մուտքի մասին Սահյանն ունի նաև այլ մտաբերումներ. «Գրել սկսել եմ 12 տարեկանից: Բայց դա սկիզբ չէ, որովհետև գրածներիս հանդեպ պատասխանատվություն զգացել եմ շատ ավելի ուշ: Այդ պատճառով ոչ ոք չի գտնի միևնույն 1939 թվականը գրված որևէ բանաստեղծություն: Բայց 1939 թվականն էլ սկիզբ չէ: Ընդամենը մեկ գործ եմ ընտրել այդ ժամանակակից և 2 ոտանավոր՝ 1940-ականին հորինածներիցս»¹⁸: Ըստ ամենայնի Սահյանը պատերազմական ժամանակների բանաստեղծական ծնունդ է, իսկ 1930-ականները եղել են գրական նախափորձի տարիներ...

1941-1945թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին, Կասպից և Սև ծովերում ծառայել ռազմածովային նավատորմում:

Այս տարիների մասին պահպանվել են կենսագրական մանրամասներ: «Յունիսի 27-ին այլևս չհամբերեցի և ներկայացա գինկոմիսարիատ՝ ճակատ մեկնելու խնդրանքով: Երբ ինձանից պահանջեցին զինվորական կանչը, ես ասացի, որ կորցրել եմ: Հավատացին: Ինձ ծառայության ուղարկեցին Կասպիական նավատորմի»¹⁹, – գրում է նա:

Այս տարիների մտաբերումով նա վերհիշում է նաև «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծության գրության շարժառիթները: Կուլայի ափին, նավի տախտակամածին միայնակ կանգնած, նրա աչքին պատկերանում է հայրենի գյուղը, գյուղից դուրս բարձունքի վրա գտնվող բարդին. «Ես շոշափելու չափ որոշակի զգացի նրա խշշոցը և տեսա, թե ինչպես ծառն ընդարձակվելով, ընդարձակվելով իր մեջ առավ ողջ աշխարհը, և ես Նետվեցի, որպեսզի փարվեմ նրան»²⁰:

Այդ պահին էլ ծնվում է բանաստեղծության առաջին տողը, հետո մյուս տողերն են ձևավորվում: Ձեռագիրը երկու տարի պահում է հակազգափ պայուսակի մեջ, այնուհետև արտագրում և ուղարկում Ս.Չոբյանին: Չոբյանն այն հավանում է և տպագրում «Սովետական գրականություն» ամսագրում: Հետո այն թարգմանվում է ռուսերեն և լույս տեսնում «Կոմսոմուլսկայա պրավդա»-ում: Նավի բժիշկը, որ ռուս էր, Սահյանից հետաքրքրվում է, թե ով է հեղինակը: Երբ իմանում է, կասկածում է. «...դու ո՞ւր, այս բանաստեղծությունն ո՞ւր»²¹:

Այսպես ծովային անսովոր կյանքն ու ծառայությունը լցվում է քնարերգությամբ: Օրացուցային կենսագրությունը դառնում է հոգու կենսագրություն, որ

ժամանակի պատմության մի մասն էր: Գլխի ընկնելով, որ «որքան էլ բարձրագույն բաներ գրեմ, հրանդից բարձր չեմ կարող գրուլ «...» որոշեցի գրել զինվորի մասին, նրա ապրումների, կարոտի, հավատի մասին»²²:

Ինքնաճանաչումով ձևավորվում է բանաստեղծը, ճշմարիտ բանաստեղծը: 1942թ. պատերազմական բոցերի մեջ գրվում են առաջին գրքի բանաստեղծությունները: «1942 թվականին, երբ մեր նավատորմի ռազմական գործողությունների մեջ մտավ Աստրախանի խարսխակայանում, գրեցի «Որոտանի եզերքին» շարքը: Այդտեղ արդեն քնարական հերոսը կովոդ նավաստին էր՝ իր ապրումներով և զգացումներով»²³,

– մտաբերում է Յ.Սահյանը: «Այդպես ծնվեց իմ «Որոտանյան» շարքը, որն ավարտելուց հետո ուղարկեցի Բաբվի «Կոմունիստ» թերթին», – ավելացնում է բանաստեղծը և ներկայացնում առաջին գրքի ծնունդը. «Անցավ ժամանակ, և ես խմբագրությունից նախատիկքով լի մի նամակ ստացա: Խմբագրությունում դժգոհ էին, որ ես պատերազմի այդ ահեղ օրերին զբաղված եմ լիրիկական տրամադրություններով ու ապրումներով: Բայց, ինչպես է լինում՝ չգիտեմ, 1944 թվականին Բաբու են գալիս Խաչիկ Դաշտենցն ու Հովիկ Մելիքյանը, խմբագրատան արխիվում ծանոթանում են իմ ձեռագրին և հետևերը տանում են իմ ձեռագրին և հետևերը տանում են իմ տարի անց այն լույս տեսավ Երևանում՝ «Որոտանի եզերքին» խորագրով»²⁴:

Իսկ ինքը՝ զինվոր Յ.Սահյանը, դեռևս պատերազմի դաշտում էր: Կերչում թշնամու արկը կիսում է նրանց նավը, մի կեսը սուզվում է ջրի հատակը, իսկ մյուս կեսի վրա մնում են նավապետն ու ինքը՝ բանաստեղծը, որն ազդանշան տվող էր: Նրա ազդանշանով էլ օգնության են հասնում և փրկում բոլորին:

Խորհրդային բանակից զորացրվելուց հետո Սահյանն անցնում է գրական աշխատանքի Բաբվի «Կոմունիստ» հայկական թերթում:

1945-ին Բաբվում ամուսնանում է Մարիա Հակոբյանի հետ: Մարիան անցել էր հային վիճակված թափառումների ուղի: Ծնվել է 1921թ. դեկտեմբերի 21-ին Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի Գերգինսկ քաղաքում, ուր 1915-ից հետո ապաստանել էին նրա մեծի ծնողները: Տեղում ստացել է հայկական կրթություն, ապա ընտանիքով 1930-ին փոխադրվել Բաբու և ուսումը շարունակել տեղի թիվ 39 հայկական միջնակարգ դպրոցում, այնուհետև ավարտել Բաբվի բժշկական ինստիտուտը, աշխատել զինվորական բուժարաններում: Նրանք ծնել են երկու որդի՝ Նաիրի (ծնվ. 1946թ.) և Արա (ծնվ. 1954թ.): Երևան տեղափոխվելուց

հետո Մարիան աշխատել է «Առողջապահություն», «Պիոներ» ամսագրերում, «Գրական թերթ»-ում երկար տարիներ վարել է պոեզիայի բաժինը: Նա ևս օժտված էր բանաստեղծական ձիրքով և 1958-ին լույս տեսած «Անանուն ծաղիկներ» առաջին ժողովածուից հետո հրատարակել է մեկ տասնյակի հասնող բանաստեղծական գրքեր: Մ.Յակոբյանը մահացավ 2002թ. Նոյեմբերի 19-ին Երևանում:

1946-ին Բաբվում Յ.Սահյանն ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը:

1951-ին բանաստեղծն ընտանիքով տեղափոխվում է Երևան, դրանից հետո նրա ամբողջ կյանքն ու գործունեությունը կապվում է մայրաքաղաքի հետ: Աշխատում է «Ավանգարդ» թերթում (1951-1954) և «Ոգևի» հանդեսում (1954-1955): Յետագայում սիրով է մտաբերել աշխատանքային այդ տարիները. «Շիտակության, հավատարմության, համբերության ինչպիսի դասեր են առել «Ավանգարդից»: Նրա համեստ հեղինակը լինելու երջանկությունն են ունեցել և նրա աշխատակիցը լինելու բախտը»²⁵:

1955 թվականից հետո շուրջ մեկ տասնամյակ ապրել է ազատ ստեղծագործական կյանքով: 1965-1967թթ. նշանակվել է «Գրական թերթ»-ի գլխավոր խմբագիր: Նրա ջանքերով պարբերականը որակական կշիռ է ձեռք բերում և դառնում հանրապետության մտավորականության սիրելի թերթը: Այն նաև աչքի է ընկնում ուշագրավ հրապարակումներով և գրական ստեղծագործական հարցերի արծարծումներով: Թերթում տպագրվում են նաև Ե.Չարենցի անտիպները: Բայց նրան այդ պաշտոնում հանդուրժում են երկու տարի:

1974-ին Բեյրութում Յ.Սահյանի մասնակցությամբ նշվել է նրա ծննդյան 60-ամյակը: Լիբանանի հայկական մամուլում հանդես է եկել հարցազրույցներով ու երկխոսություններով:

1988-ին Վ.Դավթյանի ընկերակցությամբ շրջագայել է ԱՄՆ-ում, սփյուռքի հայրենակիցներին ներկայացրել արթնացող հայրենիքի երազանքները:

Եղել է Ֆրանսիայում: Պարբերաբար մասնակցել է Մոսկվայում գումարվող ԽՍՀՄ գրողների համամիութենական համագումարների աշխատանքներին:

Յաճախակի լինում էր աշխատավորների միջավայրում, խոսում իր մասին, գրականության հարցերի մասին, կարողում բանաստեղծություններ: Յուրաքանչյուր հանդիպում Յ.Սահյանի հետ վերածվում էր գրական տոնահանդեսի:

1967-1988թթ. եղել է ԻՍՍՐ միևսուրների խորհրդին առընթեր պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովի քարտուղարը:

1975-ին «Սեզամ, բացվիր» գրքի համար արժանացել է Յայաստանի պետական մրցանակի դափնեկրի կոչման:

Եղել է ԻՍՍՐ Գերագույն խորհրդի 5-րդ (1959-1963) և 8-րդ (1971-1975) գումարումների պատգամավոր: Պարգևատրվել է ԽՍՀՄ շքանշաններով՝ Յոկոտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի², Պատվո նշան:

1979-ին նրա անձնական կյանքում տեղի է ունենում փոփոխություն: Ամուսնալուծվում է առաջին կնոջից և ամուսնանում Սվետլանա Խաչատրյանի հետ (ծնվ. 1939թ.): Վերջինիս համար ևս դա երկրորդ ամուսնություն էր: Սահյանը նրա հետ ապրում է մինչև իր կյանքի վերջը:

Յ.Սահյանը մահացավ Երևանում 1993թ. հուլիսի 16-ին՝ ժ. 23:40-ին, ենթաստամոքսային գեղձի քաղցկեղից և վրա հասած օրգանիզմի ընդհանուր թունավորումից: Նրա աճյունն ամփոփվեց Կոմիտասի կողքին:

Մահից չէր վախենում, որովհետև մահվան հետ վաղուց հաշտ էր. «Ի՞նչ վախենամ մահից, նույն բանն են կյանքն ու մահը: Ամեն ինչի մեջ ամեն ինչ կա՝ միևնույն կյուրթից են: Ի՞նչ իմանամ, որերո՞րդ մահն են ապրում: Երբ քեզանից հետո կյանքը կա, մահը դատարկ բան է...»²⁶:

Իր մահը նա տեսել էր վաղուց՝ որպես բնության հավերժական կյանքի մի պլանթարթ, նաև՝ որպես բնության ցավ ու մորմոք՝ «Երամ...». Երամն անցավ վերնից, Չորը մորմոք է մանում:

*Սևեր հագան սավերի՝
Ծաղիկները անանուն:*

*...Ինչ-որ մի տեղ երևի
Բանաստեղծ է մահանում:*

Յ.Սահյանի մահից կարճ ժամանակ անց Ս.Խաչատրյանն արտագաղթել է ԱՄՆ: Յիմա Յ. Սահյանի ոչ Լոր գյուղի տանը, ոչ էլ Երևանյան վերջին բնակարաններում այլևս նրա շունչն ու հիշատակը չկա, որովհետև չկան այդ շունչն ու հիշատակը պահողները: Բայց նրա շունչը շարունակում է ապրել նրա երկրպագուների սրտերում և բարեկամների խոսք ու գրույցի մեջ:

Թվերից բացի, կա նաև հոգու կենսագրություն:

Սահյանն իրեն ու իր ժամանակակիցներին համարել է «պատերազմի սերունդ»²⁷, քանի որ պատերազմը նրան «արթնացրեց»: Գրական գործունեությունը թե՛ ինքը, թե՛ սերնդակիցները թե՛ն սկսեցին 1930-ական թթ. կեսերին՝ Չարենցի կողքին, բայց իրենց հիմնական ասելիքն ասացին շատ ավելի ուշ՝ 1950-1960-ական թթ.: «Չարմանայի երևույթ

է՝ իր գրական մուտքից երեսուն տարի հետո բանաստեղծական սերունդը սովորաբար ավարտում է, մենք ստիպված ենք միայն սկսեցինք»²⁸:

Իր ստեղծագործական ուղին Սահյանը բաժանում է երեք շրջանի՝ նախապատերազմյան, պատերազմի և ետպատերազմյան: Սակայն այն կարծիքի է, որ իր «բանաստեղծական կենսագրությունը հիմնականում սկսվում է «Մայրամուտից առաջ» գրքով»²⁹: Այս գրքի մեջ նա իրեն ազատ է համարում բոլոր պայմանականություններից, գիրք, որն ստեղծագործական ազատության արգասիք է, որի մեջ բանաստեղծն իր բնական ձևի մեջ է:

Յ.Սահյանն իրեն գրական ուսուցիչ է համարում «մեր լեզուն ու հոգեբանությունը», ապա շարունակում. «Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ-Սայաթ-Նուր-Թումանյան) և ոգեղեն (Նարեկացի-Շնորհալի-Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ՝ ես ձգտել եմ այն բանին, որ այս երկու թևերը իմ մեջ ձուլվեն, խառնվեն իրար: «...» Ես ձգտել եմ ժողովրդական-ֆոլկլորային մտածողությունը դնել մյուս ձևերի մեջ: Բայց, համենայն դեպս, ես պետք է խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել: «...» Իմ գրական հակումները բազմաթիվ կողմերով պայմանավորված են մեր լեզվով. մեր լեզուն մեր ազգային նկարագիրը լիովին պահպանել է»³⁰:

«Ես կամ միայն ու միայն բանաստեղծության մարմնով», – ասում էր նա՝ իր ստեղծածի մեջ տեսնելով իրեն: Եվ հետո էլ շարունակում. «Բանաստեղծությունից դուրս սխալներս ու մոլորություններս շատ են»³¹:

«Սպիտակ թղթից վախենալու» զգացողությունը նրան հեռու է պահել հեշտից, կանխել սուտի ճանապարհը բանաստեղծության մեջ: Գրել է տողերի ինքնեկ բնականությամբ, «...մի տունը գրել եմ, մյուսները չկան, չեն ծնվել»³²: Նրա բանաստեղծությունը նախ՝ ծնվում, ապա և՛ գրվում է մտքում, մտքում ամբողջանալուց հետո միայն գրեթե պատրաստի վիճակում հանձնում է թղթին: Մշակելու բան դրանից հետո քիչ է մնում՝ հիմնականում սղում-կրճատումը:

Եվ գլխավորը: Ինչպե՞ս ապրեց Յ.Սահյան իր ժամանակի մեջ: Որքանով հայտնի է, նա գրական թշնամիներ չունեց: Իրենից էր: Ինքը չստեղծեց իր թշնամիներին: Չստեղծեց, որովհետև իրեն երբեք չպարտադրեց, բարձր չխոսեց, մատ թափ չտվեց, ձեռքը սեղանին չիսկեց: «Սահյանի վարքը շատ ավելի ինքնարտաբան էր հրապարակից, աքսոր: Այդպես էր պատերազմի տարիներին, այդպես էր հետո, այդպես է հիմա»³³:





Սահյանը հոգով ընդունեց 1988-ի արցախյան շարժումը, ավագի իրավունքով կանգնեց

Հայաստանի Երրորդ Հանրապետությունը կերտող երիտասարդների կողքին և նրանց ասաց իր բարեմաղթանքի խոսքը: Այսպես թե այնպես՝ Սահյանը փոփոխվող կյանքի իրադարձությունների մեջ էր: Իր կարծիքն ու վերաբերմունքը կար օրերի ու ժամանակների մեջ: «Ուժս ներեր, կռվի դաշտ իջնեի գեներով: Լացս գալիս է, որ ջահել չեմ, որ կարողանամ իմաստ տալ ոչ այնքան կյանքիս, որքան մահիս»³⁴: «Միացում» կարգախոսն, ըստ նրա, ոչ միայն Արցախի համար էր, այլև համայն հայության:

Հ.Սահյանն աշխարհից հեռացավ մեր կյանքի ծանր տարիներին: Դժվարին այդ օրերին ապրեց իր ժողովրդի պես դժվար կյանքով: Օրվա տերերը, որոնց նա օրինել էր, մոռացան նրան անգամ ձմեռվա ջերմությամբ ապահովել: Վառարանի փայտ այստեղից-այնտեղից հայթայթում էին նրան և՛ իրաված հատուկները:

Դժգոհությունը հայտնեց. «Կար ժամանակ պետական բյուրոկրատիա էր, հիմա ազգային բյուրոկրատիա է: «...» Հիմա սրանց ձեռք տալ պետք չէ, ավելի վատերը կգան: «...» էս անկախությունից, էս ազատությունից, էս դեմոկրատիա կոչվածից գողերն, ավազակներն առավել են օգտվում»³⁵:

Երագում էր վերջին գիրքը տպագրված տեսել: Չտեսավ... Խոստումները կային, խոստում սովորները կողքին էին, բայց տպագրությունը ուշանում էր...

Բայց չչարացավ: Հոգով խաղաղ էր: Ժամանակին գրել էր՝ «Բարությունս».

*Ինձ իմ միջից աքսորեցիք,
Ո՞վ իմանա, թե ուր եմ ես,
Գերեզմանիս դեռ չեմ հասել,
Կյանքի մեջ էլ արդեն չկամ:*

Հետո «Ինձ բաց թողեք, ես գնամ»-ն ավարտել էր այս տողերով.

*Իմ առնելիքը առա
Եվ իմ տալիքը տվի
Եվ բախտից գոհ եմ այնպես,
Ինձ բաց թողեք, ես գնամ...*

Հ.Սահյանի մահվան կապակցությամբ Հ.Մաթևոսյանը գրեց. «Նա տվեց ավելին, քան կարող էր, դիմացավ ավելին, քան կարող էր «...» և հայոց մեր այս տանը թողեց ավելին, քան ի գորու էր, որովհետև տեր ու հայր էր ծնվել...»³⁶:

Ապրեց ու ստեղծեց իր փառքը: Երբեք փառքի ետևից չվազեց, «...մի տարիք է գալիս, երբ գգում ես, որ փառքը սուտ է, ամենաճշտը քո տառապանքի հաճույքն է»³⁷: Այդ տարիքը նա ապրել է միշտ՝ և՛ մանկության, և՛ ծերության օրերին: Նա շատ լավ գիտեր, որ փառք ստեղծողն էլ է ինքը, փառքի տերն էլ... Իսկ նրա փառքը կար, և նրա գրա-

կան համբավը թեև հանդարտ ու անաղմուկ, բայց դահիճներ նվաճեց, հոգիներ գերեց՝ նրան բերելով համազգային ճանաչում ու պատիվ:

Կյանքի վերջին պահին կնոջ հուսահատ պնդումին. «Համո, մի խոսք ասա», – պատասխանել է. «Հետո»³⁸: «Հետո», էլ է՞րբ... «Հետո», այսինքն՝ հավերժության մեջ, այսինքն՝ իր բանաստեղծություններով, որ կենդանի ձայնով խոսում են ժողովրդի հետ...

Հ.Սահյանը բանաստեղծ էր: Զբաղվել է նաև թարգմանական գործունեությամբ: Ապրեց շուրջ 60 տարվա անընդմեջ գրական կյանք:

Հ. Սահյանը թարգմանություններ է արել ադրբեջանական, բելոռուսական, թուրքմենական, էստոնական, իսպանական, պարսկական, ռուսական, վրացական, ուկրաինական, ֆրանսիական գրականություններից, Ասիայի և Աֆրիկայի բանաստեղծներից: Դրանց մեծ մասը լույս է տեսել ինքնուրույն ժողովածուներում, իսկ մի մասը՝ առանձին գրքերում: Այս բնագավառին ևս Սահյանը կարևորություն է տվել, որովհետև գիտակցում էր, որ «Թարգմանությունները դառնում են քո ստեղծագործության մի մասը»³⁹: Այսինքն՝ նա ստեղծագործական կապի մեջ էր թարգմանվող կյուրթի հետ, և պատահական չէ, որ ցանկանում էր հրատարակել իր թարգմանությունների մի առանձին ժողովածու:

Ծանոթագրություն

1. Հ.Սահյան, Արևը բարձրանում է սարից, «Գրական թերթ», 1959թ., թիվ 43, 23 հոկտեմբեր:
2. Տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988, հ. 2, էջ 601:
3. Հ.Սահյան, Որ կյանքը շարունակվի. – «Պիոներ կանչ», 1986, թիվ 86, 29 հոկտեմբեր:
4. Հ.Սահյան, Պոեզիան կօզնի մարդուն, հարցազրույց. – «Գրական թերթ», 1972, , թիվ 18, 28 ապրիլ:
5. Նույն տեղը:
6. Նույն տեղը:
7. Բաֆֆի, Երկերի ժողովածու, 12 հատորով, Ե., «Սովետական գրող», 1986, հ. 8, էջ 8:
8. Տես Բ.Կարապետյան, Հայրուր տարվա երկխոսություն, Ե., «Հայաստան», 1990, էջ 157:
9. Հ.Սահյան, Արևը բարձրանում է սարից:
10. Հ.Սահյան, Մարդու և բնության դաշինքը. – «Երեկոյան Երևան», թիվ 116, 19 մայիս:
11. Նույն տեղը:
12. Հ.Սահյան, Ապրում եմ մանկությանս

պաշարներով, հարցազրույց. – «Տաթևի համալսարան», 1993, թիվ 3, հուլիս:

13. Հ.Սահյան, Կոմիտասը՝ մենք ենք. – «Սովետական Հայաստան», 1969, թիվ 272, 21 նոյեմբեր:
14. Նույն տեղը:
15. Հ.Սահյան, Պոեզիան կօզնի մարդուն:
16. Հ.Սահյան, Մշակիր քո հողը. – «Սովետական դպրոց», 1984, թիվ 17, 26 ապրիլ:
17. Հարցազրույց Համո Սահյանի հետ. – «Շիրակ», Բեյրութ, 1974, թիվ 4: Ընդգծումը՝ Դ.Գ.:
18. Հ.Սահյան, «Քո ձյունագեղ բարձունքից արևի հոտ է գալիս», հարցազրույց. – «Ավանգարդ», 1984, թիվ 45, 13 ապրիլ:
19. Հ.Սահյան, «Դեռ չի գրվել մեծ հերոսամարտին արժանի գործ». – «Գրական թերթ», 1975, թիվ 19, 9 մայիս:
20. Նույն տեղը:
21. Նույն տեղը:
22. Նույն տեղը:
23. Հարցազրույց Համո Սահյանի հետ. – «Ավանգարդ», 1975, թիվ 57, 14 մայիս:
24. Հ.Սահյան, Դեռ չի գրվել մեծ հերոսամարտին արժանի գործ:
25. Հ.Սահյան, Խոսք «Ավանգարդ»-ի 65-ամյակին. – «Ավանգարդ», 1988, թիվ 58, 6 մայիս:
26. Հ.Սահյան, Խոսքը ատոմից ուժեղ է, հարցազրույց. – «Սովետական Հայաստան», 1987, թիվ 99, 24 ապրիլ:
27. Հ.Սահյան, Բանաստեղծությունը ցավից է ծնվում, հարցազրույց. – «Գարուն», 1984, թիվ 9, էջ 43:
28. Նույն տեղը, էջ 44:
29. Նույն տեղը, էջ 45:
30. Նույն տեղը, էջ 46:
31. Հ.Սահյան, Ապրում եմ մանկությանս պաշարներով:
32. Նույն տեղը, էջ 47:
33. Հ.Մաթևոսյան, Ամեն շնչավորի հանգրվանը. – «Գրական թերթ», 1989, թիվ 16, 14 ապրիլ:
34. Հ.Սահյան, Գերված մի արծիվ, հարցազրույց. – «Սովետական Հայաստան», 1990, թիվ 69, 25 մարտ:
35. Խոսում է Համո Սահյանը, կազմող Հ.Յովնաթան, Ե., «Վարք» հրատարակչություն, 1992, էջ 111, 119:
36. Հ.Մաթևոսյան, Նրա կենսարար շունչը. – Գրական թերթ», թիվ 10, 23 հուլիս:
37. Հ.Սահյան, Որ կյանքը շարունակվի:
38. Հ.Այվազյան, Ժամանակների արանքում. – «Հայություն», 1993, թիվ 14, 27-31 օգոստոս:
39. Հ.Սահյան, Պոեզիան կօզնի մարդուն:



ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՍԼՈՒՍԸ



Սահյանը հոր՝ Սահակ
Գրիգորյանի հետ (1959 թ.)

Համո Սահյանի մայրը



Սահյանը
որդիների՝
Նաիրիի և
Արայի հետ

Եղբայրը՝
Հակետը



Քույրը՝ Հայկուհը



Քույրը՝ Հասմիկը



Քույրը՝ Սեդան



Քույրը՝ Ելենան



Արա Սահյան, 1954-2003



Լաիրի Սահյան



Քոյրը՝ Պայծառը



Բանաստեղծը կնոջ Մարիա Հակոբյանի, որդիների՝ Արայիկի և Լաիրիի հետ



Սահյանը երկրորդ կնոջ Սվետլանա Խաչատրյանի հետ



Համո Սահյանի մեծ քոյրը՝
Հասմիկ (Հայկանուշ)
Գրիգորյանը




Սահյանը որդու՝ Արա Սահյանի հետ, 1954 թ.



Սահյանը կնոջ՝ Մարիա Հակոբյանի հետ (1962 թ.)

Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուների (հայերեն և ռուսերեն) ցանկը

- ◆ Որոտանի եզերքին, 1946, 63 էջ, տպ. 3000, Երևան
- ◆ Առագաստ, 1947, 95 էջ, տպ. 3000, Բաբու
- ◆ Սլացքի մեջ, 1950, 91 էջ, տպ. 3000, Բաբու
- ◆ Зеленый тополь, 1950, 98 стр., тир. 5000, Баку
- ◆ Благодарность, 1952, 70 стр., тир. 3000, Ереван
- ◆ Ծիածանը տափաստանում, 1953, 140 էջ, տպ. 3000, Երևան
- ◆ Բարձունքի վրա, 1955, 219 էջ, տպ. 5000, Երևան
- ◆ На высотах, 1956, 123 стр., тир. 3000, Ереван
- ◆ Նաիրյան դալար բարդի, 1958, 320 էջ, տպ. 5000, Երևան
- ◆ Зеленый тополь Наири, 1959, 122 стр., тир. 5000, Москва
- ◆ Հայաստանը երգերի մեջ, 1962, 459 էջ, տպ. 5000, Երևան
- ◆ Մայրամուտից առաջ, 1964, 216 էջ, տպ. 7000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (երկու հատորով), հատոր Ա, 1967, 428 էջ, տպ. 10000, Երևան
- ◆ Քարափների երգը, 1968, 183 էջ, տպ. 15000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (երկու հատորով), հատոր Բ, 1969, 356 էջ, տպ. 10000, Երևան
- ◆ Перед закатом, 1969, 128 стр., тир. 10000, Москва
- ◆ Տարիներս, 1970, 41 էջ, տպ. 5000, Երևան
- ◆ Годы мои, 1971, 151 стр., тир. 5000, Ереван
- ◆ Սեզամ, բացվիր, 1972, 280 էջ, տպ. 20000, Երևան
- ◆ Կանչե, կռունկ, 1973, 440 էջ, տպ. 15000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (երկու հատորով), հատոր 1-ին, 1975, 496 էջ, տպ. 10000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (երկու հատորով), հատոր 2-րդ, 1976, 508 էջ, տպ. 10000, Երևան
- ◆ Իրիկնահաց, 1977, 308 էջ, տպ. 15000, Երևան
- ◆ Зови журавль, 1977, 182 стр., тир. 10000, Москва
- ◆ Ժայռից մասուր է կաթում, 1979, 172 էջ, տպ. 10000, Երևան
- ◆ Կանաչ-կարմիր աշուն, 1980, 236 էջ, տպ. 20000, Երևան
- ◆ Поздние ягоды, 1981, 64 стр., тир. 10000, Ереван
- ◆ Տոհմի կանչը, 1981, 384 էջ, տպ. 20000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (երկու հատորով), հատոր 1-ին, 1984, 392 էջ, տպ. 30000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (երկու հատորով), հատոր 2-րդ, 1984, 440 էջ, տպ. 30000, Երևան
- ◆ Դաղձի ծաղիկ, 1986, 208 էջ, տպ. 15000, Երևան
- ◆ Стихи, 1986, 206 стр., тир. 10000, Москва
- ◆ Лирика, 1989, 248 стр., тир. 25000, Москва
- ◆ Աստվածս ցորենին ասեմ, 1988, 54 էջ, տպ. 3000, Երևան
- ◆ Ինձ բացակա չղնեք, 1999, ...էջ, տպ. 1000, Երևան
- ◆ Հատընտիր (ուֆայակներ, հայրեններ, տրիոլետներ), 2001, 211 էջ, տպ. 1000, Երևան
- ◆ 60 և 1 հայրեն, 2003, 132 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Ինձ բացակա չղնեք, 2003, 250 էջ, տպ. 1500, Երևան
- ◆ Ինձ բացակա չղնեք, 2004, 250 էջ, տպ. 1500, Երևան
- ◆ Ինչ էլ լինի կգամ (բանաստեղծություններ հայերեն և ռուսերեն թարգմանությամբ), 2004, 232 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Քառյակներ, 2004 և 2007, 36 էջ, տպ. 500-ական, Երևան
- ◆ Դաղձի ծաղիկ, 2006, 215 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Ու ես եկա, ես հարուստ էի, Կգամ, Տարիներս, Ինձ բացակա չղնեք, 2007, 14 էջ, տպ. 1000, Երևան
- ◆ Արցունքով լցված սերեր, 2007, 152 էջ, տպ. 1000, Երևան
- ◆ Ընտրանի (հայ դասական պոեզիա), 2010, 116 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (չորս հատորով), հատոր 1-ին, 2012, 414 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Ընտրանի, 2012, 278 էջ, տպ. 300, Երևան
- ◆ Ինձ բացակա չղնեք, 2014, 250 էջ, տպ. 1000, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (չորս հատորով), հատոր 2-րդ, 2014, 464 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (չորս հատորով), հատոր 3-րդ, 2014, 350 էջ, տպ. 500, Երևան
- ◆ Երկերի ժողովածու (չորս հատորով), հատոր 4-րդ, 2014, 256 էջ, տպ. 500, Երևան
- ◆ 60 և 1 հայրեն, 2014, 132 էջ, տպ. 500, Երևան



«Հայաստանը երգերի մեջ»

1962թ., 459 էջ, տպ. 5000, Երևան

Չանգեզուր

Ինձ կանչում է երկիրն այն անձրևոտ,
Ուր մի գիշերվա մեջ՝ մարդահասակ
Մի եղեգ է աճում անձալի մոտ:

Ինձ կանչում է երկիրն այն արևոտ,
Ուր քարակույտերի հոտն է ննջում
Խոշոր եղջերավոր ժայռերի մոտ:

Ինձ կանչում է երկիրն այն բարձրաբերձ,
Ուր որոտի պահին չես իմանում
Ա՞մպ է ոտքերիդ տակ, թե փվվող քերձ:

Ինձ կանչում է երկիրն այն խորախոր,
Ուր թե երեկ քար ես նետել անդունդ,
Արձագանքը պիտի լսես այսօր:

Ինձ այն հողն է կանչում, ուր նույն պահին,
Երբ որ ձորերի մեջ բալն է հասնում,
Ձնծաղիկն է բացվում ձորագլխին:

Ինձ կանչում է երկիրն այն խիստ ու մեղմ,
Ուր կարող ես հանգիստ դու տարվա չորս
Եղանակը տեսնել մի ժամվա մեջ:

Ինձ կանչում է երկիրն այն գեղանի,
Ուր մարդը մեղմ է, խիստ, բարձր է ու խոր
Բնաշխարհի նման իր հայրենի:

1954 թ.

Երբ ամեն անգամ բացվում է օրը,
Մտքով մտնում եմ Դարբասի ձորը...
Կարծես լսում եմ մորս օրորը,
Երբ սուսփում է ծանոթ բարդին:

Դեմս փովում է իմ կանաչ Լորը,
Իմ փառավորը, իմ բախտավորը...
Հիշում եմ մորս մութ-կապույտ շորը,
Երբ փայթալովում է մշուշն արտին:

Ա՛խ, այնպես ջերմ է և այնպես խոր է,
Այն սերը, որով սիրում եմ Լորը,
Այդ սիրով միայն սիրում է մորը
Ազնիվ, անձնագոհ նրա որդին:

Ինչպե՞ս չսիրեմ ես այս բոլորը,
Երգիս մեջ թռչում, երգում է Լորը,

Անվերջ ծաղկում է, ժպտում է նորը
Այս հնամենի սարահարթին:

1953 թ.

Այստեղ սարեր կան


Այստեղ սարեր կան սարերի վրա,
Եվ ձորերի մեջ ձորեր կան մթին,
Ես չեմ հավատում իմ մայրամուտին,
Այստեղ սարեր կան սարերի վրա:
Այս իմ աշխարհն է, և ես եմ նրա
Քարերից բուսած բանաստեղծ որդին,
Այստեղ սարեր կան սարերի վրա,
Եվ ձորերի մեջ ձորեր կան մթին:
Ես չեմ հավատում իմ մայրամուտին:

1961 թ.

Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու,
Չորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար,
Թե իմանար մեզ ինչից է գրկում,
Առավոտն ինքն էլ երևի չգար:

Մենք մեզ իրար մեջ որոնում էինք,
Դաշնությունն էինք հյուսում մեր հոգու,
Աստղերից կախված օրորվում էինք...
Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու:

1961 թ.



«Մայրամուտից առաջ»

■ 1964թ., 216 էջ, տպ. 7000, Երևան

Ինչ արած, մարդ եմ

Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացե՛ք, էլի, ես մի քիչ բարդ եմ.
Քարի պես պինդ եմ, հողի պես փխրուն,
Ինչքան չլինի դեռ մի քիչ մարդ եմ:

Ես իմ իշխանն եմ, իմ գլխի տերը,
Եվ ինձ թվում է մեծ ու անպարտ եմ,
Բայց ինչ-որ բանով և ինչ-որ մի տեղ
Դեռ թիպարտ եմ:

Մերթ ոտից-գրուխ գարդեր եմ հագնում,
Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ,
Մերթ քար ու քարափ, մերթ վայրի խոսքան,
Մերթ կանաչ անտառ ու ցանած արտ եմ:

Հավիտենության լծորդն եմ անդու,
Բայց և կարճատև մի ակնթարթ եմ,
Փոթորիկներ են եռում հատակիս,
Թեև երեսից այսպես հանդարտ եմ:

Կյանքս ավարտելու վրա եմ արդեն,
Բայց ինքս, ավա՛ղ, դեռ անավարտ եմ...
Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացե՛ք, էլի, ի՞նչ արած, մարդ եմ:

Օրը մթնեց

Սերո Խանգաղյանին

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:

Կայերի մեջ՝ ծղոտարույր
Թիկնոցը հագած
Նինջ էր մտնում ամառային
Օրը վաստակած:

Իջնում էին խոհուն, խոնարհ
Դեզերի ուսին
Մի կարթնահունց երկնակամար,
Մի ծերատ լուսին...

Մեկը մեկից ամաչելով,
Ե՛վ գուսպ, և՛ հավաք,
Նստում էին մերոնք կարգով-
Կրտսեր ու ավագ:

Նստում էին և սպասում
Մինչև պապը գար,
Մինչև բակում Ծաղիկ եզան
Չանգը ծլնգար:

Պապը գալիս, սուփրի գլխին
Նստում էր շուքով,
Եվ լցվում էր տունը դաշտի
Բույր ու շուկով...

Ու երբ տատս ձեռքն էր առնում
Շերեփը իր հին,
Գդալները բնագդաբար
Մղմկում էին:

Թանապուրի տաք գոյրը
Գերանին առնում
Եվ սյունն ի վար գոր-գոր
Ուլունք էր դառնում:

Վայելում էր տաք թանապուր,
Լավաշ ու սամիթ
Մշխատավոր մի գերդաստան
Պարզ ու միամիտ...

Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա...
Ես եմ մնում լոկ իբրև հուշ
Եվ իբրև վկա:

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:

Ես նման եմ առեղծվածի

Ես նման եմ առեղծվածի,
Ես նա եմ, ով առանց վարձի
Երգեց մարդկանց հարսանիքում
Ու հարսանիք չարավ կյանքում,
Ես նա եմ, նա՛,
Ով իր տան մեջ մնաց անտուն,
Ով քնի մեջ մնաց արթուն,
Ով իր տվածն էլ ետ չառավ,
Ով սպանվեց, բայց չմեռավ:
Ես նա եմ, ով արդեն չկա,
Ես նա եմ, ով դեռ պիտի գա...

Ես նման եմ առեղծվածի:

ՀԱՅ ՈՊՈՒՆ ՈՐԿԵՆԻԿՑ ԿԱՐԳԱՆՑ ԱՐՇԱԼՅԱՆ ԳՈՒԵՑԻԿԱԼ ԳՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՐԳՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Քարափնների երգը»

1968թ., 183 էջ, տպ. 15000, Երևան

Ժամանակները խառն են ու խրթին,
Ինչ-որ տագնապ է ամպն իր հետ տանում,
Ինչ-որ սարսուռ կա անտառի շուրթին,
Ինչ-որ խորհուրդ կա, որ չեմ հասկանում:

Ժամանակները խառն են ու խրթին,
Հողմը ննջում է, հովն քմբոստանում,
Ինչ-որ հատաչ կա քարափի շուրթին,
Ինչ-որ բողբոջ կա, որ չեմ հասկանում:

Ժամանակները խառն են ու խրթին,
Հողը գծվում է, ջուրն իմաստնանում,
Մեռած հույսերը ծնվում են կրկին,
Ու սիրտս կրկին բան չի հասկանում:

Լեռների վրա ու տափաստանում,
Լույսի մեջ անգամ խորհուրդ կա մթին,
Օրերն իրարից բան չեն հասկանում,
Ժամանակները խառն են ու խրթին...

Տարիներս

Տարիներս, տարիներս,
Ո՞ր մնացին տարիներս,
Կանաչ-կարմիր,
Մե, սպիտակ տարիներս,
Իմ ստոն ու տաք,
Ծուռ ու շիտակ
Տարիներս, տարիներս:

Ո՞ր գնացին ինձ ու կրակ,
Ոտաբորիկ տարիներս,
Իմ թևավոր, իմ թևաբեկ
Տարիներս,
Իմ սիրավոր,
Իմ ձիավոր,
Տարիներս ու՞ր մնացին:

Որքան ցավեր տվին, առա՛ն,
Որքան սևե՛ր, սևե՛ր, սևե՛ր,
Տարիներս, տարիներս:
Որքան չասված խոսքեր տարան,
Որքան չասված սերե՛ր, սերե՛ր,
Տարիներս:

Ո՞ր գնացին, ինչպե՛ս անցան
Քար քրքող, երկինք խմող
Տարիներս, տարիներս,
Մյս ինչքան շուտ վրա հասան
Իմ ցուպավոր,
Մտուպավոր տարիներս:

Մեն մի օրով հավաքվեին
Գային, գային
Եվ աճյունիս վրա լային
Իմ բախտավոր,
Մղետավոր տարիներս,
Կանաչ, կարմիր, սև, սպիտակ -
Մարած բոլոր
Տարիներս, տարիներս:

Հողոտ, մղեղոտ մի մութ էր հագնում,
Հետո լուսնյակ էր հագնում մեր տունը:
Կտուրին բարդու սավերն էր քնում,
Եվ շեմքի վրա քնում էր շունը:

Կիսարթուն քամին կտուրից թռչում,
Ցանկապատին էր հենում կոնակը:
Մնթեղի վրա կատուն էր ննջում,
Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը:

Բակում փուլ գալիս և առոք-փառոք
Որոճում էին օրինած եզները...
Տան կտուրի տակ արթուն էին լոկ
Հողոտ, մղեղոտ մեր երագները:

Մնտան գիշերը գլուխը հակում,
Ծնկները գրկում ու մտածում էր...
Իսկ երագները աչք էին փակում,
Երբ որ լուսաստղը աչքը բացում էր:

Հողի տակ են մեր հոգսերը անհոգ,
Բարդու շրշումը, շունը, գիշերը,
Իսկ հողի վրա խշխշում են լոկ
Հողոտ, մղեղոտ իմ վերնուշերը:

Քարափներ իմ, քարափներ,
Ձեր շուրթերի վրա ես
Սարսուռ ու դող եմ:
Ձեր հոնքերի վրա ես
Ձյունի փափուկ մի փաթիլ,
Մի կաթիլ ցող եմ:
Ձեր մեջքն ամուր է այնքա՛ն,
Դուք կանգուն եք հավիտյան,
Ես կոացող եմ:
Ձեզ ժամանակն է դարբնել,
Դուք մնացեք, քարափներ,
Ես գնացող եմ...
Բայց գնալուց հետո էլ,
Երբ որ կանչեք, կարթնանամ,
Ձեր ոտքերի տակ՝ մի բուռ
Խոր քնած հող եմ:

«Մեզամբ բացվիր»

1972թ., 280 էջ, տպ. 20000, Երևան

Ու ես եկա

Արդեն չգալ չէի կարող,
 Ինչ էլ լիներ, պիտի գայի:
 Ու ես եկա... Ասում են թե
 Թոնրի շուրթին ուշաթափվեց
 Խրտանած շողքը լուսնյակի,
 Լուսաբացի մի պատառիկ
 Երդիկն ի վար թրթռալով,
 Ընկավ մորս հոգնած բարձի
 Եվ իմ անհոգ բախտի վրա:
 Երդիկն ի վեր թրթռալով
 Իմ առաջին ճիշդ թռավ
 Եվ առաջին ծիծեռնակի
 Ծիվ-ծիվի հետ
 Քիվից կախվեց բակի վրա:
 Իրարանցում եղավ հետո
 Խաչկապապենց հին հողայում...
 Պապս ասաց. - Տեր երկնային,
 Քո փառքը շատ, իմ աչքը լույս,
 Տանս մի այում,
 Մի գերան էլ ավելացավ:
 Խաչակնքեց իր երեսին
 Ու մրմնջաց տատս մի բռու.
 - Անխիդճ աստված, այս ի՞նչ արիր,
 Խեղճ ու կրակ սուփրիս վրա
 Մի ավելորդ գդալ բռնող,
 Մի բերան էլ ավելացավ:
 Ինքն իրենից ամաչեց
 Հայրս անցավ այումնի ետև,
 Մրբեց քրտինքն իր ճակատի
 Եվ աչքերի արցունքը տար
 Ու երևի մտքում ասաց.
 - Արտ ու կայում ցավիս ընկեր
 Գութանս քող ու կամ քող
 Մի ճիպոտ էլ ավելացավ...
 Առան-ավին, տվին-առան,
 Ու ոչ մեկը գլխի չընկավ,
 Որ աշխարհի կանաչ-կարմիր
 Երագների ետևն ընկած
 Երկու ոտ էլ ավելացավ:
 Երագներից քարե ծաղիկ
 Եվ քարեղեն հեքիաթ հյուսող
 Երկու ձեռք էլ ավելացավ:
 Ու թեկուզ այս մեղքերը շատ,
 Վերքերը շատ աշխարհի մեջ
 Մի նոր մեղք էլ,
 Մի նոր վերք էլ ավելացավ,
 Բայց նրա մեծ համերգներում
 Մեր աշխարհի համ ու հոտով
 Մի նոր երգ էլ ավելացավ:

Եվ ի՞նչ է տվել

Եվ ի՞նչ է տվել ինձ բնությունը, -
 Հավիտյան նորոգ իր հնությունը,
 Իր ջրվեժների անքնությունը
 Եվ հոգնահողով իր կրկնությունը...
 Իր քարափների համբերությունը,
 Իր խղճի առաջ իր գերությունը,
 Իր անդունդների տալոտությունը,
 Մեփական վերքերն ասպարհներու
 Կարողությունը...
 Իր սևահողի խոնավությունը,
 Մասրենու փշոտ խոնարհությունը...
 Ինքնաբաշխումի ուրախությունը,
 Ինքնամերժումի խիզախությունը,
 Ինքնության պատիվն ու թանկությունը,
 Ինքն իր մեծությամբ չպարծենալու
 Երջանկությունը...

Պտուղը քաղող չկա

Պտուղը քաղող չկա,
 Մասրենի, սարի մասրենի,
 Պատիվը պահող չկա,
 Մասրենի, բարի մասրենի:
 Ասում են՝ էլ մարդ չկա,
 Որ փնտրի քնքանքը փշոտ,
 Քեզ գրկի ու տաքանա,
 Մասրենի, ժայռի մասրենի:

Երեսիդ նայող չկա,
 Մասրենի, վայրի մասրենի,
 Կրքերիդ կրակը քեզ
 Թող այդպես այրի, մասրենի...
 Կանգնել ես քո բարձունքին,
 Մեկուսի, մենակ, մենավոր...
 Իմ երես առած դարում
 Դու լքված այրի, մասրենի:
 * * *

Դու սարերի մեջ ու ձորերի մեջ,
 Ամենանորը դու նորերի մեջ
 Ու հների մեջ ամենահինը,
 Դու ի՛ մը, ի՛ մը, ամենամիմը:

Ես մի բռու մրկած մամուռը քարիդ
 Եվ հետին հյուլեն կենսական ծառիդ,
 Ես քո բողբոջը, ծիլը, կոկոնը,
 Ես քո՛նը, քո՛նը, ամենաքոնը:

ՀԱՅ ՈՉՈՒՆ ՈՐԵՆԻԿԻՑ ԳՍՐԵՍԾ ԱՐՇԱԼԱԿԱՆ ՊՈՒՆԵՏԻՎ

ՀԱՅ ՈՐՈՒՆ ՈՐԵՆԿԻՑ ՂԱՐՑԱԾ ՍԱՐՅԱՆԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱԿԱՆ

«Իրիկնահաց»

■ 1977թ., 308 էջ, տպ. 15000, Երևան

Հավատում եմ քեզ

Հավատում եմ քեզ, հայոց հանճար,
Քեզ համար դեռ տոներ կգան,
Նարեկացիներ կգան աշխարհ,
Սայաթ-Նովաներ կգան:

Նրանց թռիչքը մենք չունեցանք,
Երևի հնար էլ չկար...
Բայց մի համարիք մեղք ու հանցանք,
Մի կոչիր թույլ ու տկար:

Մենք հազար մազե կամուրջ անցանք,
Տագնապով անցանք և ահով...
Եվ մենք ինքներս կամուրջ դարձանք,
Որ անցնես մեր վրայով...

Հավատում եմ քեզ, հայոց հանճար,
Քեզ համար դեռ տոներ կգան...
Դեռ Վարուժաններ կգան աշխարհ,
Միամանթոներ կգան:

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Մուրք հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեծ:

Մեր լեզուն արյունն է մեր,
Արյունից ավելի թանկ,
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք, որ կանք:

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Բ՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:

Գարունը գա

Գարունը գա,
Գնամ հասնեմ Գյազրեյիս...
Այի, մեխակներ,
Մանուշակներ անթառամ:

Ամպը հագնեմ,
Շողքը հագնեմ Գյազրեյիս,
Պապիս նստած
Քարին նստեմ տաքանամ:

Յոթը տարվա
Կարտուն առնեմ Գյազրեյիս,
Հետն անրջեմ,
Հետը ննջեմ, արթնանամ:

Անձրևն անցնի,
Փեշը քամեմ Գյազրեյիս,
Փեշը քամեմ -
Ջուրը խմեմ ծաղկահամ:


Ամպը քաշեմ,
Կուրծքը բանամ Գյազրեյիս,
Մոր կաթի հոտ,
Մոր հոտ առնեմ, մանկանամ,

Փարվեմ-փոփեմ
Հասակն ի վեր Գյազրեյիս,
Հոր շնչի հոտ,
Հոր հոտ առնեմ, մարդանամ:

Ա՛յս, երանի ես էլ ձեզ պես ծերանայի

Ա՛յս, երանի ես էլ ձեզ պես ծերանայի,
Ձեզ պես մաքուր-մաքուր ու վաստակած...
Կուրծքս նորից՝ հողին, ամպրոպներին տայի
Ու ծաղկեի նորից՝ կանաչ-կարմիր հագած:

Աղբյուրներս նորից՝ ծարավներին հոգնած,
Կանաչներս նորից եղնիներին տայի,
Սպիտակած լեռներ, իմաստուններ Մյունյաց,
Ա՛յս, երանի ես էլ ձեզ պես ծերանայի:



«Կանաչ-կարմիր աշուն»

1980թ., 236 էջ, տպ. 20000, Երևան

Աշխարհ իմ

Աշխարհ իմ, քեզանից
Մի բան եմ հարցնելու.
Ճիշտ է, որ քեզ մի օր
Դրախտ են դարձնելու:

Աշխարհ իմ, քեզանից
Մի բան եմ խնդրելու.
Իրավունք առաքիր՝
Քեզ նորից փնտրելու:

Աշխարհ իմ, ականջիդ
Մի բան եմ ասելու.
Քեզանից փախչելիս
Քո գիրկն եմ վազելու:

Աշխարհ իմ, քեզ նորից
Մի բան եմ հուշելու.
Քո բոլոր մեղքերը
Ես էլ եմ քաշելու:

Աշխարհ իմ, հավատա,
Որ քեզ չեմ ներելու,
Թե ինքդ քո գլխին
Փորձանք ես բերելու:

Աշխարհ իմ, քեզանից
Մի բան եմ շահելու.
Քո բոլոր վերքերը
Կրծքիս եմ շարելու:
Աշխարհ իմ, աշխարհից
Բան չունեմ տանելու,
Չգիտեմ՝ առանց քեզ
Ես ի՞նչ եմ անելու:

Աշխարհ իմ, ինձանից
Այսքանն է մնալու.
Իմ հոգուց մի մասունք
Այս տանն է մնալու:

Շներ

Բարձրահարկերի պատշգամբներից
Ուրիշ տեսակի շներ են հաչում ...
Այդ շներն ուրիշ տեսակ են աճում,
Ուրիշ տեսակ են հաչում: Բախտավոր
Աստղի տակ ծնված շներ են դրանք:
Ոչ ցավն են տեսել Բողոքը նախահոր,
Ոչ բուք են տեսել, ոչ բախտի հեգնանք:
Ոչ խնայել են գույքը տնային,
Ոչ պահպանել են մաքրությունը տան,
Ոչ էլ օրենքն են սերտել՝ շնային

Նախնական լեզվի շարահյուսության:
Ծնվել են անհոգ, անհոգ մեծացել,
Ոչ իրենց բախտի գինն են իմացել,
Ոչ էլ իմաստը իրենց «հաֆ-հաֆի»:
Թե Բողոքը պատրվեց գունդ մի հնար,
Հավիտենական քնից արթնանար,
Նրանց հաչոցից գույն չէր հանի:
Հաչում են, կարծես գորտ է կոկորում:
Բայց ի՞նչ արած, շան կոչում են կրում,
Եվ պիտի հաչեն, ըստ կոչման պարտքի,
Ծների վրա փողոց ու բակի...
Եվ չեն հարցնում ժամանակ ու ժամ,
Հաչում են նրանք: Եվ մինչև անգամ
Ծիծեռնակների վրա են հաչում,
Խելքը, անարար ծիծեռնակների,
Որ շենքերից շենք շեղակի թռչում,
Կերն են վաստակում իրենց ձագերի:
Բայց ծիծեռնակը ծիծեռնակ է միշտ...
Ծիծեռնակները թռնում են գնում
Եվ այդ շներին շան տեղ չեն դնում:

Հայաստան ասելիս

Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,
Հայաստան ասելիս թևերս բացվում են,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:

ՀԱՅ ԴՊՈՒՄՆԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



«Դադճի ծաղիկ»

1986թ., 208 էջ, տպ. 15000, Երևան

Տատնա ձորում

Միտքս գնաց, գնաց, գնաց,
Մնաց Տատնա ձորում...
Տատնա ձորի ամեն քերծից
Մարքություն է ծորում:

Քարերն այնտեղ մանկան աղբյուր -
Արցունքներ են քամում,
Եվ ձկնիկներն արցունքի մեջ
Ծիածան են ծամում:

Ժայռի գլխից վառ կակաչի
Խարույկներ են բխում,
Կողքի ժայռը հանգիստ նստած
Ամպ ու մեզ է ծխում:

Զնծաղիկն է դեռ մի լանջին
Բարուրի մեջ քնում,
Դեմի լանջին ուրցի բույրից
Մեղվի ուշքն է գնում:

Մի բարբարոս ցուրտ կա այնտեղ
Ու շոգ մի բարբարոս...
Նախաստեղծման ի՛նչ դաշնություն,
Նախաստեղծման քառու:

Միտքս գնաց, գնաց, գնաց,
Մնաց Տատնա ձորում...
Տատնա ձորի ամեն քերծից
Մանկություն է ծորում:

Ա՛խ, ինչքան զոհեր ենք տվել,
Որ պահենք այս հողը մի բուռ,
Անունը Հայաստան պահենք:
Արյունի ծովեր ենք տվել,
Որ պահենք այս հողը մի բուռ,
Անունը Հայաստան պահենք:
Քրտինքի ծովեր ենք տվել,
Որ կորդը բուրաստան պահենք,
Տաճար ու ոստան պահենք:

Այս մի բուռ քարեղեն հողում,
Այս մի բուռ քարեղեն հողում
Դեռ ինչքան ջանք է հարկավոր,
Որ պահենք հացը հոգևոր:
Եվ պահենք մեր քայլը՝ այս խենթ
Քառատրոփ թռչող կյանքի հետ:
Եվ պահենք մեզանով լեզուն
Մեր հոգուն տարեկից լեզուն:

Մեփական մեր բույրը պահենք,
Եվ պահենք մեր համը սեփական,

Մեփական մեր գույնը պահենք,
Եվ ապրենք տանը սեփական:
Եվ տոհմ ու գերդաստան պահենք,
Եվ պահենք այս հողը մի բուռ,
Անունը՝ Հայաստան պահենք:

Տագնապ

Ինձ մի մեծ տագնապ է համակում,
Մոտալուտ աղետի մի սարսափ:
Մայվարդի լճերն են ցամաքում,
Ընկնում են հույսերս թևաթափ:

Մայվարդի լճերն են ցամաքում...
Բաղերը չվում են տագնապած,
Քարերը՝ թվում են տագնապած,
Ճչում է հարփիսը ծմակում:

Աստղերը գլխին է հավաքում,
Գիշերը նստում է բլուրին,
Շշուկով ասում է բոլորին.
- Մայվարդի լճերն են ցամաքում:

Երանի շնչեին գիշերով
Աստղերն ու ձկնեղը ցամաքում...
Ափերից, ափերից քաշվելով
Մայվարդի լճերն են ցամաքում:

Մայվարդի լճերն են ցամաքում -
Ակնեղը պարզության հրաշքի,
Փակվում են ակունքներն իմ երգի,
Բախտն իրե՞ն, թե՞ մեզ է ծանակում:

Երագիս մեջ

Ախ, պապիկ, անուշ պապիկ,
Ես՝ թոռը քո առաջին,
Քեզ տեսա երագիս մեջ՝
Խոնարհված վեցկու մաճին,
Հորովել էին ասում՝
Նման էր որբի լացին...
Կայծակ էր խփել կարծես
Քո ծնկանն ու քո աջին...
Չորքել էր ակոսի մեջ
Եղբայրդ՝ եզր Լաչին:
Կաթում էր այտերդ ի վար
Արցունքը հատիկ, հատիկ
Եվ ինքդ քեզնից, ավաղ,
Խեղճ էիր տասնապատիկ,
Պապիկ, իմ անուշ պապիկ:

«Ինձ բացակա չդներ»

■ 1999թ., 249 էջ, տպ. 1000, Երևան

Ուրիշ հնար չկա

Պատը շարվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Պարտքը մարվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Նախնյաց սուրբ հավատի
Մասունքների դիմաց
Ծունկը ծալվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Եթե սիրտդ սիրտ է,
Միտք ճամփի վրա
Խելագարվի պիտի,
Ուրիշ հնար չկա:

Հոգսը կրվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Բախտը կովի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Խավարն ինչքան էլ խուլ՝
Վերջը պիտի ցրվի,
Լույսը փոփի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Ինչքան խառն ու խրթին,
Ինչքան էլ բարդ ու բիրտ,
Կյանքն ապրվի պիտի,
Ուրիշ հնար չկա:

Ձիրքը տրվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Միտքը սրվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Երբ բառերը հոգուդ
Ակնամուտն են քանդում,
Երգը գրվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Իսկ երբ երգի գլխին
Կայծակներ են պայթում,
Երգը կովի պիտի,
Ուրիշ հնար չկա:

Աշխարհից ես բան չեմ հասկանում.
Մոլորված ճամփորդ է աշխարհը,
Մեզ ուրիշ մի բախտ է խոստանում,
Բայց էլի մեզ խորթ է աշխարհը:

Չգիտեմ, թե ով է մեր տերը,
Ասում են՝ բոլորս մի տուն ենք...
Բայց տան մեջ իշխում են մեծերը,
Մեծերը փոքրերին ուտում են:

Մեծերը, փոքրերին ուտելով,

«Օգնել են» և հիմա հոգնել են:
Այս, գոնե մեծերի հորդորով
Մեկմեկու չուտեին փոքրերը:

Աշխարհից ես բան չեմ հասկանում.
Մոլորված ճամփորդ է աշխարհը,
Մեզ ուրիշ մի բախտ է խոստանում,
Բայց էլի մեզ խորթ է աշխարհը:

Քչանում ենք

Մենք մեր մասին բան չենք ասում,
Մեր բերանը խցանում ենք:
Կաթիլ-կաթիլ, գլոր-գլոր
Իրար գայիս, խտանում ենք:
Լինել է պետք, մենք լինում ենք,
Երևալը՝ քարը գլխին,
Մեր լինելով չարը մերժում,
Բարին է, որ խթանում ենք:
Բաց ենք անում ինքներս մեր
Ճանապարհը ծուռ ու շիտակ,
Վտակ-վտակ գետ ենք դառնում,
Ո՞վ է ասում՝ լճանում ենք:
Արտ ու հովտի ոտքերն ընկնում,
Վիզ ենք ծռում, որ մեզ խմեն...
Ծարավներ են խեղճ ու կրակ,
Եվ խղճում ու խեղճանում ենք:
Աշխարհը՝ փուչ... փուչ աշխարհում
Այսքան փուչ ու փշերի մեջ,
Ի՞նչ իմանաս, մենք էլ գուցե,
Ինչ-որ չափով փչանում ենք:
Ի՞նչ է ասում ձեր խիղճը ձեզ,
Երբ մեզ քոռուփուչ են անում
Փուչերը այս փուչ աշխարհի,
Եվ մենք այսպես քչանում ենք:

Աղոթեմ

Ինձ համար ամեն ինչ կորած է,
Էլ ոչ ոք և ոչինչ ես չունեմ:
Ծամում եմ իմ բաժին չոր հացը,
Եվ քունս չի տանում, որ քնեմ:

- Հիվանդ է ձեր խոնարհ երգիչը,
Երևի հոգևարք է ապրում:-
Ասում են. - Աղոթանք դեռ քիչ է,
Արժանի պատիժը չի կրում:

Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի...
Մրա՞նք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս շտապի...

ՊՐԻՆՏՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅ ՈՐՈՒՆ ՈՐԿԵԼԻԿՑ ԳԱՐԳԱԾ ԱՄՅԱՆԱԿԱԿԱՆ ՊՈՆԵԳԻԱՆ

Հայրեններ

Ճանապարհ ընկնեմ գնամ,
Եվ իբրև կրտսեր գրչակից,
Ներումն խնդրեմ խոնարհ՝
Գուսանաց գուսան Քուչակից,
Որ գուլյալ ջուր խմելով
Իր գուլյալ աղբրանցն ակից՝
Փորձեցի հայրեն հանել
Իմ խելքի անձուկ փչակից:
* * *

Օրերը շատ են խառնակ,
Աշխարհից բան չեմ հասկանում,
Մի աշխարհ, հազար երես,
Ատառից բան չեմ հասկանում:
Մութ խաղ են խաղում գլխիս,
Այս խաղից բան չեմ հասկանում...
Խելքի ծով մեծավորի
Չոր ճառից բան չեմ հասկանում,
Չոր ծառ է, և չորությամբ
Գատճառից բան չեմ հասկանում:
Մեղքը շատ, խիղճը մեռած
Իմ դարից բան չեմ հասկանում:
* * *

Խղճիդ հետ գրույց արա
Ամեն օր քնելուց առաջ:
Երկնքի հոնքին նայիր
Աղունդ փռելուց առաջ:
Մի պահ քեզ ծառ զգա
Կացիճիդ սրելուց առաջ:
Քուչակի սիրտն ունեցիր
Հայրեններ գրելուց առաջ:
* * *

Նեղություն շատ եմ քաշել,
Որ մարդկանց նեղություն չտամ,
Որ նրանց սրտերին խոսվեք,
Մտքերին շեղություն չտամ,
Որ նրանց իմ երգերում
Չսպրված տող ու տուն չտամ,
Հավատամ, և կասկածին
Հոգուս մեջ տեղադրեմ չտամ:
* * *

Ի՞նչ տեսակ մարդիկ էին,
Փորձ արի, փորձս չտեսան:
Ծոցիս մեջ աստղեր կային,
Բաց չարին, ծոցս չտեսան:
Աչքիս մեջ մազ փնտրեցին,
Մահացու խոցս չտեսան:
Ա՛խ, իրենց աչքի առաջ
Այրվեցի, բոցս չտեսան:
* * *

Չուրն ընկանք, կրակն ընկանք,
Չմեռանք, բայց և չամրացանք,
Խլացանք շատ լսելուց
Եվ շատ լռելուց համրացանք:
Որպեսզի թեթև ապրենք,
Մեկմեկու ուսին ծանրացանք...
Ախր մենք ավստս էինք,
Այս ինչո՞ւ այսքան մանրացանք:
* * *

Եվ հորս հոտն եմ առնում
Ավերակ մեր տան քարերից,
Հին այգու հին ծառերից
Ես նրա կարոտն եմ առնում:
Խորհուրդն եմ լսում նրա
Իմ շուրջը պայթող բառերից...
Ինչ առա, ետ տվի...
Ամոթից այտերս են այրվում:
* * *

Ի՞նչ եղավ... Մենք մեզանից
Հեռացանք կամաց-կամաց,
Մեկմեկու հիշել անգամ
Թերացանք կամաց-կամաց:
Հոգուերի մարախն արտում
Հնձելու հասկ չթողեց...
Դեռ կարգին ջահել չեղած,
Ծերացանք կամաց-կամաց:
* * *

Մեզանից ի՞նչ են ուզում,
Ախր մենք ո՞ւմ ենք վնասել:
Եղբայրներ շատ ունեցինք,
Ինչո՞ւ ենք մենակ մնացել...
Չի բռնում նրանց լեզուն
Մի անգամ մեր մի լավն ասել,
Թե ինչ է, հանկարծ
Փորձել ենք մեր հին ցավն ասել:
* * *

Եվ նորից թափառ մի ցեղ
Մեզ մեզնից խլել է ուզում,
Մեր ազնիվ արյունը տար
Թեյի տեղ խմել է ուզում:
Մեր արտը դարձնել արոտ,
Մեր վիզը ծոց է ուզում:
Էհ, թող գա, թե մեղքերի
Ճահճի մեջ խրվել է ուզում:

Քառյակներ

Մի՞շտ է թոհուրոհ աշխարհում,
Ո՞վ է բախտից գոհ աշխարհում,
Ով է տեսել գոհը՝ դահիճ,
Իսկ դահիճը գոհ՝ աշխարհում:
* * *

Մութ է... Ճշմանք, ի՞նչ անենք,
Ներե՞նք, գթա՞նք, ի՞նչ անենք:
Ատում ես.- Կա՞նք, թե՞ չկանք, -
- Շատ էլ որ կանք, ի՞նչ անենք...
* * *

Հավքը ծկլթաց... թափուր բնից էր...
Մոր ուշքը գնաց... լույսը տեղից էր:
Եզը երդիկից հանեցին տարան,-
- Ոչինչ,- սասցին,- գողը անից էր:
* * *

Ոչ մի բանաստեղծ և ոչ մի ազգի
Չի գրել կյանքում կատարյալ մի երգ:
Կատարյալ երգը շուրջ է հասկի
Եվ սևահողի շնչառությունն է:
* * *

Բոլոր սերերն ծերատ մնացին,
Կենաց թասերն թերատ մնացին,
Իմ երազները - չվող թռչուններ -
Կես ճամփի վրա թևատ մնացին:
* * *

Փորձը քեզ ճարտար մի ձեռք է դարձնում
Եվ սիրտդ՝ կարած-կարկատած մի վերք:
Փորձի մեջ երգի սերմը չի ծլում...
Անփորձությունը և փորձություններն են,
որ դառնում են երգ:

Այս, լցվելուց, դատարկվելուց մաշվեցի,
Ինքս իմ յուրով տապակվելուց մաշվեցի:
Հին-հինավուրց իջևանի դրան պես
Շատ բացվելուց ու փակվելուց մաշվեցի:
* * *

Արթնանային. արթնանային լավերս,
Հասկանային, հասկանային ցավերս,
Տեսնեին, թե ի՞նչ են առնում ու տային
Աշնանային, աշնանային ծառերս:
* * *

Աղբյուրները մանկությունս կրկնում,
Քարերն ի վար ձայն են տային ու գնում:
Այրանում են գետերի մեջ կատարի
Եվ մտնում են ծովն այլևոր ու աղի:
* * *

Հոգուս մեջ սևեր են ծավալվում,
Մեռել կա հոգուս մեջ, թաղում է...

Իսկ օրը գարնան մեջ թավալվում՝
Եվ ինքն իր պոչի հետ խաղում է:
* * *

Ինձ մարել մի փորձեք անտեղի,
Մի խառնեք մոխիրն իմ անթեղի,
Առանց ինձ կյանքն ի՞նչ է անելու,
Ես խղճի շուրջն եմ իմ ցեղի:
* * *

Փորձը քեզ ճարտար մի ձեռք է դարձնում
Եվ սիրտդ՝ կարած-կարկատած մի վերք:
Փորձի մեջ երգի սերմը չի ծլում...
Անփորձությունը և փորձություններն են,
որ դառնում են երգ:
* * *

Խեղքս քո խրատից չկշտացավ,
Տված ու խլածից չկշտացավ,
Այս, կրակված սիրտս, անսիրտ աշխարհ,
Անսիրտ քո կրակից չկշտացավ:
* * *

Աչքս անտառից չկշտացավ,
Ականջս բառից չկշտացավ,
Այս, հոգնած ոտքս՝ դար ու քարոտ
Այս ճանապարհից չկշտացավ:
* * *

Կռունկները պարան-պարան
Աչքերի մեջ առան-տարան
Իմ Շաքիի Նիազարան,
Մարտաց սարն Աղոթարան:
* * *

- Ի՞նչ դարպասներ են ճոնչում նորից,
Ի՞նչ նժույգներ են վրնջում նորից...
- Չորգորա գետն է, գիշերն ինձ հուշեց,
Քո կարոտներն են մոնչում նորից:
* * *

Մրսած մի տոթ կա օդում,
Լուռ մի որոտ կա օդում,
Անպը շրթունք է արել,
Անպրոպի հոտ կա օդում:
* * *

Տառնա գարթնած հովտում էլի
Դաղձ եմ քաղում ես իմ ձեռքով...
Տիեզերքն է ինձանով յի,
Թե՞ ես եմ յի տիեզերքով:

ՊՊԵՏՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԳՈՐԾԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՈՐԾԱԿՆԵՐԻ ԳՐԱԳՈՐԾԱԿՆԵՐԻ

ՀԱՅ ՈՐՈՒՆ ՈՐՈՒՆԻՑ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՄՐԱՆՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՇԳԻՍԱԼ

Տրիուլեաներ

Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
Փառք տանք ցորենին և օրհնաբանները:
Ցորենի մահով մահը խափանենք,
Էլի ցորենն է աշխարհի հիմքը:
Մայրը՝ հողն է սուրբ, հայրը՝ երկինքը,
Հող դարձնենք քարը և ցորեն ցանենք:
Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
Փառք տանք ցորենին և օրհնաբանները:

Բանաստեղծություն, դու պիտի փրկվես
Անճարակության համաճարակից,
Այս ներմուծական ախտ ու վարակից,
Բանաստեղծություն, դու պիտի փրկվես:
Պիտի թանձրանաս ու պիտի պրկվես
Ու չվախենաս խուժ ու խարակից:
Բանաստեղծություն, դու պիտի փրկվես
Անճարակության համաճարակից:

Երբ որ նշան են բռնել թիկունքիդ,
Քո զգաստությունն էլ իմաստ չունի...
Երբ բարձրությամբ են ծառ կոչում ծառին,
Բնի հաստությունն էլ իմաստ չունի,
Այս եղած-չեղած մեղաց աշխարհում,
Հնում իր ուղին շեղած աշխարհում
Իմաստունների թիվն այնքան է շատ,
Որ իմաստությունն էլ իմաստ չունի:

Հասկը չի քնում, անքուն է հասկը,
Պաշտում եմ հասկի ուռած աչքերը:
Մարգարեներ են բոլոր հասկերը,
Հասկը չի քնում, անքուն է հասկը:
Օրհնաբանում են հասկի հրաշքը,
Բոլոր ազգերի բոլոր արքերը:
Հասկը չի քնում, անքուն է հասկը:
Պաշտում եմ հասկի ուռած աչքերը:

Երկրպագում եմ ստվերը հասկի:
Թող քնդունի իմ խանդն ու ողջունը
Հասկի ստվերում ննջած մրջյունը:
Երկրպագում եմ ստվերը հասկի:
Հասկի ստվերը բախտ է հավաստի,
Եվ բախտի կանչը արտի շրշունը...
Երկրպագում եմ ստվերը հասկի:
Թող քնդունի իմ խանդն ու ողջունը
Հասկի ստվերում ննջած մրջյունը:

Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու,
Ցավերն ինձանից դեռ հեռու էին...
Ծառերը շուտով ծաղկելու էին,
Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու:
Արագիլները տուն էին գալու,

Ձմռան մեղքերը ներվելու էին...
Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու,
Ցավերն ինձանից դեռ հեռու էին:

Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում
Կրեքզի շուտով երգն իր կարասյի,
Բան չի փոխելու, ինչքան տառասյի
Իմ բաժին աշխարհն այս մեծ
աշխարհում...
Բոլոր ցավերս իրար է խառնում
Դեղին պատարագն աշնանաթափի,
Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում
Կրեքզի շուտով երգն իր կարասյի:

Հոգուդ կրակը թե՛ պիտի պահես,
Եղանակները վաղ են ցրտելու,
Փշաքաղվել է թուփը ցրտենու,
Հոգուդ կրակը թե՛ պիտի պահես:
Թե՛ որ պահեցիր, ամենասահեղ
Սառնամանիքն է քեզնից խրտնելու...
Հոգուդ կրակը թե՛ պիտի պահես,
Եղանակները վաղ են ցրտելու:

Մի օրավար կյանքս անցավ
Անձրևի տակ ու կայծակի:
Այնպես արագ, հանկարծակի
Մի օրավար կյանքս անցավ...
Թվում է թե չվերջացավ,
Թվում է նոր պիտի ծաղկի...
Մի օրավար կյանքս անցավ
Անձրևի տակ ու կայծակի

Ես ծնվել եմ երգի համար
Ու մինչև մահ պիտի երգեմ,
Երգով կորդեր պիտի հերկեմ,
Ես ծնվել եմ երգի համար:
Ամեն տարիք, ամեն պայման,
Ամեն սահման պիտի հերքեմ,
Ես ծնվել եմ երգի համար
Ու մինչև մահ պիտի երգեմ:



Թարգմանություններ

ԱՐՄԵՆԻ ՏԱՐԿՈՎՍԿԻ Կոմիտաս

Մի, իմ հոգին խելագարված
Կոմիտասի նման
Վեր է նայում՝ աչքը փակած,
Պետք չէ ոչինչ նրան:

Ակնարկում են աստղերը, տե՛ս,
Երկնի կապույտ մուժից,
Արթնացել են նրանք կարծես
Իմ մեջ քնած ուժից:

Արյունոտ է շապիկս, քանզի
Դիպչում է իմ մարմնին
Վաղնջական կոտորածի
Մարսափների քամին:

Նորից Այա-Մոֆիայի
Քարն է իմ դեմ քայլում,
Եվ իմ բոքիկ ոտքը հողի
Տաք մոխիրն է այրում:

Ղազարոսն է ելել շիրմից,
Եվ իր գործը չի, թե
Խնձորենու ծաղիկներն իր
Ակնարկում են մտել:

Կոկորդի մեջ օդն է թաղկվում
Օդը մարդ կսպանի,
Աստղերի մեջ սուտն է ծաղկում
Ահեղ դատաստանի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՈՒՇԿԻՆ Ճշմարտություն

Վաղուց ի վեր իմաստուններն անդադար
Ճշմարտության կորած հետքերն են փնտրել
Եվ դատելով նրանք երկա՛ր ու երկա՛ր,
Նախնիների հին-հին խոսքերն են կրկնել:
Պնդել են. «մերկ ճշմարտությունն անպատճառ
Թաքում է կել, ջրհորի մեջ է մտել»:
Եվ խմելով ջուրը նրանք միասնաբար,
Աղմկել են «կգտնենք»:

Սակայն մեկը, որ բարերարն էր մարդկանց
(Որ համարյա ծերուկ Մելենն էր կարծես),
Եվ վկա էր անմտությանը նրանց,
Հոգնած ջրից և աղմուկից նա հոգնած,
Մի կողմ թողած մարդախույսին մեր անտես,
Առաջինը գինին հիշեց թանկագին,
Եվ մինչ մրուր թասն ըմպելով, վերջապես
Ճշմարտության դեմքը տեսավ հատակին:

ԼԵՎ ՕՉԵՐՈՎ Ինչպե՞ս ապրեմ

Ինչպե՞ս ապրեմ,

Ինչպե՞ս ապրեմ այսուհետև:
Հինգ հազար տող գրեմ դարձյալ,
Ինքս ինձ հետ
Հինգ հազար օր կովեմ դարձյալ,
Տքեմ դարձյալ հինգ հազար օր:
Չորից հետո էլի մի ձոր,
Ճանապարհներ
Ու տագնապներ հազարավոր,
Մպաստումներ երկարատև...

Այսուհետև,
Ինչպե՞ս ապրեմ այսուհետև:
Ճյուղը մի նոր բողբոջ կտա,
Ու բողբոջից Նոր մի տերև աշխարհ կգա:


Հետո աշնան քամու թևին,
Աստղի նման մի երկրային,
Թևին կտա երկինքն ի վեր
Այդ տերևը թեթև, թեթև:
Իսկ ես, իսկ ես
Ինչպե՞ս ապրեմ այսուհետև...
Ինչպե՞ս ապրեմ այսուհետև,
Երբ ընկերս պատճառ բռնած
Իր ցավը սուտ
Եվ քաշ արած աչքերը բուր,
Անց է կենում իմ աչքերին չնայելով,
Սովորական բարևն անգամ
Խնայելով...

Երբ կենցաղն իր մանրուքներով
Պատ է քաշում
Ընկերուհուս և իմ միջև,
Երբ աճում ու սար է դառնում
Վիրավորանքն անտանելի,
Եվ այդ սարի ստվերը սև
Մթազնում է սերն իմ սրտի՝
Շողքն իմ օրվա,
Հրամայում է, որ նա սատի,
Անէանա

Եվ չունենա թոփչք ու թև,
Ասացեք ինձ,
Ինչպե՞ս ապրեմ այսուհետև:
Ինձ լոկ մի կարճ կյանք է տրված,
Իսկ ես, իսկ ես
Դեռ ուզում եմ փորձել, փորձվել,
Եվ կրկնակի և եռակի
Իրագործվել,
Եվ չվատնել վայրկյանը գուր,
Եվ դատարկել
Ոսկե թասը մինչև մրուր:
Քանի դեռ չեմ
Այրվել կապույտ կրակի մեջ,
Հարկավոր է,
Որ շտապեմ չտապելով, -
Եվ լուրջան,
Եվ առօրյա աղմուկի մեջ
Վճռեմ պիտի,
Ինքս ինձ երբեք չխաբելով, -
Օրերի մեջ կարմիր ու սև
Ինչպե՞ս ապրել,
Ինչպե՞ս ապրել այսուհետև:

ՊՊԵՏԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՍԸՐՈՒՄԸ. ՍԱՀՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅՆԵՐԻ ՀԵՏ



Վահագն Դավթյան,
Համո Սահյան,
Հրանտ Մաթևոսյան



Սիլվա Կապուտիկյանի հետ



Համո Սահյան, Սերո Խանզադյան



Համո Սահյան, Վահագն Դավթյան, Հրաչյա Հովհաննիսյան



Համո Սահյան, Վահագն Դավթյան



Սերո Խանզադյան, Համո Սահյան, Ռազմիկ Դավթյան, Լևոն Սկրտչյան



Ռազմիկ Դավթյան, Համո Սահյան



Տիգրան Մանսուրյան, Համո
Սահյան, Արաքս Մանսուրյան

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՍԼԲՈՒՇ. ՍԱՀՅԱՆԸ ԺՄԱՄԱՆԱԿԱԿԻՅՆԵՐԻ ՀԵՏ



Ընկերներով. Ռազմիկ Դավոյան,
Էդուարդ Իսաբեկյան, Համո Սահյան,
Արմեն Վարդանյան, Վարդերես
Կարապոզյան



Տիգրան Մանսուրյան, Համո Սահյան,
Արաքս Մանսուրյան, Հասմիկ Սահյան,
Հրանտ Մաթևոսյան



Համո Սահյան,
Վահրամ
Մավյան



Համո Սահյան,
Սուրեն
Այվազյան,
Գարեգին
Սևունց



Լև Օգերով,
Համո
Սահյան




Համո Սահյան, Էդուարդ Իսաբեկյան



Գուրգեն Մահարի, Համո Սահյան



Համո
Սահյան,
Շչորս
Դավթյան



Դավիթ Գասպարյան, Համո Սահյան

ՀՈԳԵՎՈՐ ԱՐՄԱՏՆԵՐ

Համո Սահյան. «Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական և ոգեղեն գծի մեջտեղի բանաստեղծը»


Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ-Սայաթ-Նովա-Թումանյան) և ոգեղեն (Լարեկացի-Շնորհալի-Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ՝ ես ձգտել եմ այն բանի, որ այս երկու թևերը իմ մեջ ձուլվեն, խառնվեն իրար: ...Ես ձգտել եմ ժողովրդական-ֆոլկլորային մտածողությունը դնել մյուս ձևերի մեջ: Բայց, համենայն դեպս, ես պետք է խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել: ...Իմ գրական հակումները բազմաթիվ կողմերով պայմանավորված են մեր լեզվով, մեր լեզուն մեր ազգային նկարագիրը լիովին պահպանել է:

✓ Տերյանն անկրկնելի է: Թումանյանը, Իսահակյանն իրենց գործն արել էին: Նրանցից հետո Տերյանը պիտի ծնվեր, որպեսզի ազգային զգացումները բարձրացնելու համաշխարհային արվեստի մակարդակի: Նրանք հայ ժողովրդին ազգային ինքնաճանաչման բերին բուն ժողովրդական սյուժեներով, մոտիվներով, իսկ Տերյանն ընդհանրացրեց բարձր արվեստով:

✓ Չեստ այն աշխարհ Տերյանի փոքրիկ ժողովածուն կտանելի: Թումանյանն ամենամեծն է: Թումանյանը շատ է օբյեկտիվ, պիտի երկար մտածես, որ թեզ չեքմացի: Իսահակյանին եմ մոտենում այրում է: Չարենցն՝ այդ երկուսը խառնած: Մեծ է, բայց ոչ մեկն է, ոչ էլ մյուսը: Չարենցի մեջ շատ բանաստեղծություններ կան: Անհատա-



Եղիշե Չարենց



Վահան Տերյան


կանությունը կա: «Մահվան տեսիլը» հերիք էր անմահալու համար:

✓ Լարեկացին ծանր կլիներ ինձ համար: Վարունժանը ծանր կլիներ: Պուշկինը մեծ է, բայց Եսենինի, Լերմոնտովի հետ կուզեի գիշերցերել խոսել: Չա, խոսքն էն աշխարհի մասին է: Մեծարենցն է հոյակապ, բայց Տերյան կտանելի: Եվ դա թերևս բացատրելու բան չէ: Տերյանի հետ կգրուցեի: Կարող էի նույնիսկ ասել՝ այս բառը տեղում չէ:


✓ Տերյանը, ասում ես, ի՞նչ էր անելու, եթե ապրեր: Այն, ինչ արել էր մինչև... Այն էր անելու, ինչ անում է: Ցավա-



Գրիգոր Լարեկացի



Ստեփան Շնորհալի



Սահապետ Քուչակ



Սայաթ-Նովա

հատուցել մեր ստեղծագործական ու քաղաքացիական պարտքերը, այնպես, որ ամեն պարտքի հատուցումը լիներ նոր պարտքերի հրամայական: Լա մեզ կսովորեցնել այրվելով ապրել և մեռնել այրվելով...

✓ Տերյանը մեզ կսովորեցնել, որ մեր արքայական, մեր ոսկեղենիկ լեզվի բառերի հետ երբեք տուն-տուն չհաղակ, որ ժամանակի շիկացած բովերի վրա սիսեռի հատիկների նման չաղանձենք այդ բառերը, այլ պահենք ինչպես հողի մարդը փնջած սերմացուն: Կսովորեցնել այնպես անել, որ բառերը մերձենան իրար ոչ թե մի պատահական թիթեյա տուփի ու ծառից ընկած մի որբւայրի տերևի նման, այլ սիրահարված աղավախների կտուցների պես...

✓ Եթե չլինեին Տերյանի խշշացող բարդիները, Չարենցի Լորթի բարդիները, իմ բարդին էլ չէր ծնվի: Իմ բանաստեղծությունն էլ պիտի չէր ծնվի, ուրիշ կերպ կծնվեր: Մինչև Տերյանը բարդի բառը չես գտնի, եղպես չես գտնի: ●

լիորեն կարճ տևեց Տերյանի կյանքը, բայց ստեղծագործական կյանքը մշուշից անցավ մինչև հայոց աշխարհի լուսեղեն ոլորտը, մինչև բիբլիական Արարատի սլացքը, մինչև անհայտը հավիտենության: Լա մեզ սովորեցնելու էր՝ ոչ թե օգտվենք գրողի կոչման ընձեռած արտոնություններից, այլ՝ ճաշակենք կոչված գրողի ստեղծագործական ակնությունը: Լա մեզ թույլ չէր տա մեր ուսերին իբրև բեռ տանել թվացյալ հարստությունն ու մեծությունը: Մեր տազնապած մոլորակի և տազնապած աշխարհի հոգսերը կուզենար տեսնել այդ ուսերի վրա: Լա մեզ կսովորեցնել՝ անմաքորդ

Արևը բարձրանում է սարից...

ՎԵՐԱԿՆԵՐ ԿՐԻՍՏՈՍԻ

Փոքրիկ էր մեր գյուղը, շատ փոքրիկ: Նա Տաթևի մի թաղի չափ էլ չկար, իսկ Բռնակոթը կարող էր մեր գյուղը առնել սինու մեջ, դնել գլխին և անցկացնել Սիսիանի լեռնանցքը: Փոքրիկ էր մեր գյուղը, բայց նա ուներ այնպիսի հարստություններ, որ մեծերը չունեին: Նա տանձ ու ինձորի, բալ ու կեռասի փարթամ այգիներ ուներ, որ բռնում էին Լորագետի ամբողջ հովիտը Մրցաջրից մինչև Կուզբար, և դպրոց ուներ նա, երկու դասասենյակով, թիթեղյա կարմիր տանիքով, կրապատ մի շենք՝ կանգնած ձիթանի ձորալանջին:

Երբ ես հինգ տարեկան էի, դպրոցի դռները փակ էին, և զանգը չէր ծլնում... Պատճառը հետո իմացա: Ժամանակները խառն էին:

– Արա, ա խոխեք, հուսումնարանի հանդավարը չկոխեք, կտուրը քար չզցեք, ձեռքներդ կչորանա, – ասում էր հանդապահ Իսոն, ձիթանի լանջից մեզ քշելով դեպի ձորը: Դպրոցի շենքը պահպանվում էր սրբությամբ:

Պատանիները հառաչանքով էին հիշում իրենց ընդհատված դասերը, հառաչանքով կրկնում Ալեքսանդր վարժապետի խորհուրդներն ու հրաժեշտի խոսքերը, իսկ ավելի մեծահասակները սրտառուչ պատմություններ էին անում Ավանես վարժապետի և Գառնիկ վարժապետի մասին:

Ավանես վարժապետ, Գառնիկ վարժապետ, Ալեքսանդր վարժապետ... Երեք ուսուցիչ էր ունեցել մեր դպրոցը: Երեքն էլ գյուղում թողել էին բարի համբավ, բարի հիշատակ և անմոռաց հուշեր:

– Ալեքսանդր վարժապետն ուրիշ էր, նա Էջմիածնից եկած ջահել սուրբ էր, աշխարհի տակն էլ գիտեր, գլուխն էլ, – ասում էր Վանեսանց Կուքի ապերը, երբ նստում էր Մեղանի սալ քարին և հիշում անցած-զնացած օրերը, – Ալեքսանդր վարժապետը, – շարունակում էր նա, – լուսնի պես շողաց մեր գյուղի վրա ու մայր մտավ: Բայց որտեղ էլ որ լինի, մի օր արևի պես կբարձրանա սարից ու լույս կտա այս մթին ձորերին:

Ալեքսանդր վարժապետի մասին այսպիսի խոսքեր ես շատերից և շատ էի լսում: Լսում և նախանձում էի իմ ավագ համագյուղացիներին, որոնք տեսել էին նրան, լսել

նրա զրույցները, գրել-կարդալ սովորել նրանից: Լսում և երագում էի՝ երբևէ տեսնել այդ մարդու դեմքը թեկուզ հեռվից հեռու:

Տարիներ անցան: Լավ չեմ հիշում, 26 թե 27 թվի գարունն էր: Մեր գյուղի և հարևան Շենաթաղի միջև դարձյալ կրկնվում էր ամեն տարի կռիվներով վերջացող դարավոր վեճը Արագետի սարահարթի համար:


Երեք տարի առաջ գավառային գործադիր կոմիտեն որոշում էր ընդունել այդ սարահարթը արոտավայրի համար տալ հողադուրկ Լորին և հաստատել «երկարատև խաղաղություն»: Բայց շենաթաղցիները որոշել էին հոնի կարմիր մահակներ փշրել «հանուն հայրենիքի» և ոչ մի թիզ հող չզիջել «թշնամուն»:

Ամեն տարի գարնանը մերոնք քոչը սարն էին տանում և սարահարթի սահմանի վրա հանդիպելով շենաթաղցիների կատաղի դիմադրությանը, վերադառնում էին գյուղ:

Մերոնք թուղթ էին ցույց տալիս, խոսում օրենքի անուկից, իսկ շենաթաղցիները մահակներ թափահարում:

Շենաթաղցիների «բանակից» դուրս էր գալիս «օխտը տարի ծիծ կերած» Սարու Ավանեսը և ասում էր՝ սարի գլխին օրենք չկա, օրենքը գրված ա հոնի կարմիր մահակի ծերին, և իր «գորբերին» հարձակման հրաման էր արձակում: Սկսվում էր կռիվը: Հոնի մահակները չէին ինսյուն անգամ քաղաքից եկած հողաչափին: «Կուրգանի» քարերը Մարգերի լանջն ի վար գլորվում էին դեպի Մրցաջրի կիրճը...

Այդ գարնանը մերոնք դարձյալ քոչը սարն էին տարել և կանգ էին առել սա-





րահարթի սահմանում, Մարգերի բլուրների վրա: Շենաթաղոցները դարձյալ դիրք էին բռնել՝ հոնի կարմիր մահակներով, ավանդական եղանակներով և մղանի կրթերով «գինավառ»: «Օխտը տարի ծիծը կերածը դարձյալ իր խոսքն էր կրկնում օրենքի մասին և իր համագյուղացիներին ոգեշնչում՝ ի մարտ:

Շենաթաղի երեխաներն իրենց մեծերի խրատասանքով շնորհ «բըս» էին տալիս մեզ վրա: Իսկ մեր գյուղացի Վանեսանց Պողոս ամին մեզ սաստում էր, որ շներին քարով չտանք:

– Ա՛ խոխեք, սաքիթ կացեք, կռիվը մագից ա կախված, հենց որ շներին քարով տաք՝ կսկսվի:

Երկու կողմից էլ պատվիրակներ էին հավաքվել այն բլուրի վրա, որտեղ ամեն տարի կանգնել ու փլվել էր սահմանի «կուրգանը»: Բանակցություններ էին վարում: Իսկ մենք՝ երեխաներս, թաքնվել էինք քարերի ետևում, որ «թամաշա ասենք կռվին»:

Այդ ժամանակ, հեռվում, «խոզ» աղբյուրից եկող ճանապարհի վրա, երևացին երեք ձիավոր: Շենաթաղոցներն ավելի բորբոքվեցին, մեր գյուղացիներն ավելի հանդարտվեցին: Ձիավորները մոտեցան: Երկուսը գյուղխորհուրդների նախագահներն էին, իսկ երրորդը քաղաքից եկած մարդ էր երևում... Տիրեց կարճատև լռություն, և հետո, հանկարծակի երկու կողմերի ուրախ ձայները խառնվեցին իրար, – Ալեքսանդր վարժապետը, Ալեքսանդր վարժապետը...

Քաղաքից եկածը Ալեքսանդր վարժապետն էր, այն մարդը, որին ես այնքան երազել էի տեսել: Նախ շենաթաղոցներին մոտեցավ, ընդհանուր բարև տվեց, և հետո սկսվեցին անհատական գրկախառնությունները: Յետո բարևեց մերոնց:

– Ի՞նչ սիրուն սարեր ունեք, բա մարդ էս ծաղիկների ծովի մեջ կռիվ կանի՞, – ասաց նա, նստեց քարին, գյուղացիներին հարց ու փորձ արեց մեռնող-ապրողի, նրանց ապրուստի մասին, ապա բավականին ժամանակ խոսեց: Նրա խոսքերից շատ բան չլսեցի, չհասկացա և հիմա չեմ հիշում...

Խոսքը վերջացրեց, տեղից վեր կացավ և կարգադրեց, որ քարեր հավաքեն «կուրգանի» համար:

«Կուրգանը» բարձրացավ Մարգերի ամենաբարձր բլուրի վրա: Ալեքսանդր վարժապետը կանգնեց «կուրգանի» մոտ, նայեց դիմացի սարերին, ձեռքը երկարեց և ասաց, – Մյուս «կուրգանն» էլ դրեք, այ էստեղ, «Դավաբոյնու» գլխին:

Սահմանը որոշվեց: Երկու գյուղերի դարավոր վեճի վերջին շիկացած կծիկները թաղվեցին նրա «կուրգանների» տակ:

– Դե գնացեք, մեր պապերի գերեզմանները օրհնեցեք, հալալ լինի ձեզ, բարով վայելեք, և ճուտ լորեցիք, – ասաց «օխտը տարի ծիծ կերած» Սարու Ավանեսն իր խաչատ ձայնով և հոնի կուպալը տնկեց հողում՝ իբրև հավիտենական հաշտության նշան:

– Շնորհակալ ենք, և շենաթաղոցիք, – պատասխանեց Վանեսանց երկար Բեղավոր Պողոս ամին և կծերով ու կաթասներով բեռնված էշին հրելով՝ սահմանն անցկացրեց: Մեր բոչը գնաց՝ վրաններ գարկելու Արագեղի «Յուրդատեղում»:

Ես տեսա իմ երագած մարդուն՝ Ալեքսանդր վարժապետին: Յիմա ես չեմ կարող վերարտադրել իմ այդ օրվա ապրումները: Գրիչս անգոր է: Միայն

երկու բան լավ հիշում եմ. մեկ այն, որ մտածում էի՝ թե ինչ ուժ ունի Ալեքսանդր վարժապետը, որ նրա առաջ շենաթաղոցները ծալուուն չհանեցին, այլ, ընդհակառակը, սիրով հրավիրեցին և տարան իրենց գյուղը: Մեկն էլ այն, որ նախանձից պայթում և արտասուքից խեղդվում էի, թե ինչո՞ւ նրա ձիու սանձը ես չեմ բռնել, այլ իմ դասընկեր Յամբարձումը...

Նրա գնալուց հետո Կուբի ապերն ասում էր՝ տեսա՞ք, թե Ալեքսանդր վարժապետը ոնց արևի պես բարձրացավ մեր սարից ու լույս տվեց ձորերին: Դե թող մեր գյուղի կովերը Արագեղի ծաղիկն արածեն, ու կաթից էլ թող ծաղկի հոտ գա:

Ես տեսա Ալեքսանդր վարժապետին, որն այնքան մեծ հարգանք և հեղինակություն ուներ մեր գյուղում: Եվ հիմա էլ տասնամյակների միջով տեսնում եմ նրան՝ կանգնած Մարգերի ամենաբարձր բլուրի վրա, «կուրգանի» մոտ, ձեռքը դեպի Դավաբոյնու օբատեղերը պարզած: Տեսնում եմ նրան... Եվ հուշերիս մեջ նրա ասպետական կերպարի առաջ իրենց ճերմակ գլուխներն են խոնարհում իմ ծննդավայրի երախտապարտ լեռները...

Ես տեսա Ալեքսանդր վարժապետին... Նորից տարիներ անցան: Իմ դասագրքում կարդացի «Ծիրանի տափը»: Դա մեր երկու գյուղերի դարավոր վեճի պատմությունն էր, միայն անուններն էին փոխված:

– Ո՞վ է այս Ակսել Բակունցը, որ այսքան լավ գիտեր մեր Արագեղի պատմությունը...

Վանեսանց Կուբի ապերն ասում էր՝ Ալեքսանդր վարժապետը կլինի, ուրիշներն ասում էին՝ չէ..

Յետո ես «Խոնարհ աղջիկը» կարդացի: Պատմությունը դարձյալ մեր գյուղից էր:

– Ո՞վ է այս հեղինակը, է՞րբ է եղել մեր գյուղում, ի՞նչ լավ է ճանաչում մեր գյուղացիներին, – մտածում էի ինքս ինձ, և գաղտնիքը պարզել չէի կարողանում:

Գաղտնիքը պարզվեց: Տարիներ հետո Ակսել Բակունցի ինքնակենսագրության մեջ կարդացի. «1915-16 ուսումնական տարում, գաղթի պատճառով, փակվել էր ճեմարանը, և ես այդ տարին ուսուցիչ «հրավիրվեցի» Չանգեզուրի Լոր գյուղը: Առաջին անգամ ճանաչեցի գյուղը, նրա մարդկանց: Յետո շատ անգամ այդ թվի հիշողությունները օգնել են ինձ»:

Ես տեսա Ալեքսանդր վարժապետին... Բայց ի՞նչ իմանայի, որ նա իմ հայրենի գյուղում ապրելով միայն ինն ամիս, կդառնար նրա հավիտյան կենդանի բնակիչը:

Ի՞նչ իմանայի, որ Ալեքսանդր վարժապետը մի օր կդառնար Ակսել Բակունց, կբանդակեր իմ հայրենակիցների ազնիվ կերպարները և կավանդեր սերնդե-սերունդ:

Ի՞նչ իմանայի, որ նա կգար ու կգնար, և նրանից հետո եկող մեր արձակագիրները նրա չքնաղ «Միրհավի» փետուրներով կգարդարեին իրենց պատմվածքների էջերը և «Ալպիական մանուշակի» ցողերը շաղ կտային իրենց տողերի վրա:

Ի՞նչ իմանայի, որ նա լուսնի պես կշողար մեր գրականության երկնակամարում, կունենար ողբերգական մայրամուտ և հետո արևի պես կբարձրանար սարից, ինչպես բարձրանում է այսօր:

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ» N43, 1959թ., 23 ՀՈՎՏԵՍԵՐԻ



ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուխտասար

Ուղտասարի ժայռապատկերներ (ևսև՝ Ուխտասարի ժայռապատկերներ), հազարավոր ժայռապատկերներից կազմված Նախնադարյան հնավայր... Աշխարհագրորեն այն տարածվում է Սյունիքի բարձրավանդակի կենտրոնական հատվածում գտնվող Ուղտասար և Ծղուկ լեռների շրջակայքում: Ժայռապատկերների սփռվածությունն առանձին կուտակումներով ձգվում է դեպի հյուսիս և հյուսիսարևելք:





© Andranik Keshishyan

գ. Դարբաս



Արզումանի կամուրջը Դարբասի մոտ (1675թ.)



Ծառու Սուրբ Հովհաննես եկեղեցին

ՄՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ Դարբասի ձոր

Գտնվում է Լորաձոր գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից մոտ 1500-1600 մ բարձրության վրա: Հեռավորությունը Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապան քաղաքից կազմում է մոտ 112 կմ, իսկ Սիսիան քաղաքից հեռու է մոտ 11 կմ դեպի հարավ-արևելք:



Դարբասի Սուրբ Ստեփանոս եկեղեցին

ՄՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ
ՈՒ ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ
ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աղոթարան (Սալվարդ...)



*Սալվարդ, լեռնագագաթ
Հայաստանի Սյունիքի
մարզի և Նախիջևանի
սահմանագլխին, Սալվարդ
գյուղից 6,5 կմ արևմուտք,
բարձրությունը 3161 մ է:*




ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐԲ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ



Գյազբեկ, Արամազդ...

*Արամազդ, Գյազբեկ
Բարգուշատի լեռնաշղթայի
ամենաբարձր լեռնագագաթը
(3392 մ)՝ Սյունիքի մարզում:
Կազմված է հրաբխային
ապարներից: Լանջերը
զառիթափ են՝ ծածկված
լեռնամարգագետնային
բուսականությամբ:
Գագաթնամերձ մասերում
կան մերկացումներ,
քարացրոններ:*




ՄՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏԱՌԹՅՈՒՆ

Որոտնավանք, Որոտնաբերդ




Որոտնաբերդ, հայկական ամրոց Մեծ Հայքի Սյունիք նահանգի Ծղուկ գավառում, ներկայում՝ Սյունիքի մարզի Որոտնավան գյուղի մոտ՝ Որոտան գետի աջափնյա լեռնաբազուկի վրա:



Մելիք Թանգու կամուրջը

Որոտնավանք (Վաղատնի վանք), միջնադարյան վանական համալիր: Գտնվում է Սիսիանից մոտ 14 կմ արևելք, Որոտանի կիրճի ձախակողմյան բարձունքի վրա: Հիմնադրվել է 1000 թվականին Սյունյաց թագուհի Ճահանդուխտի կողմից:



ՄՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ




Մեծ Իշխանասար և Իշխանա լիճ



Մեծ Իշխանասար, լեռնագագաթ Սյունիքի բարձրավանդակում: Այն Իշխանասար լեռնազանգվածի ամենաբարձր գագաթն է (3549 մ): Գտնվում է Սյունիքի մարզի և Ադրբեջանի սահմանի վրա: Արևելյան լանջին է սառցադաշտային ծագման Սև լիճը: Իշխանասար լեռնազանգվածում կա նաև Փոքր Իշխանասար գագաթը, որը գտնվում է Մեծ Իշխանասարից հյուսիս:

ՄՅՈՒՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ
ՏՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Տատնա կիրճ






ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀԸ՝ ԵՐԳ ՈՒ
ՏԱՐԵՐՔ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ
ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Որոտան, Որոտանի կիրճ

*Կիրճ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի
հովտի հարավային մասում, Հարժիս
գյուղից 1 կմ հարավ: Երկարությունը
մոտ 8 կմ է, խորությունը՝ 500 մ (700 մ):*



ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ՝
ԵՐԳ ՈՒ ՏԱՐԵՐԲ,
ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ ՈՒ
ՊԱՏԱՈՒԹՅՈՒՆ

Չորաց քարեր, Ճաքեի ջրվեժ



*Քարահունջ (Չորաց քարեր պատմա-
մշակութային արգելոց և պետության
կողմից պահպանվող հատուկ տա-
րածք Սիսիան քաղաքի մոտ՝ Մ2 ճանա-
պարհի հարևանությամբ:*



*Ճաքեի ջրվեժ, Ճաքե, Ճաքի, ջրվեժ : Գտնվում է Սյունիքի մարզում, Ճաքի գետի վրա, Որոտանի
կիրճում, Ճաքի գյուղից ներքև, 1 կմ հարավ, Սիսիանից 3 կմ դեպի հյուսիս-արևմուտք:
Բարձրությունը 15-17 մ է: Ջրվեժի տեղանքը իրենից ներկայացնում է խորը կիրճ՝ հարուստ ժայռերով
և քարայրներով:*

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյանի մասին

ՐԱՏԿԱԾՆԵՐ ԶՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԶՈՂԿԱԾՆԵՐԻՑ

Համո Սահյանը հավակնեց մեր փլատակների վրա իր տաճարը կանգնեցնել - բանաստեղծն այնինչ պատնեշեց հորենական խեղճ տունը:

Բռնությունը իր կուռքերին բրոնզե հավերժական արձաններ կանգնեցրեց - իր տոհմական տիրոջներում բանաստեղծը հսկողության կարգեց մի ևս հապտեոսի ու մշակի՝ հողոտ, մղեղոտ մի պապի:

Նա տնից, ընտանիքից ու երկրից դուրս կոչեց բոլորին, ունեզրկեց, դիմազրկեց բոլորին ու յուրաքանչյուրին, միակամ-միաբան գանգված շաղախեց բազմադեմ-բազմաձայն միլիոններից և լայն ու բաց պողոտաներով երկրպագության արձակեց իր տաճարներում-բանաստեղծն այնինչ մի խեղճ կածան ցույց տվեց, որ հանում էր լուռ քրտինքի ու արդար հացի մի քարոտ-քարքարոտ աշխարհ, որտեղ, ճիշտ է, հացի ու մարմնավոր սիրո լիություն չէր, բայց և հանուն հացի չէին երկրպագում օտար կուռքերի առջև. դա հպարտ, սակավապետ, լուռ մարդկանց աշխարհն էր. այդտեղ մարդացած մարդ էին անգամ կենդանիները, անգամ բզեզները, մեծագլուխ մրջյունները, ծաղիկն ու թուփը, դժվար մի գերությունից գլուխը մազապուրծ ազատած հովիկը, մարող բույրը, շրջունը, սարսուռը... մարդ էին, որովհետև հակադիր աշխարհում մարդն իսկ մարդ չէր՝ ինչ-որ վերին շիտություն հումք էր:

Չուսալ ձևերից, մարմնուն գույներից ու բույրերից, լուռ հառաչներից, լուռ ուրախություններից, խոնարհ ջանքից ու տանջանքից բանաստեղծը սահմանեց իր աշխարհը և սահմանին խփեց իր գերբը՝ հասկով բոլորված եզ: Այդ աշխարհը նման չէ թարմ գույների, գրնգուն ձայների, հստակ հայացքների մանուկ Հայաստանին, ինչպիսին Սարյանի կամ, ասեսք, Չարենցի երկիրն էր: Սահյանի խոսքերը իր ժամանակի հետ ոչ գուգեղ, ոչ էլ բանակոչով դարձավ, ինչպես Սևակինը, բանակոչով, որ մեկին դահիճ էր կնքելու և մյուսին գոհ: Սահյանի վարքը շատ ավելի ինքնարտաբերում էր հրապարակից, աքսոր: Այդպես էր պատերազմի տարիներին, այդպես էր հետո, այդպես է հիմա:

Մեր եղբայրը այն է դրել հոգևոր

հացի մեր սեղանին, որ կորստի ու կորուստի ժամանակներից հետո մեզ գուրկերի ետին շարքերը չի նետում և իրեն հանում է աշխարհի ու մերազնյա ընտրյալների դասը, ովքեր Աստծու համատարած գրքից ամբողջ էջեր են ընթերցում:

* * *

... Սահյանը եղել է, Սահյան է եղել: Բռնության դեմ ազատության պայքարի՞ Սահյան: - Ոչ: Ազատությունը իր



պայքարի տղերքին կալանում է, և էլ երբեք նրանց չի տրվում ազատ լինել: Փառք իրենց, բայց նրանք մարդկության մեր ընթացքի ելևէջման միայն մի պահն են՝ ընդվզում, ժխտման, ապստամբության շատ կարևոր պահը, և սակայն մյուսները կան, ովքեր իրենցով բովանդակում են ելևէջի ավելի տևական շառավիղ: Սահյանի մեջ տևականության այդ միտումը կա:

Ինքն այդ գիտեր և ա՛յդ պատճառով կամ դրա՞ շնորհիվ էր չպայքարողի վարք որոշեցրել: - Ոչ: 1914-ի ծնունդ, իր ժողովրդի գավակ, եղեռնի ու գաղթերի, համայնավարացման ու հավատաբեկության ու պատերազմների վկա՝ ինքը իր և մեր սոսկ գոյությունն իսկ հաղթանակ ու հրճվանք էր համարում:

Ուրեմն՝ հանդուրժումի ու հաշտվածությամբ Սահյան: -Ոչ: Այդքան քաջ

չէր, որ ընկներ մինչև վերջ և անկումը ճանաչեր և բարձրանար մինչև վերջ և համբարձումը ճանաչեր, և առավել՝ քարոզեր: Պարտված և ռամիկ երկրի որդի՝ պատերազմի և խաղաղության, հաղթանակի և հպարտության, անկումի և վերելքի հիմնախնդիրները նրան ներկայանում էին ինչ-որ այլ կեցվածքով՝ գուցե արժանապատվության, թերևս ինչ-որ բան չմատնողի, իր խոսքով՝ հեկեկանքի ելքը սեփական ձեռքով ծեփած: Բայց սա արժանի՞ք է բանաստեղծի համար: Եթե ինքնազսպումի այս աշխարհը մի աշխարհ է, որից անդին Քամն ու քամականությունն են, այր, արժանիք է:

Վարպե՛տ Սահյան, որ աշխարհի ու հայրենի ժառանգությունը յուրացնելով ու յուրացնելով տարիների մեջ «Հանճարեղ պատանի» դարձավ: - Երբեք: Զենց որ գտնում էր, թե ինչ է պտեզիան և ինչ պետք է անի պտեզիան, տողերը գրչի տակ մեռնում էին: Այդ՝ երևի թե այն

պատճառով, որ կարծում էր պտեզիան է իրենը և ոչ ինքը պտեզիայինը: - Այդպես պտեզիան ինքնակա մի բան է դառնում, այո՞: - Ինքնին մի երևույթ, Աստուծոց ընձեռվող տեքստ, ինչից ոմանք հաջողացնում են էջեր փրցնել: - Եվ Սահյանին հաջողվե՛լ է: - Հաջողվել է և՛ հաճախ:

Նա գյուղացի էր, բնապաշտ, պահպանողական, արևելքից, աշուղ - Նա քմայթոտ մտավորական էր, արևմուտքից, հույժ արդիական: Բայց ո՞չ հույժ արդիական էր, ո՞չ արևմուտքից, ո՞չ մտավորական, ո՞չ աշուղ, ո՞չ արևելքից, ո՞չ էլ գյուղացի: Բնությունից գիր - գրից բնություն, այտրուիզմից ազգայնականություն և ազգայնականությունից այլափրություն, այսօրից անցյալ և անցյալից այսօր, բանաստեղծից գյուղացի և գյուղացուց բանաստեղծ երթուղարձն էր Սահյանը, հարատև, անվերջ երթու-

դարձը:

Սահյանը ժամանակների ու տարածությունների մեր այս շրջուտ ու ընդհարգրգրի խաչմերուկի հայ մարդը եղավ, և իր խոսքը մեր երթի համար օրինեցրեց և իր գործը մեր դրոշին ճիշտ մեր պատկերը դարձավ: Եվ որովհետև հաճախ թափոր ենք առանց դրոշի և ավելի հաճախ առաջնորդվում ենք որիշների սրբապատկերներով, Սահյանի գործը էականորեն կարևոր է:

* * *

Համո Սահյանն իրեն պարտադրեց: Կարծես թե չպետք է կարողանար, որովհետև խորհրդանիշների այն համալիրը, որ նա էր բերում և որն առհասարակ միջնորդ լեզու է բանաստեղծի հոգու բևեռագրի և իր՝ բանաստեղծի միջև, այդ համալիրն ահա հին էր և վերծանման կարիք արդեն ինքն էր զգում, բայց Սահյանն իրեն պարտադրեց:

Պարտադրեց, որովհետև էական նշանակություն ունի ոչ այնքան և ոչ թե այն, թե ինչքանով սոր է կամ ինչքանով է հին խորհրդանիշների այդ համալիրը, այլ միայն թե ինչքանով է սեփական այդ համալիրը, ինչքանով են սեփական այն կերպար բառերը, որոնք առաջին պես քաշում են բանաստեղծությունները, որոնք ոտանավորը դարձնում են բանաստեղծություն: Եզր, ծիածանը, պատանին, կարոտը, տագնապը, քոչը, քարափը, հոգսը, հիարկե, հին են, բայց հին են այնպես, քերականական կամ նույնիսկ խոսակցական լեզվի մեջ, հին են նույնիսկ միջակ բանաստեղծի լավ բանաստեղծության մեջ, որովհետև նույնությամբ էլ ներմուծվել են բանաստեղծություն: Չանգն առանց զանգատան իհարկե լավ չի զնգում: Հին

այդ բառերը պետք է ստանան բանաստեղծի դրած նոր իմաստը, կերպար դառնան նորից, լինեն բանաստեղծի առաքելությամբ բանաստեղծի սուրհանդակները, և այդ դեպքում՝

*...Երգն իսկապես երգ է,
Հին ու նորը ո՞րն է:*

Բանաստեղծություն, նույնիսկ լավ բանաստեղծություն շատերն են գրում, բայց պոեզիա են մտնում քչերը՝ նրանք, ովքեր գալիս են խորհրդանիշների, պատկերների, բառի, շեշտի իրենց համալիրով, իրենց այբուբենով, և այս քչերից պոեզիայի մեջ մեծ են դառնում և մեծ են կոչվում այն եզակիները, ում համալիրը, ում այբուբենը հնարավոր ճշգրտությամբ և հնարավոր լրիվությամբ է վերածնում սեփական հոգու, այդ, հենց բևեռագիրը: Այլապես՝ հոգով հարուստ, ներքուստ բանաստեղծ այնքան մարդիկ կան, որոնք այդպես էլ բանաստեղծ չեն դառնում, որովհետև չեն կարողանում մտնել իրենք իրենց, և

խոյը նրանց հանում է երբեմն թումանյանի թագավորություն, երբեմն՝ Լորկայի, երբեմն՝ Չարենցի կամ Նարեկացու: Դրանք գեղեցիկ թագավորություններ են, բայց տվյալ դեպքում կոչվում են մութ աշխարհի, քանի որ պոեզիան ճամփորդություն է դեպի ինքը, բանաստեղծի ինքնահայտնագործումն է, ինքնահայտնագործմամբ՝ մի նոր աշխարհի հայտնագործումը, վերոհիշյալ դեպքերում այնպիսի տեղի ունեցավ ոչ թե հայտնագործման, այլ կործանման փաստ, որի պատճառը ճամփորդության սեփական միջոցների բացակայությունն ու ուրիշի միջոցների որդեգրումն է, ինչը որ հավասարագոր է լույս աշխարհի ելնելու համար սև խոյի վրա նետվելուն: Քանի դեռ համեմատությունը հուշում է՝ ասեմ, որ Սահյանն ամեն անգամ, անընդհատ, այնքան անընդհատ, որ թվում է, թե մեկընդմիջ է նետվել սպիտակ խոյի մեջքին և ամեն անգամ ու միշտ է ելել իր լույս



**Սահյանի Հայր շատ է նման
Քսենոփոնի նկարագրած
անանուն հային, որ նահանջող
զորականին հյուրընկալում ու
որդուն ուղեցույց է տալիս, և
նրանք լուռ այդ հայի ծագին
տանում ու այդպես էլ տանում են,
շատ է նման մեր ազգային
երգին ու քարե կոթողներին:**





Թագավորություն: «Երգեր ու վերքերից» ի վեր մեր բանաստեղծությունը հազվադեպ է ունեցել «Քարափների» նման շատրվանում: Նաև «Մայրամուտից առաջի» նման, նաև «Սեզամի»:

Երա բանաստեղծության և ստեղծագործողի նրա միասնական կերպարը որոշ իմաստով շատ է նման նրա իսկ փառահեղ «Պապի»՝ իր գործը, ամեն ինչը սկզբից մինչև վերջ ինքն անող աշխատավորի կերպարին -

*Իմ պապը վարել է,
Իմ պապը ցանել է,
Իսկ հնձի ժամանակ
Ձեռքի մեջ մանգաղի
Դաստակը ցավել է...*

Եթե չլիներ այս սքանչելի ասքը (հագար պատճառով՝ չէր կարող չլինել), հասկանալի լինելու համար բանաստեղծի կերպարին ես զուգահեռ կործանեի ծառը, լեռն և պատածի մեջ ինքն իր արմատի զորության ասպավինած ծառը, որը մեռյալ անկենդանությունը թրթռուն կենդանության է կոչում զուտ իր ուժով: Բանից պարզվում է, որ միայն այդպես՝ առեղծվածային շանք ու տանջանքով չեն դառնում ծառ, թուփ, խոտ, հասկ, մի խոսքով՝ բույս, այլ կա նաև մրամուռը, որը խրվում է ծառի արդեն կենդանի մարմնին և սնվում արդեն պատրաստի ավիշով: Համո Սահյանը մեջլիս է մտել և խոսքի իր շոյալ առուտուրն անում է զուտ իր՝ «ՍԱՅՅԱՆ» զնգուն ոսկով, որի պեղողը, գտողը, ծուլողը և կնքողը եղել է զուտ ինքը:

Սահյանը մեծ բանաստեղծ է, թեպետ, տարօրինակ մի տրամաբանությամբ, դժվար է այդ մակդիրով որակել մեկին, որը «մեծ-մեծ բաներ չի խոսում», այլ իրեն կոչված է համարում «ընտրաբանելու խորհուրդը հասկի», որը հայրենասիրության հետ կարծես թե ոչ մի առնչություն չունի, բայց նույն-քան բարձր հայրենասիրություն է, ինչ-քան Թումանյանի մանկագրությունը, որը կարծես թե ժամանակավրեպ է, բայց ժամանակավրեպ է ճիշտ Մեծարեցի նման:

*Մրյուն է եղել աշխարհում: - եղել է եղեռն ու կոռիվ:
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամենի ելած իրար դեմ:
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կարած,
Մրն է երգել ու գարուն՝ այս հիվանդ, հանճարեղ պատանին: -*

Այսինքն թե՛ ժամանակի ամենագայուն արձագանքիչն է:

Սահյանն այսօրից ավելի վաղվա բանաստեղծն է:

* * *

Երա իրիկային երգերից մեկը, որ մեր մշակույթի ամենամայուն պատ-

կերներից է, այսպիսի երկրորդ քառատող ուներ. «Կալերի մեջ ծղոտաբույր թիկնոցը հագած՝ Լինջ էր մտնում ամառային օրը վաստակած»: Ոչ շատ լավ ու ոչ էլ վատ քառատող էր, պոետական դրյակի բացման «սեզամ» հմայիլն ինքը չէր պարունակում, բայց չէր էլ խանգարում հայ-քրիստոնյա գերդաստանի՝ հազարամյա այդ ընտանիք-պետության պատկերի հարությանը: Իրենը՝ Սահյանին ու սահյանական էին բոլոր բաները, անկրկնելիորեն գտնված էր մանավանդ «ամառային վաստակած օր» տարողունակ կերպարը, քառատողը կարող էր այդպես չխանգարելով ապրել թագորյան ուժի «Օրը մթնեց» այդ եղերեղի մեջ, այլև խորան լինել արդեն մեկըմիշտ երևակված ու սահյանական ապի մեծ մատյանի բազում էջերից նայող գերդաստանային խմբակարներից մեկումեկի համար: Բայց գեղջկական ամառվա թիկնոցը մայրամուտի երկնքից ու կալերից ծղոտագույն հրաշեկի կամ ծիրանիի ցուլք էր առնում, և հաջորդ հրատարակություններում քառատողը սղվեց:

Սա մասնավոր դեպք ու պարտադիր վարպետությամբ հարց է. այո, վարպետության, որ Սահյանի ամբողջ գեղեցիկ գործը մղում է մեկ և նույն գլխավոր նպատակի՝ բավարարվել մարդկանց ներքին լույս ու ջերմության բացահայտմամբ, երկրպագել այդ կրակը, այլ ոչ թե որպես լուսավորիչ շրջել ի մեջ մարդկան, որ բեզղկից պակաս չեն լուսավոր:

Մեր հայոց և հայոց մեջ Սահյանի իր ոգուն երբեք խորթ չեն եղել տոնական շքեղությունը, խրախճանային թատրոնը, թամաշան, սևերը ներս ու կարմիրը դուրս և դոստոդուշմանի մեջ լացը ծիծաղ անելը, բայց բանն էլ հենց այն է, որ «բնագանջանական ամեն ինչից խորշող», միշտ և ամենուր ներդաշն բնակություն փնտրող ու ստեղծող մեր ոգին շատ ավելի հակված է ծիծաղը թախիծով ու լացը ժպիտով մեղմելու, «մեր ցավը հարավ բամբուն տալու», ապաշխարանքի բառասուն տարին այդքան օր ու այդքան օրն էլ քառասուն ժամ անելու: Եվ ովքեր Սահյանին հայոց բանարվեստ էին ճամփել՝ Հայ մարդը, Հայ տունը, Հայոց աշխարհը, ում պատվիրակն է Սահյանն աշխարհի այս մեծ համերգում, խնդրել էին իրենց մասին պատմել չավելացնելով ու չպակասեցնելով, պակասեցնելով, բայց երբեք ավելացնելով, երբեք շլացնելով, պատմել իրենց լեզվով՝ խոնարհ հայերենով:

Սահյանի Հայը շատ է նման Քսենոփոնի նկարագրած անանուն հային, որ նահանջող զորականին հյուրընկալում ու որդուն ուղեցույց է տալիս, և նրանք լուռ այդ հայի ձագին տանում ու այդպես էլ տանում են, շատ է նման մեր ազգային երգին ու քարե կոթողներին:

Սահյանի ժողովուրդը դեռ երեկ էր սրածվել: Նույնկերպ նախացած բանակների քառատրոփ արշավանքի ուղղությունը Սահյանի հայրենի տունն էր մատնանշում, և բանաստեղծը փարեց ու հավիտենորեն խաչվեց հենց այդ ամենաթանկին: Հայրենի տան, հայրենի եզերքի կերպարը պատերազմով ու կորստի տագնապով սրված անցողիկ զգայունություն էր թվում, պարզվեց, որ թշնամական բոլոր սլաքները բոլոր ժամանակներում ուղղվել են և ուղղվելու են հենց հայրենի տան վրա, որ հայոց մեր լեզուն «տունը քանդվի» անեծքից չար անեծք չի ճանաչում, որ մարդուն ինքնիշխան մարդ պահողը միայն հայրենի տունն է, որի կործանումը Սահյանի համար առհասարակ մարդու կործանումն է, և զինվոր-պանդուխտի հուշերի ու կարոտների ծվենները տասնամյակների մեջ վերածեցին հայրենի եզերքի և հայրենի երկրում կանգնած մարդ-մոռումեռտի պահանջի:

Զգերվելով ոչ մի անվան ու սահմանումի, փառահեղ անուններն ու շքեղ սահմանումները համադրելով իր ազգային փորձին ու հայ բանաստեղծի իր միակ ՍԱՐԴԸ ԻՐ ՀԱՅՐԵՆԻԲՈՒՄ դավանանքին, Սահյանն իրեն ուսուցիչ ու նախնի արեց շատերից այն քերթին, ում համար մարդու անձեռնմխելի ինքնությունը գաղափարներից մեծագույնն է, և ուսուցիչ ու նախնի է դառնալու շատերի համար, քանի որ ժամանակակ, այնուամենայնիվ, աշխատում է նույն նշանաբանով:

* * *

Խորենացու ազգն ենք, այո: Հիսուսի ժողովուրդն ենք, այո: Ոսկեղենիկ հայերենի որդիներն ենք, այո: Բայց հավերժական փառքեր չկան - փառքերը թոթափվել են պահանջում ամեն օր: Աստվածները նորանալ են ուզում ամեն օր: Մեկըմիշտ ավարտուն ազգեր չկան - ազգը Նորանալ ու զորանալ է ուզում ամեն օր: Լեզուն անգամ հավերժական չէ - տքնել, տառապել, զնգալ, դողանջել է պահանջում ամեն օր, ամեն եկողի հետ:

Սահյանի առաջ հայերենը չպապանձվեց-խոսեց, և լեզվի հետ խոսեց մեր ողջ այսօրն ու պատմությունը: Աստված մեր անդաստանների նահապետի կերպարանք առավ ու լռիկ տեղավորվեց մեր գլխատանը՝ որպես հոգի ու աշխատանքի, ազնվության ու ազնվականության մշտակա ոգի: Երա հայերենը ծիծաղանքով կամարվեց և ուր էլ լինենք՝ բոլոր-բոլորիս անցքի հրավիրեց հայ կյանքի աշխարհ:

Նա իր ժամանակի նորոգիչը եղավ, և մեր երթի գլխին պասլայալ իր պատկերը այդ կլինի:

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քարե պատարագ



ԴԱԿԻԹ ԳԱՍՊՈՒՅԱԼ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ

«Ինձ բացակա չղևեք» (1998) գրքում ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած երկրաբաղադրական մեծ փոփոխությունների արձագանքներն են: Լուռ տարավ իր ապրած երկրի կործանման ողբերգությունը, բայց ցավով տարավ մարդկային արժեքների կորուստը: Անգամ զգուշացրեց. «Խուլ տևեց եմ լսում հեռու դեր-Չորից» և պատվիրեց. «Մենք դեռ հազար հոգեվարք ենք մերժելու, // ... // Թե մեռնել կա, հայերեն ենք մեռնելու»: Ազոսփի կոռոցի չարախնդությամբ իրեն է լռեցնում. «Լեզուս կուլ տվի, // Որ իմ կոռոցից դուք չվախենաք»: Անտառում վիրավոր մանգաղաթևիկին է բուժում, բայց ինքը տուն է վերադառնում որպես «վիրավոր ծիծեռնակ»: Աշխարհը խառն է, բանաստեղծի հոգին՝ անհանգիստ: Միջդեռ քաղաքական պայթյալի ձև ընդունած խաղերը թափանցել են ամեն մի շեն ու օջախ. «Եթե մերն են ու մեզ հետ, // Ամմեղներից անմեղն են»: Ճառ ու կոչով հայրենիք ու ժողովուրդ սնող հեղափոխության մակաբույծների ժամանակն էր, ովքեր փորձում էին հանուն իրենց շահերի օգտագործել նաև Սահյանի հեղինակությունը. «Ի՞նչ է ծառը բոբակի, // Ծառն ինչի՞դ է հարկավոր... // Երբ կամեցար, կնստես // Անտառների թագավոր»: Հիշենք՝ 1992-1994 թթ. էներգակիրների բացակայության պայմաններում ցրտից պատսպարվելու,

տանը կրակ ունենալու նպատակով ինչպես քաղաքների մայրերի ու այգիների, այնպես և անտառների ծառերը վայրագորեն հատելու ժամանակներ էին: Այսպես խաբում, կասկածանքների են մատնում կրակ. «Գլխի ընկա, որ արդեն // Ինձ էլ ինձնից խլեցին: // Չիմացա, թե ով եմ ես // Ու որտեղից եմ գալիս, // Ում կամքով եմ ծիծաղում // Եվ ում վրա եմ լալիս»: Ահա սա՛ է բովանդակում օրվա քաղաքական հերոսների տոնահանդեսի «Թող ոչ ոքի չկանչեն» անդրադարձը: Երբն է նաև կրկնաբերումների շարքը. «Սրտիս վրա ամպ է նստում, // Ամպի վրա ձյուն է գալիս» («Ձյուն է գալիս»): Ցրտի, սովի ու մուրթի հուսահատությունն էր ներսում, որ կարճ ժամանակ անց շատերի մեջ վերածվեց հայրենահասարակության



ու փախուստի: Ծնվում են ոչ թե համակերպության, այլ կենսունակության ու դիմակայության կոչող տողեր. «Ինչքան խառն ու խորթն, // Ինչքան էլ բարդ ու բիրտ, // Կյանքն ապրվի պիտի, // Ուրիշ հնար չկա... // Իսկ երբ երգի գլխին // կայծակներ են պայթում, // Երգը կռվի պիտի, // Ուրիշ հնար չկա» («Ուրիշ հնար չկա»): «Ինչո՞ւ են լալիս բանաստեղծները», հարցնում է ու պատասխանում. որովհետև դեռ կան «Գեղեցկության դեմ... // Մագիլները սրած չարիքները»: Երբն է. «Թափուր մի բույն բերեք //...// Զված հավթի // Խառն, անընթեռնելի կտցագրով // ... //, Որ ես ողբում նորից բախտն իմ Հայքի // Եվ իմ թափուր սրտից մնամ խռով» («Մի բուռ աշուն բերեք»): Այս պահին բնության օրինաչափություններն ու անցյալի մտաբերումներն ուղղված են քաղաքական իրականությանը: «Ինչ-որ տեղ արդեն հեռավոր հուշ եմ, // Իսկ մեկի համար աշնան մշուշ եմ» անցումների շղթան հանգեցնում է «Իրիկնաժամի մղեղների մեջ // Ծարավ կավորի դա-

տարկված կուժ եմ» պահանջված լինելու հույսին («Սպասողներ կան», նաև «Մի օր հարկավոր...», «Ես եմ գլխից ձեզ եմ տրվել»): Պատմական ժամանակին ուղղված անդրադարձներն ամեն անգամ նոր տեսք են ստանում. «Ինչու են ուտում մեկը մեկին // Հոլովոյթի մեջ այս անմեկին» («Գլխի ընկան»), «Խաբեության այս աշխարհում // Մարդիկ, ձեզ շատ հավատացի» («Մարդիկ...»): Սահյանը ողջունում է անկախությունը, բայց ծանր է տանում քաղաքական ալիքի վրա հայտնված պատահական «գործիչների» գռեհկությունը, որովհետև հանրային միջավայրը լցրեցին սուտի ու կեղծիքի քթահանդեսով և ստիպված էր անել. «Ախ, ճշմարտություն, // Ժամապահն եմ քո, // Ստի հետ մերվել // Զեմ կարողանում», այդպես հղի կինը

Երա աչքին դառնում է չճանաչված մանկան դագաղ («Խոնարհված գլխով»), ինչն արդեն ստիպում է աղաղակել. *Եվ եղավ ստի հրավառություն, Ու խաբեության հարսանիք եղավ... Ու կյանքս եղավ անվերջ դառնություն,* *Եվ վերվեստիս տունն անտանիք եղավ:* *Մուրքս պիղծ եղավ, Աստվածս՝ մոռյալ, Հրճվանքս՝ շինծու, տքնանքս՝ ձրի... Ախ, իմ ժողովուրդ, քո այնքան շոյալ Տվածից քեզ ի՞նչ վերադարձրի (3, 189):* Այս խորունկ հիասթափությունից նա ընդամենը մեկ էլք ուներ. «Արդեն շատ եմ հոգնել դաիլիճներից փարթամ, // Քարոզներից տարտամ ու վեճերից: // Գնամ քարափներիս լռությունը կարդամ, // Վերջին անգամ փորձեմ ճանաչել ինձ: // ...Ամպի, խոտի, հողի հոտով հարբած լինեմ, // Եվ հրաշքի հոտով մայրամուտի՝ // Քնեմ... աչքս բանամ, նստեմ ու լաց լինեմ // Հոգեվարքի վրա թրջված մու-





թի» (3, 190): «Թրջված մութ»-ն ակնարկ է Սահյանի կյանքի վերջին ծանր տարիներին, ժողովրդին պաշարած խորունկ հիասթափությանը, ուստի պիտի ասեր. «Աշխարհից ես բան չեմ հասկանում. // Մոլորված ճանփորդ է աշխարհը, // Մեզ ուրիշ մի բախտ է խոստանում, // Բայց էլի մեզ խորթ է աշխարհը»: Ծանր հոգեվարքի մեջ է ամեն ինչ, վերջի, անկումի տազնապները չեն թուլանում.

*Օրերը մտայլ են, ահարկու,
Անորոշ ու գորշ են օրերը:
Լեռները բախվում են մեկ մեկու,
Տագնասպով մտնում են ձորերը:*

*Խեղդվում ենք մենության անձավում,
Չենք քայլում, ուր մնաց թռնելը:
Անցյալը թողել ենք անցյալում,
Եվ փակ են գալիքի դռները:*

*...Լեռները բախվում են մեկմեկու,
Ընկնում ու լցվում են ձորերը:
Օրերը մտայլ են, ահարկու,
Անորոշ ու գորշ են օրերը (3, 196):*

Անգամ արտոյությունների ճանապարհին են փակել, այսինքն՝ ազատ երգի («Որտե՞ղ եք հիմա») և այն էլ ժողովրդավարական համարված ժամանակներում: Նոր գարնան սպասում կա. սարյակը, ինչպես հնում Աղայանի ծիծեռնակը, նոր բույն հյուսելու սպասումների մեջ է («Երբ ոտքի վրա»): Եվ նորից սպանող հարցումը՝ «Ի՞նչ պատահեց». պատահեց այն, որ «Ավելի սև օրեր են գալու», բայց որքան էլ դժգոհ, ռեթ իր ծառայությունն է առաջարկում գլխիվայր շուռ եկած ժամանակներին. «Բեր ցավերդ հոգամ աշխարհի, // Դիր շալակիս, տանեմ...»: Երկար ապրելու ամիթն ու կյանքի հոգսն են ծանրանում («Կյանքս շատ երկարեց»), խախտված արժեքային համակարգն է ավերածություններ գործում. «Ինչ էլ որ լինի, ինչ էլ ասեն, // Փուլը գինված է, ծաղիկն՝ անգեն: // Ի՞նչ է ծաղիկը... երկրի վրա: // Գեղեցկությունն է ուժը նրա: // Բայց գեղեցկությունն ինչ է դառնա, // Ինչքան էլ աճի ու համբառնա, // Առանց օգնության ու պաշտպանի // Ինքն իրեն ինչպե՞ս կպաշտպանի» (3, 209): Այդպես է, որովհետև «...Այս ծաղկած հողում // Ծաղկի տիտղոսը փուշն է կրում» («Ինչ էլ որ լինի): Փոխվում է ժամանակը, փոխվում է մարդը, ինքն իրեն վերագտնել փորձողը մատնված է անորոշության: Քանի կար, բնությունը պիտի իրար բերեր նրա բևեռներն և ամբողջացներ, բայց ահա հեղաշրջված հանրային կյանքը բանդում և ավերում է ներդաշնակության ամեն մի կարգ ու պահանջ. *Մթնած մեզ եմ ոտից գլուխ, Բայց այդ մեզը եմ չեմ:
Այսքան տարվա ճամփորդ եմ հեզ,
Բայց այդ հեզը եմ չեմ:*

*Ճատ եմ փորձում ինձ հանդիպել,
Փորձս փորձ է մնում...*

*Հագար մարդ է մեջս նստած,
Բայց ոչ մեկը ես չեմ (3, 211):*

Այս տազնապը նա արդեն կանխատեսել և ասել էր, որ ուզում են իրեն իր միջից վտարել, ուստի շարունակում է. «Աշխարհն այսքան խռով, // Խառնիխուռն է այնքան, // Որ մարդ ինքը իրեն // Գտնելու ճար չունի» և խոնարհ ներումնահայցությունը. «Դու մեծ մաա, Աստված, // Եվ ինձ ներիր, եթե // Յուսահատությունս // Յիմբ ու պատճառ չունի» («Թռչունը թառ չունի»): Ավելանում է եղածը կորցնելու տազնապը, վախը. «Թե հողմերն այս աշխարհացունց // Ձեզ չհանեն Տատնա ձորից, // Գոհ կմնամ ես Աստուծոց, // Եվ գոհ՝ անգամ թագավորից» («Քանի վաղեր»): Հայրենիքից համատարած փախեցիկի մեջ ինքնապահպանումը նոր ելքեր է որոնում.

*Ես որքան փախչում եմ ինձանից,
Այնքան իմ խորքերն են մտնում:
Մրտում եմ խոսքերիս մթնում,
Ես որքան փախչում եմ ինձանից:
Կորչում եմ, կանչում եմ ես ինձ,
Մուռի մեջ իմ ձայնից խրտնում...
Ես որքան փախչում եմ ինձանից,
Այնքան իմ խորքերն են մտնում (3, 227):*

«Ձմեռային տրիոլետներ»-ի հաջորդ գործերում արդեն դիմում է հռետորական հարցի, ինչպես ժամանակին Տերյանը «Երկիր Նաիրի» շարքում. «Ռ՞՞՞ կղիմանա այսքան ցավերին, // Ավերումներին այս անակնկալ...»: Անկախության առաջին տարիները երբեմն այնպիսի իրական խորքային անդրադարձներ են ունենում, այնպիսի ձև ու կերպարանքով ներկայանում, որ, տողի պատմական հավաստիությունը վրիպելու դեպքում, շատ բան չի էլ հասկացվի: «Ձյունը՝ մութով, մութը ձյունով թաթախված՝ // Նվաճել են բոլոր ճեղքերն անխնա», - սա 1992-1994 թթ. իրականությունն է: Ելքը, այս անգամ և այս պայմաններում իսկ, բաղաբանական աղբյուրով լեցուն իրականությունից վերստին վերադարձն է «Այոնյաց բարձրիկ կատարներն» ու մանկության կածանները («Ինձ կանչեցին»): Այդպես կարող էին կանչել անգամ հարցաքննության, բայց լավ է, որ կանչողը հայրենի եզերքն է: Խոսքովի անտառի արթնապական խեղճությունը, որ ակնարկ է նոր իշխանավորներին, հակադրում է իր բնաշխարհը. «Քարե ծառեր են, բարացած ծառեր, // Նրանց ոտքի տակ մրաված քարեր» («Անտառ է այստեղ»): Հակադրությունն աստիճանաբար խորանում է. «Մաքրության կանչ է այս դառն աշխարհում // Ու երգ երգոց է Տատնա գետակը» («Տատնա գետակը»): Այն, ինչ նախկին հավասարակշիռ ժամա-

նակների համար էր, այլ էր, հիմա նոր ժամանակների անդրադարձով շատ բան արդեն այլ կերպ է երևում. հիշում է մանկության տարիների ձիերը, «Ախ, ձիերս, ձիերս...» ասելով՝ ամբողջ գիշեր քունը չի տանում. ձիերն ապրել են իրենց ձիու կյանքը, իսկ իրեն այլ բան է վիճակված. «Ես ու գիշերն ենք մենակ, // Մեկ էլ իմ հույսն ավերակ, // Մեկ էլ... հեռվից հեռավոր // Ինձ կանչում են ձիերս» («Ձիերս»): Էլի նույն Գյազբեյն է, որ կանչում է Տատնա գետակի նման, բայց. «Այս տարի Գյազբեյս չտեսա... // Կենսագիր, թե միտքս կռահես, // Այս տարին իմ կյանքից կհանես»: Վերահայտնվում է քամու խորհրդանշանը, որ եկել է ամեն ինչ սրբել տանելու, նաև իրեն՝ քամու պոչը բռնած բանաստեղծին:

Կորուստի պահին անգամ Սահյանը գտածի տերն է, հուսահատության պահին՝ լավատեսության: Դա է պատճառը, որ հայրենիքի ծանր վիճակին անդրադառնալով՝ նաև հույսի ճանապարհն է պահում. «Մենք ապրելու ենք, ինչ էլ պատահի... // Մեր հողի վրա մերն ենք լինելու»: Լավատեսության նախադրյալները ևս բնության մեջ են: Այս առումով իր ծանոթ այբուբենով դիմում է այլասացությունների. «Բուբն ինչքան էլ, որ խստանա, // Չեղբ ու գիշում չխոստանա, // Ականջն ընկավ որոտն ամպի, // Հայտնի բան է հնուց անտի, // Ահից պիտի ուշքը գնա, // Թեք պիտի կախի, մաա: // Ինչքան էլ որ ձյունը թաղել, // Ուրիշ ելք ու հնար չկա, // Յուրեղ պիտի ծլարձակի, // Քարը պիտի ցավից տնքա, // Ծիլը պիտի քարը ծակի, // Հավքը պիտի հարավից գա» («Մեկ է, ծառը պիտի ծաղկի», 2-րդ տողում տպագրված է գեղջ, որ գոչումն է, գեղջը նվագեցում, գիշումն է): Հերթը հասնում է ջրին, որ պիտի «ժայռի գլխից ձորը ցատկի, // Գժված գլուխն առնի-փախչի, // Ինքն իրենից փախչի գնա»: Սրբությունները նորոգվում են իր սպակածության ու իր տարածքում. «Թող մեզ պատկի Հայր Սուրբ Սավադորը // Որոտանի կիրճ - մայր տաճարում» («Այս լեռան»): Այդպես Տատնա գետակից բխող ցուրտ ջուրը «Քաղցր է հեքիաթի ամահուլությունից» («Ինձ մի ջուր բերեք»): Բնության օրենքով շարունակվում են բարոյականության դասերը. «Այրի արագիլն իրավունք չունի // ... // Լքելու շիրիմն իր վարուժանի», պիտի մաա ձմռանը: Աչքի առաջ հայրենիքից փախեցիկի տեսարաններն են, երբ ուրանալով ուրանում էին հայրենի տուն ու հարազատի շիրիմ: Ի՞նչ է նշանակում երեք տարիք՝ երեք շիրմաթումբ. «Իմ մանկությունը մեռավ լեռներում, // Պատանությունս բաղաբան մեռավ, // Չահելությունս՝ թեժ կռիվներում» («Այսպես պատահեց»): Ինքն իրեն թաղելուց և «ծանր

եզևալուծ» մի կյանք քաշելուց հետո խորհում է անդարձ կորածի մասին. այսինքն այդ երեք կյանքերը իզուր են անցել, որովհետև ինքն է կառուցել այն տունը (երկիրը), ուր պիտի ապահով ապրեր: Ողբերգակ չդառնալու համար «Ձախորդ օրերը կուզան ու կերթան» է հիշում: Երկուն է ևս «Արտույտները լաց են լինում, // Չարկել է ժամն արտագաղթի» («Լինեմ վկան») տողերում: Արտույտներն են և արտույտները չեն. «Ո՞վ է նրանց իրար խառնում, // Սատանա՞ն, թե ինքը՝ տարին», ինչ էլ լինի՝ «Խառն է մատը սատանայի»: Այսպես տեր ու տիրական է դառնում Լախրյան մորմոքն ու Լախրյան թախիծը.

Մի՞ թե՛ ձեզնից, ավաղ, ես փրկություն չունեմ
Եվ փրկություն չունեմ այս ծանր ամպակախից:
Ինչ է, մի ճար չկա՞, որ առանց ձեզ քնեմ,
Իմ նախրյան մորմոք, իմ նախրյան թախիծ:

Շատ են հանդիմանում ինձ աջից ու ձախից,
Որ խոսքիս մեջ ուրախ ելևէջներ չկան,
Որ նման է հոգիս ջրից համած ձկան,
Եվ թախիծ է կարծում իմ ամեն մի տառից:

Կհասկանա՞ն արդյոք, որ աշխարհում այս մեծ
Մևահողի տեղակ ունեմ մի սև թախիծ-
Այնքան ինքնարողորջ, այնքան իմը, որ ես
Ինձ կորցնում եմ հանկարծ այն կորցնելու վախից (3, 241):

Այս տազևալուծի մեջ է հայրենների շարքը՝ «Օրերը շատ են խառնակ», «Եվ նորից թափառ մի ցեղ», «Մեզանից ի՞նչ են ուզում», «Վխտում են շուրջի խորհրդի»: Ինքն իր մեջ բանաստեղծը խտացնում ու խորացնում է իրականության անդրադարձները՝ դառնալով նորոգյա մի Քուչակ. «Մի անգամ թեզ ծառ զգա // Կացինը սրելուց առաջ. // Քուչակի սիրտ ունեցիր // Չայրեններ գրելուց առաջ»: Ահա և սահյանական հայրենը, որ կառուցվածքով, տողաշարով տարբեր է ավանդականից, ուստի հայրեն բնորոշումը պայմանական է. *Ապրեցի, կյանք չտեսա, Տեսածս գեհեն էր մթին...*
Ամեն մի քայլը պատիժ,
Ամեն ինչ խառն էր ու խրթին,
Ճիշտը մեր խորքում պահած՝
Ամենուր ծափ տվինք ստին:
Փնտրեցինք տաք մի հովիտ,
Եկանք ու դեմ առանք ցրտին...
Եվ հիմա ես ինչ ասեմ

Իմ խաբված ու խաչված սրտին (3, 251):

Այսքանով և այսքանից հետո գալիս է վերջնական հրաժեշտի պահը: Մեկ անգամ չէ, որ Սահյանն իր մահվան սգերգն է երգել: Ամբողջական, ընդհանրացնող և սուգի մեջ սարերի վեհություն ունեցող մի հզոր կենարար ուժով ծնվում է ինքնահրաժեշտի երգը. *Սարեր, ես ձեր երգիչն եմ...*
Ձեր խղճի կանչն ու խիղճն էի...
Ես ձոր կիջնեմ, ժամն է էլի,
Իսկ դուք երկինք թռեք:

Ականջ արեք վերջին անգամ,
Մի սպասեք, թե ես կգամ,
Ձեր երթի մեջ արդեն չկամ,
Ինձ բացակա դրեք:

Ինձ որձաքար մի ծանրադիր,
Ինձ տապան ու տապանագիր,
Հողի վրա՝ կանաչ-կարմիր
Ձեր փեշերը փռեք:

Ինչ ու բաժին դարձավ ջրի,
Ինչ ու տողեր չդարձրի,
Ինչ որ գրել չհասցրի,
Իմ փոխարեն գրեք (3, 261):

Սահյանը ոչ թե գաղտնագրում է ասելիքը, այլ պարզապես իր բանաստեղծական լեզվով է խոսում. կաբավ, որսորդ և «Ի՞նչ կատարվեց աշխարհում, // Որ բացվող լույսը սարում // Սևեր ու սուգ հագավ» («Ո՞վ է ձորից բարձրանում»): Ասես խրտուկ է իր խոսքի ձայնից, իր խորքից դուրս է եկել և հեռացել ինքն իրենից. Լույս շրջադարձվող ինքնարոտում է խառնակ ժամանակների մեջ. «Ու փախել եմ ես ինձանից, // Ու կորել եմ անհայտ հեռվում, // ... // Քացի տալով հագար բարի, // Ոչ ապրում եմ, ոչ էլ մեռնում... // Անձրևի տակ ու կարկուտի // Սովերներում մայրամուտի // Եվ գիշերվա թանձր մթնում // Փստրում եմ ինձ ու չեմ գտնում» (3, 266): Իսկ թե՛ գտնում է, պապ բաշխածի մեջ՝ տվածի և ոչ թե վերցրածի: Նվիրումն է մտում, իսկ խնայածը, պահածը կորած է:

Այսպես թվում է թե հայրենիքից մի պահ հեռանալով՝ վերստին վերադառնում է բուն ասելիքին: Աչքի առաջ մեկ ներքին երկրաբանականներն են, մեկ դարան մտած վաչկատունները, որոնց ասում է. «Քար կկտրեք, թե քարով տաք // Իմ քարակուռ Չայաստանին // Խղճի տաճար, ինկի խորան, // Մեռնի գուռ Չայաստանին» («Թող մոտ չգան»): Բնորոշումները շարունակվում են՝ հոգու թռիչք, սրտի մորմոք, սիրտ սարտուր, վանք ու մատուռ, Մեսրոպի լույս, Ղևոնդի խաչ, Վարդանի սուր ու Սասնա ծուռ: Աղոթք է անում. «Ինչ կլինի այսուհետև // Բարի աչքով նայես Աստված, // Իմ այս մի բուռ Չայաստանին»: Չասնում

է Խորենացուց միջև. Չարենց ուղեկցող հարցին՝ ո՞վ ենք մենք, որտեղից ենք գալիս և ո՞ր ենք գնում, իր ձևակերպմամբ՝ «Ինչո՞ւ եկանք, ո՞ր ենք գնում» և աղոթքից անցնում է կոչի. «Ելի, անգեն ժողովուրդ, // Բարձրացիր քո լեռները լուրթ, // Եվ թող աշխարհն ականջ ակի, // Թե ինչպես ես դու որոտում // Չայսով Ձենով քո Օհանի, // Որ Դավիթը ելի նորից // Ով փրկի սուրբ իր Մարութան // Մարա դաժան թագավորից» (3, 270): Չաջորդում է «Ելք չունեմ» գգուլացումը. այո, ոտքի ելնել, բայց ևս «Ելից գիրք»-ի օրինակով ժողովրդին պետք է փրկության ակի հասցնել, բանի որ Ավետյաց երկիր Չայաստանի ավետիսները մասցել են պատմության մեջ. «Մեր հողը վաղուց խլված, // Մեր տունը վաղուց փլված... // Յոդ չունեմ ու տուն չունեմ: // Քար քաշում, քար ենք տաշում, // Քարի հետ կյանք ենք մաշում, // Յեկվելու մի այլևս չունեմ: // Յետևում խաբկանք ու սուտ, // Առջևում վիհեր են մութ, // Ելք չունեմ ու հուն չունեմ» (3, 271): Թշնամի թշնամի է, բայց ժողովրդի համար աղետ են ևս երկրի տերերը, այստեղից հուսահատության հերթական պոռթկումը. «Ես իմ օրերից գլուխ չեմ հանում, // Ջոկել չի լինում էլ ճիշտը ստից... // Սառնամանիքին ձյունի պես հավում, // Շոգ ու կրակին դողում եմ ցրտից: // ... // Չգիտեմ ինչու գլուխ չեմ հանում... // Տերերից, որ դեռ սուտն են խաբկանք: // Եվ այս տիրական անտերությունից»: Այս փակուղուց բանի որ ելք չկար, այլ բան չէր մնում, բան սեփական բախտի դեմ ծառս լինելու պահանջը: Կերպարանափոխության ոչ թե հերթական, այլ մշտական ձևը հայրենիքն է. «Չայաստան ասեմ, չիկնեմ ամոթից, // Յրճվանքից հավելն ու արցունք դառնամ, // Այդ պարզ արցունքով լվանամ հոգիս, // Պարզության խորհուրդ ու ակունք դառնամ», դառնալ այն, ինչ անհրաժեշտ է հայրենիքին, վերջում՝ «Ամեղ, անսուն և անտանակներիս // Շիրի մի վրա մի բուռ խունի դառնամ» (3, 274): Չայրենիքը տևից դուրս է կանչում. «Երբ բախտի դեմ որոտալով // Ծառս է լինում արյուն տալով // Քո հատընտիր Չայաստանը, // Դու ինչպես ես մտում տանը» (3, 276): Վստահեցնում է, որ թեև մեր ցավը կուտակվել է դարձել է ծով (ծով ցավեր), բայց դրան էլ կդիմանանք («Այս տագնապները»), ևս «Թող հողը թեթև լինի վրադ, // Տարիների տեր ասելություն: // Ել ի՞նչ մաղթանքներ, էլ ինչ խրատ, // Կենացը, հոգևած համբերություն» (3, 279): Ուղեկց են ասացվածքներն ու այլասացությունները. «Գարուն ա, ձուն ա արե» դառնում է «Ամառ ա, ձուն ա արե», որովհետև «Օգոստոսին ձյուն է հագել // Աղոթարան սարը» («Աստծո սիրտն է վի-





րահատել»): Նույնն է. «Լեռներն ի վար քարերի երթ, // Քարերի լուռ տեղատարափ... // Քանդու- քարափ Որոտնաբերդ, // Որոտնա- վանք քանդուքարափ: // Ուր է տանում հոգևած Յոբիդ // Քանդուքարափ եղած հոգիդ» («Ո՛ր է տանում»), «Ամպերը գալիս ձորերն են մտնում, // Ու ձորե- րի հետ են էլ եմ մթնում» («Ամպերը»): Վերստին վերադառնում է կրկնության խորհուրդին և անգամ ներում հայցում դրա համար: Բայց հիմա բնության ինք- նակրկնության խորհուրդով ոչ թե ինքն է իրեն վերադառնում, այլ պատմութ- յունն է իրեն կրկնում. «Երազից քաղած տողեր չեն գրվում, // Երբ պատմութ- յունը ինքն է կրկնվում»: Անկախության խանդավառությանը հաջորդած ծանր հիպոթեզային վերադարձը երկրի արժանա- պատվությունը չթուլացնելու տագ- նակներն են կուտակվում. «Այրվում եմ ջրից, կրակից թրջվում // ... // Հավերժի տեղակ բներն են չվում», խոսքը գտնում է հունը և հայրենաշար «հերոսների» կերպարներ քանդակում. «Հարկերը վերին... որ վերցնում հաճախ` // Նշա- նակում են հիմարին հանճար. // Կանգ- նում թիկունքին, ճանապարհ հարթում // Եվ տիտղոսներով գրահավորվում, // Որ հանճարների բերանը փակի, // Ձեռքերը կապի, ձեռքը հավաքի... // Եվ հետո դառնա ու առանց վախի // Մտ- նի ոլորտներն այս առուկախի, // Որ ժանգն ու մուրը լույսի տեղ ծախի // Եվ միջև անգամ իր հին փափախի // Մաշ- ված թաղիքը տակի թանգարան...»: Սա ծաղրուծանակ է, ապտակ բոլոր նրանց, ովքեր փորձում էին նաև իր հեղինա- կությանը պատասպարվել: Անմիջական շարունակության մեջ ավելի է սրվում ընդվզումը. «Տարիքն իմ գլխին այս Ի՛նչ է բերում, // Օրինանքն անեծքից էլ չեմ տարբերում: // Լրբին շնորհում կոչու- մը սրբի, // Սրբին տանում են, որ կոչիկ սրբի...» (3, 291): Ներքուստ բաժանված է չորս մասի: Հաջորդ` երրորդ հատվա- ծում, խոսքը շատ բնականորեն փոխե- լով, թե` դռան անագը հնչեց, սարերից մեկը եկավ, տխուր գրույց բացեց, «Ու միտքս գնաց շների վրա»: Հիմա էլ, շնե- րին նկատի ունենալով, խոսում է հա- վատարմության կորուստի մասին: Քա- նի կար նախահայր Բողարն էր, բայց ահա` «Շներն, ատում են, իրենց նա- խահոր // Շանորդությունն են ժառան- գել միայն. // Շունը չի ուզում պարտքը կատարել... // Շունը տիրոջը շան տեղ չի դնում... // Շան գլխին տեր կա, տերը շուն չունի... // Ո՛ր էս շնային հավա- տարմություն»: Այսպես, հայոց բախտի այս կեռամանին Սահյանը «բերում» է իրեն, որովհետև այդպես էր ծնվել: Ուստի. «Գլուխս առնեմ ու կորչեմ այս քաղաքից... // Բաբելոնյան խառնա- կության շաղախից... // Այս տիրական

ախ ու վախի վարակից», գնա հոգին լվանա ծիածանով և վերստին փորձի բևեռներն իրար բերել: Ավելանում են մտքի երաշտը, սնափառության հա- մաճարակը... Ուստի սա արդեն ոչ թե ժամանակավոր հերթական վերադարձ է դեպի բնություն, այլ վերջնական փա- խուստ այս սողոմ-գոմորից, որ վիճակ- վեց կյանքի վերջին տարիներին. «Ու- գում եմ փրկվել // Փրկություն կոչվող այս գերությունից» («Ուզում եմ կորչել, չքվել հավիտյան»): Փախուստ դեպի հիշողության կանաչ հովիտները, ուր «Քարն ու քերծը մարդիկ, // Ես քար ու քերծ էի, // Այն ժամանակ արդեն // Ես բանաստեղծ էի»: Սա ինքնադրոման շարունակվող հերթական ձևերից մեկն է, որ մեկ այլ տարբերակով այսպիսի կերպարանք է ստանում. «Եվ քանի անգամ աշխարհում այսպես // Ինձա- նից փախել ու դարձել եմ նա // Ու դար- ձել եմ դու, դարձել ես ու նա, // Դարձել ես ու դու» («Ականջդ կանչի»): Այս ես ու դու, ես ու նա մեկ հեռանում են, մեկ էլ հավաքվում, մեղքերն են «մեկ-մեկ երեսով տալիս»: Բաժան-բաժան եղած մարդկային ինքնությունն է, տրոհված ամբողջությունը, որ մեկ հաշտ ու խա- դաղ է, մեկ կռիվ ու դավի մեջ: Ինքն իր հետ տալիք-առնելիքը շարունակում է «Թխահեր պատանու, սպիտակ մորու- քավորի և կանաչ-կարմիր աշխարհի բալլար»-ում: Երկու տարիքում էլ ինքն է, խոսքն այն եզերքի բարձր բարոյա- կանության մասին է, ուր հարազա- տությունն ու արժանապատվությունն այնքան տեսանելի են, որ տեղացուն չվող հավերժն են անգամ ճանաչում: Սա ինքնությունն է, որ հայ մարդը պա- հել-պահպանել է բոլոր կորուստներից հետո և դեռևս պետք է տոկա, իր վճի- ող որոտա, որպեսզի դրախտավայրը` դժբախտավայր, գաղթավայր ու դժ- խավայր չդառնա: Պատճառը մշտապես մեկն է ու նույնը. «Օտարացել, խորթա- ցել // Ու փախել եմք մեզանից, // Քան- դուքարափ եմք եղել, // Ո՛վ պիտի գա` նորոգի»: Դրսից ոչ ոք չի գալու, նորո- գելու եկողները քանդողներ են, ուստի հույսը վերստին հավաքական միաբա- նությունն է:

Այսպես ամեն ինչ մշտական դար- ծի ու վերադարձի մեջ է. մեկ զայրա- նում-վրդովվում է հայրենի երկրի ծանր կացությունից, մեկ խաղաղվում-կա- րեկցում, մեկ իշխանավորների դատաս- տանն է անում, մեկ թիկունք կանգնում նրանց` ընդդեմ արտաքին թշնամու: Հոգեկան տեղատվության ու մակընթա- ցության ալիքն է, որ առաջանում է ցավի տատանումներից: Այդ իսկ պատճառով տարբեր լիցքավորում ունեցող գործերը կողք կողքի են: Ահա Հայաստանի իրա- կան պատկերը. «Աշխարհը փուչ... փուչ աշխարհում // Այսքան փուչ ու փշերի

մեջ, // Ի՛նչ իմանաս, մենք էլ գուցե, // Ի՛նչ որ չափով փչանում ենք: // Ի՛նչ է ասում ձեր խիճը ձեզ, // Երբ մեզ բո- ռուփուչ են անում // Փուչերը այս փուչ աշխարհի, // Եվ մենք այսպես քչանում ենք» («Քչանում ենք»): Այն իրականութ- յան մեջ, ուր Հիսուսի պատգամներն ու- րանալով` շատ անարժաններ դառնում էին տեր ու տիրակալ` Սահյանը սովից ու ցրտից հալածյալ վերստին «Բանաս- տեղծի բախտն է նախընտրում: Քամու խորհրդանշանը բնաշխարհից տեղա- փոխվում է քաղաքականություն. «Որ- պեսզի բեկվի երկինքը ծովում, // Պետք է որ քամին բացակա լինի» («Ծովն ու քամին»): Հիշենք Չարենցի «Որպես գործ, դեղին տերևներ» պոեմը, որի մեջ հայրենի և օտար հողմերն ու քամիները բռնում էին երկրի հունդը, որպեսզի չընկնի հողին, չամրանա: Առջևում վե- րահաս փորձանքն է, մուգ հորձանքն է, սովը, աղբատուփյունը, որ ժողովրդին «պարզեցնի» երկրաբանի օտար ու- ժերի դրոմումով երկրի տեր դարձած իշխանությունները, որ իրենց անփա- ռունակ գործունեությամբ արտագաղ- թի մատնեցին գյուղերն ու քաղաքները: Միակ փրկությունը վերհուշի մեջ պատասպարվելու հնարավորությունն է («Ինձ վերահաս...»): Այն ամենը, որ ժա- մանակի ընթացքում ազգային արժեք էր դարձել միանգամից ոչնչացավ, մնաց «Անկախ ինքնիշխան դժմախտավայրն ու դժբախտավայրը», որովհետև «Ե- կան... Տիրացան ու ավերեցին, // Իրենց մեղքերը մեզ չներեցին, // Մեծահոգա- բաժ մեզ նվիրեցին // Չեխ, գրավարար այս բազարները: // Եվ Ի՛նչ մնաց մեզ... մրսած մեղկություն, // Շապիկը հանած օձի մերկություն... // Թող կեցցեն այս նոր նորին մեծություն // Վերին պարո- նայք Քաջնագարները» («Եվ ինչ մնաց մեզ»): Այս նորին մեծությունները քիչ անց վերամարմավորվում են որպես միջակության կատաղի գամփոներ, մար- դու փոխարեն արդեն նրա ստվերն է. «Ճամփա ենք ընկնում կամաց-կամաց, // Ես կարճանում եմ, նա երկարում»: Իսկ ստվերը, հայտնի բան է, սատա- նայի դրսևորումներից է, մութի ու խա- վարի երկվորյակը: Այսպես ստվեր-սա- տանաները կհավաքվեն «Եվ կկայանա, թող որ ներվի // Այս քաղաքական ոճի համար, // Ամեն բացատրում` ստվերնե- րի // Պատմական մի նոր համագումար («Ստվերս և ես»): Ստվերներն այսպես առաջ են ընկնում և իրենց տերերին մխրճում, կորցնում «Մի թանձրամած // Մութ, միակտուր ստվերի մեջ»: Եվ այս- բանից հետո, թե ինչ է լինելու, արդեն իսկ պարզ է. «Ի՛նչ է լինելու, պարոն սա- տանա. // Ես Ի՛նչ իմանամ, սատանան գիտի»: Այսպես նախագահ-սատանայի գլխավորությամբ սատանաներն իրենց խաղն են խաղում, իսկ ժողովուրդը

գոնե այնքան խելք պիտի ունենա, ու չհավատա այդ քաղաքական չարքերին և տանուլ չտա գոնե վաղվա օրը: Յիշվում են նախկին հեթախոսները, անգամ այդ պահին, մինչև հաջորդ ամոթալի հիասթափությունը, կոչ է անում ձգել գոտիները, բայց Արցախ տանել «Կրեժը արյան, // Օրերի ոգին մեր փետրվարյան»: Միմիայն այդ դեպքում՝ «Եվ մեր երթի դեմ կչքվի ինքը // Այս ցրտի, սովի, թուրքի դաշինքը»: Կորովը բարձր պահող միակ կռվանը Արցախյան ազատամարտն է. «Որտեղից այսքան ցավ ու թախիծ. // Զարեր են փշոռում սրտիս վրա... // Գույժեր են գայիս Ղարաբաղից, // Սարեր են փշոռվում սրտիս վրա, // Կռվում են այնտեղ քաջերն ազգի... // Եվ, ահա, նախերգը նրանց ասքի // Ողբի է փոխվում և մահազգի, // Դարեր են փվում սրտիս վրա» («Ձմեռային դաշինք», 3, 332): Այլ գործեր՝ «Օրվա երգը», «Մի աղբյուր կա», ավելանում են բնաշխարհիկ հոգեհարազատ ծայները՝ «Խելոք, խելոք...»: Հատուկ է եզրերը մեկ պատահուկում են, մեկ միանում, դիմադրական ծայները մեկ աղաղակ են, մեկ խոնարհում, մարդը ճանապարհին մեկ մեռնում է, մեկ հարություն է առնում: Տատանումների այիքը կործանարար է, բայց ծայնը դեռ հեշտ է. «Չծերանայիք, չծերանայիք, // Մեր ծերպ ու կերպից չիտանայիք, // Չսպիտակեիք ժամանակից շուտ // Եվ մեր խոսքի մեջ չսևանայիք: // ... // Այս մեռությանը չընտելանայիք, // Այս գերությանը չընտելանայիք, // Վերանում էինք... Գոնե մեր մաքուր // Երեսի ջրով թող վերանայիք» (3, 342): Դժվարությամբ դիմանալով՝ վրա է հասնում համերաշխության, բայց նաև աղոթքի պահը.

*Ինձ համար ամեն ինչ կորած է,
Էլ ոչ ոք ու ոչինչ ես չունեմ:
Ծամում եմ իմ բաժին չոր հացը,
Եվ քունս չի տանում, որ քնեմ:*

*-Հիվանդ է ձեր խոնարհ երգիչը,
Երևի հոգեվարք է ապրում:-
Ասում են.- Այդքանը դեռ քիչ է,
Արժանի պատիժը չի կրում:*

*Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի...
Մրա՞նք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս շտապի... (3, 325):*

Այս ողբերգականությամբ խոսք է ուղղում սերնդակից բանաստեղծներին և միաբանության կոչ անում. «Չպրտել են մեզ անդունդն անտակ, // Չենք դառնում մորիկ, չենք շառաչում // ... // Ուշ կլինի, մեր գլխին կտանք»: Ավագի ու կրտսերի խոսք է բացում. ավագները վաղուց չկան, կրտսերներն են արդեն ավագ, դժվար ճանապարհ են անցել. «Ճյուղ ենք քարից, սնվում ենք քարից,

// Դանդաղ աճում ենք թե՛ քարի վրա // ... // Մենք ուշ աճում ենք, վաղ հասունանում», իսկ «Հասունանալը վախճանն է հասկի»: Այստեղից «Աղոթք»-ի շարունակությունն է. «Չերկս թողնում են, բերքս տանում, // Լավ է, որ հերկս խլող չկա: // Մեղքս թողնում են, խելքս տանում, // Ո՛ւմ է պետք, մեղքս խլող չկա: // Ուրիշ ինչ տեսակ մի փորձ անեմ, // Որ ոմանց պատվին ինձ կործանեմ» (3, 329): Նախկինում այթեխատ Սահյանն այս տարիներին հանուն երկրի ու ժողովրդի Աստծուն հաճախակի է հիշում, որպեսզի «Թագավորի խելքը շատանա, // Եվ բան չհասի ոչ մի սատանա» («Եվ շատ եմ ուզում»): Երանգները խտանում են, որովհետև շատանում են Աստծու ահը կորցրածները և դառնում պատիժ. «Գնալք օտարի դռները բախեք, // Թերմացքներ մուրանք, որ սովը թաղե՞րք... // Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի // Այս անկախության պարսկով կախե՞նք // Ու ճոճվե՞նք մինչև վերևից նայի, // Տեսնի, սարսռա, սարսափի Աստված // Եվ իր ստեղծած աշխարհի նման, // Մեզ վերջին անգամ մի բան խոստանա // Ու խաբի Աստված» (3, 339): Այս կասկածների մեջ ստեղծագործական ուղին Սահյանն ավարտում է բարձր ու փառահեղ մի բանաստեղծությամբ՝ «Իմ քարափներն ու ես», քարափներն են, ինքն է, ժամանակն է.

*Ձեր լուրջությունը գնգում,
Չրնգում է ձորով մեկ,
Ձեր լուրջության համերգում
Ինձ բացակա չդնեք:*

*Համբերություն եմ ասում,
Ակնարկներս կրկնեք,
Համբերության համդեմում
Ինձ բացակա չդնեք:*

*Ձեր շուրջը ամպ է, կայծակ,
Քնով չանցնեք, չքնեք:
Քնեցիք էլ, արթնացաք,
Ինձ բացակա չդնեք:*

*...Ես եմ քարե պատարագ
Ձեզնից սերված, ընդունեք,
Դուք, ձեր կամքին հակառակ,
Ինձ բացակա չդնեք:*

*Ոչ խոստումներ, ոչ երդում,
Չսպասեք ու չքնեք...
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք (3, 343):*

Ազգային անկախության ողբերգությունն ասարեց, բայց չարվեց ողբի ու լավիքի, ցավին ընդհիմնացավ մի խոր լավատեսությամբ, որ գայիս էր հողի ուժից, գյուղի եկեղեցու բակում նստած օրինաբերան ծերունիներից:

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայ մեծ բանաստեղծի գարմանահրաշ տեսակը



ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Համո Սահյանն իր պոեզիայում, դարեր ի վեր առանց պետականության պատմական արհավիրքներին դիմակայած, իր ինքնությունը չկորցրած, նահապետական մաքրամաքուր առաքինությունները հավատամբ դարձրած, ողջախոհ խառնվածքի սովորական հայ մարդու ոգեղենության տիրույթների հրեղեն խորհուրդը կարողացավ մեկնել...

Մարդկայինի բարոյախոհությամբ շաղախված, հայրենի եզերքի ու բնության հանդեպ տածած սերը պաշտամունքի վերածած բանաստեղծի այսպիսի գարմանահրաշ տեսակ չէր եղել մեր պոեզիայում:

Ժամանակների մեջ չխամրող, բանաստեղծի մնայնության հարցում միմի գորավարի դեր կատարող բանաստեղծություններ ունենալը Պարոյր Սևակը երանելի բարեբախտություն էր համարում:

Համո Սահյանը կարողացավ հեղինակը դառնալ այնպիսի բանաստեղծությունների, որոնք ասես մեր ողջ ժողովրդի մորմոքներից ու կարոտներից երկված հոգեպարար հրովարտակներ լինեն:

Չենց այս իրողության հանգամանքով է պայմանավորված Սահյանի ժողովրդականության, նրա պարզ ու անպաճույճ բանաստեղծական հուզաշխարհի մոզականության գաղտնիքը...

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մորուս Հասարթյանը և ազգային ճակատագիրը Համո Սահյանի վերջին ժողովածուում



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԿԱՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀԳՄՅ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մենք գրողներն ու արվեստագետները հաճախ իրենց կյանքի ընթացքի համար պարտական են այն իմաստուններին, ովքեր նրանց աստվածային օժտվածությունը տեսնում են վաղ հասակից ու մարգարեաբար գուշակում նրանց ապագան: Համաշխարհային գրականությունը մեզ է ավանդել բազում օրինակներ: Հանճարեղ Վիկտոր Զյուկովին ֆրանսիական պակոնտիան 14 տարեկանում արժանացրեց հատուկ մրցանակի: Նիկոլ Աղբալյանը իր մի բանաստեղծության մեջ հայտարարեց, որ ծնվել է «Մի նոր բանաստեղծ», և նա եղիշե Չարենցն էր:

Աղբալյանն ավետեց հանճարի ծնունդը, ու երախտագետ Չարենցը «Չարենց Նամեում» գրեց հետևյալ տողերը.

Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր
Մարտերով դահիճն ու Ֆոյեն
Մկեռեց ամբողջ աշխարհին,
Որ ծնվել է երգիչ մի վառ
Ու բերել է երգեր հրե.
Տնձա՛, Նաիրյան աշխարհի,
Տնձա՛...Եղիշե Չարենց:՝

Ֆրանսիայի ազգային հերոս, ֆաշիզմի դեմ մղված դիմադրության շարժման

պարագլուխ Միսաք Սանուշյանը դարձրեց Ծաղկազարկի տետրի վրա գրել է. «Շարը կղառնա հայ ժողովրդի պատիվը և Ֆրանսիայի փառքը»: Եվ վերջինս դարձավ այդպիսին:

Ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Լուի Արագոնը «La littérature Soviétique» պարբերականում կարդալով Հովհաննես Ծիրազի «Բիբլիական» պոեմը և Չինգիզ Այտմատովի «Ջամիլա» պատմվածքը՝ գուշակեց նրանց մեծ գրողներ լինելը: Նման օրինակներ շատ կան: Ահա այդպես էլ նշանավոր սայաթևավագետ, հնագետ Մորուս Հասարթյանը, որը շատ հարազատական ձևով կապված էր երիտասարդ Համո Սահյանի հետ, զգաց վերջինիս հզոր ու անկրկնելի տաղանդը և իր խորհուրդներով, որոնք արտացոլված են նրանց հարուստ նամակագրության մեջ, ուղղորդում էր բանաստեղծին: Հայրենական մեծ պատերազմը նոր էր վերջացել, ու Սահյանը Բաքվից Երևան գալիս միշտ ապրում էր Հասարթյանի բնակարանում:

Հասարթյանը 1937-ի դաժան մղձավանջը տեսած, իր ազգային գաղափարների համար բանտում տառապած, հրաշքով փրկված այն մտավորականն էր, որի համար հայ գրականությունը, հայ ազգի ապագան գերխնդիրներ էին: 37-ի չարաբաստիկ տարիներին զոհ էին գնացել նրա ամենամտերիմ ու գաղափարակից ընկերները՝ Եղիշե Չարենցն ու Ակսել Բակունցը, որոնց նա համարում էր հանճարներ: Մեծ հայագետին հարկավոր էր տեսնել նրանց փոխարինողներին: Եվ իրար գտան Համո Սահյանն ու Մորուս Հասարթյանը: Մորուս Հասարթյանին նվիրված մի բանաստեղծության մեջ Սահյանը վերջինիս համեմատում է Սյունյաց արժանավոր Լահապետների հետ.

Ո՞վ է պահել քեզ թաքուն և պահել է ի՞նչ ձևով,
Որ այս դաժան ցրտերին աշխարհ
բերի հրաշքով...
Քո հոգին է բարության երկինքներից
պոկած շանթ,
Որ չի դիպել դեռ նրան ժամանակի

ձեռքը ժամառ:՝

1946-ի դեկտեմբերի նամակով Սահյանը հայտնում է, որ ուղարկել է մի բանաստեղծություն, որն իրեն դուր է գալիս ու կամենում է, որ Հասարթյանն այն տպագրել տա «Սովետական Հայաստան» թերթում: Եթե ինքն այդ բանաստեղծությունն ուղարկել թերթին, ապա այն կմտա խմբագրության դարակներում: Ուշագրավ է, որ գրեթե բոլոր նամակների վերջում կա նույն մակագրությունը՝ «Կարոտով՝ քո Համո»:

1947-ի մարտի 5-ին Սահյանն իր ժողովածուներում գետնեղիք գործերի ընտրությունը վստահում է Հասարթյանին:

Մորուս Հասարթյանը, որի համար ողջ պատմական Հայաստանը, աշխարհասփյուռ հայությունը իր կյանքի ու գործունեության իմաստն էին, մի անսահման սեր ուներ խիստ փոքրացած Խորհրդային Հայաստանի ու Արցախի նկատմամբ: Թվում էր, թե նա ծանոթ է Հայաստանի ամեն բնակավայրին: Նաև հայտնի էր նրա առանձնահատուկ սերը Սիսիանի շրջանի Լոր գյուղի հանդեպ: Եթե Լորից ուսանողներ էին լինում, ապա բնության ժամանակ նրանց գերազանց գնահատական էր նշանակում:

Նա հնագիտական պեղումներ էր կատարել իր պատմություն ունեցող Լոր գյուղում, ծանոթացել գյուղի բարի, աշխատասեր մարդկանց: Բացի այդ, Լոր գյուղի հետ էին կապվում նրա երկու սիրելի գրողները՝ Ակսել Բակունցը՝ հրաշք «Խոնարհ առջիկը» պատմվածքի հեղինակը ու Լորի պարծանքը դարձած Համո Սահյանը:

Բնությունը, իր հայրենի եզերքի գեղեցկության իմաստավորումը, հայ ընտանիքի արտակարգ ջերմությունն ու հարազատական կապերի ամրությունը, մարդկային հոգու անաղարտությունը, հայրենիքին նվիրվելը, մարդասիրությունը Համո Սահյանի քնարերգության թեմաներն էին:

* * *

Կյանքի վերջին տարիներին գրված «Ինձ բացակա չլնեք» ժողովածուի հրատարակումը Սահյանը չի տեսել: Ժողովածուն տպագրվել է 1999-ին, երբ բանաստեղծի հոգին արդեն տիեզերքում էր՝:

Հայրենի եզերքի նկատմամբ ունեցած սերը հատկանշական է բոլոր մեծ բանաստեղծներին: Սահյանի «Ինձ բացակա չլնեք» ժողովածուում ազգային խնդիրներն առաջնահերթ են. թվում է, թե որոշ բանաստեղծություններ գրվել են հենց այսօր:

Ամեն ճշմարիտ գրող, որն իրոք Աստուծու պատգամաբերն է մարդկությանը, ցանկանում է, որ իր պատվիրանները հասնեն նախ իր հայրենակիցներին և ապա համայն մարդկությանը:

Մորուս
Հասարակայնի հետ



Բանաստեղծը ծանոթ է հայ դարավոր գրականությանը, նաև համաշխարհային գրականության մեծերին, նա կամենում է, որ հայ բանաստեղծի ասելիքը նույնպես հասնի համայն մարդկությանը, ինչպես Գարսիա Լորկայինը, ինչպես Բորիս Պաստերնակինը, ինչպես Սերգեյ Եսենինինը:

Ամմաացորդ նվիրվելով ազգային գրականությանը՝ Սահյանը, հիշելով իրենից առաջ եղած, հայերի սիրելի ու փայլալից բանաստեղծներին՝ Թումանյանին, Իսահակյանին ու Չարենցին, տազնապած հարց է տալիս.
*Այս, իմ ժողովուրդ, քո այնքան շոյալ
Տվածից քեզ ի՞նչ վերադարձրի:
Թե քանի «Պատրանք», քանի «Փարվանա»,
«Մսպետական» ու «Բինգոյ» կորցրի... (Էջ 36)*

Թուրք-ադրբեջանական քարոզչական արշավի ահազանգով թափին ընդդեմ դառնացած բանաստեղծն արձանագրում է.
*Մեզ ասում են.- Դուք մերը չեք,
Մինչև անգամ դուք ձերը չեք,
Ձեր տեղը չեք, ձեր տերը չեք,
Դուք տերը չեք ձեր երդերի,
Տաճարների ու քերդերի.
Մեզ մեր ցավն են թողնում մենակ,
Որ իրենցը պիտի լինեն,
Թե հույսերդ քեզ չզինեն: (Էջ 140)*

Անկախության առաջին տարիները սկսվեցին մթով, քաղցով, զոհերով, Արցախյան գոյամարտով: Այդ ամենի սարսափն ու թշվառության համաճարակը համընդհանուր էր, բանաստեղծը նույնպես տառապում էր բոլորի հետ: Նա հիանալի հասկանում էր, որ այդ ամենի մեջ մեծագույն դերը պատկանում է մեր դարավոր թշնամուն, հայերի Մեծ ցեղասպանության կազմակերպողին:

88-ի երկրաշարժից հետո և պատերազմի տարիներին Հայաստանը ինչ-

որ նյութական օգնություն էր ստանում գերտերություններից, որը նմանվում էր մուրացիկին նետված գորշների: Այս թշվառ վիճակը խոցում է Սահյան բանաստեղծի ազգային արժանապատվությունը.

*Գնանք օտարի դռները բախենք,
Թերմացքներ մուրանք, որ սովը թաղենք...
Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի
Այս անկախության պարանով կախենք: (Էջ 235)*

Որքան արդիական է հնչում «Աշխարհից ես բան չեմ հասկանում» սկսված թղթով բանաստեղծությունը.
*Չգիտեմ, թե ով է մեր տերը,
Ասում են՝ բոլորս մի տուն ենք...
Բայց տան մեջ իշխում են մեծերը,
Մեծերը փոքրերին ուտում են: (Էջ 41)*

Եթե սերը նշանավոր լեզվաբան Ռադավոյե Պեշիչը հրաշքով կարողար այս տողերն, ապա անպայման այն կղներ իր հզոր քննադատությամբ գլոբալիզացիան մերկացնող «Я обвиняю молчание» («Ես դատապարտում եմ լռությունը»)՝ գրքի բնաբան:

Ռ. Պեշիչը խոսում օրինակներով ներկայացնում է, թե ինչպես մեծ տերություններն ազգամիջյան պատերազմներով, նյութական միջոցների գործարքմամբ, սուտ կարգախոսով վերացնում են փոքր պետությունները: Նա գլոբալիզացիան համարում է XXI դարի ստրկության նոր ձև, որին զոհ են գնում բազմահազար անմեղ կյանքեր:

Իսկ ի՞նչ հավատամք ունի Համո Սահյանը. նա մարգարեի նման հատուկ իմաստությամբ ու խոր հավատով, տարբեր բանաստեղծական ժանրերով՝ տրիոլետներ, հայրեններ, հավատում է իր հայրենիքի և հայի հավերժությանը.
*Աշխարհում մենք ենք մնալու՝
Մեր քամած հին գինու թնդությամբ,
Մեր խորքով, մեր խոսքով քաղցրա-*

*լուր,
Էն գլխից պարտվածի պնդությամբ:
(Էջ 44)*

Իր չքնադ հայրեններում բանաստեղծն իրավացիորեն բողոքում է, որ օրերը շատ խառնակ են, ու ինքը աշխարհից ոչինչ չի հասկանում.
*Մեղքը շատ, խիղճը մեռած,
Իմ դարից բան չեմ հասկանում: (Էջ 117)*

Նա հիանալի գիտի Հայաստանի պատմականորեն անցած ճանապարհը՝ սկսած Նաիրի խաղաղասեր ու շինարար երկրի հիմնադրող քաղաքակրթությունից: Բանաստեղծի հոգեկան կորովը կոփել են Մաշտոցյան գրերը, Գրիգոր Նարեկացու մարդկային հոգու և գործի մաքրությունը պահանջող հավերժ աստվածային «Մատենաը», Հայաստանը արևային գույներով փառաբանող, կենսասեր կտավեր վրձնող Մարտիրոս Սարյանը: Հայ ժողովրդի հավերժությունը կապահովվի, եթե ամեն հայի համար թանկ լինեն մեր քարակոփ շքեղ տաճարները, հերոս նախնիների պաշտամունքը.

*Տախնյաց սուրբ հավատի
Մասունքների դիմաց
Շունկը ծալվի պիտի
Ուրիշ հնար չկա: (Էջ 18)*

Իսկական արվեստագետները նույնստեղծ են իրենց հայրենիքի հետ: Այդ երևույթը հայ գրականության մեջ հստակորեն իր արտացոլում է գտնում սկսած Պատմափայտ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» խիստ արդիական գրքից: Հենց այդպիսին է աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանի արվեստը, որը դիպուկ բնութագրում է Համո Սահյանը մի քայտակում.

*Մարերը աշխարհի մկաններն են,
Մարերը հավերժի վկաններն են:
Մարերը սերերն են Մարյանի,
Մարյանի մեծ հոգու նկարներն են:
(Էջ 75)*

Խորիմաստ է «Աղոթեմ» բանաստեղծությունը, որում պատկերված է բանաստեղծի հոգեկան խռովքը, նա չի հավատում երկրի տերերին.
*Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի...
Մրա՞նք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մնաս շապալի... (Էջ 216)*

Օրինակելի ընտանիքը, որպես պետության ու ազգի հիմք, ճշմարտությունը ուղեկցում են Սահյանի քնարերգությանը: Այդ ճշմարտությունը մարդկությանը պարտադիր պայմանի ձևով մատուցում է հին աշխարհի իմաստուն գրքերից մեկը՝ «Գիրք պիտոյիցը»: Նրանում ասվում է. «Եթե կինն ու ամուսինը նվիրված են միմյանց, ապա բոլորի համար կլինի բարիք. կկառուցվեն քա-



ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյան. նախնականի և հավիտենականի սահմանին



դաբներ, մեծափարթամ շինություններ, մանուկները խնամված կլինեն, ծերերի նկատմամբ կլինի խիստ հոգատարություն, կկառուցվեն տաճարներ, ազգերը կապրեն խաղաղությամբ և բարգավաճման մեջ»⁶

Սահյանը համոզված է, որ աշխատասեր ու արդար վաստակով ազգը կպահպանի իր տոհմածառը.

Մերոնք նստել են իրիկնահացի:

Տասու շերտիկով բոլորին հերթով

Վարձն է հատուցում օրվա արածի:

(Էջ 101)

Իրիկնահացին բացակա է միայն բանաստեղծը, որն աշխարհին ներկայացնելու է իր տոհմածառի լույսը:

Որպես մատաղացու գառ բանաստեղծը պատրաստ է գնեհար լինել իր հայրենիքը խորհրդանշող Այոսիքի համար.

Ի՞նչ ասեմ, Այոսիք աշխարհ,

Հիշո՞ւմ ես դու հին հոտադիդ,

Որ հիմա հասակն առել

Ու հոգնած ջրկիրն է տադիդ:

Ծխով է ներշնչված նա

Ամեն մի երդիդ ու թաղիդ,

Որ լինի, ինչ էլ դառնա,

Իմացիր՝ գառն է մատադիդ:

Այոսյաց աշխարհի չքնադ բնությունը, նրա շինարար, աշխատասեր զավակները եղել են մեծ բանաստեղծի ոգեշնչման աղբյուրը: Այդ մեծ սիրուց էլ ծնվել է Համո Սահյանի երբեք չհնացող, մարդկային հոգին հարստացնող, հզոր ու չքնադ քնարերգությունը:

Ծանոթագրություններ

1. Վ. Նավասարդյան, Չարենց (Հուլիտ և խորհրդածություններ), Կահիրե, 1957, էջ 8:
2. Ա. Դյուլխանյան, Շարլ Ազնավուրը բանաստեղծ, Երևան, 2002, էջ 4:
3. Ա. Դյուլխանյան, Մորուս Հասարթյան, Ինքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, 2002, էջ 51:
4. 2004-ին Շիրու Դավթյանի խմբագրությամբ այն վերահրատարակվել է: Հոդվածում այդ ժողովածուից բերված մեջբերումների էջերը կնշվեն վերևում-Ա.Դ.:
5. Р. Пешич, Я обвиняю молчание, Белград, 2017.
6. «Գիրք պիտոյից», Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993, էջ 72:



ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնի առաջատար գիտաշխատող

Ամեն բանաստեղծ աշխարհը նորից է «արարում» բանաստեղծությամբ: Նորից ու նորովի: Բանաստեղծության խորհրդավոր ծնունդը նաև ինքնարարման, ինքնալրումի ծես է, և պատահական չէ, որ բանաստեղծը առաջին տողը համեմատում է արեգակի առաջին շողի հետ և արարման համառ տղևնաբլր բանաստեղծորեն զուգահեռում ինքնակազմումի ջանքին. «Մասունք առ մասունք հավաքում ես քեզ //Եվ ամբողջանում: //Եվ գրում ես դու... Այսինքն դու քեզ //Աշխարհ ես բերում մի կրկին անգամ: //Աշխարհ ես բերում //Եվ արարողի առաքինությամբ //Տալիս աշխարհին»¹:

Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուները ժամանակի մեջ պատկերագծում են գեղարվեստական մտածողությամբ ու զգացողությամբ միասնական, ձույլ մի ամբողջություն, ուր շերտ առ շերտ հյուսված ու դարսված են նրա բանաստեղծական խոհը կառուցակազմով համամարդկային, ազգային, բնաշխարհիկ ու երանձնական նստվածքները: Սահյանի բանաստեղծական ինքնությունը առերևույթ պարզության մեջ բարդ է բավականին, և նա իսկպպես մեր նորագույն պոեզիայի առանցքային երևույթներից է

տեսակով ու շարունակությամբ: Այդ խոհը հյուսվում է հայրեններին ներհատուկ արտաքին պարզ-չիտակության մթնոլորտում՝ ցոլացնելով հայ բանաստեղծության ներքին լույսն ու խռովքը, պարզորեն հանճարեղ, միամտորեն իմաստուն երակը, որ ննջում է լեռնաշխարհի ամեն թուփ ու քարի մեջ: Ու սպասում, որ բանաստեղծի մատը անի նախնական «հմայական» շարժումը, դիպչի ու կենդանացնի:

Սահյանի խոհը ծավալվում է բանաստեղծական և պատմական ժամանակի՝ միանգամից մի քանի չափողականությունների մեջ: Այդ ժամանակները բացվում-ճեղքվում են իրարով ու իրար մեջ և, ամենակարևորը, հավիտենության ոլորտը մուտք գործում պարբերաբար. նրանք «գիտեն» հավիտենական ժամանակը, որ առկա է միշտ և ամենուր: Ասել է՝ Սահյանի բանաստեղծական խոհը, ծավալվելով իր կյանքի ժամանակի մեջ, շարունակ ետ է շրջվում, ետ հոսում դեպի նախապատմական ժամանակը, սկիզբը, սակայն միևնույն պահին շարունակ «հիշում է» հավիտենության մասին ու նաև չի մոռանում իր ժամանակի վերջը, որ պարբերաբար երևում է տողերի մեջ՝ պատկերի, տեսիլի կամ տազնապի տեսքով: Ուշագրավ է այն, որ Սահյանը ժամանակային բազմաչափ համակարգում տեղավորում է իր կյանքի ժամանակը՝ տարիքային հանգրվաններով, որոնք լուսավորվում են մանկության, այսինքն՝ իր սկզբի տեսիլով, պարբերական երևումով: Ներանձնական և վերանձնական ժամանակից դուրս Սահյանի բանաստեղծական կառույց է ներթափանցում նաև առասպելի ժամանակը, այն, ինչ նա հիշում է մարդկության մեծ «երագից», պատառիկներ, ծվեններ՝ հիմնականում ձիավոր ասպետի «այցելություններով»: Սահյանի գեղարվեստական մտածողության արտաքին շերտում վաղուց և հանգամանորեն քննաբանված խորհրդանշաններն են մասրենին, քարափղը, կածանը, գետը, մյուսները, սակայն սրանք խորաշերտային պայմանավորվածությամբ տանում են նրա բանաստեղծա-

կան խոհի ներքին շերտը, ուր ծայր է առնում և ի վերջո խզվում քարափի լուռությունը, ուր կարծես կածանի սկիզբը ու գծագրվում վերջը, և պարզ երևում է, թե որտեղից է գալիս Սահյանի գետը, ու, մասավանդ, ուր է գնում: Սահյանն իր արարած աշխարհը պարբերաբար շրջում է, մի տեսակ փոխում է դիտակետը՝ բանաստեղծական ու մտածողական-վերլուծական նկատառումներով, այնպես է անում մի պահ, որ ամպերը դառնան նստակյաց, քարերը՝ բոցավոր, որ «ալիքները քարանում են, քարափները՝ քայլում»: Առաջին բանաստեղծության մեջ «աշունը ձորն է մտնում», իսկ երկրորդում գարուն է բացվում: Եղանակի փոփոխությունը բանաստեղծին մղում է հաշվարկման կենտրոնը փոխելու: Սա էլ խաղ է բանաստեղծական տարածության հետ. թվում է՝ գետը չի փախչում, այլ քարափներն են վազում: Այս պատկերները բերելով բանաստեղծություն՝ Սահյանը փորձել է հնարավորինս ճշգրիտ հաղորդել բնաշխարհի շարժն ու շունչը, հզոր շնչառությունը՝ սրբազան տարածությունը մերթ քերտերով, մերթ ճեղքելով գետի անվերջ ծավալվող հոսանքով ու բոլորագծելով կածանի ոլորումներով: Բայց ամենակարևորն այն է, որ Չորգորա գետը որտեղից էլ գա և ուր էլ գնա, «անցնում է» բանաստեղծի ճիշտ սրտի միջով: Գետի հոսումը, կածանի դարձ-դարձումները տարածության պատկերագծումներ են և բանաստեղծական խոսքի շարժ, խոհի ծավալման միջավայր ու ծավալիչ, սակայն պատկերագրագրողական մակարդակում դրանց շնորհիվ խաչաձևվում են ներքին և արտաքին տարածությունը և ժամանակը: Սահյանը երբեմն կոնկրետ բանաստեղծական պատկերով հուշում է հանդիպարդման տեղը և կշիռը՝ «Սրտիս միջով է գնում Չորգորա գետը...»:

Քսաներորդ դարակեսին շատ կարևոր էր այս հանդիպումը: Հայ բանաստեղծությունն «ուզում էր» մի անգամ էլ հավելի իր ակունքներին, նախնական իր պարզության աչքերին նայելով՝ ինքնահայտնակերպվել, ինքնանույնանալ, իր աչքերով իրեն նայելով՝ ինքնանալ ու շարունակել ճանապարհը: Ակամա գալիս է բանաստեղծական տողը՝ «Հգիտեմ՝ ուր եմ հասնելու, //Հգիտեմ՝ երբ եմ հասնելու... //Ճամփա է, նստեմ այս քարին, //Շունչ բաշեմ ու գնամ նորից»²: Բանաստեղծի սրտում, բանաստեղծի կյանքի ճանապարհին բացված այս խոհը հանդիպարդման է ազգային բանաստեղծության ճանապարհի հանգրվանային պարզ, խոր ու անհրաժեշտ ճշմարտությունը. մի պահ ինքնամոխիվել, ինքնահավել և ապա քայլել մեծ աշխարհի կամ աշխարհի մեծ ճանապարհով: Սա էր Սահյանի դերը: Եվ Սահյանի

ծառայությունը հայ բանաստեղծությանը: Սահյանի բանաստեղծությունն այդ անհրաժեշտ հանդիպման վայրն էր: Այդ ճանապարհը անցնում էր նրա սրտի միջով: Իսկ Դավթյանը, Սևակը բնեռներ են: Դավթյանը գեղագետ բանաստեղծ է, նա հղկում է լեզուն, զարդարում, բանաստեղծորեն երագում ու նագում լեզվով: Սևակը մտածում է լեզվով, մտածում հայերեն, սակայն աշխարհի նոր խոհն ու ցավն է մտածում: Դավթյանը եսթետ է, Սևակը՝ մտածող: Հայ բանաստեղծությունը սուզվում է Սահյանի ավազանում ու զուլալվում:

«Քարափների երգը» բացառիկ դեր ու կշիռ ունի Սահյանի պոեզիայում: Այն հնարավորինս բյուրեղացած կառույց է, ուր համաչափորեն ներդաշնակ գոյակցում են տարածաժամանակային հիշյալ իրողությունները: Սահյանը, ինչպես նշեցինք, կարողանում է ճեղքել ժամանակը՝ յուրաքանչյուր բանաստեղծահոգեբանական իրադրության մեջ այդ ճեղքվածքում՝ հերթական հատույթում, տեղավորելով սկիզբը և վախճանը՝ օրվա, կյանքի, իր կյանքի, և ընթացքը, անընդհատությունը, հավիտենությունը: «Քարափների» առաջին իսկ՝ «Լուսաբաց» բերթվածում՝ «լուսը առավ սարին, սարտում է սարը...» սկսվածքով, լուսը հանդես է գալիս իր ամենանախնական արբետիպային արժեքով, ճեղքում խավարը և շարժման մեջ դնում բնաշխարհի և բանաստեղծի օրը, ժողովածուի ժամանակը (այն բացվում ու սկսում է ծավալվել) և կյանքի ժամանակը (ակնթարթորեն ճառագայթելով դեպի ետ՝ ժամանակների սկիզբը, և առաջ՝ մինչև ներկա պահը, լուսը շարժում է դարերը, որոնք մի պահ հավերժության խորքից կյանքի են կոչվում՝ բանաստեղծական խոսքի միջոցով. դարձյալ բան-խոսքի և ծագող լուսի զուգակցումը): Այն ազդարարում է սկիզբը միաժամանակ մի քանի հարթություններում՝ օրվա հատույթում, պոեզիայի ժամանակի կտրվածքով և ժամանակների խորքում քնած դարերի, ասել է՝ հավիտենության տիրույթում՝ կյանքի կոչելով, արթնացնելով օրվա սկզբի մեջ արտացոլված երկրային ժամանակի սկիզբը: Սահյանը ուշագրավ զուգահեռումով երգում է նաև բանաստեղծական խոսքի առաջին տողը, որը կրկին հայտնվում է արեգական շողի տեսքով ու այս դեպքում ևս արթնացնում սարսուռը լուսի: Արդեն հիշատակված «Առաջին տողը» բանաստեղծության մեջ կրկնվող այս իրողությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ժողովածուի մուտքը բնավ պատահական չէ, այն ունի ստեղծաբանական խոր հիմնավորվածություն, մասավանդ որ հանգուցալուծման մեջ հայտնակերպվում է արարման տազնապին և երկունքին

հաջորդող դժվար ծնունդը. բանաստեղծը արարելով՝ ինքն իրեն է աշխարհ բերում ամեն անգամ և շնորհում աշխարհին, երկնելով ծնվում է, արարելով՝ արարվում: Այս փոխներթափանցման մեջ հայտնակերպվում է մարդ-տիեզերք կապը, ամեն վայրկյան կրկնվող ու նորոգվող և կյանքի անընդհատությունը պայմանավորող արարման սկզբունքը, որը Սահյանի բանաստեղծության առանցքային գաղափարներից է: «Քարափների» բերթվածներից մեկը ևս այդ սրբազան սարսուռով է սկսվում (ի դեպ, դարձյալ սարի սարսուռով), ծավալվում մակրոտիեզերք-միկրոտիեզերք բանաձևով («տիեզերքն իմ մեջ իրեն է փնտրում //Եվ գրկում է տիեզերքն իմ մեջ») և լուծվում պոեզիայի շնորհիվ պահի մեջ հայտնակերպվող հավիտենության գաղափարով («Տիեզերքով մեկ հաստատում եմ ես //Հավիտենությունն ակնթարթային»): Սահյանի պոեզիայում այս կետում հանդիպում ու ծուլվում են պահն ու հավերժությունը, պահի ճեղքվածքում նա տեղավորում է մի «ամբողջ» հավերժություն: Ասել է՝ լեռան վրա երկնքում սուզված մարդը պահի մեջ կարող է վայելել «ողջ» հավիտենությունը ծայրածայր և հաստատել «տիեզերքով մեկ»: Չափանիշը մարդն է, ժամանակը հոսում է մարդու միջով, պահն ու հավերժությունը խաչաձևվում են նրա սրտում, նա իր գոյությամբ հաստատում է հավիտենությունն ակնթարթային, մարդու կյանքն ակնթարթ է տիեզերական ժամանակի մեջ, սակայն դրա մեջ խտացված է «ողջ» հավիտենությունը, ավելին՝ նույնիսկ երկրային ժամանակի մի ակնթարթի մեջ հնարավոր է զգալ հավիտենության համը, «ակնթարթի մեջ թևերն ամփոփած հավիտենության շնչառությունը»:

«Հայրենի գյուղ» բանաստեղծության մեջ ցավոտ է հնչում «հավիտենությունն ո՞ր տարավ նրանց (գյուղի ծերերին – Լ.Ս.)» հարցը: Թումանյանական «Հին օրհնության» ծիսական մթնոլորտի մի ծվել է բացվում այս բերթվածի խորքում: Այս դեպքում առասպելական նախահոր հետ հանդիպելու, «նախագո խանձարուրներից աչք բացելու», այսինքն՝ ժամանակների սկզբին հավելու հրաշքը հնարավոր էր դառնում «հողից բուսած աստվածների»՝ բարության հունդեր ցանող պարթև ծերերի պատմությունների շնորհիվ: Ծերերի խորհրդապատկերը պատմում է ինքնահատուկ դեր ունի: Նրանք փաստորեն ներկա և բացակա են միաժամանակ, նրանք ներկա են և անցյալ միևնույն պահին, նրանք դեռ ներկա են, բայց արդեն մի քիչ անցյալ: Նրանք մոտ են և՛ մեզ, և՛ հավերժությանը, նրանք հավում են ներկային և հավերժությանը, նրանց միջոցով,





Նաև կրանց մասին հուշի մեջ հավերժությունը թափանցում է ներկա: Այդպես էլ հավիտենության խորհուրդն իր մեջ կրող քարափղ հեղինակն իր Խաչիպապ պապին է նմանեցնում, և քարափղերից, ժայռերից, դրանց լուռության անձավներից էլ սկիզբ է առնում առասպելը: Ամեն մի մարդդ արձագանք սկիզբ է դառնում չասված հեքիաթի: Չասված հեքիաթը յուրաքանչյուր պահի մեջ եղած արարման ներգոր կարողությունն է, իսկ առասպելը՝ այդ կարողության մասին հիշողությունն ու հիշեցումը, ներգոր կարողության պատկերազարդ գաղտնագիրը: Այսպես երկրային ժամանակին յուրաքանչյուր պահի խառնվում է, կարող է խառնվել առասպելի ժամանակը: Առասպելն իր մեջ խտացնում է ներկան ու հավերժությունը, առասպելը պահի մեջ ներկա հավերժականն է և հավերժության մեջ ներկա պահը, դրվագը, կենսական իրադրությունը, խորհուրդը, ահազանգը, մարդկային կեցության նույնականության մեջ հայտնակերպվող հավերժականը և այլության մեջ երևակվող հավերժական նույնությունը: Առասպելը ժամանակների շաղախն է, այլաբանորեն ու գեղարվեստորեն մակարդված ժամանակը: Այլ խոսքով՝ առասպելը հավերժությունն է: Եվ պատահական չէ, որ հողմը առասպելի ասպետ է՝ առասպելական ժամանակներից պոկված, անշոշափելի, բայց զորավոր, անորսայի, հարափոփոխ, բայց մշտառկա սուրացող, տարածաժամանակային պատնեջ չճանաչող գոյություն: Այս առումով ուշագրավ է նաև Սահյանի պատկերացումը «գիշերային իմաստուն առասպելի մեջ քնած քարափի» մասին: Քարափը՝ որպես հավերժական գոյություն, պատկերացվում է առասպելի մեջ քնած, ասել է՝ կրկին ակնարկվում է առասպելական ժամանակ-հավերժություն զուգահեռը: Ասել է՝ Սահյանի բանաստեղծական ենթաբնագրում առասպելը հավերժականի փոփոխակն է:

Հավիտենականի խորհուրդը Սահյանի պոեզիայում հայտնակերպվում է նաև արդեն հիշատակված կածանի և գետի միջոցով: Դրանք, պայմանավորելով իր բանաստեղծության տարածաժամանակային մթնոլորտը, գծում են այդ աշխարհի սահմանները: Թվում է՝ կածանն ու գետը Սահյանի պոեզիան են «եկել» բնական շարժով՝ դառնալով հայրենի բնաշխարհի ցանկալի ու պարտադիր ներկայության բեկորները: Սակայն առավել թափանցող հայացքը հայտնակերպում է դրանց՝ դարձյալ բնախորհուրդ առաքելությունը, գետը և կածանը դարձել են Սահյանի աշխարհի տարածական Նշորդները: Դրանք բոլորագծում են այդ աշխարհը,



Սահյանն իր բանաստեղծությամբ նորոգում է նաև հայ պոեզիայի՝ լուսերգության բեղուն շերտը: Լուսերգության նվագները, որ առավել լսելի են «Իրիկ-Նահագ» ժողովածուում, բանաստեղծորեն արժևորում են լույսը՝ որպես նախնական ու հիմնական կենսապարզ և իրողություն, որակ:

Նշում դրա սահմանը և անսահմանությունը միաժամանակ՝ իրենց անսպառ մեկնարկի, հավերժական պտույտի և դարձի մեջ կրելով հավիտենականի խորհուրդը: Ուշագրավ է նախ և առաջ այն, որ արահետ-կածան-շավիղը, որ այս հաստիքով գետ-առու զույգի խորհրդապատկերային համարժեքն է, պատկերազոծում է կյանքի հավերժական շրջապտույտը, գոյի շղթան, որ լուսմին է հասնում և կրկին սկիզբ առնում այնտեղ, ուր խզվում է, ինչպես «Այն արահետը հեռվում, //Որ երկնքից //Ձորն է իջնում և կրկին //Գնում, գնում //Խառնվում է երկնքին»³: Այդպես նաև հողը Սահյանի պոեզիայում, Նշելով անխզելի, կուռ շղթան («Ծիլ ենք տալիս հողից... //Ու գնում ենք լորից դեպի հողը»⁴), հավիտենականի խորհուրդն է բացում լորից: Այն, ինչ բանաստեղծը բնանմանության սկզբունքով որոնել է երգով ու երգում, կյանքով ու կյանքում: Միասնականությունը, լրիվությունը, կենսականությունն ու կենսունակությունը, ինքնանորոգումը, ամեն վայրկյան հուն-ավանդույթի սահմաններում լոր ու այլ լինելու ֆենոմենը, ինքնակրկնում-ինքնամաքումի բնապատգամ կարողությունը: Նա նույնիսկ բանաստեղծորեն սահմանում է. «Ես նախընտրում եմ գետերի բախտը //Որ և մտում են սեփական տանը //Եվ հեռանալով գնում խառնվում //Անբուն ծովերի, օվկիանոսների //Բուռն ու ալեկոծ հավերժությանը»⁵: Այստեղ Սահյանը բացում է հարաբերականորեն անկախ մի բանի շերտեր՝ ազգայինի և համամարդկայինի, անձնականի և անանձնականի հարաբերակցության, մարդու, հայրենիքի ու մեծ աշխարհի կապի, ներկայի և հավիտենության փոխկանչի: Ուշագրավ է այն, որ նույն ժողովածուի՝ մեջբերվածի անմիջապես հաջորդող բանաստեղծության մեջ խտանում է այս մթնոլորտի ձևած տազանապը. «Քեզ կուլ կտա, ալիք, ծովը պառավ //Քեզ կուլ կտա, ալիք, ծովը ծարավ //Որպես մի կուլ ջահել ուրախությունը»⁶: Բանաստեղծը այս տազանապի դեմ պարզում է էպոսի պատգամը՝ բարակ, բայց զորավոր ջրի հիշատակմամբ. «Իրիկ-Նահագ» ժողովածուի «Այս ջրից խմել ես, թե ոչ...» սկսվածքով քերթվածում բանաստեղծը հիշատակում է այն հայտնի աղբյուրը, որի ակունքը երկնքում է, որը

«Կարող է ամեն ալիքով //Եվ ամեն կաթիլով վճիտ //Քո տոհմի արմատը ջրել //Եվ ջրել ծաղիկը խղճիդ... //Ցամաքել չունի նա, թեկուզ //Եղածը մի բուռ է, ասա»⁷: Այսպես բանաստեղծը նորոգում է նաև փոքր ածուխ թեման. «Պիտի գնամ, հասնեմ ծովին: //Փոքրիկ եմ ես բոլորովին //Բայց հարուստ եմ իմ տվածով... //Թե չլինեմ գետերն ինձ պես, // Ոչ մեծ գետը գետ կլինի, //Ոչ էլ ծովը կլինի ծով»⁸:

Ազգային և համամարդկային հարթություններում մի կողմից ազգային ինքնության և մյուս կողմից ինքնատիպորեն կատարյալ բանաստեղծության հարցը Սահյանը լուծում է գետի կամ կածանի և ծովի կամ ճանապարհի խորհրդապատկերային առնչություններով: Ի դեպ, գետ-կածան աղբյուրը պատահական չէ. գետն էլ ճանապարհ է, ջրի ճանապարհ: Երա էլ «Գուլսը ծովում //Պոչը սարին Ե...»⁹: Մյուս կողմից դեպի «բաց հորիզոն» տանող կամ մեծ աշխարհից ձգվելով իրեն հասնող ճանապարհը սկսվում ու ավարտվում է «պոչը տևակիս շեմքին ոլորած» կածանով¹⁰, որը դառնում է բանաստեղծի ու աշխարհի հպման նուրբ, բայց ամուր սահմանը: Դարձյալ պատահական չէ իր սրտի միջով հոսող արդեն հիշատակված Չորգորա ջրում երազները և հոգին լվանալու, ասել է՝ ակունքների հավերժ ինքնամաքվելու խորհուրդը¹¹: Այս գաղափարը առավելագույնս ծավալվում ու խորանում է «Իրիկ-Նահագի» և «Ինքն իր մեջ է» բանաստեղծության մեջ, ուր թանձրանում են մտափոխարային հաստիքային սահմանը, երազը, գետ-բանաստեղծ-երգ հայտնակերպվող զուգահեռը. «Ալիքը լոր է, //Բայց ինքը հին է... Երկնքով լիքն է, //Բայց երկրային է... Նա և հողին է, //հող ու քարին է, //Նա և ծովին է //Եվ աշխարհին է»¹²:

Կենսունակ ինքնաբավության, հավերժի մեջ տեղափոխվող և հավերժ իր հետ տեղափոխող լրիվության ու անընդհատության, աշխարհի մեջ սուզվելու, ներծծվելու և իր հունը պահելու հմտության, ինքնակրկնումի մեջ պահված ինքնամաքման, զուլալման սկզբունքն է բանաստեղծը դնում իր պոեզիայի բնանմանության ակունքում¹³ («Կրկնության խորհուրդը»): Եվ այսպես, իր ողջ ստեղծագործական

կյանքի ընթացքում «գարմանայի» հետևողականությամբ նա հավատարիմ է մնում «փոքր ածուխ» ինքնատիպության, «փոքր ու գորավոր ուժի» էպոսապատգամ սկզբունքին, որ բեկվում է թեմատիկ լայն կտրվածքում՝ ընդգրկելով ազգային-համամարդկային փոխառնչության, ինչպես նաև իր բանաստեղծության նկարագրի ու ճակատագրի տեսական ճշտումները որոշող ոլորտները: «Քարափների երգը» ժողովածուի «Քո այդ փոքրիկ հնարով» սկսվածքով քերթվածում Սահյանը, կրկին նորոգելով փոքրիկ մեծության թեման, ընդամենը տասը կարճ տողերի սահմաններում կարողանում է տեղավորել իր քերթողական արվեստի նկարագիրը՝ «երգի նեղ տեսության» և «գեղջկական քնարի» առկա և հնարավոր «մեղադրականների», «հին ու նոր» լինելու իր հմտության և իր «անկրկնելի ուղին» «համառ հեզությամբ» շարունակելու վճարականության հիշատակումով ու շեշտադրումով, «հեղեղի մեջ այս բարդ» իր «առուն» ունենալու համոզմունքով: Թեմատիկ այլ հարթության մեջ «ժայռից մասուր է կաթում» քերթվածը բնության համանման ֆենոմենի բանաստեղծական հայտնակերպումն է: Չարմանայի չէ բնավ, որ «հեղուց» կրկին առուն է՝ գետ-կածան-արահետ-չավիղ-ի փոփոխակը, որ թարմացնում է մի կողմից ժամանակի անկանգ հոսումի՝ սահյանական պոեզիային բնորոշ թեման, կրկին կապում հինն ու նորը, մյուս կողմից՝ մի անգամ ևս բանաստեղծորեն ընդգծում փոքրիկ «ահեղի ուժը»:

Առհասարակ, Սահյանի գեղարվեստական մտածողության հունը անկանգ հոսումով է հատկորոշվում, ու քանի որ արդեն հիշատակված թեմատիկ տարբեր հատույթներով շարունակ առկա են ակունքի որոնումն ու ժառանգորդման սկզբունքը, երևում է նաև արյունը՝ որպես խորհրդապատկեր՝ համահունչ լիցքով: Արյունը ևս անկանգ հոսումով ձուլում է ներկան հավիտենական ժամանակին և ժամանակների սկզբին՝ հասնելով «արարման կավի նախաստեղծ գնդին»: Սա ևս Սահյանի նախափորած սկզբունքի սահմաններում գոյող բանաստեղծական իրողություն է՝ նախնականության ուժն ու ինքնամաքրման խորհուրդն իր մեջ կրող, անխմանալի-աննշմարելի մազանոթներով թավալվող երևույթ՝ մշտանորոգ ու հին: Լեզու-արյուն, լեզու-հաց զուգահեռման ծանրության կենտրոնը լեզուն է բնականաբար, և համեմատության դաշտը պարզում է կրկին ինքնության նշանի և տևումի լիցքը: Իսկ ահա «Արյուն» քերթվածում «հանդիպում են» արյունն ու լույսը՝ իբրև փոխարձաբար դարձելի ու փոխարկելի ստեղծարար որակներ. «Վառվում են անվերջ ու լույս են դառ-

նում, //Չավատ են դառնում, արվեստ ու գինի...»¹⁴:

Սահյանն իր բանաստեղծությամբ նորոգում է նաև հայ պոեզիայի՝ լուսերգության բեղուն շերտը: Լուսերգության նվազները, որ առավել լսելի են «Իրիկ-նահաց» ժողովածուում, բանաստեղծորեն արժևորում են լույսը որպես նախնական ու հիմնական կենսապարզ իրողություն, որակ: Եվ թեման նորոգելով՝ թվում է՝ Սահյանը ձայնակցում է 70-ականների լուսերգությանը: Այդ ձայնակցումը բանաստեղծական մեծ հայտնությունների չի բերում սակայն: Չնայած Սահյանն այնուամենայնիվ կարողանում է լուսերգության իր շերտը բացել՝ «երագի լույսի մեջ մնալու» և «երագի լույսով ճանապարհ գնալու» բանաստեղծական գյուտով, խորհրդանշական մեկնակետով:

Արդեն հիշատակված ստեղծագործական հետևողականությամբ Սահյանն իր բանաստեղծական մտածիրում շարունակ պահում է հավիտենության խորհուրդը, հիացական գարմանքով ու տխուր հրճվանքով այն որոնում ու գտնում բնության մշտանորոգ բազմազանության, կյանքի գորության ու մահվան անխուսափելիության մեջ: Եվ հաջորդում են իրար սահյանական այն բանաստեղծական պատկերները և խորհրդաբառերը, որ ներքին կշռույթով հորինում, խտացնում ու կազմում են հիշատակված մայր գաղափարը:

Ու թե՛ ընդհանրացնելը, ի վերջո ո՞րն է Սահյանի պոեզիայում առանցքայինը, այն հիմնականը, նախնականը, որի շուրջ հյուսվում է բանաստեղծական խոհը ու պարագրկում բոլոր թեմաներն ու հղացումները: Դա թերևս նախնականության որոնումն է, ու նախաշնորհի հայտնաբերման ճիգն է նրա բանաստեղծությունը: Եվ նույն հավիտենությունը, որ տարածվում է նրա բանաստեղծական խոհի վրա, պարուրում այն ներսից ու դրսից, դարձյալ նախնական-միասնական-միաձուլի փոփոխակն է՝ տրոհիմ-բեկորված-բազմակամ ժամանակի այլագոյակը: Նա իր/մեր ժամանակի ներքին բզկտումներին, բեկորվածությանը հակադրում է հավերժական ժամանակի անկորույս ամբողջականությունը, անընդհատությունը, իր/մեր օրերի կիսատված մարդուն հակադրում է մարդու նախաշնորհի պարզ ու խորքային լրիվությունը: Նա իր/մեր ժամանակի ականջին ձայնում է հավերժի խորքից: Նախնականի արտացոլումները նախապես անզարդ հնարքով (ուշագրավ է բանաստեղծական արվեստի հետ կապված իր վերջին խոստովանանքներից մեկը. «Իմ սովորական գիրն են գրելու //Եվ մերժելու են կոչերը բոլոր //Խոսքի պոզերն ու պոչերը բոլոր //Նախնական (ընդգծումն իմն է -Լ.Ս.)

ծիլն են ջրելու //Բանաստեղծություն են չեն գրելու»¹⁵) որոնում - գտնում է իր/մեր ժամանակի ծուռ ու փշրված հայելիների մեջ բեկոր առ բեկոր, փշուր առ փշուր՝ նախնական խճանկարի գունագեղ լրիվությունը վերակերտելու ճիգով: «Մայրամուտից առաջ» շարքում նույնպես ձևաբովանդակային նախնականության ակնարկ-խոստովանանք կա. «Իմ երգի մեջ չփնտրեք դուք //Չարդեր ոչ մի անգամ, //Նա էլ ինձ պես պարզ ու անշուք //Նախնական է անգամ»¹⁶:

Նրա առաջին ժողովածուից մինչև վերջինը մշտանույն զորությամբ ներկա են աշխարհաստեղծման օրերի մշուշի ծվենները՝ բարանձավների խոսակ լույսի վրա թանձրացած: Այս առումով ուշագրավ է «Կանաչ-կարմիր աշուն» ժողովածուի «Ինքնությունս» բանաստեղծությունը, ուր իր ինքնությունը կառուցակազմող բազում բնաշխարհիկ բաղկացուցիչների շարքում Սահյանը նշում է նաև բարանձավները, նախապատմական մշուշները, երկնքի մեջ մոլորված արահետները, նախաստեղծ պարզությունը (ընդգծումներն իմն են - Լ. Ս.): Իսկ ինքնությունը հունցող այս և այլ բաղադրիչների թվարկումը պատկեր է անշփոթելի նպատակը. «Յուրեցեցին, որ և գնա, //Եվ հյուսվի տանը //Օրորոցներդ օրորող //Չավերժությունը»¹⁷: Իսկ «Քարափների երգը» ժողովածուում «աշխարհաստեղծման հեքիաթը», «նախաստեղծման կապույտ շոգի սարսուռը», «աշխարհաստեղծման առաջին ամպը», «նախապատմական հրաբուխների լույսը», «վաղնջական ժամանակների հեռուներն անհուշ», «նախագո խանձարուները», «առասպելական նախահայրը», «նախապատմական մառախուղների ծվենները տաք», «նախաստեղծ խոսքի բողբոջները», «նախաստեղծ հացի համ ու բույր» առնող բառերը և համարժեք այլ բանաստեղծական պատկերներ նախնականության համանվագ հիմն են հնչեցնում: «Նախաստեղծման ինչ դաշնություն //Նախաստեղծման բառս», - ձայնում է նաև «Դաղձի ծաղիկ» ժողովածուում տասնութ տարի անց¹⁸: Չնայած ժամանակային նշանակալի անցքին՝ անկոփոխ է մնացել ստեղծագործական սահյանական հավատամքը. *Գնամ բնաշխարհին իմ բարձրագլբեր, Մտնեմ վիհավոր կիրճերը նրա... Աշխարհաստեղծման կավի հոտ առնեմ,*

Մութի հոտ առնեմ նախաշխարհային Եվ մամռակալած հավիտենության Շնչառությունը լսեմ ու նրա Մարտուղի ցողով հոգիս լվանամ...»¹⁹:

Հիշենք նաև, որ հավերժական ժամանակի խորքից է բխում Սահյանի պոեզիայի արդեն քննաբանված գետը և հոսում դեպի





հավիտենություն. «Դու անհի-
շելի դարերից գալիս //Եվ դեպի
գալիք դարերն են գնում: Որքան
«ներ» լինի և որքան էլ «հին» //Ես
նախանձում եմ քո ճանապարհին» («Իմ
Որոտակին»²⁰): Ի դեպ, նկատենք, որ
բանաստեղծն այստեղ՝ դեռևս 1955-ին
գրված այս բերթվածում, իր պոեզիային
անչլոդ թե՛ բովանդակային և թե՛ ձևա-
կերտման սկզբունք է որոշադրում (sic! -
«ներ» և «հին» չակերտավորները): Յա-
վիտենության ոլորտից է ծայր առնում
սահյանական կածանը նույնպես, որի
երթը կրկին ծավալվում է անհունում.
«Կծիկը բացես, քարափներն ի վեր, //
Ծայրը կհասնի մինչև Ծիր-կաթին»²¹:
Յավերթի եզերքը նվաճող իրողություն-
ներ են նաև քննաբանված արյունը և
լույսը՝ որպես կենսարար-կենսածին
որակներ: Յավիտենության խորհուրդը
թաքցնող առանցքային բառ-խորհրդա-
կիշներից են հողը և հասկը Սահյանի
պոեզիայում: Մի խորին գուրգուրանքով
ևս օրինաբանում է դրանք իր բանաս-
տեղծության արշալույսից մինչև մայ-
րամուտը՝ որպես արարումի սրբազան
հիմունքը հայտնակերպող իրողություն-
ներ: Այդպիսին է «Յասկը» «Քարափնե-
րի երգում»՝ իր «աստվածավայել շշուկ-
ներով».

*Կանգնել էր դաշտում հասկը ցորենի
Եվ խոնավ, խոնավ իր կոպերի տակ
Հավիտենության խորհուրդն էր պա-
հում*

*Եվ շիկացնում էր նա կամաց-կամաց
Իր հատիկների արևները հում»²²:*

«Կանաչ-կարմիր աշուն» ժողո-
վածուի «Եվ դառնամ դարձյալ» բա-
նաստեղծության մեջ հիշատակված
սկզբունքը եպոսաշունչ հանգով գոհա-
բանական աղոթքի նկարագիր է ստա-
նում՝ հասկի, հողի, արոսր քրտինքի
ցողի, խոսքի, խորքի, հույսի, տքնանքի
ու լույսի հիշատակումով: Նույն շարքի
«Միջօրե», «Շոգը», «Յողից սովորեն»,
«Լցվեմ աշխարհով» և այլ բերթված-
ներում Սահյանը նորոգում է հայ պոե-
զիային այնքան բնորոշ անանձնական
սիրո երգը, ուր մեծարենցյան խոր ու
տաք շնչառությունն է կռահվում՝ բնա-
պաշտական անշփոթելի հիացքով,
ինքնաբաշխումի, կատարելացման
շեշտադրումով, համայնական սիրո
պոռթկումներով: Այս ինքնօրինակ «հա-
ցին երգը» պատահական չի հայտնվում
Սահյանի բանաստեղծական մտածի-
րում. դրա հայտնությունը խորքային
հիմնավոր երակներով է պայմանավոր,
հավիտենականի հայտնակերպման
գաղափարական մեկնակետով: Յայ
պոեզիայի արմատին հավելում մղումով,
«հայրենի կարգավ» նա նույն խորքն է
երևակում մեկ այլ բերթվածում՝ բնորոշ
ոճավորումով. «Մի հայրեն ասեմ ես էլ...
Աստվածս ցորենին ասեմ»²³: «Դաղձի

ծաղիկ» ժողովածուի համար նույնպես
հիմնարար է այս գաղափարը՝ դարձյալ
օրինաբանական նշանառությամբ. «Ե-
լի ցորենն է աշխարհի հիմքը //Փառք
տանք ցորենին և օրինաբանենք»²⁴ և
կամ՝ «Երկրպագում եմ ստվերը հաս-
կի»²⁵:

Այս հարթության մեջ որոշ բանաս-
տեղծություններում իհարկե նշմարվում
է նաև նորկուկարանյան ենթաշերտը
(«Պիտի հավատամ իմաստուն հասկին
//Որ մեռնելով է աշխարհը պահում»²⁶),
որ առավել թանձր ու ընդհանուր շեշ-
տադրում ունի «Աշխարհն այնպես լույս
ու մթին» բանաստեղծության մեջ («Աշ-
խարհն ասես արտ է ցանած //Սպասում
ենք՝ հասկահանի»²⁷):

«Սեզամ, բացվիր» ժողովածուի
«Որոտում եմ ես» բանաստեղծության
մեջ բյուրեղանում ու հայտնվում է մար-
դու սահյանական մտատիպարը՝ բնա-
կանաբար՝ «ոտքերը հողոտ, ճակատն
արևոտ»: Սա է՝ նույն ինքը՝ նախնական
մարդը՝ իր լրիվությամբ, բնության հետ
ծույլ ու ներդաշնակ: Այդպիսին է նաև
կատարյալ երգը բանաստեղծի հա-
մոզմունքով, որ սահմանվում է վերջին
շրջանի գործերից մեկում.

*Կատարյալ երգը շշուկն է հասկի
Եվ սևահողի շնչառությունն է»²⁸:*

Այսպիսով, հողոտ ու արևոտ մար-
դու նախաստեղծ պարզությունն է որո-
տում Սահյանը: Բնության մեջ փրկված
ու թաքնված նախնականության մեջ
սուզվելով՝ նա իր /մեր «մանրությունը»,
բեկորվածությունն է ամոքում.
*Ես գնամ նորից ինձ որոնելու
Ճրագով, մոմով, կայծակի լույսով -
Պատահիկներս իրար բերելու,
Ինձնից մարդահոտ առնելու հույ-
սով»²⁹:*

Նույն ժողովածուում հնչեցնելով
«մանրանալու» ահագանքը³⁰ բանաս-
տեղծը տիեզերական դաշնության, բո-
լոր գոյությունների, էությունների փոխ-
ներթափանցման, համագոյակցության
գաղափարն է ընդգծում («Երեխաներն
ենք բոլորս մի տան»)՝ իսկ դիտանկյու-
նը նույնն է ու անփոփոխ («Ողջույն բեզ,
հրաշք հավիտենություն»³¹):

Յատկանշական է նաև իր ժամանա-
կից պոկվելու և հավերժական ժամա-
նակին ձուլվելու տենչը կյանքի վերջում:
Շրջանը փակվում է լրանում է բնորոշ
– ծանոթ խորհրդաբանների ներկայու-
թյամբ.

*Խելոք, խելոք, բարի, բարի
Ու մարդամոտ լեռներ,
Դուք վկաններ նախնադարի,
Նախնադարոտ լեռներ:
Խելք ինձ այս ժամանակից,
Պահեք ձեզ մոտ, լեռներ,
Իմ հոգին էլ դարձրեք մի քիչ
Նախնադարոտ, լեռներ»³²(բոլոր ընդգ-
ծումներն իմն են - Լ. Մ.):*

Եվ եթե հոտն իր երթի անընդ-
հատությամբ, անկանգ ընթացումով
(«գալիս է հոտը...»), գետը և կածանը,
արյունը և լույսը շարունակական հո-
տում-ճառագում-ուլորումներով են հորի-
նում հավերժության գաղափարը, ապա
քարափը, լեռները իրենց մշտամա
քարացումով ու տևումով են վկայում
հավիտենությունը: Ուշագրավ հնար-
քով Սահյանը մշտաշարժի և անասա-
նի բանաստեղծական պատկերներով
հայտնակերպում է հավիտենականը՝
գաղափարն ու զգացողությունը:

Սահյանի ընտրած բոլոր բանաս-
տեղծական բառ-խարիսխները նախ-
նականի ու հավերժականի խորհուրդն
են մեկնում ու մեկտեղում: Ահա այստեղ
լրանում է շղթան, և պատահական չէ
կրկին, որ կյանքի վերջում նա բանաս-
տեղծության ծնունդը «հավիտենու-
թյունն ապրելու մի պահ», «լույսի հրաշքը
սփռելու մի պահ» է համարում³³:

Ծանոթագրություն

1. Յ. Սահյան, Քարափների երգը, Երևան, 1968, էջ 104
2. Նույն տեղում, էջ 59
3. Յ. Սահյան, Իրիկնահաց, Երևան, 1977, էջ 132
4. Նույն տեղում, էջ 146
5. Քարափների երգը, էջ 6
6. Նույն տեղում, էջ 7
7. Իրիկնահաց, էջ 61
8. Քարափների երգը, էջ 169
9. Իրիկնահաց, էջ 121
10. Քարափների երգը, էջ 80
9. Իրիկնահաց, էջ 105
10. Նույն տեղում, էջ 121-122
11. Նույն տեղում, էջ 282-286
12. Նույն տեղում, էջ 121-122
13. Նույն տեղում, էջ 282-286
14. Քարափների երգը, էջ 75
15. Յ. Սահյան, Ինձ բացակա չլնեք, Երևան, 1998, էջ 157
16. Յ. Սահյան, Երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, 1984, էջ 292
17. Երկեր երկու հատորով, հ. 2, էջ 326
18. Յ. Սահյան, Դաղձի ծաղիկ, Երևան, 1986, էջ 17
19. Նույն տեղում, էջ 35
20. Երկեր երկու հատորով, հ. 1, էջ 26
21. Նույն տեղում, էջ 159
22. Քարափների երգը, էջ 145
23. Երկեր երկու հատորով, հ. 2, էջ 373
24. Դաղձի ծաղիկ, էջ 55
25. Նույն տեղում, էջ 59
26. Երկեր երկու հատորով, հ. 2, էջ 401
27. Նույն տեղում, էջ 338
28. Ինձ բացակա չլնեք, էջ 125
29. Դաղձի ծաղիկ, էջ 9
30. Տե՛ս նույն տեղում, էջ 150
31. Նույն տեղում, էջ 110
32. Ինձ բացակա չլնեք, էջ 165
33. Նույն տեղում, էջ 159

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյանին նվիրված հուշագրության լեզվական հիմքերը



ԱՇՈՏ ՉԱԼՍՏՅԱԼ
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հուշագրությունը, ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրությունների և ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողություն է, որն ունի ժանրային առանձնահատկություն, առաջին հերթին՝ գրավոր խոսքի դրսևորման առումով: Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց գավակների, հարազատների պատմածներ, գրողի կյանքի գլխավոր դեպքերի խաչաձևում ժամանակի գրամշակութային, հասարակական իրադարձություններին և այլն: Թեմատիկ առումով ևս կա տարբերություն. հայտնի են անձնական¹, թատերական, քաղաքական, պատրիարքական² հուշեր և այլն: Ժանրի բազմազանությունը նկատելի է արևելահայ հուշագրության ընտիր էջերում, որոնցից մի քանիսն ունեն աղբյուրագիտական նշանակություն³: Առավել ընդգրկում են հուշ-դիմանկարները:

Համո Սահյանին նվիրված հուշագրական բազում էջեր են գրվել: Դրանք գրողների, գրականագետների, պետական-հասարակական գործիչների մտորումներ են, որոնք բնութագրում են 20-րդ դարի մեծագույն բանաստեղծ Համո Սահյանին՝ որպես քնարերգու, ինքնատիպ մտածող այր, պարզապես մարդ-անհատականություն:

3. Սահյանին բնութագրող հու-

շագիրներն առաջնորդվել են եական սկզբունքով՝ լինել անկեղծ և ճշմարիտ, բնավ «չգեղեցկացնել» հիշողությունների կյուբ հանդիսացող անհատին. «Նոր եմ գգում, թե հուշ գրելը ինչքան դժվար է, ավելի պատասխանատու, քան հողվածն ու գրախոսությունը: Հուշն ավելի ճշգրտություն և անվերապահություն է պահանջում, իսկ որ ամենակարևորն է՝ պետք է կարողանալ լինել առավել չափով անկեղծ, առավել չափով անմիջական» (3, 82):

Գեղարվեստական վավերագրության եական առանձնահատկություններից մեկը խոսքային կաղապարների և յուրահատուկ կառույցների առկայությունն է: Համո Սահյանին նվիրված հուշագրության սովոր մասի սկզբում առկա են «առաջին (վերջին) անգամ տեսա.../լսեցի...կարդացի... կամ հանդիպել եմ», «ծանոթացա, ծանոթացել էի, ծանոթությունն սկսվեց... կամ տեղի ունեցավ», «հանդիպեցի կամ հանդիպեցինք...» արտահայտությունները: «Համո Սահյանին առաջին անգամ կարդացել ու տեսել եմ 1964 թ.» (3, 83): «Համո Սահյան կարդացի 1962 թվականի վերջերին» (3, 34): «Առաջին անգամ տեսա Գրողների միությունում» (3,105):

Բնական է, որ գեղարվեստական վավերագրության հեղինակը հանդիպում կամ այցելում է բնորդին: Ըստ այդմ Հ. Սահյանին նվիրված հուշագրության լեզվում գործածության հաճախակիությունն ունեն առաջին հանդիպում⁴, առաջին ծանոթություն, հաջորդ այցելություն, վերջին հանդիպում բառակապակցությունները:

Հուշագիր Ս. Ալաշաշյանը գրում է, որ «մոռացութեան փոշին միշտ էլ կարող է երևալ յուշերի մէջ, յուշերի կողքին: Այդ փոշին նստում է ամեն մեկիս անցեալի որոշ հատուածի վրայ, ու ափսոսում ես, որ որոշ բաներ մոռացել ես» (1,8): Նման մտքեր գետնոված են նաև Համո Սահյանին նվիրված հուշագրության բնագրերում. «Եվ իր հիշողությամբ պատմեց, թե ինչպես է Անդրանիկն անցել այդ կողմերով և մաքրել թուրքերին» (3,93):

Հուշ-դիմանկարներում հետաքրքրական են հիշում եմ, վերհիշում եմ,

մտաբերում եմ բայաձևերը, որոնք, մեր կարծիքով, հատուկ են հուշագրության լեզվին: Հուշագիրները անկատար ներկայի առաջին դեմքի բայաձևերով փորձել են Համո Սահյանի մարդկային շփումների արդյունքում առաջացած անմոռանալի հուշերի արժեքը ցույց տալ. «Հիշում եմ Հ. Սահյանի բանաստեղծական ժողովածուներից մեկի քննարկումը Գրողների միությունում» (3, 103): «Այր, գիտեմ և հիշում եմ: Հիշում եմ մեկ տարեկանից» (3, 93):

Հետաքրքրական գուգորդումներ կան բայերի արտահայտչական ձևերում: Հուշագիրները, նկարագրելով բնորդներին, գործածում են բայ-բնութագրիչներ. «Հոկտեմբերի 17-ին ճամփորդեցիք Խոր Վիրապ, այնտեղից՝ Պարույր Սևակի ծննդավայր, մտանք թանգարան, զբոսնեցինք այգում, եղանք լեռնային գյուղերից մեկում» (105): «Համոն ծխում էր, լսում, ուշիուշով դիտում չորաբուրդը» (3, 45):

Բայերի կուտակման ոճական այս հնարքը ոճագիտության մեջ կոչվում է համակուտակում, որը գեղարվեստական վավերագրության լեզվում կիրառվում է մտքի յուրովի թվարկման, գործողության ուժգնության ընդգծման նպատակով:

Պ. Պողոսյանը նշում է, որ համակուտակումը այնպիսի գաղափարների յուրօրինակ թվարկում է, որոնք միասնաբար թողնում են շատի և ուժեղի տպավորություն(4, 7):

Պատկերավոր բնութագրությունները զգալի տեղ են գրավում Համո Սահյանին նվիրված հուշագրության լեզվում: Առարկան, երևույթը, գործողությունն արտահայտչորեն բնութագրող բառերն և արտահայտությունները, մի առարկան կամ երևույթը մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու հնարքը, վառ գուգորդությունների վրա հիմնված տարրուկ ասոցիացիաները հարստացնում են գեղարվեստական վավերագրության լեզուն, հուշագրական բնագրին հաղորդում անսովոր և նոր հատկանիշներ. «Տուրը լցվում էր այնպիսի վիշապային թափով ու դողոյունով, որ միմյանց լսել չէր լինի» (3,45): «Քոչինյանը Հայաստանը գիտեր հինգ մատի պես» (3, 44): «Արդեն քանի տարի է՝ Համո Սահյանը մեծ գրույցի է նստել ընթերցողի հետ» (3, 45): «Սեղանը ծանրացավ Աստծու տվածով» (3, 88):

Գեղարվեստական վավերագրության հեղինակները երբեմն ընթերցողին հաղորդում են հավելյալ փաստեր, որոնք քաղել են գրական այլ աղբյուրներից կամ ականատեսների պատմությունից, օրինակ՝ «Հասանք Լոր՝ Համո Սահյանի ծննդավայրը: Այնտեղ, ուր նրա ծննդյան տա-



ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյան՝ 100 և 10 տարի



ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Այս խառնակ ու անհանգիստ դարում, երբ լույսի արագությամբ գահավիժում են ազգային ու համամարդկային մի շարք առաքինի արժեքներ, Սահյանի պոետիկ շարունակում է իր ազգափրկիչ հաղթարշավը՝ հասարակական օղը հազեցնելով առողջ մտքերով, որից շնչելը մի տեսակ հեշտանում է։ /Խեղդվում ենք մենության անծավում, /Չենք քայլում, ուր մնաց թռչելը։ /Անցյալը թողել ենք անցյալում, /Եվ փակ են գալիքի դռները։ /Չգիտեմ, թե ո՞ր ենք գնալու, /Բայց գիտեմ, որ ինչ էլ պատահի, /Աշխարհում մենք

մենք ենք մնալու՝ /Ճեղքելով չարությունն աշխարհի/:

Գրեթե ամեն օր իմաստուն բանաստեղծի վերժամանակյա պոետիկայի համազգային ճանաչողության պահանջը դառնում է հրամայական։ Ինչպես Յրանտ Մաթևոսյանը կասեր. «Սահյանը ժամանակների ու տարածությունների մեր շրջում ու դուրագրգիռ խաչմերուկի հայ մարդը եղավ, և իր խոսքը մեր երթի համար օրինեց և իր գործը դրոշի ճիշտ մեր պատկերը դարձավ»: Սահյանի պոետիկան այլևս արվեստ դիտելու առաքելությունից դառնում է ազգի գոյության, տեսակի պահպանման ու առաջադիմության, ողջամտության, կամքի ու գիտակցական շարունակականության պատճառաբանության եական գործոն։ Կրկին մաթևոսյանական դիպուկ բնորոշումով. «Թափոր ենք ու առաջնորդվում ենք ուրիշների կեղծ սրբապատկերներով»: Ցավոք, վերջերս սուրբն ու պատկերն էլ խառնել ենք իրար ու սիրագրելով ամեն մեկս մեր մեջի չարին։ Ահա, թե ինչու Սահյանի երգը դառնում է պահանջ, այն պարզապես փրկողակ է համատարած ճահճափոսում չխեղդվելու համար։ Սահյանական պոետիկայի լույս-խոհը, բառիս փոխաբերական և ուղիղ բոլոր իմաստներով հենց թունամյանական

«Լուսավորչի կանթեղ»-ն է։ Այս անգամ արդեն «հավատում եմ - չեմ հավատում»-ի փորձություն-հավատաբանությունից ճշմարտության ստուգատես է դառնալու՝ «արդար եմ, թե անարդար», «ազնիվ եմ, թե անազնիվ», «մեղավոր եմ, թե անմեղ»...

Հայրենասիրության լիցքով ու պաթոսով հարուստ է մեր գրականությունն ու, ինչու՞ չէ, ողջ մշակույթը։ Խորենացուց առաջ ու հետո յուրաքանչյուր հայ արվեստագետ ու առավել ևս գրող, փորձել է պատկերել իր Հայաստանը։ Հայաստան հայտնաբերեց Նաև Սահյանը, հայոց պատմության խոթաշատ ընթացքի փոշիներում ու մանկության աշխարհի երանավետ հովիտներում, ուր ապրելն ինքնության հաստատում է ու ակամա հերոսություն, իսկ մեռնելը՝ անմահություն. «Ու պապն ակոսում պառկել ու բնել է, խառնվել այն հողին, որ իրեն սնել»:

Սահյանի երգն այս առումով ոչ միայն բացառություն չէ, այլև չափազանցած չենք լինի, եթե ասենք, որ ամենահայաստանոտն է ու խնկարույրը։ Նրա պոետական խիզախումներում հողով, միջով, հուշ-խոհով ու ջրով սրբագործված քնարական աշխարհում, արքայական գահին են բազմած հայրենիքին ձուլված, մոր ծոցի հոտ ունեցող ստեղծագործությունները։ /Ինձ կանչեցին, Նորից տարան/Սյունյաց բարձրիկ կատարները, /Թելիկ-թելիկ, պարան-պարան /Իմ մանկության կածանները.../:

«Որոտանի եզերքին» ժողովածուից և պոետիկայի դրան գանգի կոճակը սեղմելու պահից սկսած արդեն կանխատեսելի էր, որ հայրենի գրական

րում 1915-1916-ին մեկ ուսումնական տարի վարժապետություն էր արել Ակսել Բակունցը» (3, 94):

Հուշագրական պարունակները կարող են հաղորդել գիտական որոշակի կյուրթի առկայություն. «Լեզվաբանները Սահյանի գրքերից կարող են հայեցի դարձվածքների մի պատկառելի ժողովածու կազմել» (3, 48):

Ընդհանրապես բառաբանական դիտարկումների ժամանակ կարևոր տեղ է տրվում բառաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը։ Հուշագրության լեզվատիրությունում առանձնանում են բնութագրական բառաշարեր, որտեղ բառամիավորները տեղադրվում են միմյանց հետ իրավիճակով կապված հասկացությունների շղթայում. ա) Հ. Սահյանին բնութագրող բառեր՝ մեծ/սթանդարտ բանաստեղծ, վարպետ Սահյան, Հայրիկ, ճիշտ մարդ, բնության երգիչ, բնապաշտ և

այլև, բ) բնաշխարհի բառամիավորներ՝ սար, ձոր, քերծ, քարափ, կիրճ, կածան, արահետ, հանդամաս, սարահարթ, գետ, առու, անտառ, գույն, գիծ, շարժում, զանգեզուրյան բնաշխարհ, գ) հատկանուններ՝ Սիսիան, Որոտան, Որոտնավանք, Աղոթարան սար, Տատնա ձոր, Լոր:

Ակտիվ գործածվում են գիր, նկար, Նոր, քար, լեռ, մեծ բաղադրիչներով բառամիավորները՝ գրասեղան, նկարակալ, Նորագյուտ, քարափ, լեռնալանջ, մեծահարուստ և այլն:

Ըստ շվեյցարացի բառագետ Ժան-Ֆիլիպ Ժակարի՝ գրականությունը միշտ հեղինակային ինքնահռչակում է. այնտեղ մշտապես կա քննարկում անձի մասին (6, 23): Գեղարվեստական աշխարհը ինքնաբերական ու ինքնավարության զգալի լիցքեր է վեր հանում ստեղծագործության հեղինակի միջոցով:

Հ. Սահյանին նվիրված հուշապա-

տումի առաջին տողերից երևում է Նաև հեղինակների ինքնադիմանկարը։ Բանաստեղծի կյանքի մանրամասներին հյուսվում են հեղինակի կենսապատումի նրբագծերը։ Համախ հուշագրության կառուցման ամբողջական է հեղինակ (ես) – բնորդ (նա) դերանուն գուցահեռներով. «Համո Սահյանին և նրա պոետիկան բնութագրել չեմ կարող. լիարժեք չի ստացվի, չի ստացվի այնպես, ինչպես ես եմ ուզում։ Միայն ուզում եմ ասել, որ նրա բանաստեղծությունները կարդալիս այնպիսի զգացողություն եմ ունենում, թե ես ինչ մտածում ու ապրում եմ, նա բանաստեղծության է վերածել։ Կարող եմ ու գոհանում ինքս ինձ ճիշտ զգալուց։ Թվում է՝ ես ինձ բացահայտում եմ» (5, 47):

Հուշագրական էջերում ներկայացվում են Հ. Սահյան բնորդի իմաստությունները, դիտարկումները, բնութագրումները, մտաբերումները, բացատրությունները. «Յուրաքանչյուր

և նույնպես զորանալու է ազգի հոգև ու մարդու մարդ մնալու գերիևնդիրը հոգում ամբարած վաղվա բանաստեղծը: Եվ իր հոգում կուտակած իմաստության հարուստ պաշարը՝ ազգային մտքի ու կամքի շաղախով ուղեկցելու է մեծ մարդասերին՝ հայոց բնարական միտքը դարձնելով ժամանակի քարոզիչն ու հոգևոր հացը:

Սահյանի առաջին «Որոտանի եզերքին» և վերջին՝ հետմահու տպագրված «Ինձ բացակա չլինեք» ժողովածուները լցնում են հայոց գրական անդամատանի մի հսկա հատված: Մանկության աշխարհը Սահյան մարդու ու բանաստեղծի միախառնությունն է, լեռի աշխարհի բավիղապատ ճամփաներից խուսափելու ու իրեն պաշտպանված զգալու մի յուրօրինակ միջոց: /Ամեն առավոտ հուշերս նորից/ Ինձ տանում են այն զմրուխտե հեռուն, /Ուր իմ մանկության ոտնահետքերից/ Անձրևաշուր է խմում եղջերուն:

Սահյանի՝ մեզ հարազատ հորոտմորոտ պոեզիան նաև երգոտ-հանգոտ է, խաղոտ-տաղոտ է: Այն քնքուշ մեղեդային է, ունի բազմաշերտ ու բազմազան հանգավորում: Մի շարք ստեղծագործություններ ուղղակի ուղեկցվում են երաժշտությամբ, ոչ միայն բաղաձայնների զուգադրումներով ու կուտակումներով, այլ որ ավելի նկատելի է՝ հուժկու ռիթմով: /Միահամուռ, միակուռ /Բռունցք էինք ու ոգի, /Խռովքների խրախճան, /Ճախրանք էինք բողբոջի... / Օտարացել, խորթացել /Ու փախել ենք մեզանից /Քանդուբարափ ենք եղել, /Ո՞վ պիտի գա՝ նորոգի:

Սահյան մարդն ու Սահյան երգը երբեք չհավաճանեցին իրար: Յենց

այդ ազնվությունն է առաջին հերթին գրավում ընթերցողի սիրտն ու հոգին: Սահյանին վատահերթվ համոզվում ես, որ բանաստեղծի երգն ըստ էության իր նման հողեղեն է. նա գուցե չապրեց երազային ու եթերային տիրույթներում, երբեք չորոնեց առեղծվածայինն ու աստվածայինը, սակայն ակամա ստեղծեց մի անանձնական մոլորակ, ուր տեր ու տիրական է պոեզիան: Երբ միջով անցնող ամեն ոք մաքրվում է, իսկ հոգուն ու մտքին սահյանական անկեղծ մամլիչի կնիքն է դրվում՝ մարդ – մարդկայինի որակավորումով: Ինքն իրեն ճշմարտության ժամապահ կարգած բանաստեղծը երբեք չկարողացավ մերվել ստի հետ: /Ու եղավ ստի հրավառություն, /Ու խաբեության հարսանիք եղավ.../ ...Սուրբս լիրք եղավ, Աստվածս՝ մռայլ, /Յրճվանքս՝ շինծու, տխրանքս՝ ծրի...

Հայաստանս գուցե քարահող է, ամաշակ ու չոր ձորուսար է, դժվար է իջնել- ելնելը, հարուստ չէ օգտակար հանածոներով, ձմեռը ցրտաշունչ է, ամառը՝ տոթակեց, և էլի ինչ-որ հատկանիշներ ու երևույթներ, սակայն միայն այստեղ կարելի է հոգին խորովել սեփական մոխրում, իսկ բախտից՝ խռովել չկա... Անբացատրելի է առանց ինքը քեզ ապրելու փիլիսոփայությունը՝ «Հգիտեմ ինչու՞ է այդպես»: Միտ անկեղծությունն անմեկնելի է, այն կարող է թռչելու պատրանք ստեղծել: Այդ առեղծվածից է, որ աշխարհը հայրենի տուն է, իսկ մահը՝ թաքնվել է յոթնապատիկ լեռան տիրույթում: /Նորից եկել հին ցավերն են մեզ խոցում / (Խուլ տնքոց են լսում հեռու Դեր-Չորից): /Եվ մեզ վրա մահն իր ուժերն է փորձում,

/Եվ դողում են մահվան ձեռքերը նորից: /Մենք դեռ հազար հոգեվարք ենք մերժելու / (Թեռու կանչն է լսել Դավիթը հորում): /Թե մեռնել կա, հայերեն ենք մեռնելու, /Ինչպես մաքուր ցորենի հունդը հողում:

Հայրենիքի անուկից խոսելու իրավունքը բանաստեղծը նվաճել է գրեթե վեց տասնամյակի տվածաշունչն ու անկանգ արարումով՝ մաքառելով հայրենական պոեզիայի դարձարձիկ ոլորանների խութաշատ ուղիներում: Հայաստանյան թեման Սահյանին երբեք չի լքել. այն բանաստեղծի հասունացման հետ ստացել է ավելի խրոխտ ու համարձակ շեշտեր: Միրել-պաշտելուց զատ բանաստեղծը տերն է իր հայրենիքի, նրա պաշտպանն է: Հայաստանի շենագումը հայի լինելիության ու հարատևման առավատչյան է: Այս մի բուռ քարեղեն հողը վտանգված է, բախտին ապավինել չարժե, մեկ անգամ չէ, որ այն դավել է. անհրաժեշտ է ամրացնել նախրյան բերդը, բանի դեռ վերքը մխում է ու ցավ պատճառում: /Ասում են հին ես այնքան, /որքան որ կրակն է հին..., /...Ելիր, անգեմ իմ ժողովուրդ, / Բարձրացիր քո լեռները լուրթ, /Եվ թող աշխարհն ականջ անի, /Թե ինչպես ես դու որոտում / Ձայնով Ձենով քո Օհանի, /Որ Դավիթը ելի նորից...:

Բացի մեզ ծանոթ բանաստեղծական մոտիվները, որոնցում պոետը կայացած է ու ավանդների շարունակող, ազգային աշխարհագրագրության տիրույթներում բանաստեղծական անհայտ թեմաներ դրոշմվեցին, իրականության ու երազային աշխարհի բախումը երկփեղկեց բանաստեղծի փխրուն երկթ-



խելացի տան մեծ պետք է ժամանակին իր տեղը գիջի տան ավագ որդուն: Այնպես, ինչպես մեր գրական ընտանիքում ես իմ տեղն են գիջել Ռազմիկ Դավոյանին» (5, 36):

Համո Սահյանի մեծ դիմաբանական վրա շարունակում է աշխատել ժամանակը:

Գրականություն

1. Ալաջաշեան Ա., Վաթսունականք, Լոս Անջելես, 2002:
2. Գալստյան Ա., Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն, Գիրք Ա, Ե., 2020:
3. Համո Սահյան, Բանաստեղծը, մտածողը, մարդը, Ե., 2001:
4. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2-րդ:
5. Սարգսյան Ա., Արևոտ ծյուն (հուշեր, պատմվածքներ), Ե., 2002:
6. Ж.-Ф. Жаккар, Литература как таковая. От Набокова к Пушкину.

Избранные работы о русской словестности, М., 2011:

7. Ч. Осгуд, Метод семантического дифференциала в сравнительном исследовании культуры, Социология: методология, методы, математическое моделирование (4М), 2012, N 34:

Ծանոթագրություն

1. Տեն Չապել Եսայան, Անձնական հուշեր Հովհաննես Թումանյանի մասին («Թումանյանը ժամանակակիցների հուշերում»), Ե., 1969, էջ 150-169:
2. Տեն Չալեն Արթուրյան, Պատրիարքական յուշերս, վաերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947:
3. Հայ հուշագրական արձակի դասական նմուշներ են Պ. Պոռոջյանի «Հուշիկներ», Ղ. Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գրքերը: Նորագույն շրջանում նման բնույթի են Ա. Ահարոնյանի «Իմ գիրքը» հուշապատումը, Լ. Թումանյանի «Հուշեր և գրույցները», Վ.

Փափագյանի «Հետադարձ հայացք», «Սրտիս պարտքը» երկերը, Գ. Բեսի «Հուշանվերները», Պ. Սևակի «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրականը, Շ. Դավթյանի կազմած «Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը» հուշագիրքը և այլն:

4. Ըստ հոգեբան Չ. Օսգուդի հոգեմաստաբանության դիֆերենցիալ մեթոդի՝ սույն հուշագրության լեզվատիրույթում փորձեցինք որոշել հիշողություն և հանդիպում հասկացույթների իմաստի տարածվածության հարցը: Ըստ գնահատման գործոնի՝ հանդիպում հասկացույթը ավելի բարձր կիշ է ստանում (Տեն Չ.Օսգուդ, Метод семантического дифференциала в сравнительном исследовании культуры, Социология: методология, методы, математическое моделирование (4М), 2012, N 34):





յունն ու դարձավ ծնվելիք երգե-
րի մշտահմա ակունք՝ դառնա-
լով պոետին բնորոշ ուղեգիծ՝
ձևի ու բովանդակության մեջ շա-
րունակելով մնալ անօրինակ հուզական
ու խիստ ինքնահնար:

Ութսունականների վերջին տա-
րիներն արարեցին ազգային գաղա-
փարների նոր վերելքի ծնունդը: Յոթա-
նասունիինը հստակ բանաստեղծի
սպասելիքներն աստիճանաբար չեզո-
քանում էին՝ ժամանակի պահանջով
խորանում էր երազի ու իրականության
անջրպետը: Այդ հուզախառն տարի-
ներին՝ Արցախյան շարժում ու պատե-
րազմ, երկրաշարժի սևադեմ քառս ու
ազգային գաղափարների անզուսպ
պոռթկում, հայաստանտու շրթունքնե-
րով բանաստեղծը երկնում է իր ամե-
նահամարձակ ու ամենակատարյալ
բաղաբական շնչով հագեցած բանաս-
տեղծությունների վերջին ժողովածուն՝
«Ինձ բացակա չղկեք» պատվիրանով,
որի տպագրությունը, ավագ, չէր տեսնե-
լու: Գիրքը թեև պատրաստ էր տպագ-
րության բանաստեղծի կենդանության
օրոք, սակայն չի տպագրվել «դրախ-
տավայրը մեր դժբախտավայր, գաղ-
թավայր, գոմարբավայր» դարձրած իշ-
խանավորների մասին գրված ճշմարիտ
բանաստեղծությունների պատճառով:
Չգիտեմ ինչու գլուխ չեմ հանում /Ոչ սի-
րուց, ոչ էլ ատելությունից, /Տերերից, որ
դեռ տուն են խթանում, /Եվ այս տիրա-
կան անտերությունից: /Բախտը բաշ-
խում են դեռ հին շերտիով, /Իսկ նորով
միայն հույսն են բաժանում...:

Քաղաքական մոտիվներով ծնված
բանաստեղծություններում ներկա-
յանում է բոլորովին մի նոր Սահյան...
ավելի վճռական, իմաստուն ու հոգևոր
տառապանքից ավանդական համես-
տության ամբարտակներն ավերող: /
Եկան... Տիրացան ու ավերեցին, /Իրենց
մեղքերը մեզ չներեցին, /Մեծահոգա-
բար մեզ նվիրեցին /Չեխ, գրավարար
այս բազարները: /Եվ ի՞նչ մնաց մեզ...
մրսած մեղկություն, /Շապիկը հանած
օձի մերկություն... /Թող կեցցեն այս նոր
նորին մեծություն /Վերին պարոնայք
Քաջնազարները:

Երկրին ու ժողովրդին պատու-
հասած աղետներն ու քաղաքական
կյանքի հիասթափությունները ցավոտ
ազդեցություն են թողնում հայրենիքի
ներկայով ու ապագայով մտահոգված
բանաստեղծի հոգում այն աստիճան,
որ գրում է, երևի թե ողջ հայ պոետիայի
պատմության մեջ ամենամաշայլ ու վիհատ
տողերը՝ /Փոխվել են դերերն ու տերե-
րը, /Բայց նույնն է երախը վիշապի... /
Սրա՞նք են այս երկրի տերերը, /Աղո-
թեմ, որ մահս շտապի...:

Հիասթափության ու ընկճախտի այս
ընթացքը տևական չէ, ավելի քան հա-

վատացած է բանաստեղծը. /Մեր ցավը
եկել, եկել, եկել, /Ծով է կտրել, դարձել է
ծով... /Ծով է դարձել ու մնացել: /Քանի
ծով ենք կտրել-անցել: /Կրկնենք փորձը
մեր՝ լողորդի /Ու մեր բազկի ուժն իմա-
նանք: /Քանի ծով ենք կտրել-անցել, /Այս
ծովին էլ կդիմանանք. /Հավատացեք...:

Վերջին տասնամյակներում Սահ-
յանն իր երգերով դարձել է հայ մարդու
մտքի ուղեկիցն առանց կուսակցական,
տարիքային ու մի շարք այլ տարա-
կարգումների: Ներկա ժամանակնե-
րի համար, երբ ամենուր պայթար է ու
անիմաստ հակամարտություն, ամփա-
բանություն անզամ ազգային հարցե-
րում, ընկերական ու արյունակցական
կապերում, Սահյանը զարմանալիորեն
բուրդին է, և բուրդն են իրենը: /Ի՞նչ
պատահեց, այս ու՞ր հասար, /Ասա, ես
ի՞նչ անեմ: /Բեր ցավերդ, հոգնած աշ-
խարհ, /Դիր շալակիս, տանեմ...:

Սահյանի մտքի խորհուրդն ու հմայ-
ման ուժը տարբեր էտապներով է ան-
ցել. առաջինը՝ գործերը կարգալն է,
երկրորդը՝ հեղինակին ճանաչելն ու
ժամանակաշրջանի թնջուկներում դերն
ու դերակատարությունը գնահատելը,
երրորդը՝ վերլուծել, ընկալել, հասկա-
նալն է, չորրորդը՝ համախոհությունն է
ու գաղափարների միասնական կողմ-
նորոշումը, հիմա հերթը հինգերորդ՝
ամենակարևորին է. Սահյանի մտքե-
րի, գաղափարների իրականացման
պահանջը յուրաքանչյուր առաջադեմ ու
ազգասեր հայի տեսանի պահպանման
ուղիղ նպատակն ու միակ ճանապարհն
է: Սահյանի ստեղծագործությունները
չեն անջրպետում ժամանակները. նա չի
կտրվում անցյալից, չի վերանում ներ-
կայից, նույնիսկ տեսնում է ապագան,
որն իր իմաստասիրական արտահայ-
տությունն է գտել քաղաքական պոե-
զիայի համարձակ էջերում. /Միահա-
մուռ, միակուռ /Բռունցք էինք ու ոգի,
/Խռովքների խրախճան, /Ճախրանք
էինք բողոքի... /Օտարացել, խորացել
/Ու փախել ենք մեզ պակսից /Քանդուբա-
րապի ենք եղել, /Ո՞վ էլ միտի գա նորոգի:

Հայի ազնիվ տեսակի պահպանման
զաղտնիքն ու փրկության ուղին առանց
չափազանցնելու Սահյանի պոետիայի
խորհուրդն է ու անգին կտակը: Դեղա-
հաքի պես անհրաժեշտ է այն բուրդին:
Մեծ բանաստեղծի պոետիայի լավա-
տեսությունն ու սթափ մտածողությու-
նը, շիտակ ու խրոխտ դասը հորդում
է ամեն տողից ու դարձնում իր նման
հայրենապաշտ ու մարդասեր: Սահյա-
նի պոետիան միաբանության բանաձև է
հայի համար, խոսք ու միտք, որի շուրջը
կարող ենք համախմբվել, ուրեմն, եթե
առաջ կարդում էինք ու սերտում նրա
գործերը, հիմա եկել է պահն իրակա-
նացնելու, կիրառելու ու ուղղորդելու
ազգին այդ գաղափարներով:

Մերօրյա գահավիժումների ու ար-
ժեքների անտեսման ու փոշիացման
գրեհիկ միջավայրում շատ գործածվե-
լուց ու երբեմն անզամ շահարկվելուց
բարեբախտաբար չեն մաշվել ու ար-
ժեգրվել սահյանական՝ երբեմն առօ-
րեական ու պարզ թվացող, բայց խոր-
քում անհատակ գանձեր պարունակող
խոհի ու մտքի պատգամները: Սահյանի
պոետիայի ողջ փիլիսոփայությունն ու
իմաստը ներդաշնակությունն է՝ բնութ-
յան ու մարդու, մարդու ու սիրո, արար-
ման ու երգաստեղծ հոգևոր համերաշ-
խության գուգաճորդ նժարներում:

Սահյանի խոսքը պարզ է և հո-
տում է անկեղծ ու ինքնաբուխ, այն ոչ
թե գեղարվեստական, այլ ինչ-որ շատ
սովորական ու մտերմիկ գրույց է նախ
ինքն իր հետ, հետո արդեն ընթերցո-
ղի, առանց կաշկանդումների ու ավե-
լորդ սեթևեթանքի: Այսօր առավել ևս
համախմբվել է պետք ազգային ազնիվ
զգացումների շուրջ, ուստի անհրաժեշտ
է Սահյանի պոետիայի կրողները դառ-
նանք ու բռունցքվենք՝ բուրդվենք նրա
ազգափրկիչ գաղափարների հանգույն:
/Թվում է, թե կամենաք, /Մի օր երկինք
կթռչեք, /Ձեր թռչչիք ժամանակ, /Ինձ
բացակա չղկեք:

Քմահած ենք, դժվար ենք միավոր-
վում, տարակարծիք ենք ու մատների
նման անջատ, բայց Սահյանի պոե-
զիայով հավաքական ենք, չկա մեկը,
որ չընդունի, չհամարի իրենը, չաչերն
արցունքով չցցի, շրթունքը չճաքի, հա-
սակը չճաղկի այդ հրաշածին պոետիա-
յից: Սահյանի պոետիայի պատգամը
հայի փրկությունն է, ապագան ու դար-
դի դարմանը... Անհրաժեշտ է, թեկուզ
միայն այս պոետիայի, այս խոհի ու այս
գրի շնորհիվ մնալ ու լինել իր նման ու
իր պատվիրաններին աջակից:

Հայաստան ասելիս՝ Սահյան եմ հի-
շում: Մի տարբերակում ասում է. «Հա-
յաստան ասեմ՝ շիկնեմ ամոթից», մյուս
տարբերակում՝ «Հայաստան ասելիս
թեև ես բացվում եմ, հասակս ծաղկում
է», այս դեպքում կարելի է հրճվանքից
հալվել ու արցունք դառնալ, պարզութ-
յան խորհուրդ ու ակունք դառնալ, չէ՞
որ հայրենիքի խորհրդանիշ դարձած
սահյանական խոհը միանշանակ հա-
մոզում է. «Հայաստան ասելիս՝ էլ մահը
ու՞մ շունն է»... Ուրեմն... սահյանական
«Օրվա երգը» մեր ունկերում՝ որպես
օրինեղ, «...Մեր սահմաններում վառ-
ված հրդեհը մարելու համար» գևաք դե-
պի գալիք... /Մեր արդար հունձքը մնա
մեր հողում, /Կասկածը մեզնից թող
հեռու գնա: /Թող արծիվ դառնա նոյ-
յան աղավկին, /Մեր բարձունքներին
թառելու գնա: /Փորձված մեր փորձը
մեզ այս անելից /Ելքի մի հնար ճարելու
գնա: /Թող նժդեհանա ռազմի մեր ոգին,
/Սյունյաց լեռները պահելու գնա: ●

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայրենի տունը և հարազատները Համո Սահյանի պոեզիայում



ՍԵՆՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԵՊՀ հայ տրագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչ

Մի անգամ Սահյանին հարցրել են. «Ձեզ համար ինչի՞ց է սկսվում պոեզիան»: Եվ բանաստեղծն ասել է. «Երեխայից, ավելի ճիշտ՝ երեխայի կերպարից: Երեխան ինքը ճշմարտությունն է: Նա չի ընդունում հիվանդագինը, անբնականը» (Համո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, Եր., 2003, էջ 184):

Իր մանկության շրջանի գյուղը ներկայացնող գործերում Սահյանի քնարական հերոսը երեխան է: Բանաստեղծությունների մի ընտիր փնջում նա ներկայացնում է իր կյանքի պատմությունը՝ սկսած սեփական ծնունդից, ներառելով իրենց գերդաստանը, հարազատներին, ընկերներին, գյուղի կենդանիներին: Կենսագրական այս պատումի մի առանձին ճյուղն է առաջին սերը, որ դարձյալ մանկական է ու գեղջկական: Այս ամենը կազմում է յուրօրինակ բանաստեղծական վեպ, որ քնարական կառուցվածքի մեջ ձևավորում է էպիկական մի հարուստ շերտ:

Իր ծնունդը Սահյանը պատմում է «Ու ես եկա» բանաստեղծության մեջ: Իրարանցում է լինում «Խաչիպայեյենց հին հողայում», և հերթով իրենց մտքերն են ունենում տնեցիները: Պապը հրճվում է, որ իր տանը մի սյուն էլ է ավելանում: Տատը խաչակնքելով կռվում է աստծո դեմ, որ այդ դժվար կյանքում մի ուտող բերան էլ ավելա-

ցավ: Հայրը, մեկուսի սրբելով արցունքը, գոհանում է, որ իրեն օգնող մի ձեռք էլ ավելացավ (միջանկյալ հիշենք բանաստեղծի վերհուշ-հաստատումը. «Հինգ տարեկանից եղել եմ հորս առաջին օգնականը գյուղական բոլոր աշխատանքներում, հորթարածի ճիպտից մինչև սերմնացանի գոզոցը»): Հետաքրքիր ու խորհրդանշական է, որ ոչինչ չի ասում միայն մայրը, բայց նա բնականաբար կա բանաստեղծության մեջ, և մենք կռահում ենք, թե ինչ կասեր.

Լուսաբացի մի պատառիկ
Երդիկն ի վար թրթռալով,
Ընկավ մորս հոգնած բարձի
Եվ իմ անհոգ բախտի վրա...

Իսկ թե ինչ է նշանակում ծնունդը իր՝ տրագույնի համար, դարձյալ ասվում է բազմաշանակ լուրջությամբ ձևով. ոչ մեկը գլխի չի ընկնում, որ սա բանաստեղծի ծնունդն է.

Մտան-տվին, տվին-առան,
Ու ոչ մեկը գլխի չընկավ,
Որ աշխարհի կանաչ-կարմիր
Երազների ետևն ընկած
Երկու ոտ էլ ավելացավ:

Երազներից քարե ծաղիկ
Եվ քարեղեն հեքիաթ հյուսող
Երկու ձեռք էլ ավելացավ:

Ու թեկուզ այս մեղքերը շատ,
Վերքերը շատ աշխարհի մեջ
Մի նոր մեղք էլ,

Մի նոր վերք էլ ավելացավ,
Բայց նրա մեծ համերգներում
Մեր աշխարհի համ ու հոտով
Մի նոր երգ էլ ավելացավ:

Այս բանաստեղծությունը Սահյանը հանգիստ կարող էր վերնագրել «Վեպ» կամ «Պոեմ»: Եվ այդպես՝ բոլոր ուժեղ բանաստեղծությունները, որոնք այս մեկի նման ունեն ներքին սյուժե, գործող անձինք՝ իրենց գործողություններով, հաճախ էլ խոսքերով:

Ամբողջական վեպի էպիկական մի դրվագում Սահյանը ներկայացնում է իրենց գերդաստանը: Բանաստեղծությունը ձևավորված է Սերո Խանգաղյանին և վերնագրված է «Օրը մթնեց»: Դա իրիկ-նահացի՝ որպես նախնական քաղաքակրթության նոստալգիկ պանծացում է, որին հակադրված է հերոսի ներկան՝ հուշ դարձած բազմամարդ գերդաստա-

նի և իր մենության շուրջը հյուսվող արտասովորաբար տիրույթամբ.

Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա...

Ես եմ մնում լուկ իբրև հուշ

Եվ իբրև վկա:

Օրը մթնեց, ժամն է արդեն

Իրիկնահացի,

Տիրությունս կամաց-կամաց

Փոխվում է լացի:

Իրիկնահացի կամ ընտանեկան ընթրիքի պատկերը խիստ իրական է: Այդ մասին ունենք նաև Համո Սահյանի վավերագրական վկայությունը: Մի հարցազրույցի ժամանակ նա ասում է. «Մարդը ապրել է հազարամյակներ ու հազար տարում ստեղծել է իր օրենքը, բարոյականը, ու հանկարծ մի կարծ ժամանակում այդ օրենքը ոտնահարվում է: Հիշում եմ՝ ես մեր գերդաստանում 31-րդն էի: Հացի էինք խոտով բոլորս միասին: Սպասում էինք, մինչև պապս ձեռքի գործը վերջացնում էր, լվացվում, խոտով սեղանի զխավերում, և նոր միայն ձեռքներս մեկնում էինք հացին: Կար հարգանք միմյանց միջև, ակնածանք՝ տոհմի մեծերի հանդեպ, ու նրանց օրինակը, որով սնուցում էինք մեր հոգին» (Համո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, էջ 200):

«Օրը մթնեց» բանաստեղծությունը ասես այս հուշագրության չափածո ամփոփագիրը լինի: Ինչպես երևում է բանաստեղծի խոսքից, կենցաղային կամ ազգագրական սովորական պատկերը դառնում է կենսափոփոխություն՝ հին ու նոր քաղաքակրթությունների հակադրությամբ:

Իրենց հին տան, նահապետական գերդաստանի, անցյալի ներդաշնակ կյանքի պատկերը առկա է նաև Սահյանի ուրիշ գործերում, երբեմն այլաբանությամբ: «Զուսն չի տանում» բանաստեղծության հերոսը, մայրամուտին լեռան գագաթին նստած, իրեն զգում է պուտի մեջ նստած թիթեռ և ափսոսում, որ քունը չի տանում.

Որ երագիս մեջ՝ մեր տան

Լույսերն էլ վառեն,

Կանչեն, մերձնք արթնանան,

Կարոտս առնեն:

Այս պատկերը առնչվում է «Օրը մթնեց» բանաստեղծության կարոտախոսին: Իսկ ահա «Մամուռներում կորան» բանաստեղծության մեջ փոխաբերության տեսք է ստացել ամայացած անցյալով մարդու մենակության դրաման՝ արտահայտվելով լքված, այլևս աղոթող չունեցող ավերակ վանքի պատկերով:

Նկատեցինք, որ և՛ իր ծնունդին, և՛ գերդաստանին նվիրված բանաստեղծություններում մշտական տեղ ունի պապի կերպարը: Երբեմն անանուն, հաճախ Խաչիպայե վավերական անունով Սահ-





յանի պոեզիա մտած պապը
Նրա վիպային քնարերգության
գլխավոր էպիկական հերոսն է:

Դա բնորոշ է այնքանով, որ վեպի
պատմող-ասացողը երեխան է՝ Խաչի-
պապի թոռը:

Համո Սահյանը չէր կարող չունե-
նալ հատկապես պապին կերպարագ-
րող բանաստեղծություն: Դա «Պապը»
հանրահայտ բանաստեղծությունն է՝
թոռան հպարտությունը մարմավորող
«իմ պապը» տողասկզբի կրկնությամբ,
կարճ տողերով ու արագ շփոթմով, որոնք
հասուն գաղափարի մեջ մտցնում են
մանկական ոտանավորի տարրեր: Այ-
սինքն՝ պապի կյանքն ու վախճանը
տրված են թռռանձիլ ինչ-որ չափով միջո-
տ երեխա մնացած Համոյի-Համոյի աչ-
քերով: Պապի կերպարի ամենից բնո-
րոշ գիծը աշխատասիրությունն է. Նա
ամբողջ կյանքում աշխատել է, և երբ
դաշտում աշխատելիս ծունկը ծալվել է,
ամաչել է դրա համար: Հետո միացել է
իրեն ծնած հողին:

Պապի կերպարը և համանուն բա-
նաստեղծության սյուժետային մասն ու
դրանից ածանցվող բարոյաբանությու-
նը ևս խիստ իրական են: Այդ մասին
Նույնպես ունենք Սահյանի հուշային
պատումը, որ բանաստեղծության
բնագրի արձակ տարբերակն է. «Ինքս
արդեն վաղուց պապ եմ, բայց երբեք
չեմ բաժանվում Խաչիպապ պապի կեր-
պարից: Դա ինձ համար անկրկնելի
աշխարհ է: Նրա մարդկային և գեղջկա-
կան փոխհարաբերությունը ամենից առաջ
մի բանում եմ տեսել՝ պապն ամբողջ
կյանքում աշխատել է: Երբ մի անգամ
հենց դաշտում, ակոսի մեջ թուլացել
էին ծնկները, պապը չի վախեցել: Նա
... ամաչել է: Ինքը խոստովանեց: Եվ,
գուցե, դեռևս պատանի, ես սրտումս
արդեն գրել էի այն, ինչը հետո տրվեց
թղթին» (Համո Սահյան, Գրչի, խոսքի,
խղճի կշիռը, էջ 182):

Վերոհիշյալ մի քանի գործերում
տպավորիչ, բայց դրվագային մաս-
նակցություն ունի Նաև տատի կերպա-
րը (օրինակ՝ «Ու երբ տատս ձեռքն էր
առնում շերտերը իր հին...»): Ըստ եր-
ևույթին, Սահյանին թվացել է, թե մի
տեսակ մեղք է գործում տատի առաջ՝
Նրան լիարժեքորեն չընդգրկելով իր
մանկության վեպի մեջ և չստեղծելով
պապի կերպարին համարժեք Նրա կեր-
պարը: Եվ ահա բավական ուշ, արդեն
«Իրիկնահաց» գրքում բանաստեղծը
հատուկ մի գործ է նվիրում տատին:
«Մայրցամաք» վերնագրված այդ բա-
նաստեղծության մեջ տատը հանդես է
գալիս իբրև բանաստեղծական վեպի
հերոս՝ իր Նարինե անունով, ազգագրա-
կան ու կենցաղային գծերով, բարոյա-
կան հավատամքով («Պատվի ու խղճի
պարեն-պաշարով, Իր խոնարհությամբ,

խոհարարությամբ, Երկյուղածությամբ
աշխարհի հանդեմ...»): Ու թեև վեր-
ջում բանաստեղծ թոռը խոստովանում
է իր մեղքը տատի հանդեմ, կերպարը
փաստացի ստեղծվում է և ևս մի քա-
յով ամբողջացնում երեխայի խոսքով
պատմված մանկության վեպը.

*Մայրող ու շնչող մայրցամաք է նա,
Չասված մի հեքիաթ և անգիր մի վեպ
Իմ հիշողության տիեզերքի մեջ,
Որից ոչ մի տունն,
Ոչ մի տող չկա դեռ իմ երգի մեջ:*

Տոհմի կանչը մարմնավորող բա-
նաստեղծություններում իրենց անհրա-
ժեշտ տեղն ունեն Նաև հերոսի ծնող-
ները՝ դարձյալ անուն առ անուն և էլի
էպիկական-վիպային ընտիր մանրա-
մասներով: Ամեն անգամ, երբ մշուշը
իջնում է արտին, Սահյանը հիշում է մոր
կապույտ շորը.

*Հիշում եմ մորս մութ-կապույտ շորը,
Երբ փաթաթվում է մշուշն արտին:*

Որոշ գործերում մայրը հանդես է
գալիս անունով՝ Գայանե: Կան գործեր
էլ, որտեղ մայրը խորհրդանշում է մայ-
րությունը և Հայաստանը: Այդպիսին է,
օրինակ, «Մայրս» բանաստեղծությու-
նը, որ երգ է դարձել (երգահան՝ Սասուն
Պասկեհյան): Բայց լավագույնը թերևս
«Ի՛նչ անեմ, մայրիկ» բանաստեղծոյթ-
յունն է, որը համահունչ է երեխայի
անուկից պատմվող մանկական վեպին,
դրա բաղադրիչ է: Մայրը, ինչպես հի-
շում է զավակը, սովորաբար ապտակել է
իրեն վառ արարքների համար, սաս-
տե, որ լաց չլինի, ապա ցաված տեղը
համբուրել և թաթուն լացել: Հերոսի
մտապատկերում այս քայլերը գուցե
վում են մոր մահվանը: Այդ մեծ կորս-
տով մայրը վերջին անգամ ապտակել է
իրեն, բայց հաջորդել է դատարկությու-
նը, չի կրկնվել մանուկ օրերի մխիթա-
րանքը.

*Ախ, վերջին անգամ,
Չեմ իմանում ո՞ր
Մխայիս համար
Ինձ ապտակեցիր
Կորուստով քո մեծ...
Էլ սաստող չեղավ,
Որ լաց չլինեմ,
Եվ ցաված տեղըս
Համբուրող չեղավ,
Եվ իմ փոխարեն
Իմ ցավն զգացող
Ու լացող չեղավ:
Ի՛նչ անեմ, մայրիկ:*

«Մայրամուտից առաջ» ժողովա-
ծուում այս բանաստեղծությանը անմի-
ջապես հաջորդում է հորը ներկայացնող
«Ինչո՛ւ հիշեցիր» հանրահայտ գրված-
քը: Այնուամենայնիվ, սահյանական
«Էպոսում» ավելի ուժեղ է արտահայտ-
ված հայրական գիծը: Հավանաբար
Նաև այն պատճառով, որ հայրը ավե-
լի երկար է ապրել, Նրա՝ Սահյան դայու

կերպարը ավելի տևական ու շոշափե-
լի ներկայություն ունի: Ծերունի հայրը
կամրջում է անցյալն ու ներկան, այցե-
րի ժամանակ դիմավորում Նրան տան
շեմին (հիշենք, թե իրենց ինչպես է դի-
մավորում Սահյան դային Վ.Դավթյանի
«Ծննդավայր» բանաստեղծության մեջ՝
ասելով. «Եկա՞ր, որդիս»): Նրա հետ
խոսելով՝ որդին կարծես լցնում է ամա-
յացած ընտանիքի պատկերը:

Եվ ահա այդպիսի մի գրույցի ժա-
մանակ որդին անզգուշություն է ունե-
նում հիշեցնելու իր մանկության ծանր
մի պատկեր: Տուրտը, փոքրիկ երեխայի
տավարած լինելը, թեթև հագնված լի-
նելն ու մրսելը, իր սաստող զգուշացու-
մը՝ շուտ չբերել տավարը, հոր մեջ արթ-
նացնում են անցյալի դաժան կարիքի
զգացողությունը, մեղքի զգացումը, և
Նա արտասվում է: Բանաստեղծության
սյուժեն ներկայացնում է մեղքի կրկնա-
կի զգացում. հոր՝ երեխային ավելի լավ
պահել չկարողանալու և որդու՝ այդ մա-
սին ակամա հիշեցնելու համար.

*Գյուղ տանող ճամփով
Անցնում է հայրս,
Ցախը շալակին:
- Ցո՛ւրտ է,- հարցնում է:
- Տաք է, -ասում եմ:
- Քարին մի նստիր,
Վեր կաց, - ասում է:
- Տավարն, - ասում է,-
Լույսով չբերես:
Մտում է, գնում...
Անցել է ուղիդ
Քառասուն տարի...*

*Հիշեցրի երեկ,
Հայրս լաց եղավ:
Ինչո՞ւ հիշեցրի:*

Սահացած և Լորի հին դպրոցի
բակում գտնվող անանուն բլրակի գե-
րեզմանատանը հանգչող, հեռացած
զավակների մասին գրուցող Սահյան և
Գայանե ծնողների էպիկական կերպար-
ները կերտված են Նաև «Իմ ծնողները»
բանաստեղծության մեջ: Սա Նույնպես
ամբողջական վեպի մաս է:

Մանկության երանելի օրերի կա-
րոտը արտահայտող գործերում Սահ-
յանի կիրառած ամենագործածական
պատկերը, Բակունցի պատմվածքի
վերնագրով ասած, «հին տունն» է: Այն
տեղ է գտել «Հողոտ, մղերտ մի մութ էր
հագնում», «Լորից կարմիր ու կանաչ»,
«Հոգնած տարիքս ուներիս առնեմ» և
այլ կտորներում:

«Նստել եմ մեր տան պատի տակ»
տեսիլքում վերակենդանանում է ման-
կության պատրանքը.
*Հնձած խոտը բարձել էլին,
Հայրս տուն է բերում,
Էլը սարից մի բեռ կանաչ
Մանկություն է բերում:*

ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տագնապների անընդգրկելիությունը



ՏԵԼԻԶՍ ԲԱՆՉԻՆՅԱԼ
Գրականագետ, թարգմանիչ

Ավելի շատ պոետներ-լավ ու տարբեր: Մայակովսկու այս տողը, գրված, հավանաբար, կես-կատակ՝ կես-լուրջ, հետագայում չափից ավելի լուրջ ընդունեցին քննադատներն ու լրագրողները: Այն դարձավ գնայուն արտահայտություն, հանրածառնա միտք: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր դեմքն ունի և, այսպես թե այնպես, մի սերնդի բանաստեղծների մեծ մասը շատ բանով նման են իրար: Հազվադեպ, չափազանց հազվադեպ է ինչ-որ մեկի մուսան ապշեցնում «դեմքի անսովոր արտահայտությամբ»: Եվ սա, թերևս, անգամ լավ է, այնպես պոետիային պիտի սպառնար սրընթաց արժեզրկման վտանգը:

Մեր օրերում բանաստեղծը չափից ավելի հաճախ է թաքնվում թեմայի համընդգրկունության, համընդհանրության ետևում, թեմա, որ չի կարող չի ուզել ամենքին: Այդպիսի թեմաների ձեռք գարկելու մեջ ինքնին ոչ մի վատ բան չկա: Բայց ընդհանուր հոսանքում երբեմն դժվար է լինում ապակին տարբերել ադամանդից, վարպետության հետ միաձուլված ապրումի ուժը՝ սառը տեխնիկայի, վարժված ձեռքի աճաբարությունից:

Սահյանի բանաստեղծություններում գրեթե բացակայում է (համենայն դեպս, առաջին հայացքից) մի թեմա, որը թվում է, չի շրջանցում ոչ մի հայ բանաստեղծ՝ Հայաստանի ողբերգական անցյալի ու հայ ժողովրդի անընկճելիության թեմա: Եվ միայն այն ժամանակ, երբ շրջված է վերջին էջը, սկսում են գիտակցել, որ այդ թեման, այնուամենայնիվ, առկա է, բայց՝ ներթափանց, ներթափանցած ամենուր: Հայաստան, անունդ տալիս, ժայռի մեջ մի տուն եմ հիշում, Այլուր կամրջի հոնքին Օհիանի մի բուն եմ հիշում, Թեքված մի մատուռ եմ հիշում Եվ բերդի տեղահան մի դուռ, Ավերակ տաճարի մի վեմ Եվ բեկված մի սյուն եմ հիշում...

Բանաստեղծը լույսն ընկալում է մի առանձնահատուկ խտությամբ, և դա նրան տալիս է մի առանձնահատուկ տեսուկություն: Հասարակ ու սովոր իրերը երևում են մերթ դեմ-հանդիման, մոտիկից, մերթ հեռու-հեռավոր, բայց միաժամանակ պարզ ու հստակ՝ ինչպես շրջված դիտակողմի մեջ: Տեսողության այս երկու կերպերը համադրվում և յուրաքանչյուր պատկերի հաղորդում են զարմանալի ծավալայնություն, ստեղծում համաժամանակյա շարժման և անշարժության երևույթականություն: Լույսն ընկավ կոպիտ, ու ես վեր թռա, Ասու՛ղ էր ընկավ, թե՞ հավքը գարթնեց:

Երկնքում էի, թե՞ երկրի վրա, Իմ լինելն անգամ առեղծված էր մեծ: Մայիտակում էր երկինքը քիչ-քիչ, Կապտում էր ձյունը գագաթներն ի վրա: Ամառնամուտի թեժ կիրքը՝ ծաղկի Օհր-կաթինները լեռներից կախում, Հովիտների մեջ խառնում էր իրար: ... Վերը երինջներ կային սպիտակ, Նրանց շարժումը կորով էր և կիրք... Երկինքը փովել իմ ոտքերի տակ, Երկիրը թռել, դարձել էր երկինք: Եվ սկիզբն օրվա Աշխարհաստեղծման սկիզբ էր կարծես:

Մի պահ այդ պահի վկան էի ես: Իր հայացքի (և մարմնական, և ոգեկան) ներքո բացվող ամենի տարօրինակ, անհանգիստ երկվությունը բանաստեղծին ներկայանում է ոչ թե իբրև իր տեսողության, այլ իբրև իրեն երևացողի առանձնահատկությունը: Դե ինչ, հնարավոր է, որ հենց ինքն է իրավացին: Ու հենց այդ պատճառով էլ նրա բանաստեղծության մեջ բնության պանթիստական ընկալումը ոչ մի վայրկյան չի մշուշում մակրամասնի ռեալիզմը, չի խոչընդոտում վերադարձը դեպի ինքը թեզ:

Խավարը շարժվեց - բան չի երևում: Չիզգազվեց հանկարծ կայծակը Աշխարհը լցվեց վարդագույն միգով... Դարեր են անցնում վայրկյանի միջով:

Համո Սահյանի բանաստեղծություններում կա մի ներքին, հազվադեպ (բայց և մեծ ուժով) մակերես ժայթքող ողբերգականություն: Դա աշխարհայացքային ողբերգականություն չէ, այլ մարդու՝ ինքն իր դեմ մաքառելու, սեփական կրթերի ու անկատարելիության հետ կռիվ տալու հավիտենական ողբերգականությունը, մեծ ու հասարակ գաղտնիքների անվերծանելիության գիտակցման, կրծքիդ տակ տրոփող մի անխմանալի բանի հետ միաձուլվելու անհնարիության ողբերգականությունը:

Տառապանքն իմաստություն է. չեն տառապում միայն հիմարները: Բայց և ուրախությունն էլ է իմաստություն: Համո Սահյանի՝ ժամանակակից ամենալավ բանաստեղծներից մեկի իմաստուն երգերում կա և վեհացնող տառապանք, և գիտակցված ուրախություն՝ տեսնելու, հասկանալու, ապրելու ուրախությունը: Դրանք միասնական են, անխզելի: Ինձ հաճախ այնպես է թվում, Թե կյանքս տանուլ եմ տվել, Օրերս քամուն եմ տվել, Մերերս տվել եմ ջրին... Նայում եմ սրտին իմ լցված, Նայում եմ դատարկ իմ բռին, Եվ հաճախ այնպես է թվում, Թե կյանքս տանուլ եմ տվել...

Վշտեր և հոգսեր՝ որքան խոցուն ու տաղտկալի կլիներ կյանքն առանց դրանց: Ահա պոետիայի հավերժ պանթիզմի գաղտնիքը՝ իր վշտերը, իր հոգսերը մարդը հղում է դեպի դուրս, դեպի այն ունիվերսումը, առանց որի նա չի կարող իրեն պատկերացնել: Եվ հենց սա է ուրախությունը:

Բանաստեղծն իբրև հայրենիքի ամենասուրբ զգացողություն է պահպանում սիրո նվիրական զգացումը Հայաստան աշխարհի այն հողակտորի հանդեպ, ուր իրեն առաջին անգամ բախտ է վիճակվել տեսնելու լույսը:

Ճանապարհորդությունը ծավալվում է ոչ միայն տարածության, այլև ժամանակի մեջ: Բանաստեղծի հիշողությունը վերակենդանացնում է բոկոտն մանկության, տագնապալի պատանեկության, դժվար տարիների պատկերները:

Եղելության և խոհերի օրգանական կապը օգնում է ավելի խոր ըմբռնելու ու բացահայտելու արդիականությունը: Արարում և բարոյություն՝ ահա այն բարոյական կամեղսոնը, որով ճշգրտվում է ժամանակի ընթացքը և գրողի սրտի բարբախտությունը:

Կծիկ-կծիկ սարեր, Կիրճեր պարան-պարան, Ճարան-շարան ժայռեր, Քարափ ու քերծ...



ՍԱՀՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նորահայտ դրվագներ Համո Սահյանի և Սիմոն Սիմոնյանի լիբանանյան առնչություններից

**ԹԵՅԻՆԱ ՍԱՐՈՒԹՅԱՆ**

Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Համո Սահյանի ստեղծագործական կյանքում կա ուշագրավ մի դրվագ, որը կապվում է սփյուռքի, մասնավորապես Լիբանանի հայ գաղթօջախի հետ: Բեյրութում 1958-1978թթ. Սիմոն Սիմոնյանի խմբագրությամբ հրատարակված «Սփիւռք» շաբաթաթերթը, հիրավի, հարուստ

կյութ է պարունակում ժամանակի գրական-մշակութային անցուղարձի մասին՝ նաև ըստ ամենայնի լույս սփռելով հայրենիք-սփյուռք այրօրյա գրական կապերի վրա, որոնք հաճախ դուրս են մնացել մամուլի հետազոտողների ուշադրությունից: Բանն այն է, որ խորհրդային տարիներին «Սփիւռք»-ի որդեգրած ազգային-ազատական ուղղությունը անհամատեղելի էր խորհրդային մտակաղապարների հետ, ուստի և «Սփիւռք»-յան միջավայրը մեծ հաշվով անձնադաշտ մնաց հայրենի ընթերցողին: Չնայած Խորհրդային Չայաստանի անհանդուժողական դիրքավորումին՝ «Սփիւռք» պարբերականը ուշադրության կենտրոնում է պահել հայրենի գրական, մշակութային, հասարակական ու քաղաքական կյանքը՝ արձագանքելով կարևոր իրադարձություններին, մտահոգություններին՝ փորձելով ամեն կերպ սերտացնել գրական-մշակութային կապերը, կամրջել սփյուռքահայությանը: «Սփիւռք» շաբաթաթերթին, թեև փոքր-

ինչ զգուշավոր, բայց հաղորդակցվել են հայրենի բազմաթիվ նշանավոր գրողներ, մտավորականներ, որոնց թվում՝ Դերենիկ Դեմիրճյանը, Գուրգեն Մահարին, Խաչիկ Դաշտենցը, Պարույր Սևակը, Յովհաննես Շիրազը և շատ ուրիշներ: Վերջինս գրեթե մշտական ներկայություն էր թերթում՝ հաճախ անտիպ ստեղծագործություններով, բաց նամակներով ու հրապարակումներով: Գրական ու մարդկային ջերմ շփումներ ունենալով հայրենի բազմաթիվ մտավորականների հետ՝ Սիմոնյանը «Սփիւռք»-ում պարբերաբար հրատարակել է նրանց ստեղծագործությունները, ուսումնասիրությունները, նամակները, գանազան գրությունները, առողջ բանավեճեր ծավալել ազգային հիմնախնդիրների շուրջ, արձագանքել գրական, մշակութային, կրթական նորություններին, հորեյլաններին: Ուշաբժան են Սիմոնյան-Դեմիրճյան, Սիմոնյան-Մահարի, Սիմոնյան-Շիրազ, Սիմոնյան-Սևակ, Սիմոնյան-Համո Սահյան գրական ու մարդկային առնչությունները, որոնք լավագույնս արտահայտություն են գտել «Սփիւռք»-ի էջերում:

Հակամետ ենք կարծելու, որ հայ հասարակական, քաղաքական, գրական ու մշակութային կյանքի բազմաթիվ բարեփոխություններ, որոնք 1950-1980-ական թվականներին կատարվել են հայրենիքում ու սփյուռքում, մեծապես վերաբերում են «Սփիւռք» շաբաթաթերթին և նրա երախտաշատ խմբագիր Սիմոն Սիմոնյանին:

1974 թվականին Լիբանանահայ գրական շրջանակի հրավերով Համո Սահյանը մեկնում է Բեյրութ, որտեղ պետք է նշվեր նրա 60-ամյա հորեյլանը:



Վերհուշերս կրկին,
Միս ինձ այնտեղ տարան,
Լեռնաշխարհը տարան

Այն երկնամերձ:

Իմ նախնիներն այնտեղ

Մայրում էին, մեռնում:

Մայրում էին աղքատ,

Մեռնում հարուստ...

Գրաստ էին բռնում,

Գրաստ էին դառնում,

Ու վաստակում մի կերպ

Հաց ու հագուստ:

Բանաստեղծի դեպի ժողովրդական հոգեբանության գաղտնարանները կատարած խոր ներթափանցումներով են հատկանշվում աշխատանքային ոգևորության վերլուծական և, միևնույն ժամանակ, լայնորեն ընդհանրացնող ուրվագծումները:

Հայրենիքի հանդեպ սերը վեր է աշխարհի բոլոր բարիքներից, և սա մարդու համար ամենասպիտակ միտքն է:

Դառնալով մշտական սկզբունք, այն հարկադրում է արհամարհել ողջ մնացյալը և կամավոր նետվել ամենաթվար ու համարձակ ձեռնարկների: Ինչով էլ զբաղվի մարդը, որքան բարիք էլ արարի, չի կարող լինել ավելի մեծ երանություն, հաճույք և բավարարվածություն, քան հայրենիքի բարօրության համար, հանուն հայրենիքի աշխատելը:

Համո Սահյանի կյանքը մեր ժողովրդի կյանքի մի մասն է. նա այդ պատմության արարման և մասնակիցն է, և վիպագիրը, այդ պատմության գիևկրորն ու մաճկալը: Դրանից է գալիս նրա պոետիկայի այն կենդանի ու հավաստի կողմը, առանց որի բանաստեղծությունը չի դառնում գրականություն, գրականությունը՝ հանապազօրյա հաց: Ահա այդ կյանքի կենդանի թրթիռն է, որ նա դրեց իր պոետիկայի չորս սյուների հիմքում ու դրա վրա բարձրացրեց սահյանական ոճի իր տաճարը՝ անասան, հպարտ

ու գեղեցիկ, ինչպես յուրաքանչյուրի ծնված օջախում: Ահա այդ օջախի վաղընջական կարոտների, կորուստների ու լուսավոր մանկության, դժբախտ ու բախտավոր տերերի, իմաստուն ու չարքաշ մաճկալների ապուլապպերի կարոտն էլ մենք ստանում ենք այդ մշտաբաց օջախից, այնտեղ գտնելով մեր կորցրածը, մեր ցավերի ամբողջ ծուխը, տոկունության ու հուսո մեր արմատները, անսպիտակների ու խոստովանության մեր անկյունը: Սահյանն իր պոետիկայով մեր հին ու նոր գրականության մեջ բացեց իր ակոսը, բացեց իր գուժանով, իր քրտինքով ջրեց այն, դրանից էլ նրա հացի ազնիվ բույրը՝ միշտ թարմ, միշտ տաք, միշտ հարգի: Սահյան բանաստեղծի ու մարդու բոլոր լավագույն շերտերը գալիս են այստեղից, այս հին, խորիստ ու հերոսական հողից, նրա պատմությունից, մամուլների տակ ննջող հիշողություններից,

Սահյանի կենսագիրներին քիչ հայտնի այս անկյունաքարը արձագանքել է Լիբանանի հայկական մամուլը, հատկապես «Սփիւռք» շաբաթաթերթը: 1974 թվականի ապրիլի 28-ի թիվ 18 համարում Սիմոնյանն ընթերցողին ուրախությամբ ծանուցում է Յամո Սահյանի գալստյան մասին. «Կողջունենք հայրենի բանաստեղծ Յամո Սահեանը, որ 20 Ապրիլին(1974) ժամանեց Պեյրուկ: Տաղանդալոր, հաւատաւոր, հայրենասեր ու համեստ բանաստեղծ մըն է Սահեան, որով զօրացաւ հայրենի բանաստեղծութեան արմատը: Վերջին տասնամեակին յարաճուն ու մշտանորոգ վերելք մը ապրեցաւ քերթողութիւնը Սահեանին: Ամենէն աւելի Սահեանով գոցուեցաւ մեծ բացը անդարձ մեկնող բանաստեղծներուն – Սահարի, Չարեան, Տարօնցի, Սեւակ: Իր լրջութիւնը եւ խոհակալութիւնը կը յուսարդեն բեղմնաւոր իր վաղորդայնը: Բարձր գալուստ կը մտղթենք հայրենի թանկագին բանաստեղծին»¹:

Ծանուցման ներքո թերթը հրապարակում է Սահյանի «Ինչ արած, մարդ եմ» և «Անուղ տալիս» բանաստեղծությունները, ինչպես նաև լուսանկար՝ արված Վարուժան Սեթյանի կողմից:

Սահյանի այցը Բեյրուկ կազմակերպել էր Լիբանանահայ գրական շրջանակը՝ տեղի հայ շնորհալի երիտասարդ գրողների ու արվեստագետների նախաձեռնությամբ, որի կորիզը կազմում էին մեծահամբավ մի շարք գրողներ: Գրական շրջանակը կազմակերպում էր գեղարվեստական երեկոներ, դասախոսություններ, բանավեճեր, սփյուռքահայ ու հայրենի գրողների ստեղծագործությունների քննարկումներ: Այդ տարիներին

րին լիբանանահայության հետ կապերի հաստատման ու զարգացման գործում մեծ էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դերը, որը համագործակցում էր նաև Լիբանանի գրական-մշակութային կազմակերպությունների, այդ թվում՝ Գրական շրջանակի հետ, կազմակերպում փոխադարձ այցելություններ, որոնք կոմիտեի աշխատանքներում մեծ տեղ էին զբաղեցնում:

Գրական շրջանակը Յամո Սահյանի հորեյանը հանդիսավորությամբ նշում է 1974 թվականի մայիսի 3-ին Գյուլբենկյան հանդիսասրահում²: Բացման խոսք է ասել Մարտիրոս Գուշակճեանը, բանախոսները եղել են Վահե Վահյանը, Անդրանիկ Ծառուկյանն ու Գառնիկ Ադարյանը, ասմունքողները՝ Վահան Թեքեյանը, Թ.Սպիտանյանը, Դոնարան ու Միեր Սկրտիչյանը: Վերջում «հուսք բանեքով» հանդես է եկել Յամո Սահյանը, որ, խառնվածքով ակնհայտորեն չլինելով նման մեծաշուք հանդիսությունների սիրահար, իր կյանքի ամենաերջանիկ իրադարձությունն է համարել այդ տոնահանդեսը: Սահյանի խոսքն իր հորեյանին նույն թվականի մայիսի 12-ի համարում հրապարակել է «Սփիւռք» շաբաթաթերթը, որը ներկայացնում ենք ստորև.

«Սիրելի բարեկամներ, իմ ապրած ու չապրած 22.099 օրերից ամենանշանակալից օրն է այսօր ինձ համար... Թերևս, ամենաերջանիկ պահը:

Այս անտեղատրեյի եւ անարտայայտելի երջանկությամբ ես լցուած եմ ոչ իբրեւ բանաստեղծի, իմ հանրաճանաչութեան գիտակցումից: Դրանից ես վախեցած եմ էն գլխից:

Վաղուց եմ հասկացել, որ հանրաճանաչ լինելը վտանգաւոր բան է. նա շրջաններ է բերում գրողի համար, բերում է կախուածութիւն ընթերցողից, քննադատից, կախուածութիւն միջեւ անգամ թո նախկին գրուածքներից:

Ես կուզենայի միշտ գրել այնպէս, որ թուար թէ առաջին անգամ եմ գրիչ առնում: Ինձ երջանկացնում է ուրիշ մի հանգամանք. ձեզ մօտ, ձեր կողքին, ձեր առջեւ լինելուս հանգամանքը...

Մեծ է իմաստն այս հանդիպման: Սփիւռքի Յայրութիւնն իր պատմութեան մէջ, թերեւս, առաջին անգամ նշում է հայրենի գրողի, որպէս իր գրողի յորելեանը իր յարկի տակ, յորեյարի ներկայութեամբ: Սա ըստ էութեան հայրենիքի եւ սփիւռքի հայրութեան մշակութային կապերի զարգացման կիզակետն է... Աննախընթաց, իմաստալից մի փորձ: Ես կուզենայի, որ փորձի փոխանակութիւն լինէր սփիւռքի ու հայրենիքի միջեւ: Կուզենայի, որ մեր հայրենիքը արժանի կերպով, առանց խտրակալութեան, նշէր սփիւռքահայ բոլոր արժանաւոր գրողների, որպէս իր գրողների, յորեյաններն իր յարկի տակ, իր նորօրեայ դահլիճներում, յորեյարների ներկայութեամբ:

Ինձ ձեզ ներկայանալու պատիւը, հայրենի պոեզիան ներկայացնելու եւ հայրենիքի անուկից խոսելու իրաւունքն ինձ տուել է չորս տասնամեակի անընդմէջ իմ տառապանքը հայրենական պոեզիայի բարդ ու դժուարին ոլորաններում:

Այդ մեծ տառապանքիս համար դուք լի ու լի ինձ վարձատրում էք այսօր, ձեր սրտագին ընդունելութեամբ, ձեր եղբայրական



նրա այսօրվա կենդանի մարդկանցից: Նա մոլեգին ձայնորսիչի պես, որպես կենդանի ժամանակ, իր մեջ է կլանել այդ բոլորը՝ և նրախոսությունները, և ցավերը, և հույսերը, և ցնծության անպարագիծ պահերը և այդ բոլորը վերածելով պարզ ու զրնգուն տողի, վերադարձրել իրեն:

*Գարունդ հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում ջրերդ:
Հավքերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Հայերեն են տոկում գրերդ:
... Թող աստված եղածը պահի,
Եվ հետո ինչ էլ պատահի,
Ձյուներդ հայերեն են լալում,
Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ:*

Նա երկրորդել է բնությունը, գրեթե հավասարվել նրան պոեզիայում շարունակելով բնության գործը: Նա սոսկ

բնության երգիչ չէ, նա մարդու երգիչ է, ուղղակի մարդուն երգում է հենց մարդու միջավայրով՝ բնությամբ: Եվ բանի որ այդ բնությունը շատ է տվել Սահյանին և իր լավագույնն է տվել, դրա համար Սահյանը մարդուն և շատ է երգում, և լավ: Մեծերին գնահատելու համար տարածություն ու ժամանակ է պետք, ժամանակի այդ հատվածի առաջին նշանաձողը արդեն երևաց յոթանասուն տարի: Այդ տարածության մեջ արդեն Յամո Սահյանը ոչ միայն համահայկական երևույթ է՝ իր ծանրակշիռ վաստակով, իր ցանքով ու հունձքով: Նա մեր բանաստեղծն է՝ ղեմավոր շրջված դեպի իր խորքը, ժամանակների խորքը, մեր մաքրության ու հույսերի խորքը: Այդ խորքերում պիտի փնտրել ու հանդիպել նրան, ունկնդիր լինել իր՝ միայն հողին ասված շշուկներին, հավատալ մեծ կենսափորձից եկող նրա բառին, բա-

նաստեղծությանը, նույնիսկ լռությանը: Սահյանը մեր պոեզիայի Մենդելևյան աղուլայկում վաղուց է դրել իր բառակուսին՝ դրել ու ազնիվ ու թանկարժեք մետաղական շարքում, որ հանդիպում է միայն մեծ խորություններում: Եվ որքան թանկ է Սահյան բանաստեղծը, նույնքան էլ Սահյան մարդը՝ միշտ նրբանկատ, միշտ պարզ, միշտ տոկուն ու բարի: Ինչպես իր պոեզիան: Այդ պոեզիան և իր կյանքը գետի այն ափերն են, որոնց միջով նա մեզ է հասցնում իր բարձրանիստ կատարների ձյունը, սնելու բարության ու գեղեցկության հունդերը, սիրելու մեր ժամանակը, որը վաղվա մեծ ժամանակի սկիզբն է միայն: Բանաստեղծը այսպես է իրար կոչում ժամանակները և սերունդներին, սկսվում նրանցից և նրանց համար դառնում մի նոր սկիզբ: Եվ մենք այդ մեծ ու անվախճան սկզբի երջանիկ ակամատներն ենք:



վերաբերումներով, ձեր անսխալակամությամբ, ձեր մտերմությամբ, մեծարանքի ձեր յուզումնալից խոսքերով:

Սակայն այդ բոլորը ես ընդունում եմ ոչ իբրև վարձատրություն, ոչ իբրև արտոնություն ու նուրբ, այլ որպես նոր պատուեր ու նոր պարտք: Պատուեր, որ պիտի կատարվեն պատուով, եւ պիտի հատուցվեն ինչ գնով էլ լինի:

Թոյլ տուէք իմ հասցէին ասուած գնահատանքի եւ մեծարանքի բոլոր ձեր խօսքերը փոխանցել մեր հայրենի բնաստեղծներին, իմ սերնդակիցներին ու գրչակիցներին – Վահագն Դաթեանին, Սիլվա Կապուտիկեանին, Յովհաննէս Շիրազին, Գեորգ Էմինին, Մարոյ Մարգարեանին, Հրաչեայ Հովհաննիսեանին եւ իր ստեղծագործութեամբ արդէն աւագի իրաւունք նուաճած իմ կրտսեր գրչեղբորը՝ Ռազմիկ Դաւոյեանին, մեր պոետիկ մարդամէջ եւ աշխարհամէջ հանող այդ փայլուն համաստեղութեանը եւ այլոց...

Այսօրուայ հաւաքը – յարգանքի այս երեկոն մի կրկին անգամ ցոյց է տալիս Լիբանանի Հայրութեան կենսունակութիւնը, նրա ամուր կապը հայրենի մշակոյթի հետ, նրա սերը հայրենիքի եւ հայրենի արուեստի նկատմամբ, գոյատեւելու նրա հաւատն ու կամքը:

Ես լի ու լի կշտացած լինելով յոբելյանական ամեն տեսակ արարողութիւններից, ծափերի որոտից ու դիֆերանսների հրավառութիւնից, հաճոյքով ներկա եղայ այս երեկոյին, եւ նրանից ստացած տպաւորութիւններն անջնջելի կը մնան իմ մէջ մինչեւ օրերիս վերջը: Դրա համար ես անսահմանօրէն շնորհակալ եմ Գրական Շրջանակի ղեկավարութիւնից, ձեր մասնակցութիւնից, ձեր համբերութիւնից, բոլորից:

Շնորհակալ եմ նաեւ այն բանի համար, որ երկու շաբաթ գտնուելով Լիբանանում, ձեզ մօտ, ձեր յարկի տակ, ես ինձ տանտէր եմ զգում եւ տան տղայ: Մինչեւ անգամ տան կարօտելու առիթ ու ժամանակ չեմ ունենում:

Այսպիսի պահերին սովորաբար յոբելյանները հանդիսաւոր խոստումներ են տալիս հետագայ անելիքների մասին... բայց հասնելով որոշ տարիքի, սկսում ես հասկանալ, որ կեանքն ըստ երկրէան անընդմէջ կորուստ է: Կորցնում ես ոչ միայն ատամներդ, մազերդ, աչքերիդ փայլը, այլ նաեւ հոգուդ ուժն ու հարստութիւնը:

Կտրուում ընկնում եմ մէկը միւսի ետեւից: Կտրուում են ոգին հողի հետ կապող պարանները, եւ հոգին, համարեա ազատագրուած ճօճում, օրօրում է իր սեպհական թեթեւութիւնից...

Հաւատանք, որ իմ այդ տարիքը դեռ չի հասել... Հաւատանք, քանզի առանց հաւատի ապրել չէինք կարող... Եւ դեռ

հաւատալու շատ բաներ կան»:

Իր ելույթը Համո Սահյանն ավարտել է հետևյալ բանաստեղծությամբ.
Հաւատում եմ քեզ, Հայոց հանճար,
Քեզ համար դեռ տոներ կգան,
Նարեկացիներ կգան աշխարհ,
Մայրա-Նովաներ կգան...

Նրանց թոյնքը մենք չունեցանք,
Երևի հնար էլ չկար:
Բայց մի համարիք մեղք ու յանցանք,
Մի կոչիր խեղճ ու տկար:

Մենք հազար մազե կամուրջ անցանք,
Տագնապով անցանք և ահով,
Էլ մենք ինքներս կամուրջ դարձանք,
Որ անցնէ մեր վրայով...

Հավատում եմ քեզ, Հայոց հանճար,
Քեզ համար դեռ տոներ կգան,
Դեռ Վարուժաններ կգան աշխարհ,
Միամանթներ կգան:

Նույն համարում «Սփիւռք»-ի խմբագիր Սիմոն Սիմոնյանը Սահյանի այցի ու հոբելյանի առթիվ ծավալուն առաջնորդական է ստորագրում՝ «Համո Սահեան. Մարդ, կոմունիստ, հայ բանաստեղծ, ճշմարտության զինվոր» խորագրով: Ներկայացնում ենք այդ անդրադարձն ամբողջությամբ.

«Ողջոյն հայրենի բանաստեղծ ՀԱՄՈՅ ՍԱՀԵԱՆԻՆ, որուն յոբելեանը տօնուցեալ Լիբանանի հայութեան մէջ, 3 Մայիսին, 1974:

Ողջոյն Չանգեզուրէն ծագած Հայոց բանաստեղծին, որ իր հետ կը բերէ պատմական Սիւնիքի հպարտութիւնն ու ինքնիշխանութիւնը եւ անոր Գեազբել լեռնագագաթի 3800 մետր բարձրութիւնը:

Ողջոյն բանաստեղծին, որ գիտցաւ իր քերթուածներուն մէջ յաճախ աղաղակել թէ ինք «ամենից առաջ» մարդ է, կոմունիստ է, բանաստեղծ է եւ ճշմարտութեան զինուորն է անկեղծ:

Ողջոյն քերթողին եւ քաղաքացիին, որուն հոգին գերծ ու անաղարտ մնաց մարդու և ժամանակներու մեղքերէն, որոնք ծակտուէն բեռնաւորեցին ուրիշները, կամայ թէ սկամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ:

Ապա մեր սրտագին ողջոյնը մասնատեմք. ինչպէս մեր Դիւցազանավէպի «ողորմիները» և գանտնք ուղղենք Չանգեզուրի Գեազբել լեռան արժանաւոր գաւկիս:

ՈՂՋՈՅՆ ՄԱՐԴՈՒՆ – Իր քերթուածներուն մէջ Համոյ Սահեան յաճախ կը յիշէ եւ կը յիշեցնէ թէ ինք մարդ է, ոչ անշուշտ երկրագունդի երեք միլիառ ութ հարիւր յիսուն միլիոն մարդերէն ո՛րէն մէկը, այլ՝ իր բառերով՝ «Ամենից առաջ մարդ եմ աշխարհում», «աշխարհում ընտրած իմ ճանապարհով», «իմ

խոովներով ու խղճմտանքով», «Ես իմ իշխանն եմ, իմ զլխի տերը», «Հասկացէք էլի՛, ի՛նչ արած, մարդ եմ»...

Մարդ՝ կոչումով, գիտակցութեամբ, «խղճմտանքով», «ընտրած ճանապարհով», իբրև «հակառակորդը ինչ կայ աշխարհում մարդուն հակառակ», ընդունելով միաժամանակ որ «ինչ-որ չափով եւ ինչ-որ տեղ դեռ թիապարտ եմ»...

Մարդ, այսինքն՝ ազնիւ, որակաւոր եւ անկեղծութեամբ «ոսկեղծ»...

ՈՂՋՈՅՆ ԿՈՍՏՈՒՆՍՏԻՆ, որ հաւատաց աշխարհի եւ մարդուն դարաւոր կեղտերէն մաքրագործումին՝ փշրումովը անարդարութեան ժանգոտած կապանքներուն, առանց սպասելու որ արդարութեան համար բարձրացող Կայծակէ Թուրը գործէ անարդարութիւն... Ողջոյն իր հաւատքին, «աշխարհում իր ընտրած ճանապարհին», մաղթելով իրեն պէս որ «պատուաւանդանները թեթեւեւան, թեթեւեւան նամ մեր բեռները»՝ կրկին գտնելով «դժուար գտած եւ հեշտ կորցրած մեր ինքնութիւնը»...

ՈՂՋՈՅՆ ՄԱՆԱԿԱՆԴ ՀԱՅՈՒՆ, Սիւնեաց աշխարհի, Նորօրեայ Չանգեզուրի գաւկիս, որ այնքան սիրեց հայրենի քարափները, «Նայիրեան դալար բարդիները», «Որոտանի եզերքին», սարալանջերը, մայրամուտը, հաւատալով, խորապէս հաւատալով որ «լեռան գագաթին օրն ուշ է մթնում», մինչ այնքան կանխա կը մթնէ «քաղաքներու», Նոյնիսկ Հայաստանի քաղաքներուն մէջ... Սահեան բանաստեղծը սիրահարի սիրով սիրեց Հայաստան աշխարհը, որ «քարերով հարուստ է» եւ որ միայն Երեւան ու Լենինական չէ, այլ՝ լեռ ու արօտավայր, գիւղ ու գիւղացիութիւն, որոնք մեր ժողովուրդի յաւերժութեան ողնասիւնն են: Գերագանց հայրենասիրութեան մըրմունջ են Սահեանի հետեւեալ տողերը.

«Հայաստան, անունդ տալիս,
Ժայռի մէջ մի տուն եմ յիշում:
Մրեռտ մի սար եմ յիշում –
Ճակատին ձիւնի պատառիկ»:

Հայ ժողովուրդի ամենէն անքաղքեանի եւ հողահաւատ բանաստեղծն է Սահեան եւ ստով՝ ամենէն իրաւ, հայրենասեր քերթողներէն մէկը: Հայաստանի հին ու նոր վերքը ունի իր հոգիին մէջ:

ՈՂՋՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՐՇԻՆ, որ ստեղծագործեց արուեստով ու ոգիով, «Էն զլխն» իմաստութեամբ իւրացնելով հայ բանաստեղծութեան ամենէն յուսաւոր ու մնայուն աւանդները՝ տոկուն, անփշրելի ու յաւերժական հայրենասիրութեան «քարափներուն» վրայ:

Ողջոյն մանաւանդ իր յորդութեան ու բեղմնաւորութեան, որով ստեղծագործեց շոայլօրէն՝ հայրենի գարնան գետակներուն պէս: Սահեանի գրիչը օրինուցեալ Վանատրեան բեղմնաւոր



Սիմոն Սիմոնյանի ստեղծագործական հարուստ կենսաշրջանն ընդգրկում է 1960-1970-ական թվականները: Եւ պատկանում է սփյուռքահայ գրական այն սերունդին, որին սփյուռքահայ գրականության վերլուծաբան Մ.Թեղուդեյանը բնորոշում է որպէս «Անմիջական սերունդ»:



րուբեամբ:

Գիտցաւ Յայոց բանաստեղծութան տաճարին բարդ աստիճաններէն քայլ առ քայլ բարձրանալ, քրմական ծանրութեամբ, իր քերթողական մուտքը առանց ծանուցելու կոչնակներով, ծնծղաներով եւ հրթիռներով: Գիւղացիական անշուք մուտքով ոտք կոխեց առաջին աստիճանին՝ տասներորդին վրայ դառնալու համար բոլոր ու քրմական սրբազանութիւնը:

Կ'ողջունենք իր յորդորօրները, իր ցարդ գրած ՏԱՍ հատոր քերթողական հունձքը - «Որոտանի եգերքին»(1946), «Առագաստ»(1947), «Սլացքի մէջ»(1950) «Ծիածանը տափաստանում»(1953), «Բարձունքի վրայ»(1955), «Նայիրեան դայար բարդի»(1958), «Յայաստանը երգերի մէջ»(1962), «Սայրամուտից առաջ»(1964), «Զարափների երգը» (1968), յատկապէս «Սեզամ, բացուիր»(1972) եւ այլն, որոնց հակքերէն անպայման պիտի հանուին իյունեակ մը «ադամանդներ»՝ հայ բանաստեղծութեան յաւերժական գանձարանին մէջ դրուելու համար Վարուժաններու, Սիւսաններու, Մեծարեւոյններու եւ Թէթեաններու կողքին, որոնց անունները միմուռն են Սահեան բանաստեղծին:

Ի վերջոյ մեծ ու մեծագոյն ողջոյն **ԸՇՏԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՒՈՐԻՆ:** Սահեանին են այս բառերը. «Իմ երգերի մէջ խօսքերն են հիւսուսմ եւ ՃԾՄԱՐՏՈՒԹԵԱՆ, Եւ դրա համար կուրծքս չեմ ծեծում, Որ ինձ հաւատան: Եւ ՃԾՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐՆ ԵՄ ԱՆԿԵՂԾ»:

Ողջոյն «ճշմարտութեան գիտուոր» բանաստեղծին, որ իր գրածներուն համար կրցաւ իր «կուրծքը չծեծել», հա-



կանակ անոր որ իր կեանքին առաջին եւ մեծ մասը ապրեցաւ երբ պատուանդանները թերթեւացած չէին, «սպառնալիքի եւ ահի վթին ամպերը դեռ անցած չէին» եւ «անմեղութիւնը գնդակից չէր ելած»...

Սահեան իբրեւ «ճշմարտութեան գիտուոր» կեցաւ արդարին, յաւերժականին, հայրենիքին ու հայրենասիրութեան եւ մանաւանդ Գեղեցիկին կողքին, կռնակ դարձնելով յոռի բարբերուն, փառքին ու կողմնակալութեան՝ մեր կեանքին ու գրականութեան մէջ:

Ողջոյն սիրելի Յամո Սահեանին, իր վաթսուամեակի սեմին, թող այն օլլայ Նայիրեան դայար բարդի, Լիբանանի Սայրիներուն յաւերժականութեամբ:

Ս.Ս.Ս.

Յամո Սահեանը Սիմոնյան գրողին անձնապէս ճանաչել է հենց Բեյրութում, խորապէս հիացել ու տպավորվել նրա հանրագիտակ կերպարով, վայելել առաջին ընթերցումի հրճվալքը: Սիմոնյանի ընկերակցությամբ Սահեանը շրջել է Լիբանանի պատմաճակատաբանի վայրերում, շփվել լիբանանահայ համայնքի հետ, մասնակցել տարբեր ստեղծագործական հանդիպումների: Ս.Գրիգորյանն իր «Բազմատաղանդ երախտավորը» գրքում հրապարակել է մի բացառիկ լուսանկար Սահեանի՝ Բաալբեյի պատմական հուշահամալիր

այցելությունից. լուսանկարում Սիմոն Սիմոնյանն է, Յամո Սահեանը, Սիմոնյանի որդին՝ Սասուն Սիմոնյանը եւ գրող երվանդ Պարսումյանը: Գրական սրտախոս զրոյցներով հագեցած բեյրութային երեկոների, Սիմոնյանի ու Սահեանի մարդկային ջերմ շփումների մասին է վկայում «Սփիւռք»-ի 1974 թվականի հունիսի 2-ի համարում «Խմբագրի օրատետրերն» խորագրի ներքո Սիմոնյանի հրապարակած փոքրիկ հուշակնարկը՝ վերնագրած «Յամո Սահեանին հետ. «Սի շան պատմութիւնը»:

«- Կեանքումս մի անգամ միայն արձակ եմ գրել, - ըսաւ հայրենի բանաստեղծ Յամոյ Սահեան եւ յառաջացաւ դէպի երկու քայլ անդին գտնուող պատշգամբը՝ պանդոկի հինգերորդ յարկի իր սենեակին:

Իրիկանմուտ էր. ԱՆԿԵ՛՛ պատշգամբէն ցոյց տալով շէնքերու միջեւ գոյացած բացը, ըսաւ.

- Այսպիսի մի բաց շրջափակում, շէնքերի միջեւ, ապրում էր մի գեղեցիկ շուն, յարթ հասակով, առատ ստեւներով, բոլոր իր նմաններից շատ գեղեցիկ մի շուն: Սիրում էինք նրան. բոլոր պատշգամբներից կերակուր էինք պահում վար:

Մի օր, այսպիսի մի պահին, լսեցի գոռում-գոչում, անհամար շների ահեղ հաչոց. հարկուր-





Լոր մանր-մուկը շներ յարձակ-
տում են մեր թաղի գեղեցիկ շան
վրայ. որտեղից հավաքուել են,
իկչպէս համաձայնել են իրար հետ,
ն՞վ համաձայնեցրել է այս կեղտոտ շնե-
րին՝ այսպիսի մի միացյալ յարձակում
գործելու գեղեցիկ ու մի հատիկ շան
վրայ: Չայրացած էի. հէնց Նոյն թուրքին
ճաշասեղանից վերցրի պահածոյ մսի
տուփը, զցեցի վար՝ շների ոհմակի վրայ
եւ ապա իջայ վար: Ի՞նչ տեսնեմ... Մեր
թաղի գեղեցիկ շունը փռուել էր գետին,
արիւնլուայ... Մի քանի թուրք են՝ փա-
կեց աչքերը... Արդէն փախել էին նրան
զզզող մանր-մուկը, փողոցի կեղտոտ
շները... Գզզել, յօշոտել, սպանել էին
նրան, որովհետեւ իրենց նման չէր մեր
շունը, տարբեր էր իրենցից, գեղեցիկ էր,
շատ գեղեցիկ: Համոզուեցի, որ իրար
նման եղողները, այսինքն՝ միջակու-
թիւնները չեն հանդուրժի գեղեցիկին...

Էհ, սիրելիս,-վերջացուց իր խօսքը
Համո Սահեանը,- Էդպէս է նաեւ մեր
գրականութեան մէջ. բազում միջակու-
թիւններ չեն հանդուրժում սակաւ տա-
ղանդաւորներին: Բայց ամենից գար-
մանային այն է, որ ինչպէս սերտորեն
իրար հետ զինակցում են միջակութիւն-
ները ընդդէմ մենակ մնացած տաղան-
դաւորին, «գեղեցիկին»... Կենդանիների
մէջ միմիայն մարդը եւ նրա հետ ապ-
րող եւ նրա բնաւորութիւններին ընտե-
լացած շունն է, որ սպանում են իրենց
նմաններին. միւս անատունները, առիւ-
ծը, օձը, վագրը են այլն, չեն սպանում
իրենց նմաններին. կռոււմ են, բայց երբ
տապալում են եւ յաղթում. դէն են զցում
յաղթողոյին եւ հեռանում...

Համոյ Սահեան այս պատմութիւնը
ըրաւ գիրքի մը առթիվ:

Առիթ պիտի ունենանք իր շան
պատմութիւնը կրկնելու:

Իր արձակ այդ էջը փնտռեցինք,
բայց չգտանք:

Երանի՛ թէ մէկը գտներ եւ մեզի
դրկեր:

Կուզենք արտատպիլ գայն իր հա-
րազատութեամբը:

Ս.Ս.՝

Իհարկե, Սահյանը նման բովան-
դակութեամբ արձակ գործ չունի, և այս
պատմության «միտք բանիով» պետք է
հիշել միայն նրա «Շները» խորհմաստ
բանաստեղծությունը՝ «ուրիշ տեսա-
կի շների մասին»: Այստեղ Սիմոնյանը
հետաքրքրական վկայություն ունի,
որ իրենց բեյրության հանդիպման ու
գրուցախոսության ընթացքում Սահյա-
նը շան պատմության անդադարձել է
«մի գրքի առիթով»: «Սփիւռք» շաբա-
թաթերթի նույն թվականի թիվ 26-ի մի
ուշագրավ հրատարակումը՝ Սիմոնյա-
նին հասցեագրած Սահյանի նամակը,
կարծես բացապարզում է, թե որ գրքի
մասին է խոսքը: Բեյրութում գտնվելու

օրերին Սիմոնյանը Սահյանին է նվիրում
իր «Լեռ և ճակատագիր» հատընտիրը,
որը հայտնություն էր Սահյանի համար:
Սահյանը տեղեկանում է նաև Սիմոնյան
- «Սփիւռք» - Խորհրդային Հայաստան
ոչ այնքան հարթ հարաբերությունների
մասին, որոնք հատկապես սրվել էին
«Սփիւռք»-ում 1960-ականներից Սի-
մոնյանի բարձրացրած ազգային հար-
ցերի պատճառով: Նամակը թվագր-
ված է 22.05.1974թ., որ միաժամանակ
Սահյանի՝ Բեյրութից հայրենիք վերա-
դառնալու օրն էր: Վերադարձից առաջ
Համո Սահյանը նամակով արտահայտել
է Սիմոնյանի նորահայտ ստեղծագոր-
ծությանն առնչվելու գրական վայելքից
ելքավորված գեղեցիկ հույզերը: Նա-
մակը Սիմոնյանի գրական տաղանդի
ինքնահատուկ գնահատություն է: Բա-
նաստեղծը Սիմոնյանին տեսնում է հայ
դասական արձակագրության Բակունց,
Համաստեղ, Շահնուր ծիրում և ցավ ի
սիրտ ափսոսում, որ նոր է ծանոթանում
նրա «հմայիչ ու մեծ» ստեղծագործու-
թյանը: Սահյանը տողատակով նաև խոր
մտահոգություն է արտահայտում Սիմոն
Սիմոնյանի անվան ու գործի մասին
հայրենի ընթերցողի անտեղյակության,
մասամբ նաև հանիրավի ու միտումնա-
վոր լռության առնչությամբ: Ահա այդ
բացառիկ նամակն ամբողջությամբ.

«Հարգելի ընկեր Սիմոնյան,
Կարողացի «Լեռ և ճակատագիր»
ձեր գիրքը:

Ցավում եմ, որ նոր եմ ծանոթանում
Ձեր հիմնադիր արվեստին, նոր եմ ոտք
դնում ձեր ստեղծած հարուստ և ինք-
նադրոշմ աշխարհի շեմքին...

Բայց և երջանիկ եմ առաջին ընթեր-
ցումի ուրախությամբ ու իրձվանքով:

Իսկապես, ինչպէ՞ս է եղել, որ եղել
է: Ինչպէ՞ս է եղել, որ չեմ ճանաչել իմ
ժամանակակից ու տարեկից գրողի այս-
քան հմայիչ ու մեծ ստեղծագործությու-
նը: Արդարանալու հիմքեր կան, բայց,
միևնույն է, հանցավոր եմ:

Ոչ մի շինծու և մտացածին բան չկա
Ձեր արվեստում: Ամեն ինչ բնական է,
տեսած. լսած, շրջափած, զգացած, ապ-
րած ու ապրեցնող:

Հոգուս պարտքն եմ համարում
մոտ ժամանակներս ժամանակ գտնել
և հանգամանորեն գրել Ձեր գրքի մա-
սին, ցույց տալ այն նորը, որ եզակիրեն
Ձերն է, հնարավորին չափով ցույց տալ
Ձեր արվեստի տեղն ու նշանակու-
թյունը մեր մշակույթի մեջ: Դժբախտա-
բար, մենք աշխարհամեջ հանելու ար-
ձակ չենք ունեցել: Բակունց, Շահնուր,
Համաստեղ - սրանցով է սկսվում մեր
արձակը: Լորերը՝ Սաթևույան, Խա-
լափյան, Մեքոնյան, ծնվել են դրանցից
և լայն հեռանկարներ են խոստանում:

Ձեր տեղը առաջին երեքի շար-
քում է: Քսաներորդ դարի արձակ է

Ձեր արձակը, ըստ եուզյան, ակունքից
կտրված, բայց ակունքներով ապրող
մարդիկ են Ձեր հերոսները: Մարդ-
կային բարոյականության նորմաները
պահպանող մարդիկ: Քսաներորդ դարի
մարդկանց ճակատագրին ավելանում
է նաև մեր ազգային ողբերգությունը,
և մարդիկ ավելի են կոնկրետանում:
Գիրքն ընդհանրապես ինձ շատ դուր
եկավ, պատմվածքները գրված են
առանց ճիգի, հայկական համ ու հոտով,
բարբառի վարպետ օգտագործումով:

Դուք գրել եք պատմվածքներ, որոնք
կարող են զարդերը կազմել ամեն մի
ազգային գրականության: Չնայած հա-
մեմատություններ չեմ սիրում, կարդա-
լով ձեր «Երեք օրակարգ»-ը հիշեցի Չա-
րենցի «Երկիր Լահրի»-ն և Բակունցի
«Կյորես»-ը:

«Երեք օրակարգ»-ը առանց զեղչ ու
զիջումի կանգնած է մեր գրականության
գլուխգործոցների կողքին:

Տասնամյակներ առաջ իրենց բնօր-
րանից կտրված մարդիկ դեռ ապրում
են այդ բնօրրանով և դեռ հող են կի-
սում: Աշխարհից կտրված խեղճեր: Հե-
ղինակի թեթև ժպիտի մեջ ես տեսնում
եմ այդ մարդկանց ճակատագրի համար
ճվվող սրտի ողբերգությունը:

Այս պատմվածքը լիովին ապահո-
վում է հեղինակի անսահողությունը, և
անհնար է, որ երբևէ մեր գրականու-
թյունը չհպարտանա նրանով:

Բարոյականության պատրիարքի
անզուգական կերպար է բեռնակիր
Օհանը համանուն պատմվածքում:

Կան ուրիշ դասական պատմվածք-
ներ էլ: Ավաղ, ժամանակ չունեն նրանց
մասին խոսելու:

Կգրեմ հանգամանորեն, առ այժմ
համբուրում եմ արվեստագետի վաս-
տակած ճակատող» :

Ձեր՝ Համո Սահյանի՞

22.5.74թ. ԲԵՅՈՒԹ

Սահյանի նամակը հրատարակելով
«Սփիւռք»-ում Սիմոնյանը անչափ խո-
րիմաստ ու հուզիչ պատասխան խոսք է
գրում՝ ենթատեքստով դարձյալ ակնար-
կելով «շան պատմության» դառնադի
իրողությունը, որ նաև իր ստեղծագոր-
ծական ճանապարհին էր վիճակված.

«Սիրելի Սահեան,
Հան պատմութենեդ ետք՝ այս գիրը:
Եղաւ՝ երկու:

Բայց ինչու՞ այս գիրը, սիրելի Սա-
հեան, այն ալ՝ մեկնումիդ առատորը: Ին-
չու՞ այս բացականչութիւնը. «Իսկապէս,
ինչպէս է եղել, որ եղել է»:

Ես ալ քեզի պէս չեմ գիտեր թէ «ինչ-
պէս է եղել, որ եղել է»:

Բայց՝ «եղել է»: Փաստ է: Կ'երեկի թէ
կ'ըլլայ եւ եղած են նման բաներ:

Երկուքս ալ բացատրութիւն չու-
նինք, ունենալով հանդերձ:

Թերեւս միակ բացատրու-
թիւնը կրնայ տալ քու «շան
պատմութիւն»-ը, զոր պատմե-
ցիր երեկոյ մը՝ միտքդ երկար
չարջոկելէ ետք, կամ աւելի ճիշ-
տը՝ մտքիդ չարջոկումը մեղմելու
համար:

Բոլոր շուները, նոյն տիպի,
նոյն հասակի, չեն հանդուրժեր
ներկայութիւնը, գոյութիւնը
իրենցմէ տարբեր շան մը, գեղե-
ցիկ ու մեծ շան մը, կամ պէտք
է ըլլան իրենց նման, կամ պէտք
է յօշոտուին իրենցմէ տարբեր
եղողները:

Միջակութեան ստեղծած ու
պարտադրած դժխտ օրէնքն է:

Շուները կը յօշոտեն իրենց-
մէ տարբեր եղողները, իսկ գրա-
կանութեան միջակութիւնները՝
ԼՈՒՌԹԵԱՄԲ կը շրջապատեն
ստղանդաւորները:

«Իսկական, ինչպէս է եղել,
որ եղել է...»

Բայց ես երջանիկ եմ եղա-
ծին համար: Երջանիկ եմ, որ
տարբեր եմ լուրջեան դարբին-
ներէն (այս ասիւրու գրական
թերթեր, գրականագետներ,
գրողներ):

Ու հիմա կը փորձես փշրել
այդ լուրջիւնը, այսինքն միջա-
կութեանց փոխակիս կադկան-
ծը յոյժելու:

Պիտի լռե՞ն: Միջակութիւն-
ները զինակցիլ գիտեն, տա-
ղանդատրները՝ ոչ: Այս վկայու-
թեամբդ, պիտի հակադրուիս
բանգէտ «բազմութեան» մը
դեմ, պիտի անջատուիս անոնց-
մէ եւ ուղիղ կենաս Օշականի
կողքին, որ 1947 թուին նոյնը
վկայեց առաջին պատմաւած-
ներու առթիւ: Օշականեն
մինչեւ Յամոյ Սահեան կամուրջ
մը կը մղուի, որուն տակէն թող
հոսին «լուրջեան ծայրերը»...

Մէկը սակայն իր հոգիին մէջ
քեզ բարձր պիտի դասէ:

Այդ «մէկը», գիտցիր, այս
պարագային ես չեմ, այլ գալիքն
է, ապագան:

Դուն մեծցար՝ գալիքի մէջ:

Սիրելի Յամոյ, դուն «մի քիչ
մարդ» չես, ինչպէս յաճախ կը
յիշեցնես քերթուածներուդ մէջ,
այլ լիակատար, արժանաւոր ու
արժանավայել մարդ, որովհե-
տեւ գիտես վկայել խիղճովդ եւ
ծառայել միջակութեանց դեմ:

Երախտապարտ եմ քե-
զի, որովհետեւ գիրդ գիտ մղեց
վերադառնալ ստեղծագործու-
թիւններու, որոնցմէ ընդհա-
տուած էի:

Կը սպասեմ խոստումիդ:

«Յոգուս պարտքն եմ համա-
րում մոտ ժամանակներս ժա-
մանակ գտնել և հանգամանու-
րեն գրել ձեր գրքի մասին, ցոյց
տալ այն նորը, որ եզակիորեն
ձերն է...»:

Մեր ժողովուրդի փոքրիկ-
ները շատ փոքր են, եւ մեծերը՝
շատ մեծ:

Յամբոյով՝

ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ

Ցավոք, Յամո Սահյանն
այլևս չանդրադարձավ Սիմոն-
յանի ստեղծագործությանը:
Ամեն դէպքում մեզ որևէ անդ-
րադարձ միևնչև այսօր հայտնի
չէ: Բացառված չէ, որ նրանց
նամակագրությունը շարունակ-
վել է, և Սիմոնյանի արխիվում
պահպանված կոյութեր լինեն:

Անշուշտ, դրանք կամբողջաց-
նեն այս գեղեցիկ ու նորա-
հայտ գրական բարեկամու-
թյան պատմությունը: Ցավոք,
այդ տարիներին խորհրդային
գաղափարախոսության կողմ-
ները մեծապես խոչընդոտում
էին «Սփիւռք»-ի ազատախոհ
խմբագրի՝ հայրենի գրական
միջավայրի հետ առողջ ու
լիարյուն շփմանը: Անկախ քա-
ղաքական հալածանքներից,
«գրական միջակայատուրություն»

(Յակոբ Օշական) հաղթարշա-
վից՝ Սիմոնյանը միշտ մնաց
հայրենիքի ու իր գրչակից ըն-
կերների կողքին: «Ես քու գա-
լակդ եմ հարագատ՝ ինձի ապ-
տակ զարնես թէ ծափ, վասնզի
ափսոս, շմտ ափսոս, նոյնն են
քու ծափդ ու ապտակդ: Երե-
տուն տարի, մինչեւ երէկ, ինձի
ապտակ զարկիր մէկ ափովդ,
երբ ես Ղարաբաղ ու Նախի-
ջեւան պահանջեցի, Արեւմ-
տեան Յայաստան, Վան ու Մուշ
պահանջեցի, իսկ հիմա երկու
ափերովդ ծափ կը զարկես երբ
ես զանոնք չեմ պահանջեր, եւ
կ'աղօթեմ առ Տէր, որ առ այժմ
եղածը պահէ: Ապտակդ, ես
վրջեցի իմ հորս ծիռն պէս, իսկ
հիմա կուց-կուց արիւն կու լամ,
երբ ծափ կը զարնես ինձի, այն-
քան ուժգին ու բուն:

Ծափդ ու ապտակդ երանի՜
թէ տարբեր, շատ տարբեր ըլ-
լային:

Բայց դարձեալ, միշտ ու յա-
լիտեանս յալիտենից, յարգանք
քեզ, հայ ժողովուրդ» (Սիմոն
Սիմոնյան):



23 ՅՈՒՆԻՍԻ 1974, ԺՂ. ՑԱՐԻ, ԻՐԻ 26, ՁԵՒԻԷ ԼԱՍԿ՝ 60 Լ. Դ.

Յարգելի ընկեր Սիմոնեան,

Կարգացի «Լեռ եւ Ճակատագիր» Ձեր գիրքը: Ցա-
ուով եմ, որ նոր եմ ծանօթանում Ձեր հիանալի արուես-
տին, նոր եմ ուսմ գնում Ձեր ստեղծած հարուստ եւ ինք-
նատրուաբար աշխարհի շեմֆին... Բայց ես երջանիկ եմ առա-
ջին ընթերցումի ուրախութեամբ ու երևուստով:

Իսկապէս, ինչպէ՞ս է եղել, որ եղել է: Ինչպէ՞ս է ե-
ղել, որ չեմ նամաչել իմ ժամանակակից եւ տարեկից գրողի
այսքան հմայիչ ու մեծ ստեղծագործութեանը: Արդարա-
նայու հիմքեր կան, բայց, միևնույն է, յանգաւոր եմ:

Ոչ մի շինծու եւ մտացածին բան չկայ Ձեր արուես-
տում: Ամէն ինչ բնական է, տեսնել, լսած, շօշափած,
զգացած, ապրած եւ ապրեցնող:

Հոգուս պարտքն եմ համարում մտա ժամանակներս
ժամանակ գտնել եւ հանգամանօրէն գրել Ձեր գրքի մա-
սին, ցոյց տալ այն նորը, որ եզակիորեն Ձերն է, հնարա-
տրին չափով ցոյց տալ Ձեր արուեստի տեղն ու նշանակու-
թիւնը մեր մշակոյթի մէջ: Գծքայտարար մենք աշխար-
համէջ հանելու արձակ չենք ունեցել: Բակունց, Շահնուր,
Լամաստեղ — սրանով է սկսում մեր արձակը: Կորեթի՝
Մարտիտեան, Խաչատրեան, Միլեհեան ծնունդ են դրանցից
եւ լայն հեռանկարներ են յոստանում: Տեսնեմք:

Ձեր տեղը առաջին երեքի շարքում է: Բաճանքորդ
դարի արձակ է Ձեր արձակը: Ըստ էութեան ահունգից
կարուած եւ ակունգիցնով ապրող մարդիկ են Ձեր հերոս-
ները: Մարդկային բարոյակամութեան նորմաները պան-
պանող մարդիկ: Բաճանքորդ դարի մարդկանց նակատա-
գրին աւելանում է նաեւ մեր սագգային ուղեբեգականը, եւ
մարդիկ աւելի են կոնկրետանում: Գիբքն ընդհանրապէս
ինձ շատ դիր եկաւ, պատմութեան գրուած են առանց
նիգի, հայկական համ ու հոտով, բարբառի վարպետ օգ-
տագործումով:

Գուց գրել էք պատմութեան, որոնք կարող են
զարգեքը կազմել ամէն մի ազգային գրականութեան:
Չնայած համեմատութիւններ չեմ սիրում, կարգալով Ձեր
«Երեք օրակարգեր», իշխեցի Ձարեցի «Երկիր Նայիրի»
եւ Բակունցի «Կէօրէս»:

«Երեք օրակարգեր» առանց գեղջ ու զիջումի կանգ-
նած է մեր գրականութեան երկու գլուխ-գործողների կող-
քին: Տանամեակներ առաջ իրենց բնօրրանից կարուած
մարդիկ — փոսպաններ, ջաղագպաններ, մշակներ դեռ
ապրում են այդ բնօրրանով եւ դեռ հող են կիսում: Աշ-
խարհից կարուած խեղճեր: Հեղինակի քեք-եւ ժպիտի մէջ
ես տեսնում եմ այդ մարդկանց նակատագրի համար նրմ-
լուող սրտի ողբերգութիւնը:

Այս պատմութեան իրավիճակը պահանջում է հեղինակի
անմահութիւնը եւ անհնար է, որ երբեք մեր գրականու-
թիւնը չհպարտանայ նրանով:

Բարոյակամութեան պատրիարքի անգուզական կեր-
պար է Բենեակիր Օհանը անմահում պատմութեանում...
Կան ուրիշ դասական պատմութեան գրողներ էլ: Աւաղ,
ժամանակ չունեն նրանց մասին յօսելու:

Կը գրեմ հանգամանօրէն. առայժմ համարում եմ
արուեստագէտի վաստակած նակատայ:

Ձեր՝ ԼԱՄՈՆ ՍԱՀԵԱՆ

22.5.1974, Բեյրութ

Սիրելի Սահեան,

Շան պատմութեանը հարց՝ այս գիրքը եղա՞ւ երկու:

Բայց ինչո՞ւ, այս գիրքը, սիրելի Սահեան, արեւ ալ՝ մեկնումիդ առուստը:
Ինչո՞ւ այս բացակայութիւնը, ժակապէս, ինչպէ՞ս է եղել, որ եղել է:
Ես ալ թեզի պէս չեմ գիտեր թէ զինչպէ՞ս է եղել, որ եղել է:

Բայց՝ չեզե՛լ է: Փաստ է: Կ'երեւի թէ կ'ըլլայ եւ եղած են նման բաներ:
Երկուսու այլ բացատրութիւն չունենք, սենեակով չանդերք:

Թերեւս միակ բացատրութիւնը կրնայ տալ քու շան պատմութեանը, զոր
պատմեցիր երեկոյ մը՝ միտքդ երկար չարջոկելէ ետք, կամ աւելի ճիշդը՝
մտքիդ չարջոկումը մեղմելու համար:

Բոլոր շուները, նոյն տիպի, նոյն հասակի, չեն հանդուրժեր ներկայու-
թիւնը կրնայ տալ քու «շան պատմութիւն»-ը, զոր պատմեցիր երեկոյ մը՝

ԻՆՔՆ ԱՊՐՈՒՄ ԷՐ ԱՐՑՄԱԽՈՎ, ԻՍԿ ԱՐՑՄԱԽՅԻՆ ԻՐԵՆ ԳՈՐԱՑՄԾ ԷՐ ԶԳՈՒՄ ՍԱՀՅԱՆՈՎ

Մի Սահյան կա աշխարհում

ՎԱՐՂԱՆ ՀԱՎՈՒՅԱԼ

Բանաստեղծ, դրամատուրգ, բանասիրական գիտությունների դոկտոր



Դիմել Սահյանին, նշանակում է ճշմարիտ բանաստեղծությանն անդրադառնալ Նորից ու վերստին: Իսկ մենք որքան մոտենում ենք բանաստեղծությանը (բայց մոտենում ենք), այնքան հեռու ենք մնում նրանից: Բանաստեղծությանը ես ավելի մոտիկ եմ եղել այն ժամանակ, երբ նրանից անհամեմատ հեռու էի գտնվում, երբ դեռ թողնվածների մեջ էի, երբ դեռ չէի ծնվել, բայց հայրս ու մայրս արդեն սիրում էին իրար: Ուզում եմ ասել՝ բանաստեղծության մեջ նախնականության մասն է լինում խառը՝ «Էն գլխից»: Միշտ էլ այս համոզմունքին եմ հանգում, երբ Սահյան եմ կարդում: Իսկական բանաստեղծն իր ամբողջ կյանքն ապրում է այնպես, ասես ձեռքով ընկած է: Աստծո ձեռքն էր միշտ Սահյանի ունկերում: Գրում, չէ, Համո Սահյանն արարում էր Աստծո ձայնին ունկնդիր: Ահա թե ինչու նրա բառով ընթացավորվում է տիեզերական շարժումը, հստակվում լույսը.

*Դու սարերի մեջ ու ձորերի մեջ,
Ամենանորը դու նորերի մեջ
Ու խոհերի մեջ ամենահինը,
Դու իմը, իմը, ամենախմբը:
Ես մի բուռ մրկած մամուռը քարիդ
Եվ հետին հյուլեն կենսական ծառիդ,
Ես քո բողբոջը, ծիլը, կոկոնը,
Ես քոնը, քոնը, ամենաքոնը:*

...Տերյանից միշտ անբաժան եմ: Նարեկացին, Քուչակը, Չարենցը, Իսահակյանն ու Շիրազը, Սևակը իմ սիրած պոետներն են: Եվ, ահա, ոտքով-գլխով, ինչպես ասում են, ինձ կորցրի Սահյանի մեջ, տարվեցի, հափշտակվեցի ու Նորից ինձ վերագտա: Բաբվի ուսանողական իմ հանրակացարանի սենյակում երեք օր փակված մնացի՝ սոված-ծարավ, ըմբռնված «Մայրամուտից առաջ» գիրքը: Այն միանգամից փոխեց իմ ընկալումներն ու մոտեցումները, գեղագիտական ըմբռնումներս հստակվեցին՝ ընդմիշտ փոխելով շատ բաներ



իմ հայացքների մեջ: Ոչ ոք տեսել չէր կարող, որ Սահյանը ձեռքը դրել է իմ ուսին ու ամենամտերիմի իրավունքով կանգնել կողքիս՝ ինձ Նորից տանելով մեր Մոռվի ու Մեծ սարի լանջերը, Մեր Երածուն տունն ու Թառնակի աղբյուրը...
*Երգիս տունը տառիս տան պես
Հայկական է ու հին,
Ու կապված է սիրտս շան պես
Նրա ամեն քարին:*

Բանաստեղծության Նոր կերպար: Նոր պոետ, այո, սակայն՝ մեր սարերից եկած, Նույնիսկ՝ տրեխներ հագած երբևէ: Դրան ավելանում էր և այն, որ Բաբվի հայկական թերթում ու ռադիոյում մարդիկ են գտնվում, որոնք, իրենց պատմածով, աշխատել են Սահյանի հետ հենց այս «սև քաղաքում»: Սահյանի յուրաքանչյուր տող, յուրաքանչյուր բանաստեղծություն ձուլվում է իմ արյանը, դառնում նրա բաղադրատարրերի ամենակարևոր մասը, իմ երկայնակ երկայնակ: Ինստիտուտի ուսանողներս՝ Վաղարշակ Գաբրիելյան, Յովիկ Պետ-

րոսյան, Վլադիմիր Ավագյան, Յաշա Բաբայան, Հայկ Ազատյան, Միքայել Խաչիյան և ուրիշներ, հավաքվում ենք հայկական ռադիոյում աշխատող մի անզուգական հայի ու մտավորականի՝ Չարմիկ Դանիելյանի շուրջ և ստեղծում գրական խմբակ: Խմբակը կոչվում է Հոփիկի բանաստեղծություններից մեկի մեջ տեղ գտած պատկերով. «Ծիածանը կաթիլի մեջ»: Ամեն կիրակի հավաքվում էինք մեր ավագ ընկերոջ՝ Վաղոյի մեկ սենյականոց բնակարան-խրճիթում ու ոչ այնքան ճոխ, հաճախ Նույնիսկ խեղճության աստիճանի աղբատ սեղանի շուրջ և բանաստեղծություններ ընթերցում, քննարկումներ անցկացնում, Սևակ և Սահյան վերլուծում: Այս ամենին ընթացք էր տալիս անկրկնելի Չարմիկը, որը մեր տողերի մեջ պոետական մի թարմ մտքի, Նոր պատկերի հանդիպելիս ուրախությունից ու բավականությունից վեր էր թռչում, իր խորին հրճվածքը հաղորդում բոլորիս, ոգևորվում ու ոգևորում: Նույնքան անհանդուրժող էր նաև տափակ, ծամածմված ու մաշված պատկերի, տողի հանդեպ: Եվ լավի օրինակը մշտապես բերում էր Սևակից կամ Սահյանից: Ինչ երանական օրեր էին: Շատ ժամանակ չանցած, մեր գրական խմբակը ներկայացվեց «Ավանգարդ» թերթում՝ շնորհիվ Չարմիկի ու Երևանում գտնվող մեր ընկերոջ՝ փիլիսոփայության ասպարեզում Նոր ոտք դրած Ալեքսանդր Մանասյանի ջանքերի: Բոլորիս գործերում նկատելի էր Սահյանի բարերար շունչն ու ազդեցությունը: Իսկ այդ տարիներին Բաբու ժամանած Սևակի տված գնահատականը Սահյանի պոետիայի մասին մեզ ավելի էր գոտեպնդել մեր համոզմունքի ու հավատքի մեջ.

Սահյանը անկրկնելի է, Նորարա-

րության մեջ՝ անմոռանալի պատմություններ պահ:

Տարիներ անցան: Աշխատանքի անցա Ստեփանակերտում: Արդեն մի քանի գրքեր էի հրատարակել, բայց և այնպես չէի համարձակվում ներկայանալ Սահյանի դատին, նույնիսկ գիրք նվիրելու ուժ չէի գտնում իմ մեջ: Եվ հանկարծ, օրերից մի օր, Բոգդան Չանյանը, որի ազնվությանն ու անմիջականությանը աշխարհում ոչ ոք չի կարող կասկածել, ինձ ասում է, որ Սահյանը բանաստեղծություններս կարդացել ու հավանել է: Ես արմանք-զարմանք դարձած լսում եմ և, մեղքս ինչ թաքցնեմ, մտածում եմ, որ, երևի մի փոքր դրական է արտահայտվել Սահյանը, իսկ Բոգդան Չանյանը, համաձայն իր անչափ բարի բնավորությանը, ուզում է ինձ ուրախացնել գուցե թե՛ գույների փոքր-ինչ հավելումով: Բայց և այնպես, ո՞վ չէր լավ զգա իրեն նման լուրով: Պարզվեց, որ իրանահայ մի խումբ ընթերցողներ խնդրել են նամակով Հայաստանի ռադիոյի սփյուռքահայերի համար հաղորդումներ պատրաստող բաժնին, որպեսզի հաղորդեն Համո Սահյանի և, ոչ ավել, ոչ պակաս, Վարդան Հակոբյանի բանաստեղծություններից: Չանյանն էլ ընտրում է բանաստեղծությունների շարքը և Հրաչուհի Չինանյանի կատարմամբ հաղորդումը եթեր տալիս: Հետո Չանյանն ինձ հեռախոսով պատմում է, որ Սահյանն ու Եմինը շատ են հավանել իմ բանաստեղծությունները, ապա նա հորդորում է գրքերիցս ուղարկել նրանց: Այդպես էլ անում եմ: Դրանից մի քանի ամիս անց մեկնում եմ Երևան: Գրողների միության շենքի չորրորդ հարկում Արտաշես Դահրիյանի աշխատասենյակն է: Դուռը բացում եմ և տեսնելով շախմատ խաղացող Սահյանին և Եմինին, անվստահ քայլերով ներս եմ մտնում: Նկատելով անհամարձակությունս, Եմինը քաջալերում է.

– Արի, Վարդան... Արի:

Ապա նա սեղմելով ձեռքս, ինձ ներկայացնում է Սահյանին.

– Համո, ծանոթացիր, Վարդան Հակոբյանն է, Արցախի գրողների միության ղեկավար են նշանակել:

Սահյանը հարյուր տարվա ծանոթի մեղմ ու հանգիստ մի շարժումով շախմատի դաշտը քիչ հեռացնում է իրենից, սեղմում ձեռքս, ապա գլուխը հակելով շախմատի դաշտի վրա, քթի տակ խոսում.

– Այ մարդ, կարգին բանաստեղծ ես, ինչ գործ ունես գրողների միության ղեկավարի հետ:

Այնուհետև նրանք ցրում են դաշտում տեղակայված քարերը, սկսում հարցուփորձել: Ավելի ակտիվ է Եմինը:

– Ի՞նչ կա Արցախում... Ե՞րբ եք մեզ հրավիրելու Արցախ...

Ինչպես բանաստեղծություններում, այնպես էլ այսօրվա կյանքում արած ամեն մի քայլով ասես ջուր էր խմում իրեն փափագած սրտից: Իմաստուն, վեհ, պարզ ու անհուն, միշտ այսպիսին տեսա բանաստեղծին, որին, խոստովանում եմ, սիրում եմ այն սիրով միայն, որով անբաժան եմ Տերյանից:



Կյանքը ո՞նց է այնտեղ...
Եվ այլև, և այլև:

Մինչև այսօր էլ, իհարկե, շատ եմ ցավում, որ չկարողացա, ոչ իմ մեղքով, մեր պոեզիայի այդ երկու մեծերին հրավիրել Արցախ, հանդիպումներ կազմակերպել: Հետո իմացել եմ, որ Սերո Խանգաղյանի հետ, շատ թռուցիկ կես ժամով, Սահյանը եկել է Ստեփանակերտ ու մեկնել: Իսկ Եմինը այդպես էլ Արցախում չեղավ: Ավելին, անկեղծ լինելու համար ասեմ, որ դրա համար Եմինն ինձից «նեղացած» էր, միշտ մեկ ուրիշ բանաստեղծի անուն էր տալիս, որի հետ մոտ հարաբերությունների մեջ էի, ասում՝ գիտեմ, այդ նա չի թողնում... Բայց այդպես չէր ամենևին: Քանի անգամ պատրաստվել էի կազմակերպել այցը, միշտ, դժբախտաբար, մի բան խանգարում էր, ինքն էլ այն մարդը չէր, որ վեր կենար մի կանչով, մի հրավերով գար: Տարիքն արդեն իրենն անում էր: Ավելի ուշ բախտ ունեցա Եմինի հետ մասնակցել գրողների մոսկովյան համագումարին, մոտիկից շփվել նրա հետ: Այդ օրերից որպես հիշատակ մնացել է մեր նկարը՝ կողք-կողքի կանգնած, գրուցելիս:

Սահյանի բնավորությունը այլ էր: Նա միշտ ինքնամոխի ու լռակյաց էր, անբառ խոսքի մեջ՝ անսահման խորը, հաճախ չասածի մեջ մեծ հումոր ու հեգնանք տեղավորող: Հիշում եմ, գրողների միության շենքի առաջ, ուր կանգնած էինք մի քանի հոգի, հանկարծ երևաց Սահյանը, բարևեց, ուզում էր «ոնց եք, ոնց չեք»-ից հետո գնալ, Երևանում բնակվող մի բանաստեղծուհի, որ Սահյանի «խախալի ծակից ընկած թեփն էր շուկա հանում», մոտեցավ ու թե.

– Ընկեր Սահյան, միշտ ինձ ասում են, որ ես ու դու իրար շատ նման ենք գրում:

Սահյանը նայեց նրա դեմքին այնպես, ասես կողքի ծառին էր նայում ու անխոս, եթե դա անխոսություն էր, հեռացավ՝ մի ուսը նկատելի կախված: Ամբարտախոս «բանաստեղծուհին», որ արագ տպագրվողներից էր, գրեթե միանգամից ընկավ «շոգեբաղնիսի» մեջ ու քաշվեց մի կողմ:


Ես շատ էի երագում մոտիկից շփվել մեծ բանաստեղծի հետ, լսել նրան: Եվ,

ահա, կարծես եկավ ժամը: Լրացել էր Համո Սահյանի ծննդյան 70-ամյակը: Այն ընդհանրապես նշում էին նրա ծննդավայր Լորում ու Սիսիանում: Որքան հիշում եմ, այդ գործում մեծ ավանդ ունեւր և սահյանագետ Հչորս Դավթյանը, որի միջոցով էլ խնդրել-հաղորդել էինք, որ Արցախից և սպասվողություն լինի այնտեղ: Ուրախությանս չափ ու սահման չկար: Ինչ անեինք, ինչպես գնայինք: Որպես Արցախի գրական կազմակերպության ղեկավար, մի քանի ելույթներ էի արդեն պատրաստել, մեքենագրել (մեքենարումների տեղը թողնելով ազատ, քանի որ պիտի արտասանեի), բայց բոլորն էլ թվացին շատ թույլ ու ավելորդ: Որոշեցի խոսել բանավոր: Գրողների միությունում հավաքվեցինք և ընտրվեց պատվիրակության կազմ՝ երեք հոգուց, Հրաչյա Բեգլարյան, Սուրբատ Խանյան, Վարդան Հակոբյան: Վճռեցինք՝ Գորիսով գնալ, Երևանով ու Դազախով գալ:

Ճանապարհիվեցինք գրողների միության «Վոլգայով»: Մեզ Սիսիանում դիմավորեցին հատուկ ուշադրությամբ ու սիրով: Հետո իմացանք, որ դրանում Սահյանի «մատը խառն է»: Պատվիրակությանը գիշերելու տեղ հատկացրին Բռնակոթ ցյուղից անդին, փոքր լճի ափին, բավականին լավ կահավորված առանձնատան սենյակներում: Սահյանով էին հագեցած օդը, ջուրը, հողը, մեր հոգիները: Ամեն-ամեն ինչ: Հաջորդ առավոտյան սկսվեցին արարողությունները: Սահյանը մեզ դիմավորեց գրկախառնությամբ ու իր տևականությամբ մեզ համարձակություն ու անմիջականություն հաղորդեց: Հորեյանական ցերեկայթում տեսանք մեր արվեստի մեծերից շատերին: Առաջին անգամ այստեղ հանդիպեցի և «Օգոստոս» գրքի հեղինակ (գիրք, որ Սահյանի «Մայրամուտից առաջ», Սևակի «Մարդը ափի մեջ» ժողովածուների հետ ուսանողական իմ սեղանին էի միշտ պահում) Հրանտ Մաթևոսյանին:

Եվ ահա հասավ ելույթ ունենալու իմ հերթը: Բեմ բարձրացա վախվորած, խոսք ասացի: Զերևացող ամոթխածության միջից ուզում էի ներկայանալ համարձակ, ներսից այնպես ասեղնոտվում էի, ճնշում



 Էր ընդգծված հուզմունքս: Արցախի և արցախցիների անուկից հորեյարին հանձնեցիք պղծի վրա պատկերված մի դրվագում («Տատիկն ու պապիկը»), որը մեզ է տրամադրել բազմաշնորհ դրվագող, երաժիշտ ու նկարիչ Ալբերտ Սաֆարյանը, ապա մի զույգ տրեխ, որն, իբր շատ տարիներ առաջ, Արցախից քաղաք մեկնելիս երիտասարդ Սահյանն էր թողել Ստեփանակերտում, մանկության կածանները մաշած տրեխներ: Սահյանի հուզումը նկատելի էր դահլիճի համար: Դա պարզ երևում էր, որն էլ ինձ սրտապնդեց: Ելույթս ավարտեցի Համո Սահյանին նվիրված բանաստեղծությամբ:

*Վազում եմ ամենքիդ ետևից,
Ձեր ցավով վառվում եմ ես անգամ,
Մակայն դուք ապրում եք առանց ինձ,
Չգիտեք նույնիսկ՝ կամ, թե՛ չկամ:
Տարվում եմ մի փոքրիկ ժայտով,
Պարզում եմ ձեզ և՛ սիրո, և՛ հոգի...
Խնդում եք, խաբում եք ինձ հերթով,
Նման եք ամենքդ ամենքիդ:
Գնում եմ իմ ճամփով անհատնում՝
Չպարզած գաղտնիքն աշխարհքի...
Եվ էլի գայիս եմ, ձեզ գտնում,
Եվ էլի՝ հավատում ամենքիդ:*

Տարիներ շարունակ Արցախը գրկված էր Հայաստանում անցկացվող գրական-մշակութային միջոցառումներին մասնակցելու հնարավորությունից ու իրավունքից: Առանց չափազանցության խոստովանելով, որ Արցախի գրողների միությունում աշխատանքի անցնելու առաջին իսկ օրից իմ նպատակը, ձգտումը այն էր, որ հոգևոր Արցախի ուշքն ուղղվի դեպի մայր հայրենիք. չէ՞ որ մի ազգ ու գրականություն, մի մշակույթ է: Եվ դա հաջողվեց մեզ: Հայաստանի մեր գրչակիցները և ցերեկույթի բոլոր մասնակիցները մեզ վերաբերվում էին ընդգծված սիրով ու գորովանքով, առավել ևս՝ ըմբռնումով:

Իսկ երբ արդեն հորեյարական երեկոյի երկրորդ՝ «գեղարվեստական» մասն սկսվեց, ինչպես ստում են, բոլորս տեղ գրավեցինք մեծ դահլիճում տեղադրված կլոր սեղանների մոտ: Անընդհատ պատվում էի Հրանտ Մաթևոսյանի շուրջն ու չէի համարձակվում խոսք ասել: Դա երևի զգացել էր ինքը և ուղղակի բռնեց ձեռքս:

– Տեսնում եմ, որ ոչ մեկը շնորհք չունեցավ ծանոթացնելու, մենք ծանոթանալ: Լավ բանաստեղծություն էր:

Թվում է՝ թեև ցուներ, ունեցա միանգամից, և, ուր-որ է, պիտի թռչեի: Բայց՝ ո՞ր: Ամենայնով տեղն այն դահլիճն է հենց, ուր գտնվում ենք: Հրանտ Մաթևոսյանը ևս մեր պատվիրակության հետ տեղավորվեց նույն սեղանի մոտ: Գիտեի, որ Հրանտ Մաթևոսյանը շատ բարձր է գնահատում Սահյանի

պոեզիան, խոսեցինք այդ մասին: Մաթևոսյանը վերհիշեց Սահյանի տողերը.

*Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը:*

Անընդհատ մեր սեղանին էր մոտենում Սահյանի երիտասարդ կինը՝ Սվետան, նստում մեր կողքին, հարցնում՝ ամեն ինչ նորմալ է, հո բա՞ն չի հարկավոր... Չգու՞մ էինք, որ Սահյանն է նրան «ուղարկում», նրա մեծ, անհուն սրտից է բխում այդ հոգատարությունը, որ ես նկատում էի անզամ հեռվից հեռու՝ նրան նայելիս: Իսկ երբ դեռ դահլիճ չէինք հասել, մեկ էլ կտեսնեիր, բազմաթիվ մարդկանց մեջ գտնում էր մեր պատվիրակության անդամներին, մեկ անգամ ևս իրջեցնում, թե ուր ենք գնում, մանավանդ՝ ճաշկերույթի մեկնելիս: Այնպես էր մտերմաբար բռնում մեր ձեռքից, որ կարծես թե երեխաներ էիք և պիտի կորչեիք:

Նրա ամեն տողը մի առու է՝ զուլպա, մաքուր: Եվ եթե առվի տուտը բռնենք ու գնանք, երբեք չենք կորչի, չենք մոլորվի, բանզի առվի ճամփին միշտ մարդ է սպասում... Խիստ ինքնատիպ է Սահյանին իր հակասությունների ներդաշնակության մեջ, նրանում մի ամբողջ դարաշրջան է ապրում, նրանում հազար մարդ ու հազար սիրտ կա՝ բոլորն էլ հայոց բար ու հողից, անկրկնելի, նոր, թարմ, ինքնատիպ: Բոլորն էլ ինքն է:

*Մթնած մեզ են նոցի գլուխ,
Բայց այդ մեզը ես չեմ:
Այսքան տարվա ճամփորդ եմ հեզ,
Բայց այդ հեզը ես չեմ:
Շատ եմ փորձում ինձ հանդիպել,
Փորձս փորձ է մնում...
Հազար մարդ է մեջս նստած,
Բայց ոչ մեկը ես չեմ:*

Ցավոք, մեր պատվիրակությունը Լոր չգնաց: Դա մեր սխալն էր աններելի: Երևանի ճանապարհին մեքենայի արգելակները հրաժարվեցին աշխատել: Վարորդը՝ Վիտային, սփրթնել էր: Ես, իբրև ավելի փորձ ունեցող վարորդ (Վիտայինն ևս էր ինքն աշխատանքի վերցրել), նստեցի դեպի մոտ. բոլորս էլ մի քիչ խմած էինք: Եվ հանկարծ մի ոլորանում ավտոտեսուչը շվկացնում է ու կանգնեցնում մեքենան: Արագ դուրս եմ գալիս: Ավտոտեսուչը ձեռքը բունքին է դնում ու պատիվ տալիս, բարձր ասելով իր պաշտոնը և ազգանունը՝ ավտոտեսուչ Սարգսյան: Ինչ անեի: Ես էլ ձեռքս նույն արագությամբ տանում եմ իմ բունքին, նույնակերպ պատիվ տալիս՝ բանաստեղծ Հակոբյան: Մեքենայում նստած ընկերներս բարձրաձայն ծիծաղում են: Ավտոտեսուչը կռահում է, թե որտեղից ենք գալիս:

–Համո Սահյանի հորեյարին էիք մասնակցո՞ւմ, շատ բարի, – ասաց նա,

– մենակ թե զգույշ վարեք մեքենան: Ես նորից նստեցի դեպի մոտ, մեքենայի պատուհանով ավտոտեսուչը հայացքը ներս բերեց ու մտերմաբար ասաց, «Տղերք, դուք, երևում է, կուշտ կերած-խմած եք: Առաջարկում եմ այսօր մնալ մեզ մոտ, ձեզ համար լավ տեղ կապահովենք մնալու՝ քե՛ֆն էլ վրան: Չը՞, մանավանդ՝ իրիկունն է վրա հասնում ուր-որ է»... Ապա նա տեսնելով մեր անհամաձայնությունը, արտասանեց.

*Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:*

Ամբողջ ճանապարհին Սահյան էինք արտասանում, Սահյան էինք վերլուծում ու հորեյարական արարողության այս կամ այն մանրամասն իրար իրջեցնում, մինչև որ... ինքներս էլ չիմացանք, թե առանց արգելակի ոնց հասանք Երևան: Իսկ հաջորդ օրը՝ Արցախ:

Արցախը Սահյանի համար նույն Հայաստանն էր միշտ, նույն Սիսիանն ու նույն Լորը:

*Որտեղից այսքան ցավ ու թախիծ,
Քարեր են փշրվում սրտիս վրա...
Գույժեր են գայիս Ղարաբաղից,
Մարեր են փշրվում սրտիս վրա,
Կռվում են այնտեղ քաղերն ազգի...
Եվ, ահա, նախերգը նրանց ասքի
Ողբի է փոխվում և մահազդի,
Դարեր են փլվում սրտիս վրա:*

Ինչպես բանաստեղծություններում, այնպես էլ այսօրվա կյանքում արած ամեն մի բանով ասես ջուր էր խմում իրեն փափագած սրտից: Իմաստուն, վեհ, պարզ ու անհուն, միշտ այսպիսին տեսա բանաստեղծին, որին, խոստովանում եմ, սիրում եմ այն սիրով միայն, որով անբաժան եմ Տերյանից:

Եվ այսպես, տարիներ են անցել, հոսում են ժամանակները: Կյանքի, բանաստեղծության խոհ ու խոկումի մեջ հաճախակի եմ անդրադառնում Սահյանին, նրա մեծ և խորը փիլիսոփայությանը, երգին բարձրարվեստ, վերջին տարիների գրած, համագրային շարժմանն ու արցախյան գոյամարտին նվիրված նրա տողերը վերընթերցում ու մխիթարվում եմ հավերժ նոր ու մնայուն անվան խորհուրդների մեջ: Ասել է թե՛ մարգարեական էր նրա գուշակումը. մեր բոլոր երթերում նա կա որպես... ամենաներկա, սիրված ամենուրական: Եվ հայրենի սարերն անզամ ասես բունն են ծխում Սահյանի երգերով: Հավերժության շուրջերից չեն իջնում բառերը՝ մի հայրեն ասեմ ես էլ... ասեմ, գնամ: Եվ գնաց: Եվ գնում է: Ինչքան հեռանում, նույնքան մոտենում է: Եվ հեռանալով այնքան մոտեցավ, որ բաժանվելու էլ հնար չկա... ●

ԻՆՔՆ ԱՊՐՈՒՄ ԷՐ ԱՐՑՄԽՈՎ, ԻՍԿ ԱՐՑՄԽՑԻՆ ԻՐԵՆ
ԳՈՐԱՑՄԾ ԷՐ ԳՈՒՄ ՍԱՀՅԱՆՈՎ

Մաքիցս չեն գնում Ղարաբաղում ընկած մեր Էդ տղաները

Խոսում է Համո Սահյանը՝ ըստ
Հարություն Հովնաթանի



Այսօրվա մեր հակառակորդը, որ մեր հարևանն է, չունի գոյատևության հարց, չունի ապրել-չապրելու, լինել-չլինելու խնդիր: Շատ են, այո, ցեղակիցները շատ են, պաշտպանները շատ են: Իրենը էն է, որ գավթի, մեծանա, մեծանա, մեծանա: Եսպես է: Մեր ուժը գոյության կռիվ մղելու մեջ է: Թուրքը պարտվեց, էլի ապրելու է, մենք՝ չէ: Գերմանիան պարտվեց, բայց Գերմանիան կա:

Կարծիք կա, իբր մենք երբեք այսպիսի վիճակում չենք եղել, այսպան թույլ չենք եղել: Զիտիսորտան ադրբեջանցիները, իրենք շատ են, իրենց բարեկամները շատ են, զենքը շատ է: Այս դեպքում ուժը զենքը չէ, ուժը քանակը չէ, ուժը հարստությունը չէ, ուժը նավթը չէ, ուժը ծովը չէ: Երբ նրանք աշխարհի առջև ցույց տվեցին իրենց մարդասպանի դասակը, պարզվեց, որ շատ ավելի թույլ են, քան մենք կարող ենք երբևիցե լինել: Ասել է թե՛ բարոյապետ նրանք ընկած ժողովուրդ են: Թող իմանան, որ մենք անհամեմատ ուժեղ ենք, որովհետև մեր տունն ենք պաշտպանելու, իսկ պաշտպանությունը կռվի մեծագույն ձևն է:

Դու փորձե՛լ ես. աղվեսը բնից հանել չի լինի, օձը, մուկը չեն կարող բնից հանել: Ինչ է, ադրբեջանցին պիտի գա, թեկուզ նորագույն զենքով, սպիտակ խալաթ հագած, գրահավորված պիտի հանի՞ ինձ իմ տնից: Հնարավոր բան չէ: Իզուր են կարծում, թե երբևիցե այս մեթոդով հաղթել կլինի հայ ժողովուրդին: Պիտի ասեմ՝ երբեք մենք այսքան ուժեղ չենք եղել: Նայենք մեր պատմությանը, չենք ասում Տիգրան Մեծի կամ Բագրատունիների ժամանակաշրջաններին, այս կողմ գանք:

Սովոր ենք միշտ մեղքն ուրիշի վրա դնել՝ Եսինչը մեզ ստրկացրել է: Հարցնում ես՝ շատ հարցերում մենք ինքներս մեղավոր չե՞նք: Իհարկե, մեղավոր ենք: Որ հայ ղեկավարը եկավ, ասաց՝ չիչացնենք մեր հարաբերությունները, դաչաղ Նաբին հերոս է, Անդրանիկի անունը մի տուր: Ադրբեջանը ջրամբարները բերեց կառուցեց թո՛ հողի վրա, իսկ երբ Բերդում հայը զոհանավակայան էր կառուցում, նրանք հիսուն քառակուսի մետր էլ չզիջեցին:

...Մենք ենք մեր օգնականները: Մեր

հույսը մեր ինքնապաշտպանությունն է: Մենք կարող ենք մեզ պաշտպանել, թույլ տան մենք մեզ պաշտպանենք, այսքան բան: Մենք չենք կարողանում աշխարհի ժողովուրդներին հասցնել, ասել՝ շատ սիրելի բարեկամներ, երկու մշակույթ են դեմ-դիմաց, կանգնած է վայրենի, բարբարոս մի ցեղ, ազերի կոչված, 14-րդ դարում Կովկաս թափանցած մի ցեղ և չեն իմանում քանի հազար տարի այս հողի վրա ապրած հայ ժողովուրդը, որ մշակույթ է ստեղծել, ամեն ինչ ստեղծել է: Գնեք կարողանում հասկացնել, որ էդ երկու մշակույթների կռիվն է, դրանք կրող ժողովուրդներն են դեմ-դիմաց կանգնած՝ մեկը իր սպանելու մոլուցքով, մյուսը՝ ապրելու իրավունքով:

Մի հարցնող լինի՝ եթե դուք մեղեացիներ եք, ապրել եք էդ հողի վրա, ինչո՞ւ էր ձեր գրողը գրում ուրիշ լեզվով, պարսկերեն, գոնե թուրքերեն գրեր, չէ՞, օսմանի լեզվով գրեր:

Պարսիկին յուրացրել, դարձրել են իրենցը և Եսոր դուրս են գալիս աշխարհամեջ՝ տեսեք, Ես Նիգամին մերն է, հայերը փոքր ժողովուրդ են, նման մեծություններ





չունեն: Իրենք չունենալով անցյալ ու պատմություն, հայտարարում են՝ հայերը չունեն անցյալ, չունեն պատմություն: Այ բեզ բան: Ես այն հաջողությամբ վաղը, որպես իրենց ճարտարապետության գլուխգործոցներ, կարող են օտարին ցույց տալ Ամարասն ու Գանձասարը, ինչպես որ, ասենք, մեր խաչքարերն էին ուզում յուրացնել:

Ժամանակ առաջ գրուցում էինք, ես ասացի՝ Ղարաբաղը ես շարժման և նույնիսկ գանգը չէ, գանգի լեզվակն էլ չէ, պարանն է լեզվակն: Հիմա էլ ևս նույնն են ասում, Ղարաբաղը առիթ է Ադրբեջանի իսլամական մեծ շարժման համար: Ուզում է մեծ Ադրբեջան ստեղծի, միացնի Հարավային Ադրբեջանը, Հյուսիսային Իրանը, որտեղ 10 միլիոն ադրբեջանցի են, իրենց ասելով՝ աղվանների ցեղ է, և նույն լեզվով են խոսում: Կողքն էլ Թուրքիան է: Գնալ միանալ են ուզում: Գնաց, հետո էլ Ղարաբաղը պիտի տանի, Լախիջանը պիտի տանի: Լայտանակները շատ ավելի մեծ են: Կենտրոնը գիտես: Դա մեր գործը չէ: Խորհրդային զորք մտավ էս օրերին Էստոնի, կնշանակի շատ ավելի լուրջ վիճակ է, բան մենք պատկերացնում ենք: Ոչ Ղարաբաղի հարց է միայն, ոչ էլ իշխանություն գրավելու, մեծ շարժում են ուզում սկսել աշխարհի դեմ, կենտրոնը կոնկրետ 1918 թվականից գտնվում է Բաքվում: Պարզ է:

Ես իսլամական շարժումով ժամանակին Լարիմանովը վախեցրեց Մոսկվային, և Մոսկվան Լախիջանն ու Ղարաբաղը տվեց Ադրբեջանին: Հիմի էլ ամեն կերպ ահաբեկում են: Չեն վախենում, ո՞վ ասաց չեն վախենում: Բայց ես օր մեր ու ռուսի շահերը համընկնում են:

Կիրովաբաղի, Բաքվի արյունահեղությունների մասին չեն խոսում ոչ իրենք, ոչ էլ գրում են կենտրոնական մամուլում: Մաքրվել են ուզում, ասել են, չէ՞, ուզում են հայերին ցցել մեղքի տակ: Սարսափում են, որ հանկարծ իրենց չասեն ցեղասպան: Դա չեն ուզում: Սարսափում են էլ մեղքի: Ուզում են դրանից մաքրվել, որովհետև դա ամենասարսափելի բանն է, որ աշխարհը

տեսավ: Տեսավ երրորդ հազարամյակի շեմին: Սա ոչ միայն ամոթի խարան է Ադրբեջանի ճակատին, այլև՝ առիտարակ ժամանակակից մարդկության: Ամոթ այն երկրին, որտեղ ապրում է եղ ժողովուրդը:

Պիտի որ լավ լինի մեր վիճակը, եթե դրսից չխանգարեն: Ղարաբաղի խնդիրն է մեր առջև: Լուծումը չեն տեսնում: Եթե քաղաքական ճանապարհով լուծենք, թուրքն էլ իր հարցերը լուծելու է, մարզը վերցնելու է: Քանի՞ Ղարաբաղ է վերցրել, ձուլել, խառնել, բռնել: Եստեղից խիտե՞լ, Երևանում է մեր դեմ հանել ամբողջ իսլամական աշխարհը: Համաշխարհային պատերազմ կսկսվի:

Կովկասը հիմա հրդեհի մեջ է: Ռուսաստանը որ թուլացավ, թուրքը կուզենա տիրել Կովկասը: Բոլորը կուզեն տիրել Կովկասը: 200 տարի ռուսն է չարչարվել դրա համար և Պուշկինի տողն էլ, այո, կայսերական է. «Ահա Կովկասն իմ ոտի տակ...»:

Իսկ այն ամենը, ինչ ադրբեջանցիք չեն կարողանում յուրացնել, ոչնչացնում են: Ահա թե ինչպիսի ժողովրդի հետ է կապված մեր հարցը, ժողովուրդ, որ դարեր շարունակ եղել է մեր հակառակորդը, մեր թշնամին: Անվերջ մեր տափաստանը վերցրել, բռնել, բռնել, բերել էս քարե կղզում է հասցրել. հիմի սա է իրեն հարկավոր: Ուզում է Եստեղ էլ չի նենք:

Թերևս են ժամանակ էս բարդությունները չկային, քոչվոր ժողովուրդ էր: Բայց էդ մարդը սովորեց տուն շինել, սովորեց հաց թխել, մեզից, իհարկե, արդյունաբերություն ունեցավ, Բաքվի պես վիթխարի քաղաք ունեցավ, յուրացրեց պարսիկ գրողներին, յուրացրեց աշխարհում ինչ որ կա, դարձրեց իրեն, ռուսերեն սովորեց, դարձավ ահագին հնարամիտ ու զարգացած, ասել է թե՛ ավելի կատաղի, բան առաջներում էր: Չինվեց աշխարհի ամենավերջին զենքով, հիմի գինված է, քո դեմ կանգնած: Էդ ասացի, հոշոտելու, սպանելու վայրենի բնագրի մասին ասացի արդեն: Չինված, արյուն թափելու պատրաստ, բայց և եվրոպական քաղաքակիրթ մարդու դիմակ հագած:

Թուրքի վերաբերմունքն էս ուզում հասկանալ: Պարզ բան է. թուրքը եղպես է վարվում, որ հետո ասի մենք հարևաններ ենք, բարեկամներ ենք, պիտի ասի՝ եղել ենք ու կանք, արի հրաժարվենք քո պահանջատիրությունից: Ե, հա, ո՞վ բան ասաց, թուրքը էլ թուրք է մնում: Պանթուրքիզմը Ռուսաստանում է ստեղծվել, տեղափոխվել Թուրքիա:

Ռ՞րն է պանթուրքիզմի գաղափարը՝ հայ է, պիտի սպանես: Բայց թե ի՞նչ անես, էդ էն քո հարևանները: Վատն էն է, որ ճակատագրով շրջապատված ու շրջափակված ենք վայրի ցեղերով:

Ադրբեջանը ութ միլիոն է, վախենում է Ղարաբաղի երկու հարյուր հազարից: Հայաստանից ո՞նց կարող է չվախենալ:

Ազգի համար կարևորը ազգային գեները պահելն է: Հուրախություն մեզ, մեր ազգը դրանք պահել է՝ իբրև երաշխիք դեպի գալիքն ուղևորվելու: Բերեմ երկու օրինակ, պարզելու համար, թե որն է մեր ազգի բնույթը: Ղարաբաղում, Շահումյանի շրջանում, Ղարաջևարում ադրբեջանցիների հետ ունեցած բախումից հետո հայ տղաները նկատում են չորսի բացակայությունը: Փնտրել են, գտել գլուխները կտրած: Ինն ադրբեջանցու բռնել, բերել են: Ի՞նչ անել: Հենց իրենց, ադրբեջանցիներից հինգին ասել են՝ կտրեցեք այս չորսի գլուխները և դուք ազատ եք: Հինգը տեղում տեղը չորսի գլուխը կտրել են: Տեսա՞ր, մերոնք չկարողացան, իսկ նրանք կարողացան: Հա, է, մերոնք թշնամու գլուխ էին կտրելու, նրանք՝ հարազատի: Վերջում ազատ են արձակել հինգին, էն չորսի գլուխները տալով և ասելով՝ մեր վրա կզցեք, կասեք հայերն են արել: Մեկ ուրիշ իրական դեպք հիշեմ. թուրքի ձեռքով սպանված հայ տղայի ծնողներին են հանձնում մի ուրիշ թուրքի և ասում լուծեցեք ձեր վրեժը: Երկու օր հետո հայ ընտանիքը բերում է թուրքին և վերադարձնում մեր տղաներին, ասելով՝ չկարողացանք սպանել, դուք ինչ ուզում եք արեք: Էն էլ ասեմ, որ էդ երկու օրը կերակրել են թուրքին: Մեր ազգը սա է, էս հատկանիշները ազգի մեջ դարբերվել են փոխվել: Էլի կան այսպիսի դեպքեր. վերջերս էր, բռնել էին երկուսին, մեկին հանձնել զոհված հայ տղայի ծնողներին՝ մատաղ անելու...: Հայ կինը ասել է՝ տարեք աչքիս առաջից. «Իբր քիչ է դարդս, սրան էլ բերել եք»:

Սրանք ո՞նց թևաթափ արին էս ժողովրդին: Էս անկախությունից, էս ազատությունից, էս դեմոկրատիա կոչվածից գողերն, ավազակներն առավել են օգտվում: Ղարաբաղն էլ կտան, միայն թե իշխեն...:

Մտքիցս չեն գնում Ղարաբաղում ընկած մեր էդ տղաները...

Ազգի փրկության համար մարտահաշտ իջածը այնքա վեր է ամեն մի կուսակցության անդամ լինելուց, վեր է ամեն բանից: Բոլորը միասին ազգի գավակներն են, ազատամարտիկներ, փրկիչներ, հրաշալիներ:



ԻՆՔՆ ԱՊՐՈՒՄ ԷՐ ԱՐՑՄԽՈՎ, ԻՍԿ ԱՐՑՄԽՑԻՆ ԻՐԵՆ ԳՈՐԱՑԱԾ ԷՐ ԶԳՈՒՄ ՍԱՀՅԱՆՈՎ

Արցախը՝ Համո Սահյանի հոգում և պոեզիայում



ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱՅՏԱԼ
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

2 023 թ. սեպտեմբերը մեր ժողովրդի համար ողբերգական տերևաթափով աշուն էր: Երկարատև գրկանքների, մարդկային և կյուրական կորուստների, լիակատար շրջափակման հետևանքով բազում անասելի դժվարությունների դիմանալով՝ Արցախը չէր հանձնվում: Դիմանում էր... Ամեն մի բնակավայր արդեն առաջնագիծ էր: Սեպտեմբերի 19-ի արյունալի պատերազմն արդեն բնակելի տների մոտ էր, ծեր ու մանուկ արդեն կրակի թիրախում էին: Ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի ներքո բռնի տեղահանվեց մի ողջ ժողովուրդ, հազարամյակների ընթացքում առաջին անգամ Արցախը մնաց առանց հայ, մի ողջ ժողովրդի կտրեցին արմատից, և ընդամենը մի ձեռք հագուստով մարդիկ պարտադրված հրաժեշտ տվին հարազատ բնօրրանին:

Սիրելի՛ ընթերցող, երևի կմտածես, թե դա ինչ կապ ունի Սահյանի հետ... Արցախից ինձ հետ, որպես սուրբ Նշխարներ, վերցրի միայն մի բուռ հող, իմ մեծ գրապահարանից Գրիգոր Նարեկացու «Նարեկը» և Համո Սահյանի «Ինձ բացակա չլինեք»-ը: Ներքին համոզմունք ունեի, որ այդ երեք Նշխարները կպաշտպանեն ինձ ու փոքրիկներիս թշնամուց և հետագա անորոշություններն ու դժվարությունները հաղթահարելու համար ինձ ուժ կհաղորդեն: Եվ այդպես էլ կա...

Գրիգոր Նարեկացի իր «Մատյան...»-ով մարդուն տանում է դեպի Աստված, իր աղոթագրքով մոտեցնում Աստծուն, իսկ Սահյանը մարդուն տանում է դեպի Մարդը՝ հողոտ, մղեղոտ, բնության

պես պարզ ու մաքուր, տառապանքից ազնվացող, դժվարություններից մաքրագործվող ու խղճի վրա բիծ չունեցող Մարդը: Երկու դեպքում էլ փրկությունը աստվածային մաքրագործման ուղին է, աշխարհն ազնվացնող, կատարսիսի հասցնող չարչարանաց ճանապարհով: Ու որքան էլ Գողգոթայի ճանապարհը դաժան, Սահյանի պատգամն է՝ չվիատվել:

*Թող մայրամուտից հետո էլ հոգուդ
Լուրթ հորիզոններն աստղերով
լցվեն,*

*Եվ չմթագնի երկինքը վրադ,
Եվ քո երգի մեջ երբեք չսվեն
Գիշերահավի կանչերը վիհատ:*

Հող, Մարդ և Աստված. թերևս գույնի այն հիմնասյուները, որոնցով կյանքն իմաստավորվում է, և սահյանական իմաստությունը՝ *Ինչքան խառն ու խրթին,
Ինչքան էլ բարդ ու բիրտ,
Կյանքն ապրվի այտի,
Ուրիշ հնար չկա:*

Համո Սահյանի հոգում և պոեզիայում Արցախն իր յուրահատուկ տեղն ունեւ, ունի՝ որպես հայրենիքի անբաժանելի մաս:

Արցախի խնդիրը նրան մտահոգում, տանջում էր դեռևս Արցախյան շարժումից էլ առաջ: Ծնրու Դավթյանը պատմում է, որ 1986 թ. Սահյանը ցանկություն էր հայտնել Շուշի մեկնելու: Ը. Դավթյանն անմիջապես իրագործում է նրա ցանկությունը: Սահյանն իր աչքով տեսավ Շուշիի գերեզմանատան ավերված, վանդալիզմի ենթարկված տապալաբարերը, պղծված գերեզմանները... Վերադառնալուց հյուրանոցում մինչև լույս բանաստեղծը ծխում էր և լռում:

Ը. Դավթյանը, պատմելով Կեռքովի խնդրանքով բանաստեղծի հետ հանդիպման մասին, նշում է, որ չորս ժամ տևած զրույցի ընթացքում Սահյանը ոչ մի բառ չի ասել, միայն լուռ ծխում էր. «Սոսկայի տրամադրության մեջ էինք: Երբ Կեռքովը բաժակ բարձրացրեց և լիովին գինովացած հավաստիացրեց, որ մեր արյունակիցները լավ են ապրում Ղարաբաղում, և իր ծնողներն էլ Կապանից են, խնդրեց, որ բանաստեղծը մի խոսք ասի: Համոն վերջապես երկու Նախադասություն արտաբերեց.

– Ինչքան լավ կլինեք, որ ձեր հաջողությունների և ժողովրդի լավ ապրելու մասին Ձեր հավաստիացումները լսեի հենց ժողովրդից: Դե, Դուք էլ չեք թողնում, որ ժողովրդի երեսը տեսնեմք:

Կեռքովը անակնկալի եկավ, բայց ծպտուն չհանեց, իսկ ինձ թվաց՝ ուղղակի բերանին եկավ Սահյանը և կատարելապես շշմեցրեց:

Ճանապարհին Սահյանն ասաց.
– Բայց երևի ինչ-որ գործ կատարվում է Ղարաբաղում, տղերքը ազատագրելու են, Հայաստանը պետք է օգնի...»: Արցախյան շարժումը հասունանում էր:

Արցախյան ազգային վերագարթնաբլուրն հենց սկզբից ողջունել և դրական էր գնահատել հայ մեծ բանաստեղծը: 1988-ին Արցախում հանուն պատմական արդարության և ազգային արժանապատվության վերականգնման ոտքի ելած հայ ժողովրդի համար առաջնորդող էին հայ մեծերի հայրենասիրական գործերը: Հանրահավաքներում ամբիոններից հաճախ էին լսվում նաև Սահյանի բանաստեղծությունները, որոնք մի նոր կրակով էին բորբոքում ժողովրդի հայրենասիրական ոգին:

*«Ախր ես ինչպե՛ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՛ս ուրիշ տեղ մնամ...»:*

Բանաստեղծ Համո Սահյանի «Նաիրյան մորմուքները» առավել մեծ շեշտադրում ստացան հատկապես Արցախյան շարժման և ապա ազատամարտի տարիներին:

*Որտեղի՞ց այսքան ցավ ու թախիծ, -
Քարեր են փշրվում սրտիս վրա...
Գույժեր են գալիս Ղարաբաղից,
Մարեր են փշրվում սրտիս վրա,
Կռվում են այնտեղ քաջերն ազգի...
Եվ, ահա, նախերգը նրանց ասքի
Ողբի է փոխվում և մահազգի,
Դարեր են փլվում սրտիս վրա:*

Սահյանը, բնականաբար, մեծ վիշտ էր ապրում Արցախյան պատերազմում մեր ժողովրդի ունեցած մարդկային կորուստների համար, և ահա 1992 թվականի դեկտեմբերին նա գրում է. «Մտքիցս չեն գնում Ղարաբաղում ընկած մեր եղ տղաները: Ես լաց եմ լինում. ինչ մերեր են բերել, ինչ ոգի են, ազգի ոգի ասածդ իրենք են: Ազգի փրկության համար մարտադաշտ իջածը այլևս վեր է ամեն մի կուսակցության անդամ լինելուց, վեր է ամեն մի բանից: Բոլորը միասին ազգի զավակներ են, ազատամարտիկներ, փրկիչներ, հրաշայիններ:

Ամենասարսափելի բանը, ամենացավալի բանը, որ էս ընթացքում մեզ հետ կատարվեց, էր տղաների կորուստն է: Ազգի ընտրանին, ամենալավ տղերքը գնացին: Գենը գնաց, տեսակը գնաց: Ոնց որ հատուկ ընտրես տանես: Բայց թե՛ իրենք իրենց են ընտրում: Պատրաստված,





Ստեփանակերտի հուշահամալիր

Իտելոք, կարդացած տղաներ:
Մեռան գնացին: Անուններն էլ
չկան: Վա՛յ, վա՛յ, ո՞նց պիտի վե-
րականգնենք: Այս տղաները գերա-
զանցում են մեր ֆիդայիներին, նախորդ
մեր բոլոր նվիրյալներին: Եղպես էլ պիտի
լիներ, այլապես ազգը չէր գոյատևի: Եդ
տղերքը պիտի ազգն առաջնորդեին, եր-
կիրը ղեկավարեին... Սրանք մեծերի մեջ
են...»:

Եվ որքան էլ տրամադրությունները
հռետեսական լինեն, այնուամենայ-
նիվ, անգամ ամենահուսահատ պահին,
գրողին չեն լքում ժողովրդական լավա-
տեսությունն ու հավատը: Խոսելով մեր
զոհված քաջերի մասին՝ հառաչում է նա՝
ի՛նչ մերեր են բերել...

«Եթե Մարտիրոս Սարյանը էս ժո-
ղովրդի աչքն է, նրանց միջոցով պիտի
տեսնի, Կոմիտասը՝ ականջն է, նրանցով
պիտի լսի, եթե Թումանյանը միտքն է ու
լեզուն, եթե Մաշտոցը ոգին է, Եղթյունը,
Աբովյանը թոքերն են, շնչառությունը և
եթե Չարենցն էլ այս ժողովրդի սիրտն է,
ապա այս տղաները ազգի արյունատար
անոթներն են, երակներն են, զարկե-
րակն են ազգի: Ազգի սիրտը, որ խփում
է, աշխատում, ամեն մի զարկը էս տղա-
ների շնորհիվ է: Իրենք են արյուն մատա-
կարարում՝ իրենց արյունը չհնայելով,

իրենց երազը փշրելով, իրենք իրենց ող-
ջակիզման տանելով», – գրել է Սահյանը
1992 թ. դեկտեմբերին այն տղաների մա-
սին, ովքեր կերտեցին արցախյան ազա-
տամարտի հաղթանակը:

Շուշիի ազատագրմանն ու հաղ-
թանակին սրտի թրթիռով Եր սպաս-
տում նաև բանաստեղծ Յամո Սահյանը:
Գրող, հրապարակախոս Չորի Բալա-
յանն իր հուշերում պատմում է, որ 1993
թ.-ին՝ Յամո Սահյանի մահից մեկ շա-
բաթ առաջ, երբ հերթական անգամ
վերադառնալով Արցախից՝ այցելել էր
հիվանդ բանաստեղծին ու Արցախում
տեղի ունեցող իրադարձությունների
մասին Եր պատմում, Յամո Սահյանը
Չորի Բալայանին ժպտալով ասել է. «Մի՛
հուզվիր: Ամեն ինչ ծիշտ է: Ամեն ինչ
տրամաբանական է: Մահը և կյանքը
իրավահավասար են: Եթե մահ չլիներ,
կյանքն ամբողջովին կզրկվեր բանաս-
տեղծականությունից: Դատարկ բաներ
են: Գլխավորն այն է, ինչ երջանկաբար
վերապրեցիք մեկ տարի առաջ: Շուշիի
ազատագրումը»:

Պատմությունը կորուստների ու
ծեռքբերումների, պատերազմների ու
խաղաղությունների, հաղթանակների
ու պարտությունների հարատև հերթա-
փոխի շարժ է: Որքան էլ պարտությունն

ու կորուստը հիմա ողբի տրամադրու-
թյուններ է բերում, պետք է բանաստեղծի
լավատեսությունն ու իմաստությունն
ունենաք և հավատանք, որ խավարը
ցրելու համար մեր պատը պիտի շարենք,
ուրիշ հնար չկա.

*Հոգսը կրվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Բախտը կռվի պիտի,
Ուրիշ հնար չկա:
Խավարն ինչքան էլ խուլ՝
Վերջը պիտի ցրվի,
Լույսը փռվի պիտի,
Ուրիշ հնար չկա:*

Պարզ է, որ հայրենիք ազատագրող,
անձնվեր հերոսներ ծնող ժողովրդի հա-
վերժությունը կասկած չի կարող հարու-
ցել, և գրողի տխրությունն անգամ դառ-
նում է մի նոր խիզախման ելքի դուռ և
պատգամում ապրողների հավատարիմ
մալ այն արժեքներին, որոնց շնորհիվ
առողջ պետք է տրուփի ազգի սիրտը: Ու
ես ապրում եմ այն հավատով, որ մի օր
Գրիգոր Նարեկացու «Նարեկը» և Յա-
մո Սահյանի «Ինձ բացակա չղնեք»-ը
ծեռքիս կվերադառնան Արցախ, և մեր
կշխարները կրկին իրենց պատվավոր
տեղը կգտնեն Արցախում... ու Սահյա-
նին Արցախում բացակա չեն դի:

ԻՆՔՆ ԱՊՐՈՒՄ ԷՐ ԱՐՑՄԽՈՎ, ԻՍԿ ԱՐՑՄԽՑԻՆ ԻՐԵՆ ԳՈՐԱՑՄԾ ԷՐ ԶԳՈՒՄ ՍԱՀՅԱՆՈՎ

Մենք ապրելու ենք...



ՆԱԻՐԱ ԽԱՀԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Մեր ժամանակակից դասականներից թերևս Համո Սահյանն ամենաբազատեղյակն էր Ղարաբաղյան խնդրին: 20 տարի ապրելով Բաքվում, աշխատակցելով հայկական պարբերականներին՝ ծանոթ էր Ղարաբաղում կյանքի մանրամասներին, Ադրբեջանի իշխանությունների վերաբերմունքին, և ամեն անգամ վրդովվում էր, երբ խոսք էր լինում Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու տխրահռչակ իրողության և նրա դժնի հետևանքների մասին:

*Մեզ ասում են. - Դուք մերը չեք,
Մինչև անգամ դուք ձերը չեք,
Ձեր տեղը չեք, ձեր տերը չեք,
Դուք տեղը չեք ձեր երդերի,
Տաճարների ու բերդերի:
Մեզ մեր ցավն են թողնում մենակ...*

Դեռ 1988 թվականից առաջ էլ, մինչև համաժողովրդական շարժումը, քաղաքականության մեջ չխորացող բանաստեղծին մտահոգում էր Արցախի ճակատագիրը, սակայն, համազգային շարժման ալիքի գորանալուն զուգընթաց, նրա հոգում հզոր տեղաշարժեր նկատվեցին, և Արցախյան հարցի հայանպաստ վերջաբանի տեսլականը կյանքի խաչուղիներում իմաստացած, 7 տասնամյակը վաղուց հատած բանաստեղծին հույսի կերտն թվաց:

*Տղերք կան պինդ, պնդակուռ,
Ում տեսնես՝ մի Սասնա ծուռ...
...Հոգնած ու խմած էինք,
Խարված ու քնած էին,
Արթնացանք, էլ քուն չունենք: /Էջ
141/*

Այս ոգևորությունն էր պատճառը

րից մեկը, որի արդյունքում, դեռ 1989 թվականին ամերիկյան ելույթներից մեկում Հայաստանի անկախությունը «կախաղանի սյուն» համարող Սահյանը, մի օր էլ փորձեց օպերային թատրոնի հարթակից խոսել հարազատ ժողովրդի հետ: Սակայն, նախ ապշեց, իսկ հետո հիասթափություն ապրեց այն բանից, որ հավաքվածները չէին լսում իրեն, իսկ ավելի ճիշտ՝ ամբողջած ժողովրդին ինքը ոչինչ ասել չէր կարող: Փորձելով մեկնել իրականությունը՝ բանաստեղծն իր համար բացահայտում է. «Ժողովուրդն ավելի շատ իր պաշտամունքն է պաշտում, քան այդ պաշտամունքի առարկա Արցախը»: Նույն շփոթությունն ու հուզումն ալիքն էր, որ հանճարեղ, բայց տվյալ պարագայում միամիտ բանաստեղծին էկրանի այն կողմից ժողովրդին դիմելու՝ նոր ընտրությունների համար կողմնորոշելու հարկադրանքն ունեցավ: Սթափվելուց հետո պիտի մարգարեանար՝ երկրի ապագայի հեռանկարը սարսափով կանխագայլու ցավից:

*Փնտրեցինք տաք մի հովիտ,
Եկանք ու դեմ առանք ցրտին...
Եվ հիմա ես ի՞նչ ասեմ՝
Իմ խաբված ու խաչված սրտին:*

/Էջ 119/

Այս անսովոր իրադարձությունների արձագանքն են բանաստեղծի վերջին՝ «Ինձ բացակա չընեք» ժողովածուի մի շարք բանաստեղծություններ, որոնք անցել են նրա ներաշխարհով, ցավոտ հետք են թողել հոգում ու դարձել տագնապոտ հարց:

*...Ե՞րբ պիտի վանենք մեզանից հեռու
Այս թանձրաթափախ մշուշն օրհասի...
Ի՞նչ է լինելու, պարոն Սատանա,
Ես ի՞նչ իմանամ, սատանան գիտի:*

/Էջ 213/

Իբրև խորաթափանց արվեստագետ՝ Սահյանը տեսնում էր, որ երկար սպասված անկախությունն իր հետ բերել էր նաև անցանկալի երևույթներ, որոնք չկանխելու դեպքում կարող էին երկրի ու ժողովրդի համար աղետալի հետևանքներ ունենալ:

*Գնանք օտարի դռները բախենք,
Թերևս ցքներ մուրանք, որ սովը թաղե՞նք...
Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի
Այս անկախության պարանոյ կախենք: /Էջ 235/*

Համո Սահյանը, բանաստեղծ լի-

նելուց զատ, նաև իր երկրի շարքային քաղաքացին էր և իր ուներին ու սրտին զգում էր օրերի ծանրությունը, դժգոհում դրանից, սակայն հիասթափության այս շեշտերը որպես պահի անցողիկ անակնկալների հետևանք, նրա կենսասեր խառնվածքին ու բանաստեղծական հավատամքին թույլ չտվեցին, որ խաթարվեր հավատը գալիք երանելի ժամանակների հանդեպ: Սահյանը 1990 թվականի հունվարիմեկյան շնորհավորական ուղերձում նկատում է. «*Վերջին երկու տարին շատ բան խլեց մեզանից, բայց, փառք աստծո, տվածը խլածից շատ է: Մենք սկսեցինք մեզ ճանաչել, մեր ուժին ու մեր պնդությանը հավատալ*»:

Ինքն իրեն երբեք չկեղծող բանաստեղծը ոգևորված էր Հայաստանի անկախության հռչակմամբ, վերջապես իրականացել էր ողջ ազգի երկար ու ձիգ դարերի երազանքը: Բանաստեղծը պատվիրում է չընկրկել ցրտի ու սովի չարագույժ աղետի առջև, այլ սնվել հույսի մեղր ու կարագով, որպեսզի մեր խրոխտ երթի դեմ չքվի ցրտի, սովի, թուրքի դաշինքը:

*Կտաքանանք մեր սրտի կրակով,
Կրքի պաշարով դեռ հանդուրժելի:
Արցախ կտանենք մեր վրեժն արյան,
Օրերի ոգին մեր փետրվարյան:
Կմերժենք անլուր այցը հաճույքի,
Մպտնայիքը կհեզգնենք թուրքի: /Էջ
213 /*

Արցախյան պատերազմի հաղթանակների ու հատկապես Շուշիի ազատագրման ցնծությունը ուղղակի կենդանություն էին պարզում արդեն հիվանդ ու աշխարհի հետ իր պարտքերը վաղուց մարած բանաստեղծին: «*Ուժս ներեր, կովի դաշտ կիջնեի զենքով: Լացս գալիս է, որ ջահել չեմ, որ կարողանամ իմաստ տալ ոչ այնքան կյանքիս, որքան մահիս*»:

Համո Սահյանի ամենահամարձակ ու հեռահար մտքի արտահայտություններից է «Մի աղբյուր կա Գյուլստանում» բանաստեղծությունը /Էջ 233/: Իր ժամանակին ԲաՖՖին Ռաֆայել Պատկանայանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը որակեց «հայրենասիրական քնարերգության թագուհի», այսօր Համո Սահյանի վերը նշված բանաստեղծությունն առանց վարանելու կարող ենք համարել Արցախյան պատերազմի, հայոց նորոյրա զարթոնքի ու հաղթանակների արթայագն, որի թագադրումը շատ չի ուշանալու: Բանաստեղծությունը մի գողտրիկ գրույց է հայոց պատմական Գյուլստանի /այժմ Շահումյան, որը Ադրբեջանի կազմում է/ գերված աղբյուրի ու հայրենասեր բանաստեղծի միջև: Սև սատանի բաժին դառած, զուլալ ջուրը լեղի կտրած Գյուլստանի գերի





աղբյուրը պատվիրում է հայոց բանաստեղծին. «Աչքդ, ասեմ, ուր էլ գնաս,/ Զեռվից-հեռու պահես վրաս»:

Իսկ Գյուլստանյան անմահական ջրին պապակ բանաստեղծը հոգու խորքում հավատում է աղբյուրի երագանքին. «Աչքալուսանք կտանք շուտով/ Ես ցուրտ, իսկ դու տաք շշուկով»: Չհավատալու պատճառ չունենք, որ հանճարեղ բանաստեղծի այս երագանքն էլ է ի կատար ածվելու. «Աստված իջել Գյուլստանում,/ Մեր հին օրն է մեզ խոստանում», իսկ առայժմ Գյուլստանի գերված աղբյուրը, որի «կարոտը մարդ կսպանի», «Կանչում ու չի հանգստանում»: Բանաստեղծը գերված ժողովրդի տառապանքն առավել ընդգծելու համար շեջավորել է հայրենի աղբյուրը: Ավելի համոզիչ ու կենդանի, հուզիչ ու սրտաբուխ հնարավոր չէր արտահայտել հայրենասիրական խոսքը, բան ստեղծման օրից ի վեր հայ ժողովրդի համար սրբացված ու հզորություն առաքող հայրենի ջրիկի կերպարով:

Չետաբերքի հեռագագացություն ու շատ քաղաքագետներից առավել խորթափանց միտք ունի բանաստեղծ Սահյանը:

*Եվ կրկնվում է պատմությունն էլի,
Եվ մենակ ես դու վայրի ցեղերի
Պղտոր հեղեղի հորձանքների դեմ,
Մուրթ, անակնկալ փորձանքների դեմ...*

*Մեկ է, քեզ պիտի հավատով զինես,
Հավատով, որ կաս ու պիտի յինես...*

/Էջ 160/


Պատմությունն իրոք կրկնվում է, անցյալ դարի 90-ական թվականների և դրան էլ նախորդող պատմական դեպքերն ու հայերիս ճակատագիրը ժամանակների շարունակական հոլովույթում կրկին դարձել է գերխնդիր: Նորից թափառ մի ցեղ փորձում է մեզ խլել մեզանից, իսկ աշխարհի «մեր հույս» պետությունները ռիսկ փորձում են մեղքեր փնտրել մեր մեջ:

*Մեզանից ի՞նչ են ուզում,
Ախր մենք ու՞մ ենք վնասել,
Եղբայրներ շատ ունեինք,
Ինչու՞ ենք մենակ մնացել... /Էջ 118 /*

Բանաստեղծի բնորոշմամբ «Սասնա ծուռ Հայաստանը» կրկին համախմբվել է, ցավոք, այս անգամ էլ ժողովրդի համար օրհասական լինելից չի խնայելու ճակատագրական պահին, և պատրաստ է, անգամ որդիների արյան գնով հաղթանակ տանել:

*Վաչկատուններ դուք մերօրյա,
Թող մոտ չգան խաշները ձեր,
Դեռ են գլխից դրախտավայր,
Դրախտի դուռ Հայաստանին:
Քանզի՜*

*Խանձարուր էլ դեռ չունեիր,
Երբ ծանոթ էր աշխարհն արար
Մեսրոպի յույս, Ղևոնդի խաչ,*



Վարդանի թուր Հայաստանին:

/Էջ 138 /

Վաղուց թվում է, թե փոխվել են ռուս-հայկական անցյալ դարի 90-ական թվականների հարաբերությունները, և մենք՝ հայերս, կրկին ներել ենք ու «Մոռացնելու տվել» անցյալի տխուր իրողությունները, սակայն Սահյանի քաղաքական սթափ մեկնությունն ու հարցի ճշմարիտ բացահայտումը, կարծես արված են մեր օրերի հեռավորությունից:

*«Վերջապես ազգովի գլխի ընկանք,
որ ավագ եղբայրը խորթ է եղել: Մենք
հայ քրիստոնյա ենք և միշտ թույլին ենք
պաշտպանում և արդարության կողմն
ենք: Թվում էր՝ մեր ավագն էլ նույն-
պիսին պիտի լինի: Բայց ավագը մեզ
խաբեց ու դեռ շարունակում է խաբել:
Նա անցավ ուժեղի կողմը, արհամար-
հեց մեր արդար պահանջը, փորձեց ու
դեռ փորձում է աշխարհի համար երեք
հազար տարի տներ շինած մի ազգի
հավասարեցնել երեկվա վաչկատուն
ցեղերին»:*

Լավագուտն լինենք բանաստեղծի նման ու հպարտ ծայրենք աշխարհով մեկ.

*«Չէ՛, այդ չի լինելու, ինչպես ասում են,
վերևն Աստված կա...»:*

Եվ եք հույսներս դնենք Աստծո, և որ

տունն է, ինքներս մեզ վրա, մեր զինվորի ու սեփական բազկի վրա և չկասկածենք մեր կողքից երբեք չբացակայող բանաստեղծի մարգարեական խոսքին. *Մեր հողի վրա մերն ենք յինելու, Մեր անտեր գլխի տերն ենք յինելու, Մենք ապրելու ենք, ինչ էլ պատահի: ...Մեր հողի վրա մերն ենք յինելու: / Էջ 63 /*

Այսօր, առավել բան երբևէ, անհրաժեշտ են սահյանական սթափեցնող պատվիրանները, և համախմբվելով մեծ մարգարեի գաղափարի շուրջը, մի վերջին ու հուժկու հարվածով պիտի հաստատենք ի վերուստ մեզ տրված տեղը աշխարհի վրա և ի լուր ամենքի հայտարարենք.

*Եյի՛ր, անզեն իմ ժողովուրդ,
Բարձրացիր քո լեռները յուրթ,
Եվ թո՛ղ աշխարհն ականջ անի, /Էջ 140 /
որ՝
Արցախը ես եմ, Սահյանը ես եմ, ես
հայ եմ ...*

*Վխտում են շուրջը նորից,
Քեզ նորից յիտով հոտոտում...
Բայց մեկ է, կույ՜ չես գնա,
Կմնաս նրանց կոկորդուս: /Էջ 119 /*

Ռուբեն Չարյանի նամակը Համո Սահյանին



Սիրելի Համո.

Երբ տխրություն է իջնում վրաս, մտնում եմ գրապահարանին, հանում քո բանաստեղծությունների հատորյակը և կարդում:

Քո մեջ հանդարտություն կա, Ներդաշնակություն: Ու ես խաղաղվում եմ ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես Պուշկին ու Թումանյան կարդալիս:

Եթե աստված ինձ բանաստեղծական ձիրքով օժտեր, ապա ես, անշուշտ, կլինեի այն, ինչ ես եմ, բայց բանաստեղծական այդ եսը կլիներ շատ մոտ ու շատ հարազատ քեզ:

Ու ինձ միշտ թվում է, թե դու գրում ես այն, ինչ ես եմ զգացել, ես եմ ապրել՝ նույն հրճվանքն ու նույն հիասթափությունը աշխարհից ու մարդկանցից: Ու եթե ես միամիտ լինեի, ինչպես շատ ընթերցողներ, պիտի զարմանայի, թե քեզ որտեղից են հայտնի իմ ապրումները...

Դա է պատճառը, որ երբ թախիծ է իջնում վրաս, գրապահարանից հանում եմ քո գիրքը և կարդում քեզ, իմ շուրջ բոլորն ունենալով կնոջս, աղջկաս, փեսային, որոնք քեզ սիրում են ոչ պակաս, քան ես:

Քեզ երկար կյանք, քո ուզած կյանքը, որ երկրպագուներիդ, որոնց մեջ նաև ես եմ, պարզևեռ հոգեկցության ու գեղեցկության հրճվանքներ:

**ՀԱՏԲՈՒՅՐՆԵՐՈՎ՝ ՄԻՇՏ ԶՈ
ՌՈՒԲԵՆ ՉԱՐՅԱՆ
25 ԱՊՐԻԼԻ, 1984Թ., ԵՐԵՎԱՆ**

Մերո Խանգաղյանի նամակը Համո Սահյանին



Փ արիզ եմ: Ֆրանսահայերը դադար չեն տալիս: Ձանձրանալու ժամանակ չունեմ, բայց սրտումս կարոտ կա:

Երեկ «Աշխարհ»-ի խմբագրատանը խոսքս սկսեցի քո բանաստեղծությամբ՝ «Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնահացի»: Մեր հացի համը ոչ մի տեղ չկա...

Ինչ եղավ գյուղ գնալով: Գնա, Երևանը չի փախչի, գնա: Հայրիկիդ մոտ երկար մնա, որ կարոտն առնի,

Գուրգեն Մահարու նամակը և Համո Սահյանի պատասխանը

Թանկագին Համո

Այ տղա, ես ո՞նց եղավ, որ իրար կորցրինք վերջին մի ամսվա ընթացքում: Երևանում որոնեցի՝ չգտա, Մոսկվայում՝ չգտա, այստեղ՝ չկաս ու չկաս: Ասացի՝ «Հայրենիքի Ձայն»-ում մի հայտարարություն տամ.- փնտրում եմ Համո Սահյանին, ծնված 1900 բոլոր թվականներին, դասական, հայրը՝ Սահակ, մայրը՝ Սահականուշ, կարճամիջահասակ...և այլն, և այլն:

Մերոն կպատմի իմ մասին: Դու մի նամակով պատմիր քո մասին: Մի օրինակ էլ երգարանիցդ ուղարկիր: Ուզում եմ գրեմ «Արշա»-ում:

Եվ լավ եղիր, աստծու ափի մեջ պատրաստված փլավ եղիր, ծիածանի վրա մարմանդ խորովված խորոված եղիր, լուսնապոստանկի մեջ փլթփլթացող փիթի եղիր... եղի՛ր, մինչև տեսնենք՝ աստված ինչ կտա... Մանյա խանումին խոհական բարևներ, բարևներ Ինային և ճուտիկիդ: ճուտիկներ չեմ ասի, արդեն մեծ ես: Մեծ, մեծ բարևներ քեզ, սիրելի Համո:

**Մեծ սիրով քո Գ. Մահարի
19 մայիսի, 1969թ.,**

մեղք է Սահակ դային: Երբ կարոտդ առնես, պրծնես, գնա Գորիս: Տուրտ աղբյուրի բարը կհամբուրես, հետո կչոքես ու բռով մի կուշտ ջուր կխմես, «բարահունջ» էլ: Չավիավոր: Ուխամյ...

Գորիս գնայիս մեր տանը կմնաս, մայրիկը մենակ է, թող նա էլ իմ կարոտն առնի քեզանից: Առավոտներն առանց նախաճաշելու տակից դուրս չգաս, մայրիկը կանհագստանա: Երեկոները չուշանաս, մայրիկի քունը չի տանի:

Բաբուն Տիգրանին անպայման կտեսնես, կհետաքրքրվես, թոշակն ավելացրի՞ն, թե՞ չէ:

Քարահունջ մտնելիս Ալբերտի վիճակն իմացիր, տես՝ ինչ նոր բաներ է գրել: Կարդա, խորհուրդներ տուր:

Կուբեր ամուն ասա թող մի հորովել երգի, ականջ արա.



Ճարավել եմ, ջուր բերեք,

Բալաջանի ձյուն բերեք...

Մեր հորովելը, թւերը թափ տալով, եկել-մտել է Փարիզի դահլիճները: Ականջդ կանչի, Կուբեր ամի:

Իմ այս հանձնարարությունները կատարելուց հետո, միտդ կբերես ինքդ քեզ: Քեզ լավ պահիր մինչև գամ: «Օրը մթնեց, ժամն է արդեն իրիկնահացի...»

1965թ.



**Իմ Գուրգեն Խանըս,
Դու իմ կամավոր
Աքսորականը:**

Նամակդ ստացել եմ, պարզ է՝ շնորհակալությամբ: Պատասխանն ուշացնելուս պատճառը մեկն է, իմ անբաժան ծուկությունը:

Ապրում եմ հարբած ու ջղային, մեռած ու ողջ: Նորից հիվանդացա: Հույս ունեմ հանճարների շարքն ընկնել: Ախր անտեր մեծերը իմ տարիքում (54) մեռնում են (հիշիր Լենին, Թումանյան...): Չէ, այստեղ էլ

բախտս չբերեց: Համարյա համոզվեցի, որ մեծ չեմ: Որոշեցի ապրել, այսինքն ծամել, խմել, շնչել և նամակ չգրել:

«Քարափների երգը» հանեցին վաճառքի: Սրընթաց ծախվեց: Վախենում եմ պատճառը չնշված չարաբաստիկ տառը լինի: (Ուղարկում եմ ընդամենը մեկ օրինակ):

Հա, Տերտերը գնաց արձակուրդ 6 ամսով՝ դիսերտացիա է գրում՝ «Սուրեն Վահունիսի սովետահայ ֆուլկլորում» թեմայով:

Կաթողիկոսը Հունգարիայից գալիս է: Վարդապետը (սև սրիկան) Բաբվում է, քննադատներին տարել է խորհրդակցության:

«Սովետական Հայաստան» թերթը օրերս առաջնորդող էր գրել:

Նվաճումների մեջ դու չկաս, Ս. Խանգաղյանի, Մ. Սարգսյանի, Հր. Մաթևոսյանի անունները գիշերը չնջել են տպարանում, մնացել են ուրիշները՝ Ալաշաշյանի գլխավորությամբ: Բանաստեղծների ցուցակը հիմն էր, Հակոբ Հակոբյանից մինչև Մ. Մարգարյան և ուրիշներ: Հայ արվեստի և գրականության տասնօրյակ է Ղազախստանում: Ցուցակից հանված են Ս.

Խանգաղյանը, Վ. Դավթյանը, Հ. Սահյանը և ուրիշներ: Հետո էլ ասում են նորություններ գրեմ...

Երևանում անձրև է անընդմեջ, անընդհատ, ամպրոպներ էլ են լինում: Չանգեզգուրում երաշտ է: Որոտանը պոկել է Տաթևգետի ամբարտակ պատնեշը, տարել է մի հայ պահակի և թուրքական մի քանի գյուղ (տեսնում ես ինչ հայրենասեր գետ ունեմ, հատկապես որ իր երգչին է բաշել):

Մայիսի 25-ին բացվեց Սարդարապատի ճակատամարտի գոհերի զբոսայգի-հուշարձանը... լսեցիր զանգերի ծլնագոցը: Հրաշալի էր, երբեք այդքան շատ և կարգապահ հայության հավաք չէի տեսել: Մենակ մի տխուր մարդ կար, Շիրազն էր, ծայն ուզեց, չստացավ, լաց եղավ, գնաց:

Ինչպե՞ս է առողջությունդ, մեղրակաթ, շիլաղ, կոտլետո: Հաջորդ նամակում մանրամասն կգրեմ բո գործերի մասին: Խիկարը Մոսկվայում է: Это хорошо, или плохо?

Ինձանից, Մանուշակից, մեր ժառանգներից բարևներ քեզ, Անտոնինային, Գուրգեն Մակարիչին:

**Համբուրում եմ քեզ
Զո Համո**

ՆԱՄԱԿԱՆԻ

Նամակ Համո Սահյանին

ԼԵՎ ՕՉԵՐՈՎ

Քեմ վախենա նամակի ձևով գրված այս հոդվածը սկսել բա- նալ խոստովանությամբ, ավելի ճիշտ՝ հաղորդումով, մենք մինչև հիմա իրար չենք հանդիպել: Անձնապես ծա- նոթներ չենք: Թեև անծանոթներ, բայց մենք, այնուամենայնիվ, իրավունք ու- նենք համարելու մեզ հին և լավ ծանոթ- ներ: Ի՞նչն է իրավունք տալիս ասելու այդ բանը:

Պոեզիան: Ձեր պոեզիան, Համո Սահյան, ինձ՝ ընթերցողիս հետ անծ- նական խոր կապի տպավորություն է թողնում: Չիմանալով քնարերգուի ան- կետային տվյալները, ես ամեն ինչ, կամ էլ գրեթե ամեն ինչ գիտեմ նրա հոգե- կան աշխարհի մասին: Տաղանդի ուժով և վարպետությամբ դուք ստիպում եք հետևել ձեր հոգեկան աշխարհին: Մենք նստած ենք դեմ-դիմաց և գրուցում ենք: Մշտնադուր, մեր միջև, ձեր գիրքն է:

Չնայած չի կարելի չհամաձայնել Մայակովսկու թեմավոր խոսքի հետ՝ «Պոեզիան ճանապարհորդություն է դեպի անհիմնալիս», ես, այնուամե- նայնիվ, մտնելով բանաստեղծի աշ- խարհը, մուտք եմ գործում նաև իմա- նալի ոլորտները: Ես ճանաչում եմ բանաստեղծի այդ աշխարհը, ինչպես ճանաչում եմ ուրիշ մեկ այլ աշխարհ, բնագավառ, ոլորտ, ճյուղ: Ճիշտ է, այդ իմացությունը կատարվում է ոչ կան- խամտածված ձևով, բանաստեղծը եր- գում է, բարբառում այն, ինչ Աստված կհուշի, իսկ իմ մեջ նրա բոլոր երգերը զուգակցվում են ձուլվում են մի ընդհա- նոր երգի, նրա հոգու երգի մեջ: Թռչնի սկզբը, արևածագը և մայրամուտը, սիրո երգը, Գյազբեյի ճառագայթումը, հայրենի գյուղը, մանկության աշխարհը, մոր հետ գրուցը, - այս բոլորը միանշա- նակ և հավասարաբեռն չեն: Բայց բա- նաստեղծի աշխարհում, եթե նա իրոք բանաստեղծ է, այդ բոլորը ձեռք են բե- րում կենդանի զգացմունքային կապեր, փոխադարձ կախվածության մեջ են:

Ահա թե ինչու Ձեր պոեզիայում ես քաղաքացիական մոտիվները չեմ սահ- մանազատում անձնականից: Քաղա- քացիականը հնչում է անձնականի մեջ, անձնականը՝ քաղաքացիականի: Ձեր այդ հատկությունը շատ հեռանկարա- յին է և մեր ողջ պոեզիայի համար՝ հու- սադրող:

Գիրքը ես երկար կարդացի: Չկարո-



ղացա կարդալ մի շնչով: Խիտ է գրված և, բացի այդ, ես այն ընթերցողներից եմ, որոնք այդպես էլ չկարողացան յու- րացնել «ճեպընթերցման» նորագույն մեթոդը: Գուցե ես այդ հարցում հնաճ եմ: Ոչինչ չես կարող անել, այդպիսին եմ ու վերջ:

Այս նամակի առաջին տողերից ես պետք է խոսեմ անհարմարության այն զգացումի մասին, որ համակել է ինձ: Ես նամակ եմ գրում Ձեզ՝ Ձեր պոեզիայի մասին, որը կարդացել եմ թարգմանա- բար և ոչ թե բնագրով: Այս կապակցու- յամբ բացառված չեն անճշտություն- ներն ու վրիպումները: Ահա մագերս սպիտակել են, բայց այն լեզուն, որով ստեղծվել է մեծ գրականություն, ինձ համար մնում է անծանոթ: Փորձեցի սո- վորել, այդ գործում ինձ ոգևորում էին ինստիտուտի իմ ընկերները՝ հայերը, մանկության ընկերս՝ Լորիս Զոլմեֆյա- նը, իսկ հետո՝ Պավլո Տիգինյան և Վերա Չվյազինցան: Բայց գործը նախնական տեղեկություններից և այնպիսի հա- մով բառերից, ինչպիսիք են, օրինակ, «Կռունկը» և «Ծիծեռնակը», այն կողմ չանցավ: Ինձ համար արդարացում չկա: Ինչպիսիք բացթողում, ինչպիսիք կորուստ:

Այսպիսով, ես կիսուսեմ ոչ թե այն մասին, թե Դուք ստուգապես ինչ եք գրել, այլ այն մասին, թե Ձեր գրածնե- րի թարգմանություններից ինչ տպա- վորություն եմ ստացել ես՝ ռուս ըն- թերցողս: Դա նույնպես շատ կարևոր

է: Թեկուզև այն պատճառով, որ տասն- չորս հանրապետություն և տասնյակ ժողովուրդներ, ինչպես և ես, հայ պոե- զիային ծանոթանում են թարգմանու- յուններով: Գրելով այս խոսքերը, ես գրեթե ֆիզիկապես զգացի այն պա- տասխանատվությունը, որ կրում եմ մեր եղբայր թարգմանիչները, դրանց թվում և ինքս: Պատասխանատվություն և երկյուղ, երկյուղ և ուրախություն...

«Տարիներս» գիրքը («Հայաստան» հրատարակչություն, 1971, ռուսե- րեն, կազմող՝ Լ.Մ. Մկրտչյան») աչքի է ընկնում բազմաթեմայնությամբ, կեր- պարների այլազան բնույթով և դրանց համապատասխան տարբեր ոճերով: Գուցե այդ բոլորի պատճառն այն է, որ գիրքն ընդգրկել է շատ տարիներ (այ- սինքն՝ ձեր տարիները, Համո Սահյան): Գուցե նշանակություն է ունեցել և այն, որ գիրքը տարբեր ժամանակներում թարգմանել են տարբեր թարգմանիչներ (Պաստեռնակից մինչև Սպենդիարովա, Չվյազինցալայից մինչև Տարկովսկի, Մարչենկոյից մինչև Գրեբեն): Ես այս- տեղ չեմ թվարկի թարգմանական բոլոր հաղթանակներն ու պարտությունները, հաջողություններն ու ձախողումները: Այն աշխարհ գնացած բոլոր թարգմա- նիչները կլռեն, իսկ այս աշխարհում ողջ-ամողջ ապրողները այդ բանը չեն ների, բանի որ ինքս նույնպես թարգմա- նում եմ և գրում թարգմանությունների մասին:

Գրքի բազմապլանայնությունը, այ- նուամենայնիվ, պետք է ամենից առաջ բացատրել բանաստեղծի հոգեկան հարստությամբ: Բազմապլան լինելու խնդիր դնելը դեռևս քիչ է: Դրա համար պետք է ունենալ հոգեկան հիմք, պետք է կարողանալ մտածել ոչ թե «այստե- դից» մինչև «այնտե», այլ այն ներքին ազատությամբ, որը միշտ էլ իսկական բանաստեղծին տարբերել է կեղծից:

Նախ մի առանձնահատկության մասին, որ գրավել է իմ ուշադրությունը ընթերցման ժամանակ, առանձնապես գիրքն առաջին անգամ ընթերցելիս:

Ես շատ անգամներ եմ մաշկիս վրա զգացել ինձ համար անծանոթ բառե- րի և անունների հիպոսային ազդե- ցությունը: Բառերը քեզ անծանոթ են, բայց հուզում են: Ի՞նչն է պատճառը: Իմ կարծիքով, պոեզիայի մեջ ի սկզբանե դրված է ինչ-որ խորհուրդ, ինչ-որ կա- խարդակ:

Պավլո Տիգինյայի օրագրում այսպիսի գրառում կա. Սայաթ-Նովայից նա կար- դացել է «Յուրով հիլ, միխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսամբար իս»... տողը: Նա, իհարկե, գիտեր, թե ինչ բան է մեխակը և մանուշակը: Բայց անծա- նոթ «սուսամբարը», այնուամենայնիվ, գերում է նրան: Բառը շատ գեղեցիկ է հնչում, և ոչ մի կասկած չի մնում, որ

ինչ-որ բուրումնավետ բան պետք է նշանակի: Նույնիսկ առանց բառարան նայելու կարելի է այդ տողով գնալ սիրած կնոջ հետ ժամադրության:

Ժողովրդական հրապչ անվանում: Պոեզիան սկիզբ առավ այն ժամանակ, երբ ամեն ինչին սկսեցին անուն տալ: Այդպես են հնչում ինձ համար «Գյազբելը», «Լորագետը», «Որոտանը», «Սավարդը», «Արագը», «Հորովելը», և, իհարկե, «Նաիրին»... Տարբեր նշանակություն և արժեք ունեցող բառեր: Բայց ինձ համար, իմ այլ բառերի սովոր լսողության համար, դրանք կազմում են Ձեր բանաստեղծության հավելյալ երաժշտությունը, Համո Սահյան: Դուք դրանք չեք չարաշահում, ինչպես «կուրիտի համար» չարաշահում են Ձեր գրչեղբայրներից ոմանք: Եվ, տեղին օգտագործելով, դրանք ինձ են վերադարձնում այն գերող խոսքի հնչյունները, որ մեզ է մնացել անհիշելի ժամանակներից:

*Քարափների գլխին՝ Որոտանաբերդ,
Քարափների ծունկին՝ Ծիծեռնավանք,
Քարափների շուրթին՝ երկնքի շերտ,
Քարափների շուրթին՝ ջրվեժի գանգ...*

Առանց այդ արբեցուցիչ, զնգուն անունների ի՞նչ կարող է նշանակել երկնքի ու ջրվեժի մասին ձեր հիշատակությունը...

Ձեր գործերում կա նաև թվերի պոեզիա, թվերի կախարհանք: Դա թվահմայություն, հեքիմություն չէ, այլ թվի ժողովրդական հավատք: «Բալլադ յոթ ձիավորի մասին»՝ այդ շարքի հիմնական ստեղծագործությունն է: «Յոթ անգամ կանչեց աթորը թառին, յոթ անգամ խփեց կայծակը սարին, յոթ անգամ ժամի գանգը ծնկաց, յոթ բանակ եկավ, բերդը պաշարեց ու յոթ ձիավոր սլացավ գյուղից»: «Յոթը» հնչում է որպես կախարհանք...

Ես գիտեմ, հայ ընթերցողի համար այդ թիվը սուրբ է (ի դեպ, հարկավոր է գրքում ծանոթություն գրել): Եվ այսպես՝ ամբողջ բալլադը: Դա ռուս ընթերցողին արհեստական և ձանձրալի կթվար, եթե չլիներ դրա իսկական ժողովրդական բալլադային հիմքը: Հիմնականում խոսվում է հայրենիքի համար զոհված յոթ ռազմիկների մասին: Տարեկան յոթ անգամ յոթ լույս է վառվում նրանց յոթ գերեզմաններին... Յոթ՝ նամակ է գալիս դարբնին ու դարբնի մեջքը յոթ անգամ ծռվում է... Յոթ անգամ նա մուրճը խփում է հին սալին: Յոթ անգամ: Հետո դարբնիը յոթ թռո է ունենում: Թիվը բանաստեղծության մեջ շարժվում է ոչ որպես մարզադաշտի «թվատախտակ», ոչ էլ որպես լուսային ռեկլամ տան վրա, այլ որպես պատմողի կենդանի ձայն: Նա չի կարող զրույցը վարել առանց մի ձեռքի հինգ, ապա մյուս ձեռքի երկու մատները ծալելու: Նա հետևում է սովորությամբ

և, այդ սովորությունը մեզ համար նորություն է:

Ձեր ստեղծագործություններում կան ուրիշ թվեր ևս, բայց թողնեմ դրանք և զբաղվեմ Ձեր կերպարներով, քնարերգությամբ:

Համո Սահյան, հասկացեք իմ ուրախությունը և սրտնեղությունը: Դուք գրել եք բանաստեղծություններ, որոնք պետք է ես գրեի: Դուք գրել եք դրանք իմ փոխարեն: «Չծանրանալ»... Չծանրանալ թռչչի ժամանակ: Ուժեղ է ասված: Կյանքի թռչչը դժվարին է: Տարիների ընթացքում մարդը բեռնավորվում է գործերով, պարտականություններով, կշռումներով, հիշողություններով, հիվանդություններով, վշտերով: Կարևորն այն է, որ չծանրանաս թռչչի ժամանակ: Ինչպե՞ս է դա ձեռք բերվում: Ձեր պատասխանը միանշանակ չէ: Այդ մասին է Ձեր քնարերգությունը: Իրավացի է Ալլա Մարչենկոյի՝ գրքի նախաբանի հեղինակը, երբ գրում է, որ Ձեր պոեզիան, «իր ողջ պարզությամբ հանդերձ, բարդ է»: Այդպիսին է նաև կյանքը՝ իր ողջ պարզությամբ հանդերձ բարդ է, իր ողջ բարդությամբ հանդերձ՝ պարզ...

Ինչպիսի գծեր են երևում Ձեր պարզ-բարդության մեջ:

Դուք վերցնում եք առօրեական փաստը, արտաքինից ոչնչով աչքի չնկնող փաստ, որի կողքով անտարբեր կանցնեն շատերը: Դրա հետ «ինչ-որ» բան եք անում, որից հետո փաստը ներկայանում է կերպարանափոխված: Ոչ զգեստավորված, ոչ էլ փոքր իսկ գունազարդված, այլ՝ հենց կերպարանափոխված: Ես կավելացնեմ նաև՝ ոգեշնչված: Դուք այն գուրգուրանքով պահել եք Ձեր սրտի մեջ, շփել եք ձեռքերով, տաքացրել: Դուք հենց ինքներդ էլ հուշում եք, թե իրականում ինչ է կատարվում: *Ծածանվում է ծառն ի վար*

*Ծիածանի մի ծվեն...
Իմ երագից է պոկվել,*

Կանաչ-կարմիր երագից:

Քար: Եգ: Գետ: Քարափ: Մասրենի: Թռչուն: Ամպ: Արևմուտ: Ճանապարհ: Երգ: Այգաբաց: Ես դիտմամբ եմ առանձնացնում այս գոյականները: Դուք վերցնում եք դրանք իբրև բնության պարզ: Եվ սովորական առարկայի մեջ բացում եք նրա աշխարհը: Բայց առարկայի աշխարհը չէր բացվի, եթե դրա հետ միաժամանակ չբացվեր Ձեր աշխարհը, պոեզիայի աշխարհը:

Քարափ կիրճում: Տրվում են նրա նկարագիրը, նրա բնավորությունն ու սովորությունները: Նկարչի համար այսքանը բավական կլիներ, բանաստեղծի համար՝ ոչ: Եվ քնարերգուն նկարն ավարտում է խոստովանություն-համեմատությամբ, նրա աչքը քարափի և ինչ-որ հարազատ մարդու միջև նմանություն և տեսնում:

*Մատանան տանի,
Ինչ-որ հեռավոր նմանություն կա
Խաչիպաս պասիսի*

Եվ այդ հյուսիսկալ քարափի միջև:

Գուցե հանուն այս մեկի չարժեք բանաստեղծություն գրել: Բայց այստեղ ավելի մեծ բան կա, քան համեմատությունն է: Քարափը շչավորված է, իսկ մարդը հավերժացվել, դարձել է նույն ինքը բնությունը, ծովվել նրա հետ:

Վերցված է պարզ երևույթ, բայց քնարական կերպարի խորանալու, աճելու հետ բարդանում է այդ երևույթը և դուրս է գալիս առաջադրված թեմայի սահմաններից:

Ձեր բանաստեղծություններում պարզը դառնալով բարդ և բարդը դառնալով պարզ, հոգի չեն հանում, հանելուկներ չեն առաջադրում: Ընդհակառակը, գնալով ավելի ու ավելի եմ աշխարհին ու ինձ նայում այն չափով, որ չափով Դուք հնարավորություն եք տալիս ինձ հետևելու Ձեր սպրումների և տրամաբանության ընթացքին: Ինձ համար կարևոր չէ Ձեր խորհրդածությունների հաջորդականությունը. շատ ավելի կարևոր է լարվածությունը, Ձեր ինքնատիրապետումը: Քնարերգուն չպետք է վախենա ինքնազնչացումից: Շատ ավելի վտանգավոր է նրա համար անհոգությունը, առավել ևս՝ սնապարծությունը - (մեր պոեզիայում դրա օրինակները որքան ուզեք կան):

Դուք պնդում եք, թե շատ թերություններ ու պակասություններ ունեք: Եվ դրա հետ մեկտեղ ավելացնում եք. «... Որոնք թաքցնել չկարողացա, այդ էլ իմ վերջին պակասությունը»...

Այստեղ ես Ձեզ հետ համաձայն չեմ, Համո Ասիյան: Դա Ձեր առավելությունն է: Եթե ես ծանոթ չլինեի Ձեր մյուս բանաստեղծություններին, ապա այդ պնդումը կընդունեի որպես բառախաղ:

Քնարերգուն կարող է և չլինել կատարելության մարմնացում, բայց նրան բնորոշ է կատարելության ձգտումը: Ես պատրաստ եմ Ձեզ հետ վիճելու, Համո Սահյան, ապացուցելու, որ Ձեր ստեղծած կերպարների մեջ կան նաև քիչ հաջողվածներ, անցողիկներ, անկարևորներ: Դա պատահում է յուրաքանչյուր վարպետի հետ: Բայց այն, ինչ գերում է ինձ Ձեր գրքում, սեփական անձի անկատարելության գիտակցումն է: Դա արտացոլված է ոչ թե ուղղակի, ճակատային ձևով, այլ թափանցում է տողերի արանքից, ինչպես սարերի օդը և հով է սփռում նրանց վրա, ինչպես սարի քամին:

Ընդհանուր առմամբ գրքի, ավելի ճիշտ, նրա հեղինակի՝ Ձեր մասին ասված այս խոսքերից հետո ես ինձ թույլ եմ տալիս հայտնել առանձին տողերից, էջերից, կերպարներից ստացած իմ տպավորությամբ





յունները... Այդ տպավորությունները շատ են: Եթե սկսեմ այսօր առավոտյան, վաղը երեկոյան չեն վերջանա: Այս ուղղությամբ Դուք շատ աշխատանք եք կատարել: Ես տեսնում եմ աշխատանքը և նրա արդյունքները: Դրանք ակնհայտ են և խոսելու շատ բան կա: Այդ պատճառով էլ ես իմ տպավորություններն առանձնացնում և խմբավորում եմ:

Ուզո՞ւմ եք, Յամո Սահյան, անմիջապես հերքեմ այն տեսակետը, ըստ որի Դուք քնարերգու մանրանկարիչ եք և ապացուցեմ, որ Դուք էպիկ-մոնումենտալիստ եք: Առերևույթ Ձեր «Մասրե-նի» բնանկարային փիլիսոփայական բնույթի քնարական բանաստեղծություն է:

- Ինչպիսի՞ն պատկեր, - ասացի ես առաջին ընթերցումից հետո:

- Ինչպիսի՞ն խոր միտք է դրված այստեղ, - ասացի ես, վերընթերցելով Ձեր տողերը:

Քարափը ծածկել է երկինքը և ինքը դարձել երկինք: Նրա վրա տարածվել են մասրենու արմատները: Մասրենու համար այդ քարափը միաժամանակ էլ հող է, էն երկինք: Չողմերը ի վիճակի չեն նրան պոկելու այդ քարափից: Մասրենու տեսքը մտածել է տալիս քարափների, բույսերի, մարդկանց, ժողովրդի ճակատագրի մասին:

Քանի քարեղեն զանգվածը նրա՝ Մասրենու համար երկինք է ու հող: Օ՛, սա Յայաստանի ճակատագիրն է, նրա բնանկարը: Սա պատմության թանձրույթն է և ոչ թե նկար: Իհարկե, սա էպիկականորեն մոնումենտալ է, չնայած կառուցված է քնարական միջոցներով:

Ինձ հմայեց Ձեր Խաչիպապ պապը: Ինչպիսի՞ն ծերունի: Ինչպիսի՞ն հարագատությամբ է մարմնավորել ժողովրդի գծերը: Ամեն ինչի վարպետ, նա ստեղծվել է բնության կողմից, որպեսզի կատարելով իր բոլոր բարի գործերը, նորից ձուլվի բնությանը: Այդ մեծ շրջադարձը Դուք ցուցադրում եք համոզիչ կերպով. «Խառնվել այն հողին, որ իրեն սնել է»: Խաչիպապի ժպիտն ու իմաստությունը հայ պատմական կյանքի ժպիտն ու իմաստությունն են: Կարելի էր այնպես ցուցաբերել մի շարք պատմելի Խաչիպապի մասին: Բայց Դուք այդ ճանապարհով չեք գնացել: Դուք քնարերգության մեջ որմնանկար եք արել: Այժմ ես այսպես եմ ծանոթ Խաչիպապին, որ եթե հանդիպեի նրան փողոցում (իսկ նա ժողովրդի մեջ միշտ էլ կենդանի է, բանի որ ինքը հենց ժողովուրդն է), կբարևեի և կխոնարհվեի նրա առաջ: Մինչև գետին կխոնարհվեի, որովհետև նա ինքը Յայաստանն է:

Դուք խոսքի նկարիչ եք: Բնանկարի մեջ Դուք կարողանում եք տալ դիման-

կար, դիմանկարի մեջ՝ բնանկար: «Օրոր էր ասում աշունն անտառին, բայց դեռ անտառի քունը չէր տանում»: Այստեղ բնանկարը և խմբակային նկարը (մայրը և երեխաները օրորոցում) ձուլվում են իրար: Քարափներն իրար են նայում, ինչպես արծիվները թռչեցից առաջ: Յետո՞ւ՝ «երազների ծվենները» և «հուշերի անդունդները» ստվերագծվում են բնության ֆոնի վրա: Իսկ լորը Ձեր բանաստեղծության մեջ կտուցին ծիածան է տանում:

Սարի ստվերը փարվում է ժայռին, ժայռի ստվերը ծառին է փարվում:

Դա ես տեսնում եմ: Դրանք բառեր են, որ թղթից պետք է փոխադրվեն կտավի վրա: Այնպես, ինչպես Ձեր մյուս տողերը:

Խոսելով կտավի մասին, ես պետք է խոսեմ նաև գույների մասին: Դուք կուրորտի վարպետ եք: Ձեր ներկավազաները շոյալուրջությամբ պետք է զգա յուրաքանչյուր անկանխակալ մարդ: Քամին Ձեր մի բանաստեղծության մեջ նախ կանաչ է. ինչպես Լորկայի մոտ, հետո՝ կարմիր, հետո դեղին, հետո՝ սպիտակ: Քամիների մի ամբողջ գամմա: Եվ դա խաղ չէ: Ձեր քամին կապույտ է (այնուամենայնիվ, կապույտը Ձեր սիրած գույնն է): Ամպրոպից հետո երկնքի կապույտը Ձեր բանաստեղծության մեջ ավելի կապույտ է, սպիտակ շուշանը ավելի սպիտակ, արևը՝ ավելի բարի: Գույնի, ապրումի, մտքի ինտենսիվությունը մանկության կապույտ աշխարհն է: Ամպի փաթիլը ոգու լուսարձակում է: Գույնն արտահայտում է մարդու հոգեկանը, նրա զգացումներն ու մտքերը: Մայրամուտը կարմիր է ներկում լեռները, իսկ հետո, մահվանից առաջ, ուղղում է դարձնում կապույտ: Գիծը և գույնը կրկնում են հեղինակի ներքին ժեստը:

Յատուկ արված համեմատություն ինձ հարկավոր չէ: Դրանք գալիս են ոչ թե սրտից, այլ չնայած մեծ, բայց խորամանկ վարպետությունից: Յավաստեք ընթերցողիս ընկալմանը, Յամո Սահյան: «Կայծակ էր, խփեց, բեկվեց, թայրտաց»: Առաջին տունը շատ լավ է, պատկերը կապում է մտքին: Երկրորդ տունը բացատրում է առաջինը: Ինչ-որ արհեստական բան կա Ձեր այդ համեմատության մեջ: Մի՞թե դա պետք է: Ես չեմ պնդում, հարցնում եմ: Եկեք մտածեք:

«Վերադարձի» մեջ ինձ գրավեց մասրենու ստվերը. «Կարկատանաձև ստվերն է կախել կճուճի չեչոտ այտերի վրա»: Սա հայուցինացիայի չափ տեսանելի է:

Կարելի է հաղորդել պատկերը և չկարողանալ հաղորդել վիճակը: Ուրախայի է, որ Դուք դրանում ևս չեք հիասթափեցնում: Ընդհակառակը, շատ ճիշտ ու նուրբ եք տալիս հոգեվիճակները:

Ահա Դուք սարսափում եք օտարության մեջ ապրելու և մեռնելու մտքից: Ինչպե՞ս կարելի է ապրել այն հողում, ուր ամեն մի քարից, աղբյուրից «իմ աչքերով իմ աչքերին նայող մանկություն չկա»: Այս երկու հիմնալի հայացքները տեսնում և զգում ես: Տրված է վիճակը:

Բացի այդ, վիճակը տրված է ոչ թե հեռավոր ակնարկներով, այլ՝ բանաստեղծական ճշգրիտ բանաձևերով: Ահա թե ինչպիսի տեսք է ստացել դա Ձեզ մոտ: Մարդը տիրապետում է այն ամենին, ինչ որ պետք է, և չի մտածում այն մասին, ինչ որ պետք չէ: Նա կարծես թե ամեն ինչ ունի, բայց, այնուամենայնիվ, երջանիկ չէ... Թվում է, սա օրագրային գրառում է, թվարկում, անձնական բնույթի նշումներ: Բայց բանաստեղծի գրչի տակ այն ձեռք է բերում ընդհանուրացման ուժ:

Ես մեկը մյուսի հետևից կարդում եմ Ձեր բանաստեղծությունները Ձեր մասին, բնության մասին, մարդկանց մասին, իսկ իմ առջև հանում է լարված և հետաքրքիր կյանքով ապրող ժամանակակից կերպարը: Ինձ թվում է, թե ես ոչ միայն բանաստեղծություն եմ կարդում, այլ նաև զրուցում եմ իր սիրտն ինձ վստահած մարդու հետ:

Կարդալով Ձեզ, ես ուրախացա, որ Յայաստանում, տաղանդներով աներևակայելիորեն հարուստ Յայաստանում, կա այնպիսի բանաստեղծ, ինչպիսին Դուք եք:

Կարդալով Ձեր գիրքը, ես շատ անգամներ թաքուն մտածել եմ. Ձեզ հաջողվել է գրել այն, ինչ ես կուզեի գրել: Իմ մտադրությունն իրագործել էք Դուք: Դա ծնում է ուրախության և, իհարկե, շնորհակալության զգացում:

«Այստեղ մարդ է այրվել». Ֆետի այս տողը, որ Բլոկն օգտագործել է որպես բնաբան, նորից ու նորից վերհիշեցի, երբ փակեցի Ձեր գիրքը և Մոսկվայի իմ բնակարանից իջա փողոց՝ Որոտանի վրայի ամպի և հեռու, հեռու, հեռու նախրյան դայր բարդու զգացողությամբ: Սրանք իմ խոսքերը չեն, սրանք կարդացել եմ Ձեր գրքում, Յամո Սահյան:

Այստեղ չեն լինի եզրակացություններ, շնորհավորանքներ, մաղթանքներ, գովասանքներ, պարսավանքներ և այլն:

Ես լսեցի Ձեզ, Յամո Սահյան: Ես Ձեզ լսեցի...

*Ձեզ համար բարի մարդիկ,
Մատաղի գառ եմ դառնալու,
Ձեր ճամփին շվաք արած
Սոսի տուրք ծառ եմ դառնալու,
- Քարի պես ընկեք ճամփին,
Թե մի օր չար եմ դառնալու,
Թող չարի ճամփին ընկնեմ,
Թե մի օր քար եմ դառնալու:*

ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑ ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆԻ ՀԵՏ

Համո Սահյան. «Գլխավորը Շուշիի ազատագրումն է»



ՉՈՐԻ ԲԱՆԱՅԱԼ

1 978 թվականին էր: Ճամփորդելով Հայաստանի բոլոր շրջաններով և բնակավայրերով՝ առանց բացառության, ես, ի բարեբախտություն ինձ, Կայինիևոյում հանդիպեցի Համո Սահյանին: Նա այնտեղ էր եկել ընթերցողների հետ ավանդական հանդիպման: Մենք երկար գրուցեցինք: Ուսապարկա ծանրացավ ևս մեկ գրքով: Այն վերագրված էր «Կանչե, կռու՛նկ»: Դա Համո Սահյանի բանաստեղծությունների ժողովածուն էր՝ տպագրված Մոսկվայում: Կարդալով ցանկը՝ հասկացա, որ համարյա բոլոր բանաստեղծություններին արդեն ծանոթ եմ: Պոետ-փոփոստիկա Համո Սահյանի բանաստեղծությունները ինձ միշտ թվացել են ոչ միայն աստվածատուր, այլև տրված բնությունից, ընտանեկան օջախից, Հայաստանի բարեբախտության, բրիտանական իսպառիչ: Հարցազրույց տալու համաձայնությունից հետո նա խոստովանեց, որ բոլորովին վերջերս բավական երկար գրույց է ունեցել ռուս տաղանդավոր գրաբնաստեղծ Յունևա Մորիցի հետ, և որ գտնվելով այդ երկխոսության տպավորության տակ՝ երևի ինչ-որ պատասխաններ կրկնվեն: Իսկ ես, ցույց տալով նրան իր իսկ գիրքը, տվեցի առաջին հարցը.

– **Չէի՞ք կարող գտնե մոտավորապես, ինչպես ասում են՝ երկու բառով պատմել, թե ինչպես եք մտադրացել այս գիրքը:**

– «Կանչե, կռու՛նկը», ինչպես և իմ բոլոր գրքերը Հայաստանի մասին են: Ոչ թե ընդհանրապես Հայաստանի, այլ իմ Հայաստանի մասին: Բանաստեղծական

տեխնիկային տիրապետող խելացի և ընդունակ մարդը կարող է գրել հարյուր սթանդարտ բանաստեղծություն: Բայց եթե դրանք ի մի բերենք մեկ գրքում, կարող է տպավորություն ստեղծվել, թե հարյուր տարբեր պոետներ գրել են մեկական լավ բանաստեղծություն: Նման «անթողգիա» կազմելը դժվար չէ: Շատ ավելի դժվար է ստեղծել այնպիսի բանաստեղծական աշխարհ, որը քեզանից առաջ գոյություն չի ունեցել: Չգիտեմ, ունա՞յ են արդյոք «տիեզերք արարել», բայց իմ սրբազան պարտքն էմ համարում բացահայտել և ռուս ընթերցողին ներկայացնել այնպիսի Հայաստան, որին նա դեռևս ծանոթ չէ:

– **Իսկ ինչո՞ւ է տարբերվում ձեր Հայաստանը, ասենք, Պարույր Սևակի կամ Շիրազի Հայաստանից:**

– Այդ մասին ավելի լավ կասեն գրաբնաստեղծությունները: Կողքից լավ է երևում: Չէ՞ որ հարցը միայն այն չէ, որ ամեն հայ պոետ ունի Հայաստանի սեփական պատկերը, որն «իրեն նայում է իր մանկության աչքերով»: Հարցը նաև այն է, թե բանաստեղծական ինչպիսի խնդիրներ ենք դնում մեր առջև... Ես, օրինակ, «Կանչե, կռու՛նկ» ժողովածուն կազմելիս ցանկանում էի, որ ընթերցողն ասես սեփական աչքերով տեսնի իմ հողը, ճանաչի այն, առնի նրա «համ ու հոտը»... Որպեսզի իր մաշկի վրա զգա նրա «ազահ» տապալն ու փառավոր գովությունը... Ի դեպ, Հայաստանի այդ ֆիզիկական ընկալումը անհրաժեշտ է և ինձ: Եթե ես, օրինակ, նստած եմ գրասեղանի մոտ իմ երևանյան բնակարանում և գրում եմ իմ մանկության հողի, իմ Լորագետի մասին՝ չդադարելով ինձ զգալ երևանյան բնակարանում, ապա ոչինչ չի ստացվի: Ես պետք է ֆիզիկապես գտնվեմ այնտեղ, իմ մանկության մեջ, վերանամ այստեղից և ամեն ինչ նորից տեսնեմ, շոշափեմ, զգամ: Եվ միայն այն դեպքում, երբ այդ ամենը, ինչ ես տեսա, շոշափեցի, զգացի, կդառնան բառ, իրենք իրենց անուն կտան, այդ ժամանակ էլ բանաստեղծություն կստացվի...

– **Ինչպես հասկացա, դուք ցանկանում եք ձեր ապագա ընթերցող-**

ներին գուշացնել, որ ձեր գրքում չեն գտնի ոչ պոետտային, ոչ հրապարակախոսական, ոչ էլ պատմական բանաստեղծություններ, որ դուք համոզված «բնակարիչ» եք և ձեր գլխավոր թեման բնությունն է, ավելի ճիշտ՝ այն, ինչ այսօրվա բնադատներն անվանում են «մարդու և բնության փոխհարաբերությունների հոգևոր տեսանկյուն»:

– Համոզված չեմ, որ ձեր առաջարկած տարբերակումը այսօր դուր կգա ընթերցողին, երբ «բնությունը և մենք» պորթլեմը դարձել է շատ սուր սոցիալական պորթլեմ: Այսօրվա ընթերցողը գիտի, որ բանաստեղծական «բնակարը» կարող է իր մեջ ավելի շատ պատմություն պարունակել, քան կոնկրետ պատմական թեմայով բանաստեղծությունը, և շատ ավելի հրապարակախոսական լիցք ունենալ, քան մի որևէ հանգամանակ հոգված...

– **Ուրեմն, դուք գտնում եք, որ այսօր փոխվել է ընթերցողի վերաբերմունքը բնությանը նվիրված բանաստեղծությունների նկատմամբ: Իսկ որևէ բան փոխվել է այդ կարգի բանաստեղծությունների մեջ:**

– Անպայման: Արվեստագետի աչքն ավելի սևեռուն է դարձել, ավելի կենտրոնացած: Անցյալում, երբ մարդն ապրում էր բնության գրկում, նա նկատում էր իր աչքին զարնողը՝ վարդը, կակաչը, այսինքն՝ այն, ինչ վառվառն էր, շքեղ: Տրորում էր դադար, բայց տեսնում էր կակաչը... Այսօր հայ պոետին բարձրագույն բանաստեղծականության կարգին է դասել և դադար: Իմ կարծիքով, նա երբեք այդքան դեմոկրատ չի եղել «բնորդ» ընտրելու հարցում: Սա հատուկ է գեղանկարչությանը: Իսկ ինչ վերաբերում է «փոխհարաբերությունների հոգևոր տեսանկյունին», ապա այստեղ էլ ակներև են փոփոխությունները: Իսահակյանի համար բնության մեջ ինչ-որ աստվածային բան կար, այն թվում էր անիմանալի և գլխավորը՝ հավերժական... Մարդը անցողիկ է, իսկ բնությունը հավիտենական: Այսօր բնությանը վերաբերվում են ինչպես բարեկամի, որը, դժբախտաբար, կարող է շուտով այլ աշխարհ գնալ...

Իսկ եթե խոսենք ավելի փոքր մասշտաբի փոփոխությունների մասին, այսպես ասած՝ մի ժողովածուից մինչև մյուսը, ապա կասեմ, որ Նախկինում ես բնությունը հասկանում էի իմ միջոցով, այժմ ուզում եմ ինձ հասկանալ բնության միջոցով: Նախկինում ես ասում էի «լեռան ճակատ»: Իսկ վերջին բանաստեղծություններումս կրծքի մասին գրել եմ «լանջ»...





– **Յրանտ Մաթևոսյանը իր թարգմանված գրքերը համարում է իր զավակները, բայց, ինչպես մի անգամ ասաց, ունց որ խորթ զավակները: Իսկ դուք ի՞նչ եք մտածում ձեր թարգմանված գրքերի և ընդհանրապես թարգմանության պրոբլեմի մասին:**

– «Բանաստեղծական գեներտիկայի» տեսակետից Մաթևոսյանը, իհարկե, իրավացի է, իսկ մարդկային տեսակետից խորթ զավակը հաճախ կարող է ավելի լավը լինել, քան հարազատը: Ի դեպ, Յրանտ Մաթևոսյանը՝ այդ փայլուն արձակագիրը, իզուր է կարծում, որ իր գործերը թարգմանությունից ինչ-որ բան կորցնում են: Իմ կարծիքով, նրանք հրաշալի են ինչպես նաև ռուսերեն:

Իսկ այ պոեզիան, ի տարբերություն արձակի, բառի մակարդակով անթարգմանելի է: Յիմա բացատրեմ, թե ինչ են ուզում ասել: Ասենք, երեխան ձեզ հարցնում է, թե եզն ինչ բան է: Դուք բացատրում եք և նույնիսկ կատակով ասում եք, որ եզը համարյա թե ցուլն է, իսկ ցուլը կովի ամուսինն է, հորթի հայրը... Այդպես կլինի ռուսերեն, ասենք, բոլոր լեզուներով էլ... Թվում է, թե այստեղ ոչ մի դժվարություն չկա: Ընդամենը մի բառ պիտի թարգմանվի: Բայց չէ՞ որ այդ բառը տարբեր լեզուներում տարբեր կենսագրություն ունի. ինձ համար, օրինակ, դա մի վիթխարի, աներևակայելիորեն բարձր, հայոց լեզվի ամենաթանձր բառերից մեկն է: Նրա մեջ կա և իմ ժողովրդի կերպարը, նրա անցյալը, աշխատանքի պատկերը: Դե՞ որ հայ գեղջուկի համար եզը եղել է ոչ թե պարզապես աշխատուժ, փոխադրական միջոց, այլ ընկեր, գրուցակից, ունկնդիր: Իզուր չէ, որ մեր բանահյուսության մեջ ամենատարածված ժանրը հորովելն է, հողագործի երգը, իսկ նրա գլխավոր հերոսը՝ եզը...

Ոչ, բառը չի կարելի թարգմանել... Պետք է թարգմանել բանաստեղծին, նրա ոգին, նրա պոեզիայի մթնոլորտը...

– **Անդրեյ Վոզնեսենսկին դա անվանում է ուժային հոսանք, գրողի հոգևոր ենթագիայի դաշտ...**

– Այդպես էլ կարելի է ասել: Իսկ գլխավորը՝ բանաստեղծության ներքին ձև, ներքին կառուցվածք, կամ ավելի լավ է՝ ճարտարապետություն, բանգի լավ բանաստեղծը ամենից առաջ լավ ճարտարապետ է: Եվ հենց ինքը Անդրեյ Վոզնեսենսկին էլ խոսքի փառահեղ ճարտարապետ է:

– **Եթե չեն սխալվում, «Կանչե, կռունկը» ձեր առաջին ժողովածուն է, որն ամբողջությամբ թարգմանել է մի մարդ՝ Ալլա Մարչենկոն: Մինչև այժմ ձեր գրքերը լույս էին տեսնում մի բանի բանաստեղծների թարգմանությամբ: Ո՞ր մեթոդն էք համարում ավելի հեռանկարային՝ կոլեկտիվ, թե անհատական:**

– Իմ կարծիքով, տեսականորեն ընդհանրապես չի կարելի այս հարցը ոչ դնել, ոչ էլ լուծել: Ամեն մի մեթոդ, ինչպես դուք արտահայտվեցիք, ունի իր առավելությունները և թերությունները: Կոլեկտիվ թարգմանությունը կարող է բացահայտել բնագրի բազմազանությունը, կտրատել այն: Ինչ վերաբերում է կոնկրետ այս գրքին, ես շատ գոհ եմ Ալլա Մարչենկոյի թարգմանությունից: Մենք հին բարեկամներ ենք, հասկանում ենք իրար, և դա, կարծում եմ, շատ է օգնում գործին:

– **Կարդալով «Կանչե, կռունկը», ես ակամա զգում էի, որ որոշ մոտիվներ կրկնվում են, որ հանդիպել եմ դրանց ձեր մյուս գրքերում...**

– Ոչ մի «ավելորդ» բան չեմ տեսնում այդ թվացյալ կրկնությունների մեջ... Դե՞ որ ես անընդհատ որոնում եմ ինքս ինձ, ինձ իմ մեջ կորցնում եմ, գտնում, նորից եմ կորցնում և նորից գտնում... Իմ վերջին գիրքը կոչվում է «Իրիկնահաց»... Դամապատասխան վերնագիր է: Վաթսուս անց է արդեն: Մայրամուտը մոտ է: Իսկ հնում իրիկնահացից հետո մարդիկ պառնում էին քնելու: Ելեկտրականություն չկար, մոմ վառում էին միայն տոն օրերին: Ով շատ էր հոգնել օրվա ընթացքում, իսկույն քնում էր: Ով շատ հոգնել ուներ՝ քունը չէր տանում մտածելուց: Միտաբարները բոլորովին չէին քնում... Նրանք մտածում էին, թե վաղը ինչ պիտի ասեն սիրածին: Տանջվում էին, բառեր էին փնտրում: Եվ լուսադեմին գտնում էին: Իսկ չէ՞ որ ամեն անգամ խոսում էին նույն բանի մասին՝ սիրո մասին:

Եթե անընդհատ մեր շուրջը նայենք, եթե անընդհատ վախենալով ապրենք, թե հանկարծ չկրկնենք մեզ, պոեզիան կդադարեցնի իր առաջընթացը... Ինչպե՞ս կարելի է Շեքսպիրից ու Պուշկինից հետո ընդհանրապես բանաստեղծություն գրել: Ինչ էլ որ ասես՝ կրկնություն կլինի, միայն թե ավելի թույլ... Բայց չէ՞ որ սերնդե սերունդ բանաստեղծներն ավելի են շատանում, և ընթերցողը գրախանութում փնտրում է ոչ միայն Շեքսպիրին ու Պուշկինին, այլև իր ժամանակակիցներին: Ի՞նչու եմ, Թումանյանի հարյուրամյա հոբելյանի օրերին ես ելույթ էի ունենում Լեռնային Ղարաբաղում: Պատմում էի Թումանյանի մասին ու կարդում նրա բանաստեղծությունները: Դահլիճը լավ էր լսում: Իսկ հետո նույն այդ մարդիկ ինձ խնդրեցին, որ իմ բանաստեղծությունները կարդամ: Նաև իմ բանաստեղծությունները...

– **Դուք իրավացիորեն բողոքում եք այն հայ բանաստեղծներից,**

որոնք, քերականություն լավ չիմանալով, իրենց իրավունք են վերապահում «գրել առանց կետադրական նշանների»: Բայց ես այնքան էլ չեմ հասկանում, թե ձեզ ինչու դուր չի գալիս, որ նրանք տարվում են բանահյուսությամբ, մասնավորապես հին ժողովրդական ողբերով... Զե՛ որ ինքներդ եք ասում, «Պոեզիան, մյուս բաներից բացի, մարդկանց պատմում է մեզ շրջապատող բնության հեթիաթային, արտառոց և վիթխարի փոխհարաբերությունների մասին»: Իսկ բանահյուսությունը հենց փոխաբերություն է, բնության վեհասքանչ փոխակերպությունների բանալին...

– Դուք ինձ չեք հասկացել... Ես բնավ դեմ չեմ բանահյուսությամբ տարվելուն, մասնավորապես նրանք չեն անսիրելուն: Ես դեմ եմ բանահյուսության ընդօրինակմանը, ոճավորմանը, ընդհանրապես դեմ եմ ոճավորմանը, բանգի որտեղ կա ոճավորում, ճշմարտություն չի մտնում այնտեղ... Կարելի է գուցավել ամենաընտիր բանաստեղծական կոստյումով: Բայց պետք է այնպես կրել այդ հագուստը, որ բանաստեղծության բառային քայլքում չզգացվի ջինս հագնելու սովորությունը (փոխաբերական իմաստով)... Այլապես ստացվում է ոչ թե մարմնավորում, այլ սովորական բանաստեղծական դիմակահանդես: Եվ ինչպես միշտ՝ մատնում են մանրաբնություն: Ահա մի օրինակ: Մեր բանաստեղծներից մեկը բանաստեղծություն է գրել կիրճի մասին, որտեղ ժայռի վրա փորագրված են ինչ-որ հին թագավորի խոսքերը: Բանաստեղծն ասում է, որ ինքը կանգնել է այդ ժայռի առջև ու գլուխը կախել: Կեղծիքի նկատմամբ զգայուն ընթերցողը իսկույն կզգա, որ հեղինակը չի եղել կիրճում, համենայն դեպս գրելիս իրեն չի զգացել այդ ժայռի առջև կանգնած, չէ՞ որ հինավուրց ասույթը փորագրված է ժայռի գագաթին և այն տեսնելու համար պետք է գլուխը ոչ թե կախել, այլ բարձրացնել:

– **Եվ վերջին հարցը: Շատ բանաստեղծներ իրենց փորձում են արձակի մեջ: Օրինակները անթիվ են և, այսպես ասած՝ մեծերից: Այնպես որ չեմ ուզում այստեղ նշել: Դուք արդյոք չունե՞ք այդպիսի ցանկություն:**

– Ես համաձայն չեմ այն մտքի հետ, իբր որոշ բանաստեղծներ փորձում են արձակ գրել: Եվ օրինակ են բերում Իսահակյանին ու Թումանյանին: Արձակ գրող բանաստեղծը բնավ էլ փորձ չի անում: Զե՛ որ նա գործ է: Եվ չէ որ արձակում էլ մնում է բանաստեղծ: Մնում է ինքը: Այդպիսի ցանկություն ես չեմ ունեցել: Գուցե այն պատճառով, որ արձակով ավելի հեշտ է և «հարմար»

ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑ ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆԻ ՀԵՏ

Համո Սահյան. «...Չորյանն ինձ համար այնպիսի՝ հեղինակություն է, նա մեծ գրող է, եվրոպական մասշտաբի»

ԿԱՐԻՆԵ ՌԱՏԱՅԵԼՅԱՆ

Գրող, գրականագետ,
Դերենիկ Դեմիրճյանի
տուն-թանգարանի վարիչ



Համո Սահյանի հետ հանդիպմանը երկար էի սպասել. նա խուսափում էր հարցազրույցից: Բայց համառությամբ, թե՛ ԵՊՀ-ում 1990 թվականի գարնանը կայացած մի հանդիպման ժամանակ Հրանտ Թամրազյանի՝ իմ մասին հայտնած կարծիքի շնորհիվ արժանացա նրա բարեհաճությանը: Հրանտ Թամրազյանի առաջարկով ես և Ազնիվ Չիլինգարյանը՝ ԵՊՀ ասպիրանտներ, լուսանկարվեցինք երկու մեծերի հետ, և այդ լուսանկարը դարձավ իմ անձնական արխիվի թանկ մասունքներից մեկը: Պահը չկորցրի, անմիջապես ձեռք բերեցի հանդիպման օրվա, ժամի պայմանավորվածությունը: Հանրային ռադիոյի տրամադրած տեխնիկայով ես և օպերատորը գնացինք Համո Սահյանի՝ Աղայան փողոցում գտնվող բնակարանը: Տիկին Սվետան մեզ ընդունեց հյուրընկալ հայ տանտիրուհու նման, ամբողջ ժամանակ մնաց այն սենյակում, որտեղ արվում էր ծայնագրությունը: Վերջում ասաց. «Դո՛ւ

էիր կազմել հարցերը, լավ հարցեր էին»: Ռադիոյի սփյուռքահայության համար տրվող հաղորդումների խմբագրությունում մեծ ոգևորությամբ ընդունեցին հարցազրույցն ու ասացին, որ պահպանելու են Ռադիոյի «Ռսկե ֆոնդում»: Դա ինձ համար մեծ ուրախություն և հպարտություն էր. ես դեռ լրագրող էլ չէի, ուր մնաց՝ գրականագետ ու գրող: Այդ գրույցը, ինչպես և լինում է մեծերի դեպքում, չի կորցրել իր արդիականությունը:

«Ձախորդ օրերը կզան ու կերթան, ու մի օր կզան երջանիկ օրեր»

Սփյուռքահայ հասարակությունը կարիքը չունի, անշուշտ, ականավոր

բանաստեղծ, խորհրդահայ տաղանդաշատ քնարերգու Համո Սահյանի մանրամասն ներկայացման, բանգի բավական է միայն հիշատակել նրա անունը, որպեսզի յուրաքանչյուր հայ մարդ և ոչ միայն հայ վերապրի այն հաճելի պահերը, որ այնքան հաճախ իրեն պարզվել են Սահյանի՝ մեծ տաղանդով գրված գործերը: Ռ՞վ չի հիացել ու ոյու՞թվել նրա Որոտանով, Գյազբեյով, բանաստեղծական չքնադ լեգենդի վերածված Լորով: Ռ՞վ նրա հետ համաբայլ չի շրջել բանաստեղծի հայրենի ձորերով ու անտառներով, Ռ՞վ չի լսել նախորդ բարդու շրջունն ու գմայլվել նրա նազանի պարով: Համո Սահյանի բարձրարվեստ գրիչը երկնում, ստեղծագործում է նաև այսօր: Եվ բանաստեղծն ունի բազում դեռ չձևված մտորումներ, որ անխուսափելիորեն պիտի ձևվեն, նրան սիրող ու նրանից սիրված ժողովրդի սեփականությունը դառնան: Պոետի վերջին շրջանի գործերը տպագրվել են հանրապետական մամուլում: Դրանցից ես ցանկանում եմ հիշատակել հատկապես մեկը՝ «Ինձ բաց թողեք, ես գնամ» բանաստեղծությունը, որում պոետը, կյանքից հոգնած, հորդորում է բաց թողնել իրեն, բանի որ կարծում է, թե իր գնալու ժամանակն է արդեն: Այս բանաստեղծության առիթով էլ ուզում եմ ուղղել առաջին հարցս գրողին:

– Արդյոք չէ՞ք թերագնահատում Ձեր կարողությունները, Վարպետ: Մի՞թե հնարավոր է, որ ժողովուրդը Ձեզանից այլևս սպասելիքներ, ու Դուք նրան տալու բան չունենաք:

– Իմ կարծիքով եղտեղ թերագնահատելու հարց չկա, որովհետև տարիքը տարիք է. մարդ տարիքն առավ, ես աշխարհից պիտի թողնի-հեռանա: Նամանավանդ, երբ անելիք չունի: Թումանյանն ասել է, թե կան մարդիկ, որոնց միայն ներկայությունը հազար մարդու գործ արժի: Եղել են իսկապես այդպիսի ժամանակներ, երբ մեկ մարդու ներկայությունը շատ կարևոր բան է նշանակել: Օրինակ՝ Անդրանիկի ներկայությունը Չանգեզուրում: Ֆիզիկական ներկայությունը



հաղորդել փիլիսոփայական մտորումները (մանավանդ հասուն տարիքում), բան բանաստեղծությամբ: Բայց ինձ հաջողվում է ամենախոր մտքերս հաղորդել հենց բանաստեղծությամբ: Եվ հետո ես գիտեմ նաև, որ միևնույն է, չեմ կարողանա գրել այնպես, ինչպես, ասես, Սերո Խանգաղյանն է գրել իր «Մխիթար սպարապետը» կամ էլ գինվորական օրագրերը: Այնպես որ չեմ էլ ուզում փորձել:

* * *

1993 թվականի ամռանը Արցախում դաժան մարտեր էին ընթանում: Բավական հաճախ, վերադառնալով ճակատից, ես այցելում էի Համո Սահյանին: Վերջին անգամ նրա տանը եղա մահից մեկ շաբաթ առաջ: Նա ուշադիր լսեց իմ հերթական, յուրօրինակ հաշվետվությունը: Ուրախ էր մեր ռազմաճակատային հաջողությունների համար: Եվ հավանաբար, դեմքիցս գուռակելով, որ անհանգստանում եմ իր համար, ծպտալով ասաց. «Մի՛ հուզվիր: Ամեն

ինչ ճիշտ է: Ամեն ինչ տրամաբանական է: Մահը և կյանքը իրավահավասար են: Եթե մահ չլիներ, կյանքն ամբողջովին կզրկվեր բանաստեղծականությունից»: Եվ հավելեց. «Դատարկ բաներ են: Գլխավորն այն է, ինչ երջանակաբար վերապրեցինք մեկ տարի առաջ: Շուշիի ազատագրումը»: Դրանք վերջին բառերն էին, որ լսեցի մեծ բանաստեղծից և մտածողից:



միայն բավական էր, որպեսզի այդ տարածքը փրկվեր: Ներկայությունն ընդամենը: Բայց մեկ-մեկ լինում է այնպես, որ թեզ պարզապես ավելորդ ես գգում: Ժամանակին այդպիսի բաների համար մարդկանց մեղադրել են, բայց դրանք այնքան բնական զգացումներ են: Մարդն ինչքան էլ շատ անելիք ունենա, այնուամենայնիվ, Նորից երեսուն-քառասուն տարեկան չի դառնալու: Վերջիվերջո, սիրտն էլ, շնորհիվ էլ, տաղանդն էլ ծերանում են, ինչպես, ասե՛ք, մազերն են սպիտակում, ատամներն են թափվում, կնճիռներն են շատանում... Շատ քիչ բանաստեղծներ են երկարակյաց եղել: Իսկ ովքեր էլ որ երկար են ապրել, ծերության ընթացքում չեն ստեղծագործել: Ինձ հետաքրքրում է և կարծում եմ՝ ընթերցողին էլ կհետաքրքրի, թե ինչպես կարող է գրել յոթանասունևհինգ տարեկան բանաստեղծը: Պարզվում է, որ յոթանասունևհինգ տարեկանն էլ երբեմն երեխա կդառնա, երեխայի պես կմտածի: Պոեզիայի հետ այսբանով ես դեռ կապված եմ: Բայց նախկին ուժը, եռանդը, զգացողությունները չկան: Առաջ բավական էր մի սլացող ձի տեսնել, մի գեղեցիկ աղջիկ՝ ծամավոր, մի ջրվեժ կամ շատրվան, բանաստեղծությունը պատրաստ էր: Իսկ հիմա ես հոգ գգում եմ, թե ինչ դժվար է ծնվում բանաստեղծությունը: Բոլոր հուշերը գունարկում են կամաց-կամաց, որ տող են

դառնում... Այդ իմաստով էլ, թվում է, իսկապես ժամանակն է, էլի: Բայց կա նաև հարցի մյուս կողմը. որ ասում եմ՝ «Ինձ բաց թողե՛ք, ես գնամ», նշանակում է՝ պահողներ կան, բաց չեն թողնում, դեռ հարկավոր եմ: Ենպես որ, ինչքան ուժ մնացել է, պիտի ծախսեմ մինչև վերջ, նոր գնամ:

– Այսօր ներկայացել է առիթը, որպեսզի Դուք Ձեր խոսքն ասեք սփյուռքահայությանը, Ձեր խոհերը կիսեք նրանց հետ թե՛ Արցախյան շարժման ու նրանից ծայր առած ազգային զարթոնքի, թե՛ ավերիչ երկրաշարժի ու նրա ծանր հետևանքների մասին: Ի՞նչ է սպասվում մեր ժողովրդին, ինչպիսի՞ն կլինի նրա վաղվա օրը Ձեր կարծիքով:

– Ես մարգարե չեմ, մարգարեանալ չեմ կարող ու չեմ կարող ասել, թե վաղվա օրը ինչպիսին կլինի: Այսօրվա եղածի մասին երեկ չէիսք մտածում: Դեպքերն այնքան արագ են զարգանում, այնպիսի անակնկալներ են լինում: Շատ մեծ դժվարությունների մեջ ենք, բայց մեր ժողովուրդը տեսել է ավելի դժվար օրեր ու, այնուամենայնիվ, շարունակել է գոյատևել: Հավատացած եմ, որ միշտ պիտի ապրի: Ինչ վերաբերում է սփյուռքին, նրա նկատմամբ մեր քաղաքականությունը եղել է սխալ: Որոնել ենք այնտեղ տարբեր կուսակցություններ, հայիոյել ենք նրանց, նրանք էլ մեզ են հայիոյել, բայց վերջը լավ հասկա-

Սահյանը և Թամրազյանը ԵՊՀ Հայ գրականության ամբիոնի ասպիրանտներ Ազնիվ Հիլինգարյանի և Կարինե Ռաֆայելյանի հետ (1990 թ.)

ցել ենք, որ մենք մի ժողովուրդ ենք ու միասնական ենք: Սա ցույց տվեցին և՛ երկրաշարժի մեծ աղետը, և՛ Արցախյան շարժումը, և՛ մեր ընդվզումները: Մենք միասին ենք ու միասին էլ պիտի լինենք: Ինչ-որ բաներ դեռ կան շտկելու, ինչ-որ հարցերում դեռ չենք հավատում իրար, բայց այդ ամենը կհարթվի: Սփյուռքը մեզ հետ է եղել, մենք էլ՝ իր հետ: Միշտ:

– Ձեր առաջին քննադատն ու հովանավորողը եղել է Ստեփան Զորյանը: Նրա հոգատար վերաբերմունքը մեծապես օգնել է Ձեզ գրական ասպարեզում առաջին քայլերն անելու և հետագա վերելքի հարցում: Այսօր, երբ Դուք արդեն նվաճել եք մեծ հռչակ և համաժողովրդական սեր, ունե՞ք արդյոք այնպիսի մի քննադատ, որի կարծիքը Ձեզ համար կարևոր ու եական է նույնքան, որքան Զորյանինը 40-ական թվականներին:

– Դժվարանում եմ ասել, որովհետև Զորյանն ինձ համար այնպիսի՞ հեղինակություն է: Նա մեծ գրող է, եվրոպական մասշտաբի: Հիմա ինչպե՞ս կարող եմ որևէ մեկին համեմատել Զորյանի հետ: Իհարկե, կան լավ քննադատներ նաև այսօր: Օրինակ՝ ես հավատում եմ Ֆե-

լիքս Մեդյանի ճաշակին, խոսքին, պոեզիայի զգացողությանը: Բայց առհասարակ, ես քննադատությունը կարողում եմ պատմվածքի նման. տեսնեմ ինչպե՞ս է գրել: Իսկ թե ինչ խորհուրդ կտան, լավ բան կասեն, թե վատ, ինձ համար միևնույն է: Բացարձակ: Շատ վաղուց է, որ ես չեմ լսում էր քննադատ կոչվածների ասած ո՛չ լավը, ո՛չ վատը:

– Երբ հետադարձ հայացք եք ձգում Ձեր ապրած գրական կյանքին, ի՞նչն է, որ հատկապես հոգեհարազատ ու թանկ է Ձեզ համար այնտեղ և ի՞նչն է, որ հիասթափություն է պատճառում: Կա՞ն այնպիսի բանաստեղծություններ, որոնք կցանկանայիք գրած չլինել: Եվ հակառակը՝ այնպիսիները, որ այսօր էլ եթե գրեիք, պիտի գրեիք հենց այդպես:

– Անկախ բանաստեղծության գաղափարական իմաստից՝ շատ բանաստեղծություններ կան, որ կուզեմսայի գրած չլինել: Երբեմն գրքերի մեջ չեմ դնում, բայց որևէ թերթում տպված է, մի անկյունում ընկած է, և եթե որևէ մեկին պետք է, կգնա ու կգտնի: Ինչքան էլ անպետք բանաստեղծություն լինի, հեղինակից երկար է ապրելու: 50-60-ական թվականներից հետո ես ոչ մի սուտ չեմ գրել: Եթե ուղղակի հնարավոր էլ չի եղել ասել ճշմարտությունը, ասել եմ ենթաբնագրում, ենթատողերի մեջ: Դրանից առաջ էլ չեմ ստել: Գրել եմ գաղափարական բանաստեղծություններ, որովհետև շատ բաների եմ հավատացել: Երեխա եմ եղել, երբ այնպիսի մի խանդավառություն էր տիրում ժողովրդին՝ և՛ գյուղացիներին, և՛ բանվորներին, և՛ կոմսոմոլներին: Ինքս կոմսոմոլ եմ եղել Էնթան խանդավառ, որ 30-ական թվականներին մի տարի ամբողջ կոլտնտեսության գործը մենակ եմ արել: Մեն-մենակ խուրձ էինք կրում էշերով: Սարերից՝ 7-9 կմ հեռավորությունից կրում էինք խոտը, երբ կոլտնտեսությունում ընդամենը տասներկու էշ կար, մեկ՝ ձի: Եվ այդ բոլորը մենակ՝ տասնվեց տարեկան տղաս: Շատերն էին ինձ նման այն օրերին: Կային նույնիսկ կուլակի տղա հայտարարված մարդիկ, ովքեր գիշերով իրենց ձին փախցնում էին սեփական գոմից, որպեսզի կոլտնտեսության խոտը դաշտից բերենք: Կարող էր, չէ՞, այդ խանդավառությունը հավատ ներշնչել: Ես մտածում էի, որ էր խանդավառությունը երկիրը շատ կբարձրացնի, իմ ժողովրդին էլ՝ հետը: Պատերազմի տարիներին էլ հավատացել եմ: Որոշ կասկածներ ունեի արդեն, բայց հավատը միշտ ավելի հզոր էր: Հավատն է միշտ պահել:

– Հայ անվանի գրողները, համեմատելով, նրանց մեծ մասը, ստեղծագործել են և՛ արձակի, և՛ չափածոյի ժանրերում: Դուք երբևէ չե՞ք

փորձել, թելուզ ինքներդ Ձեզ համար, գրել արձակ երկեր:

– Եթե անգամ փորձել եմ, դա մնացել է որպես փորձ, դա ոչ ոքի չի հետաքրքրում, միայն ինձ է հետաքրքրում. չեմ հավանել, չեմ տպագրել: Պարզապես էն գլխից որոշման պես մի բան է եղել. քանի բանաստեղծություն գրվում է, ես արձակին ձեռք չափտի տամ: Որ օրը չի գրվի, կփորձեմ մտքերս արտահայտել արձակ: Միշտ թվացել է, որ մտածածս կարող եմ ասել բանաստեղծությամբ: Եվ բանաստեղծություն գրելը, կարծես, դարձել է բնավորություն: Գրել եմ տրամվայում, փողոցում, հացի հերթերում: Արձակ գրելու համար շատ ժամանակ էր պետք, և ես, երևի թե, չէի կարող դա անել՝ նստել ու երկար մտածել, պատմվածք գրել, տասն անգամ արտագրել: Միգուցե չեմ գրել ծովափում՝ պատճառով: Առհասարակ արձակի մասին ավելի մեծ կարծիք ունեմ, բան բանաստեղծության, որովհետև իսկական արձակի մեջ ինչքան ուզեք բանաստեղծություններ կան: Նույնիսկ հողված գրելուց եմ խուսափում: Եթե մի օրինակ բերեմ, չգիտեմ տարօրինակ չի՞ թվա. արտասահմանցիներն ինչպե՞ս կընդունեն: Մեր գյուղում մի մարդ կար, անունը՝ Տիգրան, ով գիտեր միայն կեմ անել (խոտից պարաններ հյուսել՝ խուրձը կապելու համար): Այնքան լավ վարպետ էր, որ ինքն էլ էր զղում դրա համար: Այնպիսի ամուր կեմեր էր պատրաստում, որ մարդիկ պահում էին ու օգտագործում նաև հաջորդ տարի: Այսինքն՝ հաջորդ տարի նա գործ չէր ունենում: Կինը հանդիմանում էր. «Ա՛յ մարդ, դու ի՞նչ մարդ ես: Եսինչը քարվան-քեր է գնում, անտառ է գնում փայտի, հունձ է անում, վար է անում, իսկ դու...»: Նա ասում էր. «Իմ գործը կեմ անելն է: Եթե վատ կանեմ, էն ժամանակ կխոսես»: Ես որոշեցի, որ էր Տիգրանի պես պիտի իմ գործը լավ անեմ: Մի ուրիշ գործ կարող է էդքան լավ չանել: Այդպես է թվացել ինձ, այդպես էլ արել եմ:

– Խոսեցինք Ստեփան Չոլոյանի՝ Ձեր կյանքում ունեցած կարևոր դերի մասին: Անշուշտ, քիչ չեն այսօր այն ստեղծագործողները, որոնց համար Դուք եք այդպիսի կարևոր ու նշանակալից քննադատ: Ի՞նչ եք կարծում՝ ժամանակակից հեղինակներից՝ թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում, ո՞ւմ հետ է կապվում հայ գրական մտքի հետագա վերելքը, ո՞ւմ է պատկանում համաժողովրդական ճանաչում ու սեր վայելող գրողի ապագան:

– Ես դա չեմ կարող ասել, բայց միաժամանակ ընտրել գիտեմ: 60-ական թվականներին հետևում էի երիտասարդ գրողներին և շատ արագ կարողացա նկատել Հրատ Մաթևոսյանին,

Ռազմիկ Դավոյանին, Մանուկ Մնացականյանին, Ռուբեն Հովսեփյանին, Աղասի Այվազյանին (վերջինս այնքան էլ երիտասարդ չէր): Հնարավորության չափով օգնեցի նրանց: Մանավանդ, երբ թերթ էի խմբագրում, բոլոր ճանապարհները բացում էի նրանց առաջ: Շատ դժվար ժամանակներ էին, և ես ամեն կերպ աջակցում էի, որ այդ մարդկանց չհասկապրեն, որ նրանք կարողանան հրապարակ դուրս գալ: Հիմա այդքան ժամանակ չունեմ հետևելու, թե ով ինչ է անում: Այնուամենայնիվ, թերթերում հանդիպում են պատմվածքներ, բանաստեղծություններ, որոնք ինձ դուր են գալիս: Վերջերս թերթերից մեկում կարդացի Պասկալիան ազգանունով (անունը մոռացել եմ, թող ների ինձ Պասկալիչյանը) մեկի երեք բանաստեղծություն, որոնցից մեկին շատ նախանձեցի. կուզեմայի ինքս գրած լինել: Բայց այդպես մեկ-երկու բանաստեղծությունով դեռ չեն ստեղծվում կերպարներ, դեռ չկա բանաստեղծի անհատականությունը: Կիրովականում ապրող բանաստեղծ Հրաչյա Սարուխանն է ինձ դուր գալիս: Նա այնքան էլ երիտասարդ չէ, որ խոսեմ մեծ ապագայի մասին, բայց հոյակապ բանաստեղծ է և քիչ հայտնի: Արմեն Շեկոյանին պիտի հիշեմ: Հանդիպում են լավ բանաստեղծներ՝ բոլորովին նոր մտածողության: Մեր ազգային պոեզիայի ավանդույթների վրա նրանք կստեղծեն նոր գրականություն: Գրականությունն այսպես չի մաս, կունենա իր ապագան: Կծնվեն ո՛չ խմբերով, ինչպես մեր կուսակցությունն էր ժամանակին ստեղծվում, այլ՝ անհատականություններ: Տասը տարին մեկը եթե լինի, քսան տարին՝ մեկը, նույնիսկ հիսուն տարին՝ մեկը, էլի քիչ չէ: Կլինեն:

– Մի խնդրանք. կարո՞ցեք որևէ անտիպ գործ: Համոզված եմ, որ կան այդպիսիք:

– Կկարդամ մեկը, այնպիսի բանաստեղծություն, որ մեր այս գրույցի, Ձեր տված հարցերի ամփոփումը մեջը լինի:

*Այսպես պատահեց և այսպես եղավ,
Իմ մանկությունը մեռավ լեռներում,
Պատանությունս քաղաքում մեռավ,
Չահեղությունս՝ թե՛ կոփվեցում:
Երեք հողաթումբ մաշելուց հետո
Եվ քանի՞-քանի ծանր եզնալուծ
քաշելուց հետո
Դեռ ապրում եմ ես, ննջում,
արթնանում,
Նստում եմ մոլոր ու միտք եմ անում,
Որ կորածն, ավա՛ղ, անդարձ է կորել:
Բայց առաջվա պես հավատում եմ
դեռ,
Որ իմ ու ձեր տան
Չախորդ օրերը կգան ու կերթան,
Եվ մի օր կգան երջանիկ օրեր:*

ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑ ՀԱՍՏ ՍԱՀՅԱՆԻ ՀԵՏ

Միակ իրականը հոգեկան անկախությունն է

Հատված հարցազրույցից:
Զրույցը՝ գրականագետ,
բանասիրական
գիտությունների դոկտոր
Պետրոս Դեմիրճյանի



– Վարպետ, Դուք գրույց ու հարցազրույց շատ եք տեսել, բայց այս մեկը, երևի թե, մի քիչ ուրիշ պիտի լինի: Աշխարհը, իրոք, նորից շռա է եկել, մեր այնքան երազած անկախությունը իրականություն դառնալու հույսեր է արթնացրել, ու մեր հոգում էլ մեծ ու արմատական տեղաշարժեր են կատարվում: Պիտի փորձենք մարտել այդ ամենը, վերլուծել, հասկանալ: Ժամանակները դարձյալ «խառն են ու խրթին»:

Ժամանակները խառն են ու խրթին, Հողը գծվում է, ջուրն իմաստնանում, Մեռած հույսերը ծնվում են կրկին, Ու սիրտս կրկին քան չի հասկանում:

Ուղիղ բառորդ դար առաջ եք գրել, բայց կարծես այսօրվա գրգիռներից ծնված լինի:

– Այդպես է, կյանքն է այդպես՝ միշտ փոփոխվում է ու միշտ կարծես թե նույնն է մտում: Մարդու մտքերն էլ, զգացմունքներն էլ, տագնապներն էլ: Բայց, թե, իրոք, հիմա ինչ է կատարվում մեր շուրջը, էլի լավ չեմ հասկանում: Խոսքը մեծ բան է, մի խոսքից կարող են ոգևորվել, մի խոսքից՝ բեգ կորցնել, բայց հիմա այդ խոսքը, մի տեսակ, արժեզրկվել է: Տեղից վեր կացողը ասում է՝ մտավորականությունը գործ է, մտավորականությունը ոչինչ չի ստեղծել, մտավորականությունը համակերպվել է՝ առանց մտածելու, թե ինչ պիտի արվի այսօր: Ժամանակին էլ դժգոհ էինք, որ մշակույթը, գրականությունը երկրորդ պլան են մղվում, անտեսվում են, չեն գնահատվում իրենց իսկական արժեքով: Հիմա դարձյալ պիտի մտածենք, թե ինչպե՞ս ենք ապրելու, ի՞նչ է անելու մտավորականությունը: Ռուս գրողներն ու գրականությունը, էլի միջազգային անուն ունեն, ուժ, միջոցներ ունեն, կապրեն, մենք ի՞նչ պիտի անենք, ո՞րն ենք դուրս գալու, տեղ ունե՞նք:

– Իսկ հիմա, այս պահին, Վարպետ, ո՞րն է լինելու գրողի ամենա-

կարևոր առաքելությունը, Ձեր կարծիքով:

– Ամենակարևոր առաքելությունը՝ ոչ միայն գրողի, այլ, ես կասեի, բոլոր մարդկանց, այն է լինելու, որ այսօրվա խոսելու փոխարեն, այսօրվա քաղաքականությամբ զբաղվելու փոխարեն, ամեն մարդ իր գործով զբաղվի: Այդ ժամանակ շատ բան տեղը կընկնի: Անկախությունն էլ տեղը կգա, ազատությունն էլ: Իհարկե, դրա համար էլ պայմաններ են պետք, որ մարդ կարողանա իր գործը անել, և անի այն գործը, որ ինքը շատ լավ կարող է անել:

– Գուցե պատճառներից մեկն էլ այն է, որ չկան, չեն գրվում, գոնե ես չեմ կարդացել, իսկապես անկեղծ ինքնախոստովանություն-ինքնավերլուծություններ:

– Այո, բայց եթե նայում-թերթում ես անցած տասնամյակների գրականությունը՝ լավագույնը, իհարկե, ամբողջությամբ ինքնախոստովանությունն է, չէ՞:

– Կյանքն է փոխվում, մարդն է փոխվում, մեր հոգին է փոխվում, ու այս ինքնավերլուծությունը չկա, երևի սա՞ պիտի լինի, ու գործը պիտի անի:

– Գրողը պիտի անի: Գիտես ինչ, ասենք թե հասարակական, քաղաքական դեպքերը ստիպել են, որ նա, չգիտեմ, մի տեղ օպոզիցիայի գնա, մի ուրիշ տեղ հարմարվի, և իր մեջ մտնել են չարտահայտված աշխարհներ: Իսկական գրողների մասին է խոսքս, իսկական արվեստագետների: Նրանք հենց այդ աշխարհը պիտի բերեն հրապարակ: Այսօրվա ինքնախոստովանությունը մի քիչ ուրիշ պիտի լինի:

Վերջերս «Լիտ. գազետայից» մեկը գանգահարեց, հողված էր ուզում, ասաց ձեր բանաստեղծություններից մեկում գրել եք, թե առաջին տողը Աստված է տալիս, սրանից հետո մեր գրականությունը պիտի Աստծու տվածը լինի: Իսկ, ասում եմ, Տոլստոյի՞նը ով էր տվել: Այդ էլ կա, չէ՞: Դոստոևսկո՞ւնը ով էր տվել: Աստծու տվածը չէ՞ր: Եվ ի՞նչ ասել է՝ Աստծու տված: Աստծու տվածը հենց այդ անկեղծությունն է, այսինքն՝ բոլոր մտածածը: Իսկ Աստված է տալիս տողը այսպես պիտի հասկանալ՝ ստեղծագործելիս սկսում ես Աստծու հետ մրցել, եթե հավասարվեցիր, ստացվեց գործը, եթե չէ՝ չէ:

– Ի վերջո, Աստված ո՞րն է:
– Աստված՝ Մարդու խիղճն է, որն է:

– Մարդիկ, կարծես հիմա շատ են մանրացնում Աստծուն:

– Դե Աստված՝ էյնշտեյնի մտածած Աստվածը, Գյոթեի մտածած Աստվածը, Թումանյանի մտածած Աստվածը բոլորովին ուրիշ բան է, տերտերի մտածածն՝ ուրիշ: Վերջիվերջո, Աստծուն էլի դարձրին միոբլավոր ծերունի: Իսկ էյնշտեյնը, օրինակ, գտնում էր, որ Աստված այն մեծությունն է, որի համար տիեզերքը ֆուտբոլի գնդակ է: Այդ դեպքում ես հավատում եմ այդ Աստծուն և հավատում եմ այն մարդկանց, որ մի վայրկյան, մի ակնթարթ առնչվել են նրան: Հավատում եմ Գյոթեին, որ մի վայրկյան առնչվել է, Թումանյանն էլ է առնչվել, ինչ-որ տեղ: Զայռյալների մեջ մի տող կա՝ «Դու աստված ես, դու անհուն ես, անստուն ես ու անես»: Անես: Տեսել է նրան: Հանկարծ առնչվել է հետո: Դա խիղճն է մարդկային, տիեզերական մեծ խիղճը: Խիղճը բնությունից է վեր բան է, որովհետև բնությունն էլ անխիղճ բան է: Ես ինքս բնության պաշտողներից եմ, բայց բնությունն ինքն էլ շատ դաժան է, սարսափելի դաժան: Բոլորն իրար ուտում են, չէ՞, դա ինչ է, վերջիվերջո:

– Հիմա ժողովրդի կյանքի այս պահը հնարավորություն տալի՞ս է գրողին այդքան խորանալու բնության, Աստծու, հոգեկան տիեզերքի մեջ: Թե՞ գրողն էլ ինչ-որ տեղ անգործ է առօրյայի, կենցաղի առջև:

– Դե, գրողը, քանի որ մարդ է, ինքն էլ կենցաղ ունի, ընտանիք ունի, այդքանով՝ հա՛:

– Շատ ուժեղ պիտի լինի, որ այդ ամենով հանդերձ, կարողանա նաև խորանալ:

– Մեծ անհատականություն պիտի լինի: Իսկական գրողը, իհարկե, միշտ էլ բարձր է այդ բոլորից: Իսկական գրողի համար այդ բոլորը, ինչ որ կատարվում են, խաղեր են: Հա եկել է, հա գնացել է, նա գիտի, որ հազար անգամ այդպիսի

բաներ եղել են պատմության մեջ:

- Աստվածային կատակերգություն է կամ մարդկային կատակերգություն:

- Առհասարակ այդպես էլ պիտի լինեն: Ուրիշ կերպ չէր էլ կարող: Գրողի համար այդ է: Որովհետև, վերջիվերջո, միշտ այդպես է՝ գալիս են պահեր, երբ շատ սրվում է, շատ տեսանելի է դառնում ամեն ինչ, բայց անտեսանելի է, որ միայն գրողն է տեսնում: Հիմա, թե ինչ տեսակ գրականություն պիտի լինի, անհնար է ասել: Որովհետև արդեն այնպիսի ազատություն է, որ... Մի ժամանակ կարծես բռնությունը հաղթահարելու պրոցեսն էլ գրողի համար գործ էր, դա որ չկա՝ այդ հաղթահարելը, մի քիչ դժվարանում է՝ ինձ համար այդպես է: Շատ ազատ է, սարսափելի ազատ, ազատ պիտի մտածես շատ մեծ բաների մասին: Բայց այդ նույն մեծ բաների մասին մտածելուց հետո տեսնում են՝ հացի հերթ: Անհնար է, որ այդ հացի հերթը թեզ չկապի: Որովհետև դա արդեն ժողովրդի ճակատագիր է դառնում վաղվա: Այդ դեպքում ինչ պիտի անես: Ելի դառնա՞ք թունակյանին՝ խոստովանում է չէ՞: Վաղուց ասում է, ես անհուններն էի թափառում

Բայց կարոտով ամեն անգամ Երբ դառնում եմ դեպի քեզ...

Յենց որ դառնում է ժողովրդի վիճակին, ուզի-չուզի գալի՞ս-կաչում է դրան: Հիմա այսօրվա գրողը նույն վիճակում է: Լա էլ կարճ է գնալ, տիեզերական հարցեր կան, մեծ, համաշխարհային, համամարդկային, չգիտեմ էլ ինչ, տերմիններից մարդ հոգնել է արդեն: Բայց դրա հետ միասին, երբ որ տեսնում ես, թե վաղը կարող է իսկապես երեխան քաղցից մահանա, կամ ցրտից՝ սարսափում ես: Մտածում ես՝ ինչի՞ն են պետք այդ տիեզերքը, այդ մեծ-մեծ բաները, որ երեխան պիտի սովից մահանա: Սարսափելի բան է չէ՞: Ուրեմն՝ այս բոլորի հակադրությունն իրար: Կարող ես, իհարկե, արհամարհել դա ու գնալ թո մեծ գործին, բայց այդ դեպքում մեծ գործը ո՞րը եղավ... Այսինքն, էլի թունակյանի խոսքն է, որ իրեն վիճակված պայմաններում ապրի տիեզերական կյանքով:

- Այսինքն՝ տիեզերական կյանքը հենց այդ երեխայի մեջ տեսնի:

- Տիեզերական կյանքն այն չի, որ դու թռնես ամբողջ օրը տիեզերքում թափառես, այլ որ հենց այդ երեխան ապրի տիեզերական կյանքով: Թեկուզ իր փոքրիկ միջավայրում ապրի տիեզերական կյանքով: Երբ որ այս հարցերը կան, ինչպե՞ս կարող է գրողը այդ բոլորից կտրվի և գնա, մտածի, թե տիեզերքի հարցը ինչ ես որոշում: Տիեզերքն ինքը իր հարցերը որոշում է:

- Այս 70 տարվա մեր գրական

նության թերություններից մեկը, երևի, հենց դա էր, տիեզերքը մոռացել էր՝ շատ էր գետնամած: Շատ էր կապված սոցիալականին: Եվ դա գալիս էր նաև մեր գրականագիտությունից:

- Այո, գրականագիտությունն էլ էր մի ուրիշ բանից գալիս, ես ինչ գիտեմ: Կարողում եմ ու սարսափում եմ իմ մասին ինչ-որ կա գրված: Որովհետև բոլորը բացատրություն է, բայց ի՞նչ ես բացատրում. ես ինքս որ գրել եմ, բացատրել չեմ կարող, դու ի՞նչ ես բացատրում, ախր: Ես ինքս էլ չգիտեմ, թե այդ գրածս որ բջիջով է մտել, որով դուրս եկել, դա շատ բարդ բան է, չէ՞: Պոեզիայի մասին կամ չեն գրում, կամ գրածը մի ուրիշ բան պիտի լինի:

- Զննադատը գրողի հոգու մեջ պիտի մտնի, որ կարողանա գրել:

- Այնքան խոր ծալքեր բացի, որ գրողն ինքն էլ չի իմացել: Վերջիվերջո, ես ինչ իմանամ, պատահում է, որ բանաստեղծությունը, որ այսօր գրում եմ, մտածում եմ, թե դա շատ սովորական բան է, կարող էի քառասուն տարի առաջ էլ գրել: Բայց ինչպե՞ս է եղել, որ քառասուն տարի մնացել է, այսօր է դուրս գալիս: Այդ ի՞նչ առիթ էր, որ հանկարծ բերեց և ինչո՞ւ էր այդքան մնացել, ինչու էսօր պիտի դուրս գար:

- Ինձ միշտ մտահոգել է հենց այն, որ մենք գրեթե միշտ կարծես հետաձգում էինք մեր բուն ասելիքն ու գրելիքը, հետաձգում-վաղվան



էինք թողնում, որ իսկակա՛ն բանի մասին գրենք, խոսենք, վիճենք, հենց տիեզերքի մասին, բնության մասին, մարդու հոգեկան-ոգեկան հզորության՝ մասին: Սրա փոխարեն գրում էինք սոցիալականի մասին, գյուղի-քաղաքի հիմնահարցերի... Իհարկե, դա էլ է կարևոր, բայց դա չի բուն գրականությունը: Դա հրապարակախոսությունն է: Թեկուզ գեղարվեստական հրապարակախոսությունը:

- Ճիշտ է: Այ, հոգեկան ես ասում: Օրինակ, մի պատարագ լսելը թեզ ու՞ր է տանում, զարմանալի բան է, չէ՞: Ես ոչ մի քարոզի ու քարոզչի չեմ հավատում, բայց պատարագը ինձ տանում է շատ բարձր ոլորտներ, վեհացնում է ինձ...

- Բա մոմի լո՞ւյսը...

- Թեկուզ սովորական մոմի լույսը: Մանավանդ, որ մոմն էլ կեղծած է, էլ չես հավատում: Բնականը պիտի լինի: Մոմը պիտի լինի: Մոմը լինի, այդ մոմի հոտն էլ ապրես, լույսն էլ զգաս...

- Որովհետև այդ եկեղեցու, մոմի, պատարագի, այդ ամենի մեջ պատմության, դարերի խտացումը կա, ժողովրդի ոգին ու սիրտը կա:

- Այ այդ բոլորը հենց մտածված է՝ ոգին բարձրացնելու, թռիչքը բարձրացնելու: Զճմ գրել, բայց ասել եմ մի տեղ, առաջին տիեզերագնացը եղել է հայը, այսինքն՝ Զոհիսիմե կառուցողը: Մի Լա-յիո, տես ինչ է, թռիչքը Լայիո, տիեզերք է, չէ՞, գնում...

- Չարենցի ասած մի երկնային առնչության պատմություն անպայման պետք է լինի:

- Առանց դրա բան չկա: Զոհն է ու Լա: Զարմանալի բան է՝ թե՛ գնում ես երկինք, ինչքան ուզում ես բարձր թռիչք, երբ որ հողը չկա, այդ թռիչքը չի երևում:

- Ինձ միշտ թվում է, որ գրականությունը, արվեստը ընդհանրապես, մեծ իմաստով հենց այդ երկրայինի ու երկնայինի հաշտեցման պրոցեսն է լինելու: Ով կարողացավ հաշտեցնի, ևս է մեծը:

- Ախր, հենց դրանից է սկսում, էլի՛ երկնեց երկին և երկիր, երկնեց ծովում ծիրանի...

- Եվ մենք այսօր, որպեսզի մեր ժողովուրդն իր այս քաղաքական անկախության մեջ նաև հոգեկան անկախություն ունենա, պիտի ա՛յս մասին խոսենք, սա՛ պիտի բարձրացնենք, երևի:

- Մեծագույն բան է այդ հոգեկան անկախությունը: Որովհետև տնտեսական անկախությունն չի լինում, քաղաքական անկախությունն էլ՝ չգիտեմ, իրականը հենց հոգեկան անկախությունն է: Վերջիվերջո, էլի գալիս ենք հասնում նրան, որ մենք պիտի աշխարհում երևանք:

Սա չի՞: Որովհետև մտածում ես՝ դու ինչո՞ւ ես պակաս անգլիացուց: Թե չէ այդպես թեզ որ միշտ անկյուն են խրել, անկյուն են խրել, հանկարծ մեկ էլ տեսնում ես, որ դու ինքդ էլ ես թեզ, մի տեսակ, ստորադասել և ինքդ էլ դարձել ես թո ստրուկը և ուրիշի ստրուկը: Միևնույն պարզվեց, որ ասենք, մեր ճարտարապետությունը, որ, իբր, դրսից ենք բերել, դուրսն է մեզ-նից տարել: Ուրեմն, եթե դու այդպիսի ընդունակ ժողովուրդ ես, ինչո՞ւ այսօր դուրս չգաս աշխարհի բոլոր ժողովուրդների, բոլոր մարդկանց հետ հավասար ապրես: Դա՞ չենք ուզում: Չենց մեր ոգին ենք ուզում հավասարացնել ուրիշների հետ:

– **Իսկ եթե ուզում ենք ոգին հավասարեցնել, ուրեմն պիտի կարողանանք բարձրից նայել կյանքին, աշխարհին:**

– Դրա համար պիտի հոգիդ բարձր լինի: Որ բարձր եղավ հոգիդ, ուզի-չուզի ինքը բարձրից կնայի: Իսկ եթե հոգիդ կապված է կոպեկի հետ, եսիմ ինչ մանր-մունր հաշիվների հետ, չի՞ լինելու:

– **Դրա համար գրողը, արվեստագետը պիտի ստիպված չլինի կռիվ տալու առօրյա-կենցաղային խնդիրների համար, չխրվի-մանրանա...**

– Կռիվը ի՞ր հետ պիտի լինի: Ինքը ի՞ր հետ պիտի կռվի: Աշխարհի հետ և իր հետ: Եղ ինքն իր հետ կռիվը որ չեղավ, ոչինչ չի լինելու: Այդպես է՝ պիտի կռիվ տա, տարակուսի, մոլորվի, որ, ի վերջո, գտնի դեպի մարդը տանող ճամարիտ արահետը: Սկզբում մի բանաստեղծություն հիշեցիր, հիմա էլ ես մի ուրիշն եմ ուզում մեջբերել. էլի շատ բնորոշ՝

*Այս ի՞նչ բան է կատարվում,
Ի՞նչ կատակ է սա.
Մոլորվեցինք անտառում,
Ի՞նչ անենք, ասա:
Մոլորվեցինք անտառում,
Մնացինք մոլոր...
Տագնապներ են արթնանում
Հիմա շուրջբոլոր:*


Ու ճամփան ոչ մեկը չի ցույց տալու՝ ոչ աստղերը, որ թևով են անցել, ոչ մացառները, ոչ քամին... Միայն մարդն է սատար կանգնելու մարդուն: Ուրեմն՝ *Չկորցնենք իրարու,
Մենակ չմնանք,
Մինչև գտնենք մի առու.
Նրա հետ գնանք:
Գնանք ուր որ կանանի,
Նա տուտ չի ասում.
Ուր էլ գնա, իր ճամփին
Մարդ է սպասում:
Այսպե՛ս է:*

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ», 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ,
1991 Թ., № 30

ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎԵՐԱԾՎԱԾ ԵՐԳԻ

Տիգրան Մանսուրյանի և Համո Սահյանի երկխոսությունը

Յանրահայտ է Տիգրան Մանսուրյանի սերը Համո Սահյանի հանդեպ: Գուցե շատերը չգիտեն, բայց հայոց ժամանակակից մեծ բանաստեղծն էլ խոր սեր ու հարգանք ունի դեպի հայոց ժամանակակից նշանավոր երաժիշտներից մեկի ստեղծագործությունը և անձը: Այս փոխադարձ զգացումը մարմնավորվել է համատեղ գործով՝ «Հ.Սահյանի բանաստեղծություններով գրված Տ. Մանսուրյանի «Մայրամուտի երգեր» վոկալ շարքով: Եվ երբ երաժշտի ծննդյան 50-ամյակի առիթով խմբագրությունում միտք ծնվեց կազմակերպել նրա և բանաստեղծի երկխոսությունը, երկուսն էլ ուրախությամբ համաձայնեցին:



Թղթակից. – Տիգրան Մանսուրյանն էլ, ուրեմն, 50 տարեկան եղավ...

Տիգրան Մանսուրյան.– Որպեսզի երկար ապրես, պիտի հաշտվես տարի-թիվ հետ:

Համո Սահյան. – Ապրում ես, ապրում, բայց թեկուզ մի օրով երեխա ես դառնում: Անժամկետ աքսոր է ծերությունը: Տիգրանն էլ 50 դարձավ, բայց ախր, ինձ համար երեխա է... Ոչ մանկություն ենք տեսել, ոչ պատանեկություն, ոչ երիտասարդություն, ոչ այրություն, ուրեմն ծերություն էլ չունենք: Միխթարությունս էն է, որ եթե մի երկու լավ բան գրել եմ, ինձ թվում է, 50 տարեկանից հետո եմ գրել: Տիգրանին էլ միխթարեմ սրանով: Համ էլ շատ է արել, ինքն էլ չլինի, արածը կմնա:

Տ.Մ. – Ինձ թվում է, շատ եմ արել: Առավել շատ կուտակել եմ հետագայում

անելու համար:
Հ.Ս. – Դու թո անելիքդ գիտես, դրա համար թեզ թվում է, թե դեռ շատ բան անելու ես: Ես էլ, որ չգիտեմ անելիքդ, արածովդ եմ խոսում, տեսնում եմ, որ շատ ես արել: Էնթան հայկական, ինքնաստիպ է թո երաժշտությունը... Չէ, 50-ը շատ լավ տարիք է:

Թղթ.– Մանսուրյանը վերջերս գրեց երկու տարի հետո Ավստրալիայի մայրաքաղաքում կայանալիք աշխարհի քրիստոնյաների համագումարի հիմնը: Այն դեռ ոչ մի տեղ հրապարակայնորեն չի հնչել, բայց ես ունկնդրել եմ՝ ներկա լինելով ձայնագրությանը: Նրանում լսելի են թե՛ հայկական բնությունը, Կոմիտասին, թե՛ եվրոպական ոճին բնորոշ հնչյունները:

Հ.Ս. – Գիտեմ հիմնի մասին: Մեծ բան է... 50 ես ասում: 50-ն ինչ է որ: Անելիքներդ շատ են, հա՛, ասում ես...

Տ.Մ. – Հա, կուտակվել է: Սիսիա-նում, ձեր 70-ամյակի օրը, մի բլուր բարձրացա: Այնտեղ, հովտի խաղաղության մեջ երկու տնատ կար: Երկու տնատ մասմաբուր: Զուգակի տնատ-ներ: Բայց առ այսօր չեն գրվել: Դրանց կենդանի գոյությունը ինձ հետ են դեռ:

Թղթ. – **Համո Ասիյանի բանաստեղծություններով շարք եք գրել: Լրա ստեղծագործությամբ նոր երգ, երկ գրելու ծրագիր չունե՞ք:**

Հ.Ս. – Եղ երգերում երաժշտությունը համարժեք է իմ խոսքին, ավելի ճիշտ՝ երաժշտությունը բարձր է իմ խոսքից: Եղ երգերի բառերն էլ կարծես կոմպոզիտորն ինքն է գրել: Տիգրանն ընտրել է կարճ, բայց խորք ունեցող բանաստեղծություններ: Եվ էլ խորքն է վեր հանել:

Տ.Մ. – Վարպետ, հեշտ է երգել ձեր բանաստեղծությունը... Առհասարակ գեղեցիկը գնահատելու իմ չափանիշն այն է, երբ համարում ես նրա առջև ինքդ քեզ կորցնելու աստիճան: Ինչպես Տերյանն է ասում. «Ես էլ դու եմ, ես չկամ»: Կոմիտաս շատ եմ սիրում՝ կորցնում եմ ինքս ինձ նրա հնչյունների առջև: Նույնը ձեր բանաստեղծությունների դեպքում է: Ձեր բանաստեղծությունների առջև կորցնում եմ ինքս ինձ: Դրանից է, որ երգերս գրվեցին:

Հ.Ս. – Նույն բանը ես քո մասին պիտի ասեի, միայն թե հակառակ կողմից: Ես հայտնաբերում եմ քո երաժշտության մեջ ինքս ինձ: Ես ինքս ինձ ճանաչում եմ քո կինոերաժշտությամբ, մարդուն եմ ճանաչում, իմ ժողովրդին եմ ճանաչում: Երաժշտական տերմիններ չգիտեմ, որ բնորոշեմ, բայց ասածս ես եր: Նույնիսկ վատ ֆիլմեր էլ եմ դիտում, բանի որ երաժշտությունը քունն է:

Տ.Մ. – Բանաստեղծությունը հազար անգամ պիտի կարդաս, հետո կողքի դնես, իբրև թե մոռանաս, և մի անգամ նորից կարդաս ու տեսնես՝ երգ լինո՞ւմ է, թե՞ ոչ: Ձեր բանաստեղծություններն այդպես երգ դարձան: Ոնց որ Իսահակյանն է՝ մի տողի մեջ և՛ լույսն է, և՛ սովերը, իրար կողքի: Իսահակյանի տողը «Բարև կուտամ» չես առնի, ոտքիդ կոխած հողն են, յար»: Սահյանի տողը «Ախ, ինձ ծլել չթողի», էլ ուր մնաց՝ կանաչել: Այս լույս ու սովերի մեջ արդեն երաժշտություն է ապրում:

Հ.Ս. – Քո երաժշտությունը լսելիս միայն զգում եմ, որ մի բարձր բանի հետ գործ ունեմ: Բացատրել չեմ կա-

րողանում: Միայն զգում եմ: Եթե կարողանամ բացատրել, էն չի լինի: Իմ բանաստեղծություններն էլ չեմ կարող բացատրել:

Տ.Մ. – Սխալ է բացատրելը: Մի ժամանակ, ուսանողական տարիներին, երբ իմանում էի ինձ համար այնքան սիրելի ձայնամիացությունների տեսական անվանումը, օրենքները, դրանց հմայքից ինչ-որ բան կորչում էր:

Հ.Ս. – Ի՛նչ բան է՝ արվեստը հասկանալ: Չպիտի բացատրվի: Արվեստը ներծծվում է քո մեջ: Եվ դա է ճիշտը: Երբ դնում-քննարկում են՝ ո՞ւմ է դա պետք: Արվեստի գործը մեջդ մտավ կամ չմտավ: Ես է հարցը: Հիմա, Տիգրան, քո երաժշտությունը միանգամից ներթափանցում է մարդու մեջ:

Թղթ. – **Վարպետ, Մանսուրյանը օրերս ավարտեց իր առաջին բալետը՝ Յ.Ք. Անդերսենի «Չունես թագուհին» հեքիաթի հիման վրա, որը ձոնեց Հայաստանի երկրաշարժից զոհված մանուկների լուսավոր հիշատակին: Մեր Օպերային թատրոնը բեմադրում է այն: Երաժշտությունն այնքան գեղեցիկ ու «թեթև» է, որ երբեք չես մտածի, թե ընդամենը 80 րոպե տևողությամբ երկի վրա երեքուկես տարի է տքնել:**

Տ.Մ.– Գիտե՞ք, երբեմն մեկ մարդու նկարագրի չափ հստակ տեսնում ես մեր ամբողջ ժողովրդին: Ազնվածին հոգիներ կան, որ երբ փոթորկվում, դուրս են գալիս իրենցից, իրենք իրենց են վնասում, ուրիշին վնասել անընդունակ են: Այդպես Պուշկինը գնում-կանգնում է Դանտեսի ատրճանակի առջև, Բայրոնը հայտնվում է Հունաստանում արձակվող կրակոցների դեմ, Լորկան իր վրա է հրավիրում բիրտ, մահաբեր ուժերին: Չարենցն է այդպես մահանում, Սևակը:


Մեր ժողովուրդը հունից ելավ մի պահ: Եվ ազնվածին իր եռակդի դեմ իր իսկ երկրի ընդերքի մուգ ուժին հանդիպեց: Ուրիշին վնաս տալու անընդունակ է, վնասը իր ուղղությամբ պիտի գար: Հիմա պիտի հիշեն Սարյանի մի խոսքը: «Մենք պիտի դեպի վեր աճենք», – ասում էր Վարպետը: Սարյանի այս միտքն էլ ճիշտ պիտի հասկանանք: Վեր բարձրանալը բազմաճակատ չենք սարքել չէ, այլ՝ նախ քո հիմքերի բաղադրությունն ու ամրությունը զգալն է: Ներդրություն, որ այսբան լուրջ ու մտքային բաներ եմ ասում, իրականությունը անասելի է: Հիմա տնից դուրս եկող ամեն հայ՝ լինի դպրոցական, բանվոր թե ուսուցիչ, իր հետ տանում է ավերվածը նորից կենդանացնելու հոգը, երկրաշարժից տուժածի հետ ապրելու

չանքը կիսելու պատրաստակամությունը: Մեր պատմության ամենածանր տարիներին Կոմիտասը շատ լավ գիտեր, թե ինչու մեզ առավելապես են անհրաժեշտ ուրախ և լուսավոր երգերը: Հարկ է ամբողջ սրտությամբ գիտակցել-որդեգրել կոմիտասյան մեծ ծրագրի այս կարևոր կետը ևս:

Հ.Ս. – Լավ է, որ երկրաշարժի ողբերգությունը ոչ թե փաստ է քո ստեղծագործության հիմքում, այլ՝ առիթ: Իրոք, երկրաշարժը մեծ անակնկալ ու մեծ ողբերգություն է: Մեր ժողովրդի մի մասը զոհվեց, մյուսը հաշմանդամ դարձավ, երրորդ մասը երկար կհիշի և ողբերգությունը: Մեկ մարդու հիշողություն չէ, այլ՝ ժողովրդի հավաքական հիշողություն: Մեր ժողովուրդը պատրաստ էր հոգու, ոգու հաղթանակը տոնել, հանկարծ հանդիպեց Ես դաժան իրողությանը: Մեր հոգու, ոգու հաղթանակ, այսինքն մեր միանությունը դարաբաղյան շարժման մեջ, մեր անաղարտությունը, հավաքական ուժը: Դարաբաղյան շարժման մեջ առաջին լուրջ բայլը եղավ կառավարման հատուկ ձևը, բայց և ողբերգությունը՝ երկրաշարժը, չթողեց, որ ժողովուրդն ապրի, զգա բերկրանքը: Եվ մինչև հիմա էլ չի զգում դրա կարևորությունը: Արդեն ասացի, որ Մանսուրյանի երաժշտության համար եմ նայում կինոնկարները: Նրա երաժշտությունը խղճի երաժշտություն է, փոքր մարդու հաղթանակի երաժշտություն է, խղճի հաղթանակի երաժշտություն է: Իմ բանաստեղծություններով գրած երգերն էլ խղճի երաժշտություն են՝ «Արտերս, արտերս վարած, պարտքերս մարած մեռնեի»: Մարդը պիտի մինչև վերջ ինքն իրեն բաշխի մարդկությանը և հանգիստ խղճով հեռանա աշխարհից: Խղճի երգեր են: Եղպես էլ ես բալետը պիտի լինի խղճի երաժշտություն: Արվեստը մի հատկություն ունի, որ տիրություն երգելով էլ մարդուն ուրախություն է պատճառում: Տիրությունը ճիշտ պատկերելով, մարդուն ուրախացնում է: Ահա Տիգրանի էս բալետը, որ գրում էր վաղուց և ավարտեց երկրաշարժի օրերին ու ձոնեց զոհված մանուկների հիշատակին, Էղպես է՝ կյանք տվող է: Հիմի ասում ես՝ երեքուկես տարի է տքնել: Հրաշալի է: Հա: Բա, իհարկե: Արվեստը բա ինչպե՞ս է ստեղծվում: Բալետին, պիսոս, ծանոթ չեմ: Բայց վստահ եմ, որ գեղեցիկ պիտի լինի: Աշխարհի մշակույթին ինչքան որ ծանոթ եմ, դրանից էլ ենթադրում եմ, որ Տիգրանի՝ իմ լսած ու չլսած գործերը լավն են, Ես էլ է լավը լինելու... Երաժիշտները բանաստեղծներիս համեմատությամբ լավ վիճակում են, նրանց գործն ավելի մատչելի է մարդկանց:

Տ.Մ. – Մարմնի պես է բա-





նաստեղծությունը: Մարմնի նման իրենց մաշկի շուրջ շերտովություն ունեն բառերը: Տաք մաշկ: Որ բանաստեղծությունները որ այդպես են, երգվում են: Լավ են երգվում: Ձեր բանաստեղծություններն այդպիսին են: Բանաստեղծություններն էլ կան, որ մաշկի շերտովությունը չունեն, ցից, արթուն բառերով են: Երգվելու պահանջ չունեն:

Հ.Ս. – Բանաստեղծության մեջ բառը պիտի չգզացվի: Բառը թթե բառարանից է վերցված, միանգամից երևում է: Բայց էն, որ կրոնական խոստում տալով բարձրանում է, մեջքով հասնում ուսերը, կոկորդով անցնում լեզվիդ ու նորից ետ է գնում ու նորից դուրս գալիս բերանից, էդ է իսկական բառը: Դրանով է բանաստեղծություն լինում:

Տ.Ս. – Մի օր, որ գնամ այս աշխարհից, Կոմիտասին ասելու եմ՝ այս օրը եղել եմ Համո Սահյանի հետ:

Հ.Ս. – Ինձ համար ամենամեծը եղել է Թումանյանը, բայց իր նշանակությամբ երևի Կոմիտասն ավելի մեծ էր: Իր նշանակությամբ: Բանաստեղծություն չէ՞ որ միջև Թումանյանն ունեին: Եվ ոչ մեկը մեզ չէր ատում՝ բանաստեղծություն չունեք: Բայց մեզ ասում էին՝ երաժշտություն չունեք: Կոմիտասը եկավ, ասաց երաժշտություն ունեմք, կա հայոց երգը:

Տ.Ս. – Ես խոնարհ եմ Կոմիտասի առջև: Վիլյամ Սարոյանն է պատմում. «Հայրս ասաց՝ պետք է խոնարհ ըլլաս»:

Հ.Ս. – Ինքն է ասում: Հայրն ասել է, չի ասել, բայց ինքն է ասում... Ողորմելի բան ես արվեստի առջև: Արվեստը մեծ է քեզնից: Ինքը պիտի քեզ գտնի: Զո ասածը՝ հեջ:

Տ.Ս. – Հազար ջանք թափես, հազար մտածես-կշռես՝ անհնար է: Ինքն է գալու: Արվեստի ճիշտ ճանապարհ ընտրելու, անմահանալու ճիգը հեջ բան է:

Հ.Ս. – Ի՞նչ անմահանալ, է...
Տ.Ս. – Ունանց ստրատեգիան այդ է,

չէ՞:

Հ.Ս. – Արվեստն ինքն է որոշելու...

Տ.Ս. – Շահմուրադյանը, որ Կոմիտաս է երգում...

Հ.Ս. – Մի օր Դիլիջանում լսեցի, մի բան գրեցի:

Տ.Ս. – Հգիտեմ, ո՞րն է: Տպագրված է...

Հ.Ս. – Չէ:

Տ.Ս. – Գրված է:

Հ.Ս. – Չէ, չեմ էլ գրել: Անգիր ասեմ, գրի չառնեք հանկարծ...

Տ.Ս. – Փռաք տանք Աստծուն, որ ձեզնից պահանջում է գրել, ասել, խոսել: Պահանջում է էլի կատանա:

Հ.Ս. – Ինքը շատ մեծ էր: Ափսոս, չհավատացիք: Ելնշտելի ասածն է. «Աստված ասելով, մարդ էք հասկացել: Դա չէ: Աստված նա է, որ տիեզերքն իր համար ֆուտբոլի գնդակ է»: Հիմա Ելնշտելը ճիշտ է նկարագրել, թե չէ՝ չգիտեմ: Բայց իր մտածողությունը ճիշտ է: Ֆ. Աբրամովը՝ ռուս մեծ գրողը, չէ՞, մեր կաթոլիկոսի մոտ եկավ, վերադարձավ, ասաց. «Ավելի մեծ մարդ չեմ տեսել: Ավելի հանճարեղ մարդ չեմ տեսել»: «Ինչո՞ւ», – հարցրի ես: «Կաթոլիկոս Վազգեն Առաջինն ասաց՝ երբ մարդիկ դադարեցին հավատալ Աստծուն, դադարեցին հավատալ իրար»:

Տ.Ս. – Այր...

Հ.Ս. – Տիգրան, պատահե՞լ է, որ հոգու մեջ երաժշտություն ծնվի, չհասցնես գրի անուն, կորցնես, մոռանաս ու այլևս չհիշես:

Տ.Ս. – Անկարելի է:

Հ.Ս. – Կյանքում առաջին անգամ ես օրերին ունեցա եղպիսի պահ: Ի՞նչ բան է, չեմ հասկանում:

Տ.Ս. – Կգա: Անպայման նորից կգա... Ինձ համար բանաստեղծությունից, հայոց լեզվից բարձր բան չկա: Ոչ երաժշտությունը, ոչ թատրոնը, ոչ կինոն... Ոչինչ: Ինձ համար տոն է հայոց լեզուն: Ինչ հոգեբանություն կա մեջը, ինչ երաժշտություն...

Հ.Ս. – Ինչ պատմություն կա: Մի բառը քեզ երկու հազար տարի ետ է տանում: «Երկնեց երկիրը» քեզ երկու հազար տարի ետ է տանում: Երկու հազար տարի էլ առաջ է գցում:

Տ.Ս. – Երբ բանաստեղծություն են կարդում, մոքսի մեջ ասում եմ՝ հիշողություն կա՞ քո մեջ, հարյուր տարվա հիշողություն կա՞...
Հ.Ս. – Երաժշտությունն ինձ համար ավելի մեծ բան է, քան բանաստեղծությունը: Ի՞նչ կլինի, երագում եմ, որ բանաստեղծությունն առանց բառի լինի...

Տ.Ս. – Բայց երաժշտությունն է բառի արտահայտությունը:
Հ.Ս. – Չէ, բառն է երաժշտության արտահայտությունը:
Տ.Ս. – Կարծո՞ւմ եք...
Հ.Ս. – Հա:

Տ.Ս. – Հիմքը ո՞րն է՝ բա՞ռը, թե՞ երաժշտությունը:

Հ.Ս. – Հիմքը երաժշտությունն է:

Տ.Ս. – Բայց երբ Ձեր բանաստեղծություններով գրում էի...

Հ.Ս. – Էլի երաժշտությունն է հիմքը...

Տ.Ս. – Ես որ կարդացի Ձեր «Մայրամուտ Մասյաց գագաթին» բանաստեղծությունը, չքեցի...

Հ.Ս. – Հա... Սա կյանքում ճիշտ ապրած մարդու խոսք է: Տիեզերքում որքան ճիշտ ապրած մարդ կա, նրանք կարող էին էլ բանն ասել:

Տ.Ս. – Երևանում այսօր կան մի քանի անուններ, որ սրբություն են ինձ համար: Մեկը Համո Սահյանն է: Ես, Վարպետ, խոսում եմ իբրև հավատավոր մարդ: Ձեր գոյությունը այս ամբողջ տարածքում՝ Չանգեզուր, Շիրակ, Արարատյան դաշտ, մեծ իմաստ ունի: Ես այս պահին տոն եմ ապրում, որ Դուք կաք, որ ես Ձեր կողքին կամ:

Հ.Ս. – Դու ավելի մաքուր ես: Ստալինյան ժամանակաշրջան չես ապրել:

Թղթ. – Առաջին բանաստեղծությունը, Վարպետ, որով սիրեցի Ձեր ստեղծագործությունը, «Օրը մթնեց» է, և նրա մեջ՝ «Ժամն է արդեն իրիկնահացի, Տխրությունս կամաց-կամաց փոխվում է լացի» տողերը:

Հ.Ս. – Ախր, դա ուժեղ բանաստեղծություն էլ չէ: Բայց ամեն ինչ է: Մեր գերդաստանը... 29 հոգով սեղան էինք նստում՝ ճիշտ էր: Հիմա սխալ է, որովհետև գերդաստանից մենակ եմ հացի նստում: Բանաստեղծություն չէ սա: Արվեստ չէ: Բայց ամեն ինչ է: Բանաստեղծությունը բացատրելը սխալ է: Հիմա երկու բանաստեղծություն եմ գրել: Խենթանալու են: Բայց չեմ հասկանում՝ ինչ եմ գրել... Արտասանեմ էլ երկուսը, բայց գրի չառնեք... Ես մի քանի տողն ասի: Էլ չեմ շարունակելու:

Թղթ. – Ներողություն համարձակությանս համար, ինչպե՞ս է, որ մեծերից հետո եկողները կարողանում են գրիչ վերցնել: Կոմիտասից, Խաչատրյանից հետո Մանսուրյանը երաժշտություն սկսեց գրել: Նարեկացուց, Թումանյանից հետո Դուք բանաստեղծություն սկսեցիք գրել: Խոսքս վախի մասին է: Հկա՞ր վախը...

Հ.Ս. – Դերեկին Դեմիրճյանին մի օր եղպիսի հարց տվի: Ասաց. «Շեքսպիրը հաց է կերել, մենք չուտե՞նք»: Հարցրի պատասխաններ շատ ունեմ, մեկն էլ ես

Ե. Ժողովուրդն անսահման երանգներ ունի, և մեկ մարդու կարիքը միշտ կա, որ իր երանգներից մեկը, մի կողմ ցույց տա: Տիգրան Մանուկյանը բոլորովին կար երանգ է բերել: Իր մեջ էլ երանգը կար, հանել-ցույց է տվել: Երանգներն անսահման են: Մեկը պիտի գա, որ դրանից մի երանգը հանի ցույց տա: Ժողովուրդը երկու իրար նմանին չի ընդունի: Էդպես է:

Թղթ. – Ժողովուրդն, այլը, գիտի, որ այդ երանգն ունի: Ինչո՞ւ է ուզում, որ իր գավակներից ինչ-որ մեկը իրեն ցույց տա այդ երանգը:

Հ.Ս. – Հի ուզում: Հի սպասում էլ մեկին: Գիտի, որ էլ երանգն ունի: Բայց հենց որ մեկն էլ երանգը հանում է, ժողովուրդը տեսնում է՝ էս էլ ընդունում է... Համաձայն ես, Տիգրան:

Տ.Ս. – Այո, այդպես է... Ժողովուրդն անսահման է:

Հ.Ս. – Եսասեր է ժողովուրդը: Ուզում է ինքն իրեն իմանալ:

Տ.Ս. – Իր շերտերն է բացում իր մի քանի գավակների միջոցով: Ընդունեցի, դիմացար, կիսեցիր, բացեցիր՝ այդ ես: Չավակ ես...

Հ.Ս. – Երաժշտության մեջ, մտածում եմ, ո՞ւմ են պետք միությունները: Անհատականություններն են որոշում, ոչ թե կոլեկտիվը... Արվեստն իր գործն արել է, այնուամենայնիվ: Ստալինիզմ, ճահճացում՝ հա, բայց արվեստն իր գործն արել է: Նա հասկացել է, որ էսպես ու էսպես պետք է ապրել: Էսոր մեք հասկացել ենք դա:

Տ.Ս. – Եթե որևէ ելակետային հարց կա ինձ համար՝ Թամանյանի և Կոմիտասի սահմաններում է:

Թղթ. – Արվեստի դերն, ինձ թվում է, ոչ թե գեղագիտություն, խնդիր, այլ դարերի ծալքերում մարդուն մոռացումից փրկելն է: Զոմերուս, Նարեկացի, Բախ, Բեթհովեն, Կոմիտաս... Բոլորը կոչված են եղել մարդուն մոռացումից փրկել: Դարերի մոռացումից: Եվ նրան, նրա պատկերը, հոգին սերունդներին հասցնել:

Հ.Ս. – Տուն, մարդու տուն վերադառնալու խնդիրն է արվեստի խնդիրը: Գեղեցիկ հեքիաթն այն է, որ ինքը՝ մարդը տուն վերադառնա, ինքն իրեն իր տանը գտնի: Ընտանիք, տուն... Վերջին անգամ Ֆոկլների «Աղմուկ և ցատկ» վեպը՝ ընտանիքի պատմությունը, ինձ հրեց դեպի այդ գաղափարը՝ ընտանիքի, տան գաղափարը: Ամբողջ Ֆոկլները տան, ընտանիքի խնդիրն է:

Թղթ. – Ամբողջ Ֆոկլները, բայց, երևի, ոչ աշխարհի գրականությունը, արվեստը:

Հ.Ս. – Ամբողջ գրականությունն ու արվեստը... Ինչ հոյակապ բան ասիր, Տիգրան, էլ տան հարցը: Տուն: Տուն:

Թղթ. – Ինչպե՞ս է, որ մի արվեստագետի, գրողի հետ ծնվում է լեգենդը, մյուսն իր մահից հետո է լեգենդ դառնում:

Հ.Ս. – Զգիտեմ: Էդպիսի մի բանաստեղծություն եմ գրել: Տպագրվել է: Հիմա չեմ հիշում: Կա էդպիսի բան: Բայց հարցի պատասխանը չգիտեմ: Եթե Զարենցը լեգենդ է՝ հոյակապ է: Սևակը լեգենդ է՝ հոյակապ է: Շիրազը լեգենդ է՝ հոյակապ է: Ժողովուրդն պետք է էլ լեգենդը, որ ապրի, զորանա: Մարդը պիտի խոնարհվի: Էդ պահանջն ունի: Խոնարհվի լեգենդի առջև, որ ապրի: Լսել է, ճանաչում է, գիտի, չգիտի... Էդ կարևոր չէ: Կարևորը լեգենդի գոյությունն է... Տիգրանի շուրջ էլ լեգենդ չի կարող չլինել, կա: Կա: Լեգենդն էլ պետք է: Լավ է, որ իրեն կենդանության օրոք ասենք:

Թղթ. – Վարպետ, հայրական զգացում ունե՞ք Մանուկյանի, մյուս կրտսերների հանդեպ:

Հ.Ս. – Շատ ներդրություն, ամբողջ ժողովրդի հանդեպ ունեմ: Տարիքս է Էդպիսին: 75 տարեկան եմ, Է... Կարևորն էն է, որ 75 տարեկանում քեզ թո ժողովրդի հայրն ես զգում: Հիկ հազար տարեկան ժողովրդի գավակն ես, որ էսոր բոլոր ապրողներից ամենատարիքովն ես՝ նրանց հայրն ես քեզ զգում: Երկու զգացում ունեմ, մեկ՝ որ ժողովրդի գավակն եմ, մեկ՝ որ հայրն եմ: Բոլորն իմ գավակներն են, և ուզում եմ, որ իմ թաղման օրը բոլորը ներկա լինեն: Չավակները տարբեր են լինում: Նրանց տեսակը կարևոր չէ: Հայրն իրավունք չունի տարբերություն դնելու իր գավակների միջև: Բայց բոլոր դեպքերում սիրում է նրան, ով առավել մեծ գործ է անում ազգի համար: Մանուկյանը մեծ գործ է անում ազգի համար: Նրա գործը ամբողջովին ես ժողովրդին է արտահայտում: Հանկարծ ազգը չլինի, նրա գրած երաժշտությունը մնա, ուրեմն՝ ազգը կա: Եթե նրա գրածը արտահայտիչն է ժողովրդի ոգու, ուրեմն՝ ժողովուրդը կա, ինքն էլ կա ու կմնա:

Տ.Ս. – Աշխարհում ամեն ինչ սխալ է: Երաժշտությունն էլ է սխալ: Լավ է, երբ երկիրն է մեծ, ժողովուրդն է մեծ, մարդն է մեծ...

ԶՐՈՒՅՑԸ ՎԱՐԵՑ՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱՅԱՆԸ

Ա՛խ, ինձ ծել է չքողին,
Էլ ուր մնաց կանաչել,
Ծանոթանալ չքողին,
Էլ ուր մնաց ճանաչել:

Մովրեցի չգործած
Մեղքիս համար մեղանչել,
Իմ տվածով գոհանալ,
Վարձիս համար ամաչել:

Ինձ հառաչել չքողին,
Էլ ուր մնաց շատաչել:

ՄԱՅՐԱՄՈՒՏ, ՄԱՅԱՅ
ԳԱԳԱԹՆ

Խարույկը վառած մեռնեի,
Արևից, հողից, հողմերից
Կարոտս առած մեռնեի,
Իմ վերջին հառաչքի միջից
Գոհության ճիշդ բողբոջեր,
Արտերս, արտերս վարած,
Պարտքերս մարած մեռնեի:

ԳԱԼՈՒ Ե ԱՇՈՒՆԸ
ԴԱՐՁՅԱԼ

Գալու է աշունը դարձյալ,
Եվ դարձյալ գլխիդ վրայով
Կռունկը հարավ է գնալու...
Չիմարի, չիմարի իմ ծառ,
Դու էլի ինձ հետ ես մնալու:
Օրերն այս անցյալ են դառնալու,
Հեռավոր՝ ի, հեռավոր անցյալ...
Գալու են տարիներ դարձյալ,
Եվ դարձյալ գլխիդ վրայով
Կռունկը գարնանը՝ հյուսիս,
Աշնանը հարավ է գնալու...
Չիմարի, չիմարի իմ ծառ,
Մռանց ինձ ինչպե՞ս ես մնալու:

ՀՐԳԻ ՈՒՆԵՄ ՏԱԼՈՒ

Մեկի համար հույսի
Մուսիկ-փուսիկ առու,
Մեկի համար քախտի
Չքաղաց եմ եղել:
Մեկի խիղճն եմ եղել
Ու հավատք բարու,
Մեկի համար մտքի
Ավուր հաց եմ եղել:
Ուր եղել եմ, մարդիկ,
Հոգի ունեմ տարու,
Չեք մորմոքներն իմ մեջ
Անթեղած եմ եղել...
Հիմա ասեք, տեսնեմ,
Ո՞վ է վրաս լալու,
Լացողներին վրա
Վաղուց լաց եմ եղել:

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ.

«Սահյանի պոեզիան, իր՝ հատկապես քնարական, խոհափիլիսոփայական մասով, տեղով մեղեդի է»



ծություններ այնքան մեղեդային են եղել, որ միանգամից, երբեմն նույնիսկ ակամա՝ վերածվել են երգի:

– Մեր բանաստեղծներից ո՞ւմ կարող եք հատկապես հիշատակել, որոնց ստեղծագործությունների միջոցով՝ երգերի վերածելով, արտահայտվել ու արտահայտվում են ժողովրդի հույզերն ու խոհերը:

– Թերևս բոլորին, թեպետ առանձնահատուկ կարելի է հիշել Րաֆֆու «Ձայն տուր, ով ծովակ», Ռաֆայել Պատկանյանի «Երևել թե այս Լոր տարին», Մկրտիչ Պեշիկթաշյանի «Գարուն», «Եղբայր եմք մեք», Նահապետ Ռուսիյանի «Կիլիկիան», էլի շատ գործեր, որոնց հիման վրա գրված երգերը շատ-շատ հայտնի են, և տասնամյակներով, ու արդեն նույնիսկ կարելի է ասել՝ դարերով մեր ժողովրդի և մեր պահպանված արտահայտումն են: Համո Սահյանից, այդ առումով, կառանձնացնեի «Նահրյան դալար բարդի»-ն, որը թերևս Սահյանի բառերով գրված ամենաժողովրդական երգն է:

– Երաժշտություն ստեղծելու ճանապարհին ո՞ր բանաստեղծությունները կամ բանաստեղծության ո՞ր չափանիշներն են նախընտրելի (ըստ Ձեր դիտարկումների), եթե հետադարձ հայացք ձգենք բանաստեղծություն-երաժշտություն բազմադարյա համագործակցությանը՝ թեմատիկա՞, տաղաչափություն՞, հնչյունաբանություն՞, խոսքի և ընդհանրապես տեքստի հղկվածություն՞...

Մի խոսքով՝ ե՞րբ են բանաստեղծությունն ու երաժշտությունն ընդհանուր գալիս միմյանց:

– Ձեր նշած բոլոր հատկանիշներն էլ կարևոր են բնականաբար: Բայց ես նախ և առաջ կշեռնեի տրամադրությունն ու էներգետիկան: Փորձը ցույց է տալիս, որ եթե բանաստեղծության մեջ կրոնապաշտոնը կամ երաժիշտը տեսնում է այդ անհրաժեշտ տրամադրությունն ու էներգետիկան, ապա մյուս հատկանիշները, այսպես ասեմ՝ հնարավոր է հարմարեցնել: Մենք հաճախ կարող ենք հանդիպել բուն բանաստեղծության

Համո Սահյանի բանաստեղծությունները՝ վերածված երգերի. «Այնպես երկիրն» հետաքրքրող այդ թեմայի շուրջ գրույցի ենք հրավիրել գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, «Անտարես» հրատարակչության գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի ավագ գիտաշխատող Արթմենիկ Նիկողոսյանին:

— Դարո՞ւս Նիկողոսյան, նախ շնորհակալություն՝ գրույցի հրավերն ընդունելու համար:

Չրույցը հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի պոեզիայի, ավելի ստույգ՝ մեծ քնարերգուի այն ստեղծագործությունների մասին է, որոնք ժամանակի ընթացքում՝ տարբեր կոմպոզիտորների կողմից, վերած-

վել են երգի:

Բայց բուն թեմային անցնելուց առաջ կուզենայի այսպիսի մի իրողություն արձանագրել. երբ ծանոթանում ենք հայ երգարվեստին, ակնհայտ է դառնում՝ երգերի զգալի մասը սկիզբ է առնում մեր պոեզիայից, պոեզիա կոչվող մաքրամաքուր ակունքից:

Կարո՞ղ ենք դա համարել բնականոն, օրինաչափ ընթացք երգարվեստի զարգացման ճանապարհին:

– Ես եմ շնորհակալ: Ձեր հարցադրման մեջ արդեն իսկ պատասխանը կա: Անշուշտ, երևույթն օրինաչափ է, մանավանդ որ՝ մեղեդու և տեքստի ներդաշնեցումը թերևս հնագույն ժամանակներից ուղեկցել է մարդկությանը: Ամեն դեպքում, կարծում եմ, որ երգի ու պոեզիայի փոխհարաբերությունը, այսպես ասեմ՝ փոխադարձ ներշնչումների հատույթ է: Երգը, մեղեդին իր հմայքով բազմիցս ներշնչել են բանաստեղծություն գրել, և հազարավոր բանաստեղ-

տեքստից՝ հանուն երաժշտության փոքրիկ շեղումների, որոնք օգնում են երգն ավելի լավ դարձնել:

Սա շատ ակնհայտ է հատկապես Յամո Սահյանի դեպքում, մանավանդ որ՝ որքան ինձ հայտնի է, և երբեք հատուկ բառեր չի գրել երաժշտության համար, ինչպես, օրինակ՝ Պարոյր Սևակը գրեց «Երեբունի-Երևան», «Սարդարապատ» երգերի բառերը: Ընդհակառակը, միշտ կոմպոզիտորներն են դիմել Սահյանին, նրա բանաստեղծություններին:

– Մեր կոմպոզիտորական դպրոցը մինչև հիմա ինչպե՞ս է անդրադարձել Յամո Սահյանի պոեզիային: Նրա բանաստեղծություններին դիմելու առաջին փորձը մեր երգարվեստում:

– Ես կարծում եմ՝ ավելին կարող էր, որովհետև Սահյանի պոեզիան, իր՝ հատկապես քնարական, խոհափիլիսոփայական մասով, տեղով մեղեդի է: Ստույգ չեմ կարող ասել, թե որն էր առաջին փորձը, բայց դեռ 50-60-ական թվականներից Գուսան Շահենի գրած «Նահրյան դալար բարդի», Ալեքսեյ Յեֆիմյանի «Ես չիմացա, թե ինչպես...» երգերը շատ հանրահայտ էին ու շատ ժողովրդական, և այդպիսին են մինչ օրս:

Ցավոք, հատկապես 1990-ական թվականներին, Սահյանի շատ բանաստեղծությունների տեքստեր կամ առանձին հատվածներ հայտնվեցին նաև՝ այսպես կոչված՝ ռաբիս երգիչների երգացանկում, ընդ որում՝ շատ հաճախ տարբեր բանաստեղծությունների տարբեր հատվածներ միքս էին արվում մի տեղ: Զիշում եմ՝ շատ ցավալի է լսել, թե, օրինակ, ինչպես է կլկլացվում Սահյանի «Առաջին սերս՝ ձնծաղիկի պես...» կրքին բանաստեղծությունը:

– Ակնհայտ է, որ հատկապես վերջին տարիներին Սահյանի բանաստեղծություններով երգերն ավելի մեծ ու հաստատուն տեղ են զբաղեցնում և՛ անհատ կատարողների, և՛ երաժշտական համույթների երգացանկերում, ռադիոհեռուստատեսային երաժշտական ծրագրերում:

Ուրեմն և՛ ինչպե՞ս բացատրել կոմպոզիտորական համայնքի, երգիչ-կատարողների սերը Յամո Սահյանի պոեզիայի հանդեպ: Կամ գուցե այսպես ձևակերպենք՝ ո՞րն է Սահյանի բանաստեղծությունները երգի վերածելու գայթակղության գաղտնիքը...

– Այո, համաձայն եմ, կա այդպիսի միտում: Կարծում եմ՝ նախևառաջ պատճառն այն է, որ Սահյանի բանաստեղծությունները թեպետ շատ խորթային են, փիլիսոփայական սուգումներով, սակայն մյուս կողմից՝ շատ պարզ են, առանց խճողումների ու բառաբարդում-

Ցավոք, հատկապես 1990-ական թվականներին, Սահյանի շատ բանաստեղծությունների տեքստեր կամ առանձին հատվածներ հայտնվեցին նաև՝ այսպես կոչված՝ ռաբիս երգիչների երգացանկում, ընդ որում՝ շատ հաճախ տարբեր բանաստեղծությունների տարբեր հատվածներ միքս էին արվում մի տեղ:



ների, հանգի, չափի տեսանկյունից՝ ուղղակի կատարյալ: Միևնույն ժամանակ ընդգծված տրամադրություններ են պարունակում, և այսպես ասեմ՝ բխում են յուրաքանչյուր մարդու սրտից, իհարկե՝ թեմատիկայից կախված: Կարծում եմ՝ դա է պատճառը: Թեպետ, երբեմն կա նաև այսպես ասած՝ մոդային տուրք տալը: Երբ ինչ-որ մի կատարող, երաժիշտ երգ է հնչեցնում Սահյանի բառերով և հաջողության հասնում, մյուսները փորձում են կրկնել այդ հաջողության ճանապարհը:

– Կարծում ենք բանաստեղծի կերպարն էլ պիտի (Նախևառաջ) սրտանց, ջերմորեն ընկալվի-ընդունվի կոմպոզիտորի կողմից, այլապես ձգտումը պակաս կլինի, այլապես ցանկալի ներդրանակություն չի ստացվի և, ի վերջո, երգը չի կա-յուն:

Յամո Սահյանի հետ զրույցում Տիգրան Մանսուրյանն ասում է՝ «Մի օր, որ գնամ այս աշխարհից, Կոմիտասին ասելու եմ՝ այս օրը եղել եմ Յամո Սահյանի հետ»:

Կարծում եմ՝ այսպիսի կամ նման ընկալումներ պիտի լինեն խորքում, հակառակ դեպքում չէր կարող ծնվել, ասենք, Տիգրան Մանսուրյանի «Մարումուտի երգեր» վոկալ շարքը:

– Կարծում եմ, որ եթե բանաստեղծությունը գտնի երաժշտությանը՝ բանաստեղծի կերպարը, չեմ ասի, թե կմղվի երկրորդ պլան, բայց, այնուամենայնիվ, ձեր ասածի պես չի կարևորվի: Թեպետ, չեմ ժխտում, դա նույնպես կարևոր գործոն է: Կոնկրետ ձեր նշած դեպքում մասնորոն Մանսուրյանի և Յամո Սահյանի մտերմությունը և փոխադարձ ջերմ համակրանքը միմյանց հանդեպ՝ մեծ դեր են խաղացել: Եվ ընդհանրապես, Սահյանն ինքը շատ առիթնալի կերպար էր, հմայիչ անհատականություն, և դրա ուզենք թե չուզենք, գրավում է բոլորին, այդ թվում կոմպոզիտորներին:

– Երբեմն քո կարդացած ստեղծագործությունը, որի բովանդակությունը յուրացրել ես, երգ դարձած վիճակում ավելի ընկալելի է

դառնում ու հոգեհարազատ: Ուրեմն և՛ բանաստեղծական խոսքը հանրայնացնելու, ժողովրդի աղյան մեջ մտցնելու կարևոր ուղիներից մեկը բանաստեղծությունը երգի վերածելն է:

Ուստի և՛ արժեք բաշխելու մեր կոմպոզիտորական համաբարությանը՝ ավելի հետևողականորեն երաժշտականացնելու հայոց պոեզիայի լավագույն գործերը, թեև այդ ամենն ինքնաբերական պրոցես է, սրտի թելադրությամբ կատարվող արարում:

– Այդպես էլ կա: Նույնիսկ ես կարծում եմ, որ շատուշատ բանաստեղծություններ հենց երգի վերածվելու շնորհիվ է, որ ունեցել են երկար կյանք և առ այսօր հիշվում են ու սիրվում: Գևորգ Դրոբիսյանի «Ծիծեռնակ»-ը, Սմբատ Շահագիզի «Երագ»-ը, և այլ գործեր, թեպետ ինքնին հրաշալի ստեղծագործություններ են, բայց, վստահաբար, երգի վերածվելը դրանց ավելի հանրահայտ է դարձրել և յուրովի ամնահոլություն պարգևել: Մյուս կողմից՝ նույն Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Եղիշե Զարեցի, Վահագն Դավթյանի, Սիլվա Կապուտիկյանի, Յամո Սահյանի մի շարք բանաստեղծություններ հենց երգի վերածվելու պատճառով են շատ ավելի հանրահայտ, քան կլինեին, եթե երգ չդառնային: Օրինակ՝ Վահան Տերյանի «Իմ խաղաղ երեկոն է հիմա» բանաստեղծությունը: Էլի կան:

– Մեր իմաստուններն են ասել՝ երգը պիտի քեզ ձգի, երգի առաջ պիտի խոնարհվես...

Քանի-քանի պոետներ ու երգիչներ են, օրինակ, փառաբանել մայրական սերը, մոր աստվածային կերպարը, բայց...Մոր կերպարը նորովի է մարդ ընկալում, երբ, օրինակ, ունկնդրում է Յամո Սահյանի «Մայր» բանաստեղծությունը՝ երգի վերածված Սատու Պասկեօյանի կողմից:

«Դու իմ միակն էիր, ինչպես Յա-յաստանս, /Տանս ճրագն էիր և ծուխն էիր տանս...»:
Զրաջ է... Եվ պատահա-





կան չէ, որ օտարները նույնպես (երբեմն) երգում են Յամո Սահյանի խոսքերով ստեղծված երգերը:

Վախթանգ Կիկաբիձեի կատարումն էմ հիշում՝ «Եվ չիմացանք, թե ինչու...»:

Երջանկահիշատակ Ալեքսեյ Յեֆիմյանն էր երաժշտության հեղինակը:

Չգիտեմ, նման օրինակներ էլի՞ ունենք: Մեկ ուրիշ աշխարհում ես հայտնվում, երբ ունկնդրում ես Կոնստանտին Օրբելյանի կողմից երգի վերածված բանաստեղծությունը՝ «Ախր ես ինչպես վեր կենամ գնամ...»: Ինքը՝ Կոնստանտին Օրբելյանն է կատարում: Այնքան հայկական է, այնքան ինքնատիպ... Ունկնդրելիս աչքիդ առաջ հառնում է հայոց լեռնաշխարհը, Յայաստանի հանդեպ պատասխանողությունը է մի նոր աստիճանի բարձրանում:

Կուզենայինք Ձեր համառոտ անդրադարձը լսել կոմպոզիտորների Տիգրան Մանուկյանի, Սասուն Պասկևիչյանի, Կոնստանտին Օրբելյանի, Ալեքսեյ Յեֆիմյանի կատարածին՝ Սահյանի բանաստեղծությունները երգի վերածելու գործում:

– Հրաշալի, իրոք ընտիր օրինակներ հիշեցիք: Սակայն ձեր նշած կոմպոզիտորներից յուրաքանչյուրը յուրովի է մոտեցել Սահյանին, փորձել ներկայացնել բացահայտել նրա պոետիկայի մի եսկան հատկանիշը: Օրինակ՝ Տիգրան Մանուկյանի դիտակետում՝ փիլիսոփայական խորքի Սահյանն է, Յեֆիմյանի, ինչ-որ տեղ նաև Սասուն Պասկևիչյանի մեղեդիներն առավել քնարական ուղղությանն են միտված, Կոնստանտին Օրբելյանի երաժշտությունն ավելի շատ սևեռված է ոգու վրա: Այստեղ կարևորն այն է, որ այդ բազմազանությունը հենց Սահյանին է, և դա ևս մեկ ապացույց է, որ նրա պոետիկան՝ երգի վերածվելու ճանապարհին ուղղակի խոչընդոտներ չի ստեղծում, բաց է տարբեր մոտեցումների, ճաշակների առջև:

Ճիշտ է, այդ բացությունը, ինչպես վերևում նշեցի, երբեմն այսպես ասեմ առիթավորում է նաև ցածրաճաշակ երգիչներին, բայց դա այնքան էլ եսկան չէ:

Խոստովանեմ 3 երգ էլ ես ինքս եմ ժամանակին գրել Սահյանի բառերով, ընկերս էր կատարում: «Ծովն էր, գիշերն էր...», «Դու վերջին իմ սեր, վերջին աստված», «Դու ուզեցիր, որ ես...»՝ ահա այդ բանաստեղծություններն էի ընտրել: Բնականաբար, այնքան էլ լավ երգեր չեն, բայց դրանով ևս ուզում եմ ասել, որ Սահյանի պոետիկան շատ բաց է երգ դառնալու համար:

– Ճիշտ բանաստեղծություն, հոգեբույս երաժշտություն...

Բայց դա, ի վերջո, պիտի պատշաճորեն մատուցվի կամ մեկնաբանվի: Այնպես որ՝ շատ կարևոր է երգիչ-կատարողի դերը՝ ստեղծագործական այդ ընթացքն ամբողջացնելու, երգը վերջնական հանգրվան հասցնելու համար (անկախ ժանրից):

Համլետ Փետրոսյան, Լեյլա Սարիբեկյան, Երանուհի Գեղամյան, իսկ մինչ այդ՝ Հարություն Փամբուկյան, վերջին շրջանում՝ նաև Հարություն Մկրտչյան, Արթուր Խաչենց...

Միգուցե շարունակե՞ք այդ շարքը:

Նրանց ունկնդրելիս սկսում ես ավելի շատ սիրել մարդկանց, կյանքը, երկիրը, գեղեցիկը...

– Անշուշտ, դա շատ կարևոր է: Ձեր թվարկած անուններին կավելացնեմ PROJECT LA նախագիծն ու Գոռ Սուլջյանին, որ մեր դասական բանաստեղծության տեստերով հրաշալի երգեր են ստեղծում ու կատարում: Մասնավորապես Յամո Սահյանի բառերով երկու երգ ունեն՝ «Ինձ բացակա չլնեք», «Ես այն եմ եղել», որոնց երաժշտության հեղինակը Լևոն Արևշատյանն է:

Սահյանի «Տար ինձ ժամանակ» երգի բառերով արտակարգ երգ կա, որ արտակարգ կատարում է Սոնա Շահգեղյանը: Ցավոք, չգիտեմ ով է կոմպոզիտորը, բայց իսկապես շատ հզոր երգ է ստացվել՝ Սահյանի բնորոշ ոգեղենությունն ու քնարականությունը մեկ տեղված:

– Տեղեկություններ ունե՞ք, թե Յամո Սահյանի որ գործերն են հիմա երգի վերածվելու ճանապարհին: Որքանով տեղյակ եմ միայն Սասուն Պասկևիչյանը չորս երգ ունի, որ պիտի ձայնագրվի:

Այդ ճանապարհին շատ դեպքերում ֆինանսական բնույթի խնդիրներ են ծագում:

– Ճիշտն ասած՝ ստույգ տեղեկություններ չունեմ, բայց վստահ եմ, որ գրվում են: Չեմ կարծում, թե ֆինանսներն այս դեպքում շատ եսկան են: Պարզապես պետք է ստեղծել լավ երգեր, հրավիրել կատարողների ուշադրությունը, և վստահ եմ, որ երգերը կձայնագրվեն էլ, կտարածվեն էլ: Մանավանդ որ՝ Սահյանի բանաստեղծությունները հոգեհարազատ են բոլորին, և ծանոթ ու սիրված բառերով երգ լսելը մարդկանց անմիջապես կգրավի, և երգի հաջողությունն էլ ապահովված կլինի:

Մյուս կողմից՝ չպետք է այնքան միամիտ լինել՝ վստահ լինելու համար, որ եթե երգը Սահյանի բառերով է, ուրեմն՝ անպայման լավն է: Ստեղծվող երաժշտությունն այս դեպքում, կարծում եմ, պետք է արժանի լինի Սահյանի բանաստեղծությունների բարձր արժեքին

Սահյանի «Տար ինձ ժամանակ» երգի բառերով արտակարգ երգ կա, որ արտակարգ կատարում է Սոնա Շահգեղյանը: Ցավոք, չգիտեմ ով է կոմպոզիտորը, բայց իսկապես շատ հզոր երգ է ստացվել



ու տրամադրություններին, որովհետև մեղեդիներ կան՝ այսպես ասեմ՝ փչացնում են բանաստեղծությունը:

– Դուք գրականության ներկայացուցիչ եք և գրականության տեսանկյունից եք հիմա գրուցում երաժշտության մասին:

Չե՞ք կարծում, որ հիմա՝ մեր պետության ու ժողովրդի համար ճակատագրական, վճռորոշ ներկա ընթացքում ավելի շատ են պետք ապրեցնող, գոտեպնդող, ուռքի կանգնեցնող և ուռքի հանող երգերը:

Կարո՞ղ ենք եզրափակել, որ այդ առումով Յամո Սահյանին ավելի շատ լսելու, ընթերցելու կարիք ունենք ազգովի:

– Այնպես չէ, որ մենք այդպիսի երգեր չունենք: Պարզապես հարաբերական թմբիկի մի պահի այդ երգերը հետին պլան մղվեցին մի փոքր: Մի օրինակ բերեմ: Շուշան Պետրոսյանը մի հրաշալի կատարում ունի՝ Յամո Սահյանի «Հայաստան ասելիս» բառերով: Մեր զրույցի առիթով Յուսուբում փնտրեցի երգն ու չգտա, որպեսզի տեսնեմ՝ ով է կոմպոզիտորը: Ահա այդպես շարունակ երգերը մղել ենք հետին պլան: Իսկ ընդհանրապես, ոչ միայն Սահյանին, այլև մեր մյուս մեծերին շատ լսելու, ընթերցելու կարիք մշտապես պետք է ունենանք: Եվ ոչ միայն այսօր: Նրանց չլսելու, չկարդալու արդյունքն է մեր այսօրը: Ես հավատացած եմ, որ մենք կհարցախարենք մեր ժողովրդի, մեր պետության պատմության այս դժվար շրջանը: Մտում է գոնե այս անգամ դասեր քաղած դուրս գանք ու նույն սխալներն ապագայում չանենք:

**ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
30 ՄԱՐՏԻ 2022Թ., «ՍՅՈՒԼՅԱՑ
ԵՐԿԻՐ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ» N5**

ՀԱՍՈՒԼ ՊԱՍԿԵՎԻԶՅԱՆ ԸՆԴՈՒՄԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎԵՐԱԾՎԱԾ ԵՐԳԻ

Երգեր Համո Սահյանի բանաստեղծությունների հիման վրա



ՀԱՍՈՒԼ ՊԱՍԿԵՎԻԶՅԱՆ
ՀՀ ժողովրդական արտիստ, հայ
կոմպոզիտոր, բանաստեղծ

Հ ՈՎԿԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ.
«Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորություններով կենդանության շունչ է տալիս նրան, որ

նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար նրան թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միայն էն կախարդական աշխարհում, որ կոչվում է երաժշտություն»:

ՀՈՎԿԱՆՆԵՍ ՇԻՐԱԳԻ. «Որպեսզի երգը թռչի, պիտի երկու թև ունենա՝ խոսքն ու մեղեդին»:


Սկսել եմ երգեր հորինել 1958 թվականից: Երգերի տեքստերը ինքս էի գրում, որոնք հիմնականում պարզ ոտանավորներ էին:

Մեծ բանաստեղծներից առաջինը երգի վերածեցի Սիլվա Կապուտիկյանի. «ՎԱՐՈՏԻ ՊԱՅԻՆ» բանաստեղծությունը: Այնուհետև երգեր հորինեցի Եղիշե Զարեցի մի քանի տաղերի հիման վրա, ապա հաջորդեցին այլ բանաստեղծների գործերի հիման վրա ստեղծված երգեր՝ Վահան Տեյանի, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի, Արամայիս Սահակյանի... և ժամանակակից տարբեր բանաստեղծների գործերից: Ինձ համար կարևորը բանաստեղծության (բնականաբար՝ բանաստեղծի) ԱՍԵԼԻՔԸ է... Եվ երաժշտությունը պետք է համահունչ լինի այդ ԱՍԵԼԻՔԸ... Իմ համոզմամբ երգը ԿԵՆՂԱՆԻ ՕՐԳԱՆԻԶՄ է (ընդ որում՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ)... Երգն էլ ունի իր հոգին, ոգին, տրամաբանությունը, տրամադրությունը, շնչառությունը, ջերմաստիճան-



Երաժշտություն՝ Սատուն Պասկևիչյանի

Դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս,
Տանս ճրագն էիր և ծուխն էիր տանս:
Քոնը՝ իմն էր, իմը՝ քոնն էր հավիտյանս,
Դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս:
Իմ տերությունն էիր և իմ երկիրն էիր,
Լրումն ու լիրն էիր, ճակատագիրն էիր,
Եվ իմ միակն էիր, ինչպես Հայաստանս:
Իմ կյանքի գինն էիր, իմ Ծիր-Կաթինն էիր,
Եվ իմ բաժինն էիր, և իմ բագինն էիր,
Դու խառնված էիր շնչիս, Էությունս...
Դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս:



Արագիլները

Երաժշ.՝ ՍՄՍՈՒԼ ՊԱՍԿԵՎԻԶՅԱՆԻ

Դուք ինձ չե՞ք սսի, որբացած բներ,
Ի՞նչ էին խոսում իրար ականջի
Արագիլները զվերուց առաջ:
- ՏԱՌԱՊՈՒԲՄ ԷԻՆ:


Դուք ինձ չե՞ք սսի, աստղեր ու արև,
Ի՞նչ էին խոսում իրար ականջի
Արագիլները զվերու պահին:
- ՏԱԳԼԱՊՈՒԲՄ ԷԻՆ:

Դուք ինձ չե՞ք սսի, անձմեռ հեռու,
Ի՞նչ էին խոսում իրար ականջի
Արագիլները զվերուց հետո:
- ԿԱՐՈՏՈՒԲՄ ԷԻՆ:

Անքուն եղեգներ անձմեռ հեռվի,
Ի՞նչ էին խոսում արագիլները
Ձեզ «Անաք բարով» ասելուց առաջ:
- ՇՏԱՊՈՒԲՄ ԷԻՆ:

Բուք արտաշնչող լեռնագագաթներ,
Ի՞նչ էին խոսում հոգնած ու մրսած
Արագիլները ետ գալու պահին:
- ՀՎԱՏՈՒԲՄ ԷԻՆ:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎԵՐԱԾՎԱԾ ԵՐԳԻ

 Երբ... ժպիտն ու ուրախությունը, տիրությունը, ցավն ու արցունքները... (այս մասին կարելի է երկար խոսել ... Թերևս՝ մեկ այլ առիթով...): ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ բանաստեղծություններն ինձ միշտ են գրավել, հուզել, ապրեցրել ... Շատ էի տպավորված Սահյանի «ԱՐԱԳԻԼԵՐԸ» բանաստեղծությամբ: Այն արտագաղթի և Հայրենիք վերադառնալու մասին է ... Կարծես՝ իմ մասին էր գրված: Ես 24 տարի (1980 – 2004թթ.) ապրել եմ Լոս Անջելեսում (և նորից վերադարձել Հայրենիք)... Ես համոզված եմ, որ հազիվ թե ինձ հաջողվեր երգի վերածել «ԱՐԱԳԻԼԵՐԸ» բանաստեղծությունը, եթե ինքս ինձ չտեսնեի, չզգայի այն ամենը, ինչ ԱՐԱԳԻԼԵՐԸ են ապրել ու զգացել՝ տառապանք, տագնապ, կարոտ... և վերջապես՝ ՀԱՎԱՏ... ու վերադարձ...

«ԱՐԱԳԻԼԵՐԸ» երգն անթերի մեկնաբանել է անզուգական երգչուհի Լեյլա Սարիբեկյանը... Համո Սահյանի «ՄԱՅՐՍ» բանաստեղծությունը երգի եմ վերածել 2004-2005 թթ.: Իմ համոզմամբ՝ այդ բանաստեղծությունը հսկայական կոթող է՝ նվիրված ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ... Ես՝ ՀԱՅ ՄԱՅՐԸ, ինչպես Սահյանն է բնորոշել, մեր տերությունն է, մեր երկիրը, լրումն ու լիրը, ճակատագիրը ..., միով բանիվ՝ մեր միակը՝ ինչպես ՀԱՅԱՍՏԱՆԸ... «ՄԱՅՐՍ» երգը նույնպես անթերի է մեկնաբանել անզուգական երգիչ Համլետ Գևորգյանը... Մեկ այլ գլուխգործոց է Համո Սահյանի «ԻՄ ԶԱՐԱՓԼԵՐԸ ՈՒ ԵՍ» բանաստեղծությունը, որի հիման վրա ստեղծված երգը ես վերնագրեցի «ԻՆՁ ԲԱՅԱՎԱ ԶՂՆԵՔ»... (մեկնաբանել է Լեյլա Սարիբեկյանը): Համո Սահյանի ևս մի բանաստեղծություն՝ «ՄԵՐ ԼԵՉՈՒՆ», սքանչելի ծոն է մեր մայրենիին... Երգը (այդպես էլ կոչվում է՝ «ՄԵՐ ԼԵՉՈՒՆ») հրաշալի է մեկնաբանել 14-ամյա Երանուհի Գեղամյանը, որին ձայնակցել են «ԼԻՎԱ» մանկական երգչախմբի մի խումբ երեխաներ... Այս երգերը ստեղծվել և ձայնագրվել են մինչև 2014 թվականը... Երգի եմ վերածել Համո Սահյանի «ՀՐԱՇՔ ԼԻՆԵՐ», «ԴԱՌՆԱՍ» և «ԴՈՒ ՈՒՉԵՑԻՐ»... բանաստեղծությունները..., բայց առայժմ չեն ձայնագրվել (տարբեր պատճառներով... Այս մասին կարելի է արտահայտվել մեկ այլ՝ պատեհ առիթով)... ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ շատ գործեր գրեթե պատրաստի երգեր են ...

30 ՄԱՐՏԻ 2022Թ., «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ» N5


Երգիչներ, ովքեր կատարել- կատարում են Համո Սահյանի բանաստեղծությունների տեսքատերով երգեր




ՀՄՍԵՑ ԳԵՎՈՐԳՅԱՆ



ԼԵՅԼԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՎԿԻՐՍԵՆԳ ԿԻՎՈՐԿՅԱՆ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՐՄՈՎԿՅԱՆ



ՇՈՒԾԱՆ ԳԵՐՈՅԱՆ



ԱՌՆԱ ՇԱՇԿԵԼԳՅԱՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԳՐՈՅՑՆԵՐ ՀԱՍԱՐԻՆ

Հարցազրույց Գետիկ Բաղդասարյանի հետ

Լա Սահյանի մի շարք քանդակների և Սիսիանի հուշարձանի հեղինակն է

Քանդակագործ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակագործության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գետիկ Բաղդասարյանը Համո Սահյանի մտերիմներից էր: Համո Սահյանի 110-ամյակի նախօրեին գրուցեցինք Գետիկ Բաղդասարյանի հետ:

— Դարձնե՞ք Բաղդասարյան, նախ՝ Համո Սահյանի հետ ունեցած հարաբերությունների մասին:


— Համո Սահյանի հետ ծանոթ եմ 1979 թվականից, հետո՝ գնալով, ավելի մտերիմացանք: Նրան՝ որպես բանաստեղծ, շատ եմ հավանում, որովհետև մեր մեծ բանաստեղծներից մեկն է՝ խորն իմաստով, լեցուն կյանքով, փիլիսոփա... Այդպիսի բանաստեղծներ Հայաստանում շատ ունենք, փառք Աստծո, նրանցից մեկն էլ Համո Սահյանն է: Այն մեծ սյուններից է, որոնց վրա ազգային մեր արժեքամակարդն է բարձրանում: Սիրում էր Հովհաննես Թումանյանին, նրան համարում ամենա-ամենան... Սահյանը թումանյանական բանաստեղծ էր ու չափազանց սիրում էր Հայաստանը, միևնույն էր քրեք չէր ասում Հայաստան ջան, ես քեզ շատ եմ սիրում, ուղղակի զգալ էր տալիս միշտ: Ինքն այնքան տարբեր է, որ ինչքան կարողում այնքան նոր բան ես հայտնաբերում: Սյունիք աշխարհից է ինքը. հպարտ եմ, որ ինքս էլ Սյունիքից եմ, որ մենք համերկրացի ենք: Շատ մեծ խորություն ունեն նրա բանաստեղծությունները, միշտ զարմանում ես մտածելակերպի վրա, թե ինչպես է քարից, մարտնու թփից, ջրից սիրուն կոմպոզիցիաներ հյուսում, մտքով անգամ չի անցնում, որ կարելի է դրանք բանաստեղծություն դարձնել: Մեծությունը հենց դա է...


— Մեր գրույցի առարկան Ձեր հեղինակած գործերն են՝ Համո Սահյանի կերպարն արտացոլող: Բայց որպեսզի ընթերցողն ամբողջապես

և նորովի ճանաչի Ձեզ, կուզենա՞յինք իմանալ՝ ի՞նչ նշանավոր քանդակներ, հուշարձաններ եք ստեղծել Սյունիքում կամ նշանավոր սյունեցիներին առնչվող:

— Սյունիքում ստեղծել եմ նախ՝ Սիսիանի դարպասները՝ Շչորս Դավթյանի նախաձեռնությամբ, Համո Սահյանի արձանը՝ Սիսիանում, Կուրգ Ոսկանյանի

հուշարձանը՝ Սիսիանում, հեքիաթների թեմայով՝ մետաղից պատրաստել եմ կտրիճ, ով իսնձոր է բերում արքայադստերը՝ տեղադրված է Սիսիանի կենտրոնում՝ նախկին ռեստորանի դիմաց: Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ՝ Սերո Խանգոյանի կիսանդրին՝ Գորիսում, Գուսան Աշոտի կիսանդրին՝ Գորիսում, Ակսել Բակունցի կիսանդրին՝ Հայաստանի ազգային գրադարանում, Սուրեն Թովմայանի արձանը՝ Շինուհայրում: Այնուհետև՝ Բռնակոթում՝ Խորհրդային Միության երկու հերոսի կիսանդրիները, հուշատախտակներ, Նժդեհ եմ քանդակել... Գիտե՞ք՝ ինչ էի մտածում, լավ կլիներ, որ հիմա Նժդեհի գենետիկ կողը վերցնեին ու մի նոր Նժդեհ ստեղծեին՝ նրա մտածելակերպով, որը մեզ շատ է պետք, երկիրը կհզորանար, կբարգավաճեր, ոչ մեկը չէր էլ համարձակվի մեզ հետ այսպես վարվել...

Կասյան փողոցի վրա Սահյանի տան պատին ամրացրած հուշատախտակն էլ իմ աշխատանքներից է: 





տակն է:

– Ձեր լավագույն գործերի թվում է բանաստեղծի հուշարձանը, որ 2004 թ. ապրիլի 17-ին բացվեց Սիսիանում՝ Սիսակ Նահապետի հրապարակին կից գրասպասում: Այդ հուշարձանի կերտման, մտահղացման և տվյալ նախաձեռնության իրականացման մասին...

– Շատ էի ուզում համո Սահյանի կերպարը քանդակել, մտածում էի՝ ո՞նց, ինչպե՞ս: Մի օր նրա տանն էինք, համո Սահյանը նստեց թախտին, մի ձեռքը դրեց ծնկին, մյուսով հենվեց թախտին, հեռուստացույցով հաղորդում էր դիտում: Ես մտածեցի՝ ինչ հետաքրքիր է նրա դիրքը, թախտի փոխարեն կարող են մեր ժայռերը լինել, և այդպիսի կոմպոզիցիա պատրաստեցի՝ մեկ մետրից մի քիչ փոքր:

Հետո Սիսիանի քաղաքապետ Գառնիկ Յովակիմյանը հետաքրքրվեց, եկավ ու ասաց, որ Արտաշես Հովսեփյանին են պատվիրել բանաստեղծի արձանի պատրաստումը, բայց ինչ-որ չի ստացվում, խառը պատմություններ են: Ասաց՝ կքանդակե՞ս համո Սահյանին: Դա ինձ համար մեծ պատիվ էր, բայց ասացի՝ միևնույն Արտաշես Հովսեփյանը չիրաժարվի, ես Ձեզ պատասխան չեմ տա: Երկու ամիս հետո Արտաշեսը հրաժարվեց: Սկսեցի աշխատել, Էսբիգի վերածեցի մեծ քարի, քարը մեծ դժվարությամբ գտանք և տեղափոխեցինք, բալի որ մոտ 40 տոննա կշիռ ուներ: Ինձ շատ օգնեց մի տղա՝ ազգությամբ օսեթ եր՝ Կոստյա Խետագորով, հոյակապ մարդ էր, միասին թեթևացրինք, և արդեն հնարավոր էր տեղափոխել Երևան, ու մի քանի տարի աշխատեցի: Վերջացրի, սակայն տեղը դեռ որոշված չէր...

– Սկզբնական շրջանում, կարծեք, Սիսիանի հուշարձանը ոչ միանշանակ ընդունվեց, հակասական կարծիքներ եղան... Տարիների ընթացքում, միևնույն, հուշարձանն այնքան միաձուլվեց Սիսիանի կենտրոնի համայնապատկերին, որ առանց այդ կոթողի հնարավոր չէ հիմա պատկերացնել քաղաքի կենտրոնը:

– Չափը ճիշտ էր ընտրված, տեղի առումով էին ասում, որ լավ չէ, բայց ես գոհ եմ, կողքի շենքերը օգնում են, որ ճիշտ չափն ընկալվի: Ինչ-որ մտահղացում կար՝ իրականացվեց՝ հենվել իր և բնության վրա, դա է համո Սահյանի հուշարձանի հիմնական խորհուրդը:

Շատ էին խոսում ուսերն այնպես չեն, այսինչն այնպես չէ: Ես ձեռ գործերին խառնվում եմ, կարող եմ խառնվել, բայց իրավունք չեմ վերապահի ինձ: Եթե միայն հասկացող մարդիկ լինեին, էլի ոչինչ, բայց... Ուզում էին իրենց խելքը ցույց տալ. ես այդքան տարվա մաս-



նագետ եմ, այնքան գործեր եմ արել, ուրիշ մասնագիտության մարդկանց որևէ խորհուրդ երբեք չեմ տվել: Քանդակագործությունն իմ մասնագիտությունն է, ես ավելի լավ գիտեմ, այդպես եմ արել, որ Սահյանն ավելի ցայտուն երևա...

Բացասաբար խոսողները հետո սկսեցին գովերգել, իբր արծվի նման է նստած և այլն... Ով ինչպես զգում է՝ կարող է ասել, բայց ոչ վատաբանել: Ինչ գործ էլ որ անես, միևնույնն է, մի վատ բան պետք է ասես...

– Որքանով հիշում եմք, մեր լեռնաշխարհի նշանավոր գավակ, հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանը պետք է կերտեր Սահյանի հուշարձանը, Դուք էլ քիչ առաջ ասացիք, բայց...

– Մանրուքների տեղյակ չեմ, նրան շատ հավանում եմ, նա լավ քանդակագործ է: Արտաշես Հովսեփյանն ինձ դաս է տվել, ես նրան շատ հարգում, սիրում եմ, բարեկամ եմք՝ Սառնակունք գյուղից, նրա եղբայրը մեծ նկարիչ Չաբար Խաչատրյանն է: Ի դեպ, Սիսիանը հինգ ժողովրդական նկարիչ է տվել՝ երկու Խաչատրյանները, Փարավոն Սիրոյանը, Եղիկ Դազարյանը, Գետիկ Բաղդասարյանը:

– Սահյանի սիսիանյան հուշարձանը նույն 2004-ին արժանացավ պետական մրցանակի: Այդ մասին...

– Այո, ճիշտ է, փառք Աստծո, որ գնահատվեց, կարևոր չէ, թե ով կստանար, միևնույն է՝ կպարտանայի: Ես շատ եմ սիրում համո Սահյանին, նույնիսկ մի օր ասաց՝ Գետիկ ջան, շատ կուզենայի, որ իմ տղան լիների:

Մի դեպք էլ պատմեմ գնացի նրա

բնակարան, ասացի՝ բարև համո Սահակիչ... Հետո՝ թեմա չկար խոսելու, լուռ նստեցինք, մի երկու ժամ հետո վեր կացա, հրաժեշտ տվեցի, Սահյանն ասաց՝ լավ լռեցինք. գեղեցիկ հուժկո ուներ...

– Եվ մոտ երկու տարի հուշարձանը Ձեր արվեստանոցի բակում էր՝ մայրաքաղաքի հրաշյա Քոչար 13 հասցեում, ինչո՞ւ էր ձգձգվում հուշարձանի տեղադրումը:

– Պատճառը ես չեի, չգիտեմ՝ ինչ խառը բաներ կային: Ես անդադար աշխատում էի...

– Դուք այն քերից եք, ով Սահյանի կյանքի վերջին օրերին նրա մահճի մոտ է եղել: Կարծում եմք՝ անհնար է մոռանալ բանաստեղծի կյանքի վերջին ժամերը:

– Նրա մոտ էինք՝ հիվանդանոցում, վատ էր զգում, հովհաննես Այվազյանն էր մեզ հետ, ծարավեց, ցանկացա դուրս գալ և ջուր բերել, Սահյանն ինձ չթողեց, ասաց՝ նստի կողքս, հովհաննեսին խնդրեցի, որ բերի: Հետաքրքիր է, վերջին րոպեներին խոսում էր Տիգրան Մանուկյանից, լավ մարդկանցից... Համարձակություն ունեցա հարցնել՝ ի՞նչ է ամենաշատը սիրում, ասաց՝ Գետիկ ջան, լավ մարդուն եմ սիրում... Ցավոք, երկու օր հետո էլ մայրս մահացավ, հնարավորություն չուներեցա նրա թաղմանը մասնակցել:

Սահյանն այն մարդն էր, ում հանդեպ միևնույն հիմա էլ մեծ հարգանք ունեմ ու փառք եմ տալիս Աստծուն, որ այդպիսի մարդու ճանաչել եմ, գիտեմ, արձանը կարողացել եմ կերտել՝ մեծ դժվարությամբ: Շնորհակալ եմ բոլորից, ովքեր օգնեցին, որ արձանը դրվի Սիսիանի կենտրոնում՝ Սուրեն Խաչատր-

յան, Գառնիկ Յովակիմյան, Լավրենտ Սարգսյան: Կառավարությունը գումար հատկացրեց: Յեշտ չէր քանդակ դնելը, միանգամից քարի վրա եմ տաշել, բայց պետք է կավից, գիպսից մոդել պատրաստելուց հետո անելի, ես մենակ պորտրետն եմ մոդել արել: Աստծո օրհնությամբ կարողացա անել ու հպարտ եմ, որ լավ է ստացվել և գտնվում է Սիսիան քաղաքում:

Երբ ավարտել էի, և տեղը դեռ որոշված չէր, ինձ առաջարկում էին Էջմիածին տանել, չհամաձայնեցի, հետո առաջարկեցին Երևանում տեղադրել՝ Կոմիտաս-Կայան խաչմերուկ: Ասացի՝ այս արձանը նախատեսված է Սիսիանի համար...

– **Համո Սահյանի 100-ամյակից հետո՝ վերջին տասը տարում, ունեցա՞ք նոր մտահղացումներ Սահյանի կերպարը քանդակագործության մեջ նորովի հավերժացնելու ուղղությամբ: Թվում է՝ շատ հետաքրքիր գործ է տուն-թանգարանի բակում տեղադրված կիսանդրին...**

– Այդ կիսանդրին պատրաստելու գործում Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանն օգնեց, լույս իջնի նրա շիրմին, իսկապես լավ գործ ստացվեց:

– **Համո Սահյանի գերեզմանը Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում...**

Նախ՝ բանաստեղծի գերեզմանաբարի տվյալ լուծման մասին: Այնուհետև՝ 2023-ի հոկտեմբերի 20-ին գերեզմանում կանգնեցվեց կիսանդրի, որի հեղինակն է քանդակագործ Տիգրան Արզումանյանը: Այդ մասին...

– Քանդակը չեմ տեսել, միայն նկարներն եմ տեսել, ուստի և կարծիք կազմել չեմ կարող: Գերեզմանի համար արել էի մետաղից գործ, մեծ քանդակ պետք է լիներ, բայց բրոնզից պիտի ձուլվեր, մետաղը կծանգոտեր, կգնար: Դա մնաց օդի մեջ, չիրագործվեց... Սահյանի գերեզմանը համեստ, սիրուն է, բայց կիսատ էր, կիսանդրին լրացրեց:

– **2015-ի հոկտեմբերի 17-ին Սահյանի բանաստեղծական գլուխգործոց «Պապի» հերոսը՝ բրոնզաձուլ արձանի տեսքով, դարձավ հայի հավերժության յուրօրինակ խորհրդանիշ, մեր հող ու ջրի տիրոջ խորհրդանիշ: Դարձյալ Դուք էիք այդ գաղափարը կյանքի կոչել՝ ճարտարապետ Նունե Պետրոսյանի հետ՝ Ստեփանյան գերդաստանի նախաձեռնությամբ: Այդ մասին...**

– Դարբաս գյուղից Արամ և Արմեն Ստեփանյանները եղբայրները պատվիրեցին: Ցանկացան եկեղեցու դիմաց կանգնեցնել արձանը, իրենց պապի

նկարները բերեցին, ես նմանեցրի, կողքին փոքրիկ աղջիկ «կանգնեցրի»՝ գառը գրկին, բրոնզաձուլ քանդակ է: Եթե յուրաքանչյուր ոք՝ իր հերթին, տարբեր վայրերում նման բաներ անի, մեր երկիրը հրաշք կդառնա այդ առումով...

Հիշում եմ Չերչիլի ասած խոսքերը. պատերազմի ժամանակ երկրի բյուջեն էին հաստատում, Նայեց ու տեսավ՝ արվեստին վերաբերող ոչ մի հատկացում չկա, հարցրեց՝ ո՞ր եմ արվեստը, մշակույթը, պատասխանեցին՝ դրա ժամանակը չէ, պատերազմ է... Բարկանում է և ասում՝ բա ինչի՞ համար եսք պատերազմում, չե՞ որ ազգերին ճանաչում են մշակույթով:

Ինչքան մեր եկեղեցիները, խաչքարերը քանդեն աղբեջանցիները, միևնույն է՝ նկարները պահպանվում են. նրանց վայրագությունն է հերթական անգամ ի հայտ գալիս և մեր վերաբերմունքն արվեստի, մշակույթի նկատմամբ: Նրանք պատմության մեջ որպես ջարդարար են մնալու, իսկ մենք՝ մշակույթ ստեղծող:

– **Ունե՞ք ծրագրեր կամ կիսատ գործեր Համո Սահյանին առնչվող:**

– Մրցույթի եմ մասնակցել մի քանդակով՝ Սահյանը ծառին հենված, մտածմունքների մեջ, Երևանում պետք է դնեին, բայց ոչ մի բան չստացվեց...

– **Եվ, իհարկե, օգտվելով առիթից, կուզենայինք իմանալ՝ ինչո՞վ է զբաղված Սյունյաց աշխարհի երևելի զավակ, մեր սիրելի Գետիկ Բաղդասարյանը:**

– Շարունակում եմ աշխատել, և ոչ միայն ես, որդիս այս տարի ավարտում է մագիստրատուրան, միասին ենք աշ-



խատում, նա էլ է քանդակագործ: Նժդեհի պորտրետն եմ արել, նա էլ քարից տաշել է մինչև վերջ: Իմ տղան է, եթե շնորհք չունենար, ես չէի թողնի, որ դրանով զբաղվի, հավետով է դրանով զբաղվում, ու դա ինձ ուրախացնում է: Դեռ փոքր ժամանակվանից սիրում էր ինձ օգնել:

ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՀՈՒՎԻՃՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԳՐՈՒՅՆԵՐ ՀԱՄԱՐԻՆ



Հարցազրույց Համո Սահյանի ավագ որդու՝ Նաիրի Սահյանի հետ

- 3 արգելի Նաիրի, նախ կուզենայի՞ք իմանալ «Համո Սահյան. պոեզիայի կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության մասին:

– Այն օրվանից, երբ կենտրոնի նախագահ Նշանակվեցի, վերահրատարակվել է Սահյանի բանաստեղծությունների յոթ ժողովածու: Հանդիպումներ են կայացել հանրապետության միջևկարգ դպրոցներում, երեկոներ են կազմակերպվել Հայֆիլիարմոնիայի Մեծ դահլիճում, պոետի ծննդավայրում անց են կացվել «Սահյանական օրեր»: Մենք մեր աշխատանքները շարունակում ենք, և այս տարի՝ 2024 թվականին, մեծ շուքով կկենք պոետի ծննդյան 110-ամյակը:

– Համո Սահյանի 100-ամյակից հետո՞ վերջին տասը տարում, ուշագրավ ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին բանաստեղծի ստեղծագործությունների վերահրատարակման ուղղությամբ:

– Վերահրատարակվել են պոետի

լավագույն ստեղծագործությունները՝ ընտրանու տեսքով, ինչպես՝ «Տոհմի կանչը», «Դաղձի ծաղիկը», «Քարափների երգը», նրա ձեռագրերի ժողովածու. դրանք հատկացվել են բարձրագույն ուսումնական հաստատություններին, որտեղ կան բանասիրական ֆակուլտետներ, դպրոցներին, հանրապետության գրադարաններին...

– Ասում եք՝ ընտրանի եք հրատարակել, բառահատո՞րը նկատի ունեք:

– Քառահատորն իմ ժամանակով չի եղել, հրատարակվել է 2011-2014 թվականներին՝ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ՝ պետական աջակցությամբ: Մենք առանձին ընտրանի ենք հրատարակել:

– Սահյանագիտության ներկա վիճակը մեր գրականագիտության մեջ:

– Սահյանագիտություն հասկացությունն ինձ համար հասկանալի չէ: Կան գրականագետներ, ովքեր իրենց անվանում են թումանյանագետ, սահյանագետ... Դա սխալ հասկացություն է:

Թումանյանագետ կարող է լինել միայն թումանյանը, սահյանագետ՝ Սահյանը: Նրանց բանաստեղծական ժառանգությունը լիովին կարող է իմանալ միայն այն մարդը, ով ստեղծել է այդ հրաշքերը: Ես այդ մասին միշտ արտահայտվել եմ: Պիտի դեռ ուսումնասիրվեն... Խոսքը Սահյանի ստեղծագործական ժառանգության մասին է. Սահյանի պոեզիան, իմ կարծիքով, դեռ լիովին չի ուսումնասիրվել, չի ներկայացվել այնպես, ինչպես որ պիտի ներկայացվի: Ինքն իրենով ներկայանում է, ինքն իրենով հրաշք է, հոգևոր մեծ արժեք է, բայց գրականագետներն իրենց գործերի մեջ չեն կարող այդ խորքը պատկերացնել և ներկայացնել աճող սերնդին այնպես, ինչպես որ կա:

Որքան գնում, որքան ժամանակն անցնում է՝ Սահյանն այնքան խորանում ու մեծանում է, դա ժամանակը ցույց տվեց:

– Անցած տասը տարում մեր գրականագիտությունը որքանով է անդրադարձել Սահյանի պոեզիային:

– Հանդիպումների ժամանակ միշտ ներկա են եղել անվանի գրականագետներ, ովքեր հանդիսատեսին, ներկայացրել են հայ մեծ բանաստեղծի ստեղծագործությունները: Եղել են աշխատանքներ, հոդվածներ, որոնք տպագրվել են թերթերում և կարդացվել՝ պոեզիա սիրողների կողմից:

Միևնույն ժամանակ՝ գրականագիտությունը, որպես այդպիսին, մեր

ժամանակներում, ցավոք, այն դերակատարությունը չունի, որ ունեցել է ժամանակին:

– Իսկապես, ոչ սովորական ժամանակներ ենք ապրում... Կարծեք փոխվել են նաև քաղաքակրթության ու արվեստի հարաբերությունները, այդ թվում՝ քաղաքակրթության և բանարվեստի, պոեզիայի հարաբերությունները: Ձեր կարծիքը:

– Քաղաքակրթությունը հրաշքեր է տվել մարդուն՝ գիտության տեսքով, բայց՝ միևնույն ժամանակ, շատ վատ է անդրադարձել արվեստի վրա: Այսօր ամբողջ աշխարհում կիսո գոյություն չունի՝ դասական իմաստով: Մեծ դեկավարներից մեկը՝ Լենինը, կիսոն համարում էր արվեստի կարևոր տեսակը, որն այսօր գոյություն չունի: Դա տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման հետևանք է... Ես միշտ օրինակ եմ բերում՝ կոպիտ օրինակ, Լեոնարդո դա Վինչիի կամ Միքելանջելոյի նկարները և Մալևիչի «Ան քառակուսին»: Սար ու ձորի տարբերություն կա, Մալևիչի «Ան քառակուսին» ներկայացնում է քաղաքակրթության վերջնակետը, մարդուն և արվեստը, որը, իմ կարծիքով, պարզ ցույց է տալիս՝ ինչ դաժան դեր ունեցավ քաղաքակրթությունն արվեստի վրա:

– Իսկ քաղաքակրթությունը և պեղծիան...

– Այսօր Յայաստանի Յանրապետության գրողների միությունում, եթե չեմ սխալվում, 600 անդամ կա, բանի՞ մարդու ազգանուն կարող ենք հիշել նրանցից՝ որպես բանաստեղծ կամ մեծ բանաստեղծ կամ լավ բանաստեղծ: Իմ կարծիքով՝ ոչ մի: Դա խոսում է ինչի մասին... Այսօր կարողում են բանաստեղծներին. այն պրոբլեմները, որոնք բարձրացնում են, բխում են ոչ թե մարդու հոգուց, ոչ թե պատասխանում են մարդկանց հուզող հարցերին, այլ արձարծում են այն, ինչ-որ ժամանակը թեյադրում է... Այսինքն՝ չի արտահայտում մարդու տառապանքները, ցանկությունները, երազանքները: Եվ դա շատ ցավալի է, որովհետև արվեստը պետք է լինի հասարակությանը շունչ տվողի, կյանք տվողի դերում, ինչն այսօր չկա:

– Ազգային-պետական մեր ներկա ընթացքը ստիպում է այսպիսի մի հարց ևս քննարկել՝ ինչպե՞ս էին հայոց գրական մեծերը (Թումանյան, Չարենց, Բակունց, Մաթևոսյան, Սահյան և ուրիշներ) պատկերացնում մեր ժողովրդի վաղվա օրը, ազգային ի՞նչ երազանքներ ունեին, և ի՞նչ ունենք այսօր. փորձեք զուգահեռներ անցկացնել:

– Մեր մեծերը մեզ թողել են հսկայական հոգևոր ժառանգություն՝ Թումանյան, Սահյան, Գուրգեն Մահարի,

և դա պարտավորեցնում է բոլորիս՝ ապրել աստվածահաճո այն արժեամակարգով, ճանապարհով, որը նրանց ստեղծագործությունների մեջ կար... Ես կնշեմ բառեր, որոնք հիմա չեն էլ շրջանառվում մեր լեզվի մեջ՝ բարոյականություն, նամուս, խիղճ... Նրանց ստեղծագործությունները շատ դեպքերում հիմնված էին այդ արժեքների վրա: Մարդը պետք է լիներ այդ բառարժեքների կրողը, այսօրվա օրով դա չի արտահայտվում արվեստում, մնացել է միայն մեծերի ստեղծագործությունների մեջ...

– Երաժշտական արվեստում, կարծեք, Յամո Սահյանն այլևս իր մնայուն տեղն է զբաղեցնում: Նույնը կարող ենք ասել կերպարվեստի մասին: Իսկ ի՞նչ ունենք կինոարվեստում:

– Կինոարվեստում Յամո Սահյան չկա, մի բանի հարցազրույց կա տեսանկարահանված: Չգիտեմ՝ ինչու չեն անդրադարձել: Ցավոք՝ նաև վավերագրական ֆիլմեր չկան: Կտոր-կտոր նյութեր են հավաքում և ներկայացնում, բայց ամբողջական ինչ-որ ֆիլմ՝ նվիրված Յամո Սահյանին, չկա:

– Յամո Սահյանի հիշատակի հավերժացումը, կարծում ենք, կատարվեց ըստ պատշաճի՝ տուն-թանգարանի ստեղծում Լորում, հուշակոթողի տեղադրում Սիսիանի կենտրոնում, Գյումրիում և Երևանում՝ դպրոցի անվանակոչում, գրադարանի անվանակոչում մայրաքաղաքում, կիսանդրու տեղադրում շիրմաքարի մոտ, Սիսիանի մշակույթի կենտրոնի անվանակոչում... Արդյո՞ք այդ ուղղությամբ աշխատանքները կարող ենք ավարտված համարել, թե՞...

– Այն, ինչ-որ կապված է մեր մեծերի հետ և, իհարկե, Սահյանի հետ, երբեք չի կարելի համարել ավարտված, որովհետև յուրաքանչյուր նոր սերունդ՝ նոր պատկերացումներ է ունենում, ու մենք պարտավոր ենք նորովի ներկայացնել մեր մեծերին... Իսկ Յամո Սահյանին անմահացնողը նախևառաջ իր պոեզիան է, ինքն իր արվեստով կառուցել է իր հուշարձանը: Բայց ինչ-որ պիտի արվեր 100-ամյակին, արդեն 12 տարի է՝ չի արվել, մայրաքաղաքում պիտի կանգնեցվեր հուշարձան, մրցույթ հայտարարվեց, ընտրվեց լավագույն առաջարկությունը, սակայն մինչև այսօր ասում են՝ գումար չունենք: Աստված ինձ տա առողջություն՝ դա էլ կանեմ...

– Ի՞նչ ծրագրեր կան (եթե, իհարկե, տեղյակ եք) Յամո Սահյանի գրական ժառանգության վերահրատարակումների առնչությամբ:

– «Մայրամուտից առաջ» գիրքը պիտի հրատարակվի մոտ ժամանակներս:

Ուզում եմ քառահատորը վերահրատարակել, որ տարիներ առաջ տպագրվել էր պետական աջակցությամբ:

– Յետաքրքիր է՝ կա՞ն ստեղծագործություններ, որոնք անտիպ են, որոնց ընթերցողը դեռևս ծանոթ չէ:

– Մեծ ուրախությամբ կարող եմ ասել՝ ինչ դուրս է եկել Սահյանի գրչի տակից՝ տպագրվել է:

– Յարիկի ընկերներից, մտերիներից, բարեկամներից ովքե՞ր կան և ովքե՞ր են կապ պաշտպանում Ձեզ հետ:

– Ընկերները չկան հիմա, տարիներն իրենցն անում են, բարեկամներ՝ հորեղբոր տղա, շփվում ենք Գրիգորի հետ, քույրերը կան՝ Պայծառը, Սեդան: Իսկ բարեկամներից... Յամարում եմ Սահյանի բարեկամներից մեկը հենց Դուք եք՝ Սամվել Ալեքսանյանը:

– Պետական մակարդակով, նաև Գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Յայաստանի գրողների միության, Երևանի պետական համալսարանի մակարդակով ի՞նչ ծրագրեր կան Սահյանի 110-ամյակը նշանավորելու ուղղությամբ:

– Տեղեկություն չունեմ:

– Իսկ տեղեկություն ունե՞ք Սփյուռքի գրական միջավայրում Սահյանի ստեղծագործությունների վերահրատարակումների կամ գրականագիտական ուսումնասիրությունների մասին:

– Ցավոք, ոչինչ չի արվում, մենք պիտի անենք... Պետք է թարգմանվի, բայց ես կամուկացի մեջ եմ՝ Սահյանը հայերեն Սահյան է, թարգմանվում է, և մոտ քառասուն տոկոսը կորչում է թարգմանության մեջ, չգիտեմ՝ արժե՞, թե՞ ոչ:

– Դուք հետաքրքիր հարց հուշեցիք՝ Սահյանի գործերը ովքե՞ր են թարգմանել ռուսերեն:

– Արսենի Տարկովսկին, Սիխայիլ Դուդիկը, Այվի Լետվինովան, Ալլա Մարչենկոն, հայերից՝ Սամվել Զարուբյանյանը (Վանաձորից) և ուրիշներ:

– Կա՞ն հարցեր, որոնց չանդրադարձանք, բայց Դուք կուզենայի՞ք հնչեցնել...

– Ես մի ցանկություն ունեմ, որ պետությունը մասնակցի այս ամեն ինչին, որ արվեստը ծառայի հասարակությանը: Յասարակություններն են ստեղծում պետություններ, ամեն մի պետության հիմքը հասարակությունն է, պետականությունն ինքն իրենով ոչինչ է՝ առանց մարդու, իսկ մարդը հոգևոր առումով պիտի հարուստ լինի, այլապես պետությունը չի կարող գորավոր լինել...

ՅԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՍԱՐԻՆ



Միսիանի Յամո Սահյանի
անվան մշակույթի կենտրոն

Խոնարհում և երկրպագություն այն հողին, որը հանճարեղ գավակ է պարզևել ագգին



ԷԿԵԼԻՆԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

...«Ի՛նչ անեն: Աչքերս փակեմ
Անրջեմ... ու բանամ նորից...»

որ հետո հայտնվեմ «կապույտ վերիուշերի» աշխարհում, շտապեմ ունկնդրել Լորագետի անթևների երգը, փարվեմ Գագբեյի հովերին, լցվեմ Տատնա ձորի խաղաղությամբ, ըմբռնվեմ դաղձի բույրը, գերվեմ երկնակարկառ, երկնամուխ սարերի քնքշությամբ, գրկեմ «ծիածանների ծվենները տաք», հետո պնկեպռունկ լցվեմ տիեզերքի անհունով, շշուկս

խառնեմ «նաիրական սեգ սարերի» խենթ սլացքին ու շտապեմ ներկայացնել մի մարդու, ով հետո լուսավոր օրերի շքերթ էր պարզվելու ծալ-ծալ ձորերում ծվարած այդ գողտրիկ գյուղին՝ Լորին...

Արի, սիրելի՛ ընթերցող, ուղեկցեմ դեպի նվիրական երազանքների աշխարհ՝ Լոր, ուր հոգեզմայլ, տաք, գարնանաբույր այդ օրը՝ 1914 թվականին՝ 110 տարի առաջ, «վերթերով շատ աշխարհի մեջ» լույս աշխարհ եկավ Յամո Սահյանը:

Մի պայծառ ճամփա՝ հիշողությունների արահետով մեզ կրկին տանելու է սահյանական մանկության կածաններով, նորից քայլելու ենք պոետի բանաստեղծական «ոտնահետքերով», հայտնվելու ենք կանաչ, կարմիր մի աշխարհում, ուր հյուսվել է, հնչել Սահյանի մանկության ոսկերիզ, ոսկեթել մանկության երգը, ուր ծյունագես բարձունքներից անգամ արևի հոտ է գալիս, ուր ամեն ինչ պարզ է ու պարզունակ, մաքուր է ու զուլալ իր՝ պոետի հոգու պես...

Եվ քանի որ ներկայի ճամփան

անցյալի դրոշմն ունի իր վրա, և իբրև սահյանական պոետի ջերմ երկրպագուներ՝ փորձելու ենք սուզվել Սահյանի պոետիկայի խորախորունկ ակունքների մեջ, որպեսզի քայլ առ քայլ բացահայտենք նրա ինքնատիպ, անչափելի պոետիկայի գոհարները, որի վերիուշերից, անշուշտ, վեր կհառնի պոետի վեհ կերպարը՝ դառնալով նրա կյանքի չբնառ, անկրկնելի պատումը:

Երանուության մեջ է հոգևոր աշխարհս, քանզի համոզված եմ, որ յուրաքանչյուր տողս թաթախված ու շաղախված է լինելու սահյանական պոետիկայի անհունով...

Հոգուս վառ ու վառվողն գույներով եմ մշտապես ընկալել սահյանական բնության համերգը, որի մասնակիցն եմ, որքան ինձ հիշում եմ...

Երբ էր՝ զգացիր, պոետ, որ գալված զգացմունքներն առ հայրենի եզերք, առ գեղաշքեղ բնություն, առ գեղեցկության պոռթկում հանգիստ չեն տալիս քեզ՝ Սահյան-անհատին, մղում են արարելու, երկնելու, հավերժացնելու, հոգու տագնապը, սրտի խռովքն արտահայտելու Ապոլոնի լեզվով...

Եթե փորձեմ «թարգմանել» զգացածս, ահա, թե ինչ կստացվի. կուսական անտառ ու մաքրամաքուր հանդ ու դաշտ, կապտաթույր ամպեր՝ խոնավությամբ լի, երկնամերձ լեռներ ու մի խենթ քամի, բարձրուղեշ բարդի, փշոտ մասրենի, հպարտ քարափներ, քերձերից ծորացող անաղարտություն, որոնք էլ օգնել են հյուսել Չորգորաջրի, Ծիծեռնավանքի, Որոտնաբերդի, Կապուտջուղի ...պոետի ներշնչանքի այլ աղբյուրների չխամրող պատմությունները... բանաստեղծորեն:

Այսքան առարկայական, այսքան հայկական... միայն Սահյանի գրիչը կարող էր երկնել...

Մտորումներս չունեն պատասխան. այսքան հանճար, այսքան քանքար մի մարդու մեջ...

Մեծ աշխարհի փոքրիկ մարդը՝ Յ.Սահյանը, ամբարած ուներ իր մեջ հավատ, սեր, կարոտ, որոնք էլ անմնացորդ բաշխեց՝ չխնայելով բանաստեղծական ներկապակի բազմաթույր երանգները...

Խոստովանենք՝ ինչ-որ հարազատ գայթակրություն կա Սահյանի պոետիկայում. դե իհարկե կլինի. չէ՞ որ նրա «հերոսները» մերն են, ապրում են, շնչում հայերեն, ու ամեն ինչի հիմքը գեղեցիկն է, անապակը, անարատը, վկան՝ կարմրահամ ու կարմրաբույր մարտենին, բնության բույրերի ու գույների խաղը, կանաչ ուրախությունն ու թավշյա թախիծը, անանջ կարոտը, զորավոր լույսի պայծառությունը...

Սահյանի պոետիկան ամրակուռ կամուրջ է հոգևոր և իրական աշխարհներ-

Միսիան



րի միջև, ուստի անհրաժեշտ է անցնել, ստուգել, համոզվել կամրջի ամրության մեջ, իսկ մեզ ու Սահյանին կամրջողը, խոստովանենք, պոեզիան է՝ առեղծվածային ու հանելուկային, իրական ու անիրական...

Բավական է թերթել Սահյանի ցանկացած գործը, և կհամոզվենք, որ ամենևին էլ պետք չեն հոգեկան փնտրտուքներ, որ նրա գրչի փոքրիկ հպումն անգամ կարող է ստիպել «խոսել» բնության տարրերին...

Երբ անհրաժեշտ է մոռանալ ժամ ու ժամանակ, քայլել մանկության ու պատանեկության «ապուպապոտ» կածաններով, դիմում եմ Սահյանի պոեզիային, իսկ երկնածին անուրջների, վառ երագների մասին հիշելիս դարձյալ բախում եմ Սահյանի պոեզիայի դարպասները...

Բոլոր ժամանակներում մարդ-անհատի գնահատման չափանիշները նույնն են, մնում է հուսալ, որ նվիրական գործը լինի հայրենանվեր, լինի ազգօգուտ, վկան՝ սահյանաշունչ արարումները...

Հպարտությունս երբեմն կորցնում է սահմանները, հոգիս հաճախ ու փառավորվում այն մտքից, որ ես չեմ երկրպագուն, ընթերցողն ու ժամանակակիցն եմ Սահյանի, ու չեմ երկնչում թափանցել նրա պոեզիայի անհուններն ու խորխորատները, մաքրամաքուր ակունքներն ու ասել՝ շնորհակալ

եմ, պոետ, շնորհակալ եմ ինձ՝ ձեզնով հպարտանալու առիթ ընձեռելու համար...

Երբ հերթական գարունը կրկին «հայերեն գա», ձյուները «լան ու հորդան հայերեն», ուրեմն՝ կա, ապրում է բնության հավիտենական երգիչը:

Երբ Սյունյաց գողտրիկ անկյուններից մեկում Լորում, որերորդ անգամ բացվի օրը խորհրդավոր, երբ քարափների թմբից կախված մարտնչների մի ողջ համաստեղություն՝ մամուռի արցունքը, ջրվեժի ծիծաղը դառնան հեքիաթ, դարձյալ պատմելու են Սահյան բանաստեղծի հավերժող կյանքի պատմությունը:

Երբ ծաղկեն արևոտ այգիներն ու դաշտերը, ու գարունը 110-րդ անգամ հայտնի Ավետիսը՝ Համո Սահյանի աշխարհ գալու մասին, կբախվեն ժամանակը հավերժացնող ալիքները, Նորեն կծաղկի սիրո ու պոեզիայի խորհուրդը, ու կհավերժի Սահյանի գարնանաբույր պոեզիան, որն իր զգլխիչ բույրով կլցնի, կգարդարի մեր՝ բանաստեղծաբաղջ հոգիները...

Խոնարհում և երկրպագություն այն հողին, որը հանճար զավակ է պարգևել ազգին, որն էլ կանաչ-կարմիրով է զարդարել մեր պոեզիայի երկնակամարը, քարափների շառաչը դարձրել երգ, կյանքը հավերժող պատմություն...

Հարգարժան Համո Սահյան, մեծար-

գո՛ր պոետ, համոզված արձանագրենք, որ սերունդները բազում տարիներ դեռ վայելելու են գրական «ժառանգներիդ» ընկերակցությունը, որ «զավակներիդ» մեկը՝ «Դաղձի ծաղիկը», մեր ակութները լցնելու է իր զգլխիչ բույրով, մեր Նորոգ կյանքի հավերժող պատմությունը շարունակելու է պատմել հաջորդ «զավակդ»՝ համոզմունքով, որ շարունակելու է ապրել «Հայաստանը՝ երգերի մեջ», իսկ ամեն անգամ երբ «Իրիկնահացի» սեղաններ բացվեն հայ օջախներում, «Քարափների երգը» անխնա կտարածի հացաբույրը ողջ Հայաստան – հայրենիքով, ու բոլորը միասին կպատմեն Համո Սահյան-անհատի, բանաստեղծի ապքը մերօրյա...

Փառաբանենք բառ ու բանի հանճարի, քարափների դեսպանի ծննդյան 110-ամյա հոբելյանը...

Չարմանալի, Նախանձելի համեստությամբ գալիքից ո՛չ պարտք, ո՛չ հուշարձանի ակնկալիք ուներ պոետը, բայց բանաստեղծական հանճարով կառուցեց իր անձեռակերտ հուշարձանը՝ պոեզիայի խոսուն, հյուլթեղ, անմեռ լեզվով...

Ու բանի պտույտ էլ տան երկրագունդն ու ժամանակը, այդ պտույտների հողովությունը դեռ երկար, շատ երկար հնչելու են Համո Սահյանի անունն ու գործը, որը անձեռակերտ հուշարձան է հայ պոեզիայի երկնակամարում: ●

ՀՈՂՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՍԱՐԻՆ

Մամուռներում... Հկորան արահետ ու անուն



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ
Գրող

1 989 թվականի գարնանային մի այսօր Սիսիանի Շամբի ձոր կոչվող ծիրանիների այգում նկարահանվեց «Իրիկնահացի հրավեր» ֆիլմը: Ինչ է հրաշալի պահ եր՝ ծիծաղկոտ ծառերով զարդարուն ծիրանուտում Համո Սահյանն էր՝ բարձր տրամադրությամբ, սիրահոժար ասող-խոսող: Այն Համո Սահյանը, ով միշտ խուսափել է նկարահանումներից, հարցազրույցներից: Այդ օրը ես այն բախտավորն էի, ով արժանացել էր մեծանուն պոետի բարեհաճությանը, ու արդյունքում ունեցանք և ունենք Համո Սահյանի՝ չափազանց քիչ պահպանված կենդանի կարդեր, որ մասունք որպես փայլապանքով ամենօրյա խայելիք են ու լսելիք: Համո Սահյանի բանավոր խոսքի այս գոհարները՝ նրա հյուրերը լեզվով ներկայացված, սերտելի դաս են, նաև ներշնչանքի արդյուր քեզ համար, եթե դու էլ մի քիչ գրի մարդ ես: Այս ամենն ունեցողի լիությանը ու հպարտությամբ իմ մտքում ու տրամադրության մեջ մշտապես մնում են պոետի հետաքրքիր, խրատական գրույցները, նրա բանավոր խոսքի հմայքը:

Այն խոստովանանքը, թե՛ Սիսիանն է պահել իր ինքնությունը, Սահյանի պոետիայում իշխող արտահայտությունն է՝ բնաշխարհին հարազատ, բնաշխարհը բաց ափի պես ճանաչող, ու, գոնե ինձ համար ամենակարևորը՝ Համո Սահյանով նրա ընթերցողը ոչ միայն

ճանաչում է Սիսական (եռնաշխարհը (թեպետ, ինչո՞ւ միայն Սիսական), այլև մոզական անտես մի ուժով, ներքին մղումով սիրահարվում է այդ աշխարհին:

...Համո Սահյանն իր հայրենի (եռնաշխարհում փնտրեց ու գտավ իր անդրադարձը՝ իր պապին ու ապուպապին, բնությանն ու հողին համանվագ, հողոտ-մղեղոտ, մի ծերատ լուսնի տակ իրենց հանգիստն առնող կալերով, կծիկ-կծիկ սարերով, պարան-պարան կիրճերով, մարտենու թփերով զարդարուն քերծերով... այն ամենով, ինչը կոչվում է հայոց (եռնաշխարհ, հայոց տուն ու տեղ): Եվ այդ արտացոլանքը՝ մարդը բնության մեջ, և բնությունը մարդու մեջ զուլալ համադրությամբ, դարձավ նրա պոետիան, դարձավ նրա ասելիքը, նրա մտորումը: Ես Հայաստան աշխարհի գեղեցկությունները նկարեց Սիսիանի չխամրող գույներով՝ ներկայանալի անսպառ երանգները ինսամբով, բծախնդիր, մեկիկ-մեկիկ դնելով բնությանն այնքան համահունչ ու հարազատ իր կանաչ-կարմիր աշխարհի կտավին:

Ես հասցրեց խորհուրդ և իմաստ դնել Սիսական աշխարհի ամեն մի քարին, թփին, ժայռապատկերին և այդ ամենն այնքան բնորոշ ու ամփոփ, որ երբ Սիսական աշխարհ ես գնում՝ մտքումս Սահյանը, շուրթերիդ՝ նրա տողերը, հայացքդ (եցուն բնության հրաշքի սահյանական նկարագրության հիացմունքով, ուրեմն խուփ աչքերով էլ կտեսնես, կճանաչես այդ աշխարհը, որտեղ, որս թարգմանչուհի Ալյա Մարչենկոյի խոսքերով ասած՝ «Այստեղ ամեն ինչ մարդ է, ժայռերը մարդ են, մասրենին մարդ է, Որոտանը մարդ է...»:

Ես ուրախ եմ, որ Սիսական աշխարհում պահպանվում են Համո Սահյանի ոտնահետքերը, և այդ ոտնահետքերով անցնելիս քեզ պարուրում է բանաստեղծի քնարերգության ճառագումներով նկարված ավարտուն կտավների մի յուրահատուկ գունաշխարհ: Այդ ամենը տեսնելուց, վայելելուց հետո սկսում են մտածել, թե կյանքում երբևէ չսխալված մարդը ինչպես մեկ անգամ, միայն մեկ անգամ սխալվել է, երբ գրել է՝ «Մամուռներում կորան արահետ ու անուն»: Եվ ես այլևս ունեմ այն համուզումը, թե նրա հետ կապված որևէ

բան՝ հուշ ասեմ, քնարերգության թողած հետքն ասեմ... չի կարող կորչել: Այս համոզումը գալիս է պոետի երգերի տարածքում ներկայությունից մեր շուրթերին:

...Համո Սահյանի ծննդյան 100-ամյակի օրերին քանիցս գնացի այն այգին, ուր պոետի մասնակցությամբ նկարահանվեց ֆիլմը: Այգին արդեն ուրիշ տեսք ուներ: Տարիների ընթացքում անմշակ էր մնացել, ու ծերացած ծիրանենիները չորացել էին: Սիսիանում Համո Սահյանի մտերիմ ընկերը՝ շինարար Լավրենտ Սարգսյանը, ով տասնամյակներ շարունակ միշտ Սահյանին ընկերակցել է՝ վերջինիս Սիսիան հյուրընկալվելու բոլոր առիթների դեպքում, տեղ էր կանգնել այգուն, նորատունկերով շենացրել, կառուցել հյուրատուն, ուր Համո Սահյանը հաճախ էր այցելում ու գիշերում այնտեղ: Երկրային կյանքին պոետի հրաժեշտից հետո Լավրենտ Սարգսյանը յուրովի է ինկարկում պոետի հիշատակը՝ այդ այգին հիմա կոչվում է Համո Սահյանի անվամբ, հյուրատունը՝ Համո Սահյանի հյուրատուն: Իսկ տան մի սենյակը, ուր գիշերում էր պոետը, յուրատեսակ թանգարանի է վերածել ու անվանել Համո Սահյանի թանգարան:

...Իմ այցի շարունակությունը պոետի ծննդավայր Լոր գուրդն էր: Ի՞նչ էի փնտրում՝ ոտնահետքեր: Դրանք ամենուր էին՝ բանուկ, զարմանալիորեն հեշտ անցնելի, և ամեն քայլիս, ամեն ոտնափոխիս արահետից, կածանից, ափնարտիկից լսելի էին պոետի տողերի հնչյունները, որ գալիս-թառում են շուրթերիդ, ու դու դառնում ես այն խենթը, որ սկսում է մասրենու հետ զրույցի բռնվել, պարան-պարան կիրճերին ու շարան-շարան ժայռերին հարցում անել իրեն զովեզողի մասին, և լսել նրանց արձագանքը: Այդ արձագանքը իրեն բացակա չդնելու ինտրուսի պատասխանն է՝ նա այստեղ է, մշտապես այստեղ:

Իսկ Լորում: Օ՛, սա ուրիշ աշխարհ է: Սա երկու հազար տարվա պատմության հավաստի վկայագրեր ունեցող շեն է: Եթե մինչ Լոր գնալը մտել ես Սիսիանի պատմության թանգարան, և տնօրեն Ծովինար Պետրոսյանն Ավետարան հիշեցնող հաստափոր մատյանը մեղմորեն թերթելով պատմել է, թե Լորի ծխական մատյանն ի՞նչ հսկայական պատմություն է ամբարում իր մեջ, ուրեմն Լորում դու արդեն տեղաբնակի իմացությամբ ես անցնում քո ճամփան՝ 1915-16 ուս. տարում այս գյուղ ոռուտչության եկած Ակսել Բակունցի խոստովանանքն էլ

շուրթերիդ ունենալով, թե՛ «Իմ պատմվածքների շատ կերպարներ հենց Լորից են»: Մի պահ կկանգնես այն հնաբույր տան մոտ, ուր ապրել է Բակունցը և որի կողքով գյուղամիջի աղբյուր ջրի է գնացել խոնարհ աղջիկը, և սիրտդ կճմվի, որ այդ տունը կիսափուկ է, այնինչ արժեր, որ մի ծածկ ունենար, կիսաքանդ պատերը վերաշարի կարոտ չմնային, և պատին էլ ցուցանակ ունենար՝ «Այս տանը 1915-16 թվականներին ապրել է հայ մեծանուն արձակագիր Ակսել Բակունցը»:

Կարծես թե շեղվում եմ: Չէ, սա դարձյալ Համո Սահյանի հետ է կապված. նա այս տան մոտ հաճախ է կանգնել՝ իր մանկության օրերի տպավորությունը վերհիշելով. «Ես տեսա իմ երազած մարդուն՝ Ալեքսանդր վարժապետին... Երկու բան լավ եմ հիշում. մեկ այն, որ մտածում էի, թե ինչ ու՞մ է Ալեքսանդր վարժապետը, որ նրա առաջ շենաթաղցիները ծախում էիս: Մեկ էլ այն, որ նախանձից պայթում և արտասուքից խեղդվում էի, թե ինչո՞ւ նրա ձիու սանձը ես չեմ բռնել, այլ իմ դասընկեր Համարձումը»:

Մինչ Լոր գնալը Համո Սահյանի երկու տողերի «կռիվ» էր իմ մտքում՝ իրար հետ վիճում էին «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս» և «Մամուռներում կորան արահետ ու անուն»: Թե որը պիտի հաղթեր, ամենաստույգ պատասխանը ես ստացա հենց Լորում: Մի գարմանալի հրճվաթե ունեցա այդ գյուղում, երբ գարմանաթու ու հիացմունքս բերեցին դպրոցի աշակերտները, նրանց ուսուցչուհի (նաև դպրոցի տնօրեն) Լիաննա Գրիգորյանը, ովքեր Համո Սահյանի քնարերգության մի այնպիսի ներկայացում տվեցին, որ հանպատրաստից արված գրական-երաժշտական այդ ցերեկույթը պրոֆեսիոնալ ասմունքողների նախանձը կշարժեր: Պատասխանս իմացա նաև Լորում՝ Համո Սահյանի թանգարանի տնօրեն Քնքուշից, ով ժամերով կարող է խոսել Սահյանի մասին՝ հընթաց ցուցադրելով թանգարանի այս կամ այն նմուշը: Եվ պոետի այն երկու տողերի «կռիվ» իմ մեջ ավարտվեց. «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս» տողի հաղթանակով: Հաղթանակ, որ եկավ դպրոցի այն աշակերտների միջոցով՝ նրանց ասմունքով, համապարտության պոետի քնարերգությանը տիրապետողի նրանց շնորհիվ, նրանց հրաշալի պահվածքով:

...Լոր գյուղում իմ նկարահանումները լրացումը եղան «Իրիկնահացի հրավեր» ֆիլմի, որը նոր անվանում ունեցավ՝ «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս» և ցուցադրվեց Լոր գյուղի միջնակարգ դպրոցի դահլիճում՝ հերոսներ ունենալով դպրոցի այդ սաներին:

ՀՈՂՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՍԱՐԻՆ

Համո Սահյանն իմ հուշերում



ՍՊԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արցախի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ

Ամեն անգամ Համո Սահյանի ստեղծագործության վերաբերյալ գրույց բացվելիս իմ հուշերի ծփանքներում փայլում են հայ գրողների մի շարք անմոռաց անուններ, որոնց թվում ոսկյա տառերով՝ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ:

Ոսկյա տառերով՝ այն առումով, որ Հ. Սահյանը պատկերավոր խոսքի մի նոր ծիածանով զարդարեց բազմադարյա մեր քնարերգության երկնակամարը:

Համո Սահյան պոետի անունն ինձ ծանոթ էր դեռևս իմ դպրոցական տարիներից: Լավ հիշում եմ... Սովորում էի 8-րդ դասարանում: Չանգը հնչելուն պես անհամբեր սպասում էինք հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արև Թամրազյանին, ով ոչ միայն հեղինակավոր մանագետ էր, այլև աստվածահաճ ասմունքող:

Սեպտեմբերյան առաջին օրերից մեկում դասարան մտավ իր Արև անվանը վայել մեր պաշտելի ուսուցչուհին:

Աստվածահաճ ժպիտը շուրթերին նա բարևեց մեզ ու սկսեց դասը...

– Սիրելի աշակերտներ, այսօրվա մեր դասի թեման նվիրված է բանաստեղծ Համո Սահյանի ստեղծագործությանը: Համո Սահյանը մի նոր գերասող է մեր բազմադարյա քնարերգության երկնակամարում: Խնդրում եմ լսե՞ք ու շարիր...

33 հոգուց բաղկացած մեր դասարանը անհամբեր սպասեց պաշտելի ուսուցչուհու իմաստալից խոսքին՝ համեմատած սահյանական քնարերգության փիլիսոփայական նրբերանգներով:

Անցան տարիներ... 1949-ին ընդունվեցի Բաբվի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժին:

Այդ տարիներին Բաբվում գործում էին տասնյակ հայկական միջնակարգ դպրոցներ: Նրանցում դասավանդող ուսուցչական կոլեկտիվները կազմակերպում էին գրական երեկոներ, հանդիպումներ անվանի արվեստագետների հետ: Բաբվում էին ապրում ու ստեղծագործում Սամվել Գրիգորյանը, Մարգար Դավթյանը, Վարսենիկ Աղայանը, Էմմա Պետրոսյանը, Ոստիկ Կարակոչյանը, Գևորգ Օհանյանը, Վլադիմիր Աբրահամյանը, Էլմիր Մկրտչյանը, տողերիս հեղինակը և այլք:

Բանաստեղծների շարքում արդեն մեծ համբավ էր վաստակել Համո Սահյանը: Բնավորությամբ համեստ, զրույցների մեջ իմաստուն ու արտաբուխ էր Համո Սահյանը: Հաճախ էին լույս տեսնում նրա ժողովածուները: Պոեզիայի սիրահարները ուշի-ուշով հետևում էին նրա նոր գրքերին, ակտիվորեն մասնակցում դրանց քննարկումներին: Հոգու ջերմությամբ էինք սպասում սահյանական պոեզիայի երեկոներին: Յուրաքանչյուրս արդեն մեր անձնական գրադարաններում ունեինք Սահյանի ժողովածուները:

Հպարտությամբ նշեմ, որ իմ հարուստ գրադարանի զարդը Սահյանի ընտրանիներն են: Դրանցից օգտվում էին նաև իմ ուսանողները:

Կարևոր եմ համարում նշել, որ Համո Սահյանը Բաբվում ունեցել է լրջախոհ ընկերների մի մեծ խումբ, որի մեջ աչքի էր ընկնում գրականագետ-մանկավարժ Գուրգեն Աստուխյանը: Բառի բուն իմաստով նա Հ.Սահյանի քնարերգության պաշտողն էր: Նրա ղեկավարությամբ կազմակերպում էինք Սահյանի նոր գրքերի քննարկումներ: Հ.Սահյանը դարձել էր նաև հայկական դպրոցների գրականության ուսուցիչների երազած երգիչը:

Լավ հիշում եմ: Մի օր Բաբվի ման-

«ԻՆՁ ԿՐԻՇԵՆ ԱՍԵՆ ԱՆՉԱՍ ՕՐԸ ԲԱՑՎԵԼԻՍ»

Լորը՝ «... Իմ կանաչ Լորը, // Իմ փառավորը, իմ բախտավորը»

Երեսուն տարի առաջ՝ 1993 թ. հուլիսի 17-ին վախճանվեց Յամո Սահյանը...



Հուլիսի 21-ին հայ հասարակությունը վերջին հրաժեշտը տվեց մեծ բանաստեղծին: Հանգուցյալի դագաղը դրված էր Ալ. Սպետրիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի ճեմասրահում:

Այնուհետև սգո թափորը շարժվեց դեպի Կոմիտասի անվան զբոսայգի, որտեղ կայացավ սգո հավաք: Խոսք ասացին ՀԳՄ նախագահ Վահագն Դավթյանը, արձակագիր Հրանտ Մաթևոսյանը, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, Սիսիանի շրջափոխի նախագահ Սամվել Սահակյանը, ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը:

Ընթերցվեցին ստացված ցավակցական հեռագրերը՝ Վրաստանի Գեո Նախագահ Էդուարդ Հևարդնաձեից, Վրաստանի և Ռուսաստանի գրողների միություններից, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանից, Յամո Սահյանի ծննդավայր Լոր գյուղի բնակիչներից:

Եվ սգո մեղեդիների հնչյունների ներքո մեծ բանաստեղծի աճյունն իջեցվեց գերեզման:

* * *

Յամո Սահյանի ստեղծագործությունների ակունքը Սյունիքն է, աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր դիտակետն էլ Սյունիքն է: Ինքն էր

ասում՝ «...Եթե նկատի ունենք պատմական Սյունիքը, ապա նա միակ և հիմնական ակունքն է, ինձ համար աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր և հուսալի դիտակետը: Նաև այն հավելյալ իրականությունը, որ պահպանել է իմ ինքնությունը այս խառն ու խորթին աշխարհում»:

Շատ էր սիրում իր ծննդավայրը՝ «Լուսնի վրա՝ տուն ու այգի, Մարտի վրա գահ ունենա, Ուր էլ մնա, ինչ էլ անի, Համո Սահյանն իր Լորինն է»:

2023 թ. հուլիսի 17-ին «Այոնյաց երկիր» ստեղծագործական խումբն այցելեց Լոր՝ Յամո Սահյանի հայրական տուն. Սամվել Ալեքսանյանն էր, ճանաչված մտավորական և լրագրող Գագիկ Հայրունյանը տիկնոջ՝ Չինա Դոլինյանի հետ:

Գյուղ հասանք Դարբասի ձորով ու հիշեցինք, թե ինչ էր զգում բանաստեղծն այդ վայրերը մտաբերելիս՝ «Երբ ամեն անգամ բացվում է օրը, Մտքով մտնում եմ Դարբասի ձորը... Կարծես լսում եմ մորս օրորը... Երբ ստասփում է ծանոթ բարդին: Դեմն փովում է իմ կանաչ Լորը, Իմ փառավորը, իմ բախտավորը...»:

Տիկին Յամովիկը՝ բանաստեղծի բույրն այլևս չկա, ով նման առիթների դեպքում գալիս էր Դարբասից և միանում «Այոնյաց երկիր» ստեղծագործական խմբին:

Տուն-թանգարանում էին «Սիսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը, ճանաչված գեղանկարիչ Աշոտ Ավագյանը, Լորի վարչական ղեկավար Դավիթ Առուստամյանը:

Տուն-թանգարանում մեզ դիմավորեց թանգարանի տասը տարվա տնօրենը՝ Զևարուզ Հարությունյանը, ով չափազանց դրական տպավորություն



թողեց: Նախ, ինչպես տեսանք, տուն-թանգարանը պահպանվում է պատշաճորեն, իսկ ինքը՝ տնօրենը, թանգարանի ցուցադրությունները ներկայացնելիս հաճախ էր իր խոսքը համեմուտ Յամո Սահյանի բանաստեղծություններով:

Տեղեկացանք, որ վերջին տարիներին բազմապատկվել է տուն-թանգարան այցելողների, Յամո Սահյանի պոեզիայով հետաքրքրվողների թիվը, թեև լուսահոգի Շչորս Դավթյանից հետո որևէ ուշագրավ ձեռնարկ չի հրատարակվել Յամո Սահյանի գրական ժառանգությունից:

Տուն-թանգարանում, բնականաբար, խորատուզվեցինք սահյանական պոեզիայի օվկիանոսի մեջ, հիշեցինք նրա առանձին ստեղծագործություններ, որոնք հայ մարդու ուղեկիցն են լինելու հավերժի ճանապարհին:

Մեր գրականագետներից ու գրական մեծերից շատերն են այդ հանգամանքը փաստել:

Նման գնահատողներից մեկի՝ սփյուռքահայ գրող Անդրանիկ Ծառուկյանի խոսքը. «Յամո Սահեան... Յայրենիքի հողն է, ջուրն է, թոնիրին հացը, ծառերուն սոսափը, հովերուն, ջուրերուն, յոզնած մարդուն հառաչը, սիրող զույգին ծիծաղը, մահացելին յիշատակը, նորածինին ճռուղիները: Ինքը, միևնաչյա, միակ, միայնակ՝ ամփոփված հայրենիք մըն է, միանձնացած հայութիւն մը...»:

Այնուհետև այցելեցինք Յամո Սահյանի ծնողների՝ Սահակ դայու և Գայանե մայրիկի շիրմին:

Գերեզմանում ավանդական կարգով ոգեկոչեցինք նրանց հիշատակը, իսկ Քնբուշ Յարությունյանն արտասանեց բանաստեղծի գործերից մեկը՝ «Դագադիս համար դուք ծառ չկտրեք».

*Դագադիս համար
Դուք ծառ չկտրեք:
Ինձ մի հին կոճղի
Փչակում դրեք,-
Մնտառի եզրին,
Բլուրի վրա:
Որ գնամ գտնեմ
Արմատը նրա,
Որ գնամ նրա
Արմատը գրկեմ...
Եվ ի՞նչ իմանաս,
Գուցե թե մի օր
Դեպի լույս աշխարհի
Մի շյուղ արձակեմ:*

Գերեզմանում էինք, երբ մայրաքաղաքից հեռաձայնեց բանաստեղծի որդին՝ Նաիրի Սահյանը և օրվա առիթով մտքեր փոխանակեց Դավիթ Առուստամյանի և Սամվել Ալեքսանյանի հետ:

Այնուհետև այցելեցինք Լորի հին դպրոցի շենք, որտեղ դասավանդել է Ակսել Բակունցը, որտեղ կրթություն է ստացել Յամո Սահյանը, որ կառուցել են



Գասպար Տեր-Մարգարյանը՝ Կապանի Շրվեհանց գյուղից և իր կինը՝ Շուշանիկ Տեր-Մարգարյանը՝ Լորից:

Այցելեցինք մեծ բանաստեղծի սիրելի ուխտավայր՝ Ծառու Սուրբ Յովհաննես եկեղեցի (Լորի և Շենաթաղի միջևամասում), որը ծառի ու ջրի հեթանոս պաշտամունքի հետ կապված նշանավոր ուխտատեղի է եղել առնվազն Ծղուկ-Սիսիան գավառում:

Այցելեցինք գյուղի մուտքի մոտ գտնվող Սպիտակ խաչը կամ Լորիկի խաչը. 1271 թ. կանգնեցված այդ մահարձանը պահպանվել է սկզբնական տեսքով՝ չկորցնելով իր հմայքը:

Մեր վերջին կանգառը Դարբաս գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու մերձակայքն էր, որտեղ Յամո Սահյանի «Իմ պապը» բանաստեղծության մոտիվներով՝ մեծ սյունեցի Գեորգի Բաղդասարյանի ձեռամբ կերտված քանդակն է, որ նաև գերդաստանի նահապետի՝ Խաչի-

պապի կերպարի ընկալումն ունի:


Լորից վերադարձանք հարստացած, գոտեակրված և համոզված՝ հայ ժողովուրդը ելնելու է ներկա ծնկաչոք վիճակից, հայոց աշխարհի ամենահայոց երկրամասը՝ Արցախը, շարունակելու է երթը դեպի գալիք:

Յամո Սահյանն էլ էր մեր վաղվա օրվա հավատավորը, այլապես Յայրենիքի խորհրդանիշ բանաստեղծը վստահորեն չէր հռչակի՝

*«Եթե մինչև անգամ մեջքս ծալված լինի,
Եթե մինչև անգամ ոտքս վառված լինի,
Եվ ճակատիս հազար հողմի հարված լինի,
Մինևնայն է, կգամ, ուր էլ լինեմ, կգամ:
Գետնի տակից կգամ,
Մի հեռավոր, անհայտ մոլորակից կգամ...»:*

«ԻՆՁ ԿՐԻՇԵՆ ԱՍԵՆ ԱՆՈՍՄ ՕՐԸ ԲԱՅՎԵԼԻՍ»

**Համո Սահյանը 1971թ. հոկտեմբերի 27-ին
Գորիսի գավառագիտական թանգարանին
նվիրեց բանաստեղծությունների ձեռագրեր.
դրանց մի մասը՝ ստորև**



x x x
 Այս հարստացողներն աշուղի և աշուղի
 Աշուղի և աշուղի հարստացողներն:
 Այս սուրճը և սուրճը զարգացող աշուղի
 Աշուղի և աշուղի հարստացողներն:
 Չարտիկ հաջողակ հարստացող աշուղի
 Մարտիկ և աշուղի հարստացողներն:
 Արտիկ, աշուղի, արտիկ և աշուղի
 Մարտիկ և աշուղի հարստացողներն:
 Չարտիկ, հարստացող, արտիկ և զարգացող
 Աշուղի և աշուղի հարստացողներն:

Ներշնչող
 Այս զարգացող աշուղի զարգացող
 Օրտիկի արտիկ և զարգացող,
 Մարտիկ-հարստացող աշուղի օրտիկի
 Օրտիկ և զարգացող աշուղի և զարգացող:
 Արտիկի աշուղի, արտիկի աշուղի
 և զարգացող աշուղի արտիկի աշուղի,
 Չարտիկ - զարգացող աշուղի զարգացող
 և զարգացող աշուղի և զարգացող:

Ընդհանուր անունը եմ
 Դ՞նք արժանացնո՞ւմ...
 Քարտիկ ի՞նչ եմ
 Դ՞նք արժանացնո՞ւմ:
 Անբանական մ բնույթ
 Կարծիքների արժանի
 Պարտիկ ի՞նչ եմ
 Դ՞նք արժանացնո՞ւմ:
 Դ՞նք անարժանացնո՞ւմ...
 Անբանիկ ի՞նչ եմ
 Դ՞նք անարժանացնո՞ւմ:
 Անարժան մ բնույթ
 Կարծիքների արժանի
 Արժանի ի՞նչ եմ
 Դ՞նք անարժանացնո՞ւմ:
 Արժան եմ: Անարժան եմ:
 Ընդհանուր անունը եմ:

Վերջնական պլան
 Կարծիքների արժանի
 Դ՞նք անարժանացնո՞ւմ, կարծիք եմ արժանի:
 Բանիկ արժանի, կարծիք արժանի մ արժանի,
 Կարծիք արժանի, կարծիք եմ արժանի:
 Անբանիկ անբանական անբանական անբանիկ,
 Կարծիք արժանի, կարծիք արժանի եմ արժանի:
 Գճար Գճար արժանի ի՞նչ անբանիկ,
 Անբանական արժանի կարծիք եմ արժանի:
 3

Վերջնական անունը
 Դ՞նք արժանացնո՞ւմ...
 Կարծիքների արժանի
 Դ՞նք արժանացնո՞ւմ:
 Անբանական մ բնույթ
 Կարծիքների արժանի
 Պարտիկ ի՞նչ եմ
 Դ՞նք արժանացնո՞ւմ:
 Դ՞նք անարժանացնո՞ւմ...
 Անբանիկ ի՞նչ եմ
 Դ՞նք անարժանացնո՞ւմ:
 Անարժան մ բնույթ
 Կարծիքների արժանի
 Արժանի ի՞նչ եմ
 Դ՞նք անարժանացնո՞ւմ:
 Արժան եմ: Անարժան եմ:
 Ընդհանուր անունը եմ:

Վերջնական անունը
 Կարծիքների արժանի
 Դ՞նք անարժանացնո՞ւմ, կարծիք եմ արժանի:
 Բանիկ արժանի, կարծիք արժանի մ արժանի,
 Կարծիք արժանի, կարծիք եմ արժանի:
 Անբանիկ անբանական անբանական անբանիկ,
 Կարծիք արժանի, կարծիք արժանի եմ արժանի:
 Գճար Գճար արժանի ի՞նչ անբանիկ,
 Անբանական արժանի կարծիք եմ արժանի:
 3

«ԻՆՁ ԿՐԻՇԵՆ ԱՄԵՆ ԱՆՉԱՍ ՕՐԸ ԲԱՅՎԵԼԻՍ»

Համո Սահյանի բանաստեղծական գլուխգործոց «Պապի» հերոսը՝ բրոնզաձուլ արձանի տեսքով

Համո Սահյանի ստեղծագործական ակունքները, հիրավի, իր բնաշխարհում են: Նրա գրի ու գեղագիտության հիմքերն իր լեռների ու ձորերի մեջ են:

Սահյանական բնաշխարհի առանցքը Լորն ու Լորածորն են: Իսկ Լորածորը, որտեղ Սիսիանի տարածաշրջանի հինգ գյուղերն են՝ Դարբաս, Լոր, Գետաթաղ, Շենաթաղ, Լծեն, մի ուրիշ ձոր էլ ունի՝ Դարբասի ձորը, որտեղ հավերժորեն փռված է Սյունյաց աշխարհի հնամենի գյուղերից մեկը՝ Դարբասը:

Դեռևս 1953թ. Համո Սահյանը երկու բանաստեղծություն է նվիրել Դարբասին ու համանուն ձորին՝ «Դարբասի ձորը» և «Երբ ամեն անգամ»:

Դա, իհարկե, երիցս խոսում է Համո Սահյանի՝ իր մայր գյուղի հարևանությամբ գտնվող Դարբասի, Լորածորի այդ հատվածի հանդեպ ունեցած սիրո մասին: Բայց այդ սերն ու վերաբերմունքը փոխադարձ էին: Դարբասում նույնպես բանաստեղծին համարել և համարում են իրենց զավակը, հպարտանում նրանով: Եվ ինչպես Լորում, Դարբասում նույնպես, շատերն են Համո Սահյանի մասին խոսելիս հիշում նրա գործերը և հանապարաստից արտասանում:

Դարբասում, պարզվում է, իսկարկելի է ոչ միայն ինքը՝ բանաստեղծը, այլև նրա կերպարներից շատերը՝ իրենց խոհակախոսությամբ, իմաստնությամբ:

Եվ դրանցից մեկը, անշուշտ, մեր գրականության լավագույն կերպարներից մեկն է, Համո Սահյանի քնարերգության կարևոր գործող անձանցից մեկը՝ Խաչիպապը կամ պարզապես Պապը:

Պապը ոչ միայն գերդաստանի ևա-հապետն է, այլև աշխատասիրության, բարության և ազնվության խորհրդանշանը:

Այդ թեմայով գրված գործերից լավագույնը, անտարակույս, «Պապը» բանաստեղծությունն է, որը նաև Համո Սահյանի գլուխգործոցներից է, դասա-

կան արժեքի վերածված ստեղծագործություն:

Պապը երևում է նաև «Վերադարձ», «Եվ ի՞նչ իմանա», «Չտեսնեի» գործերում, «Դադձի ծաղիկ» ժողովածուում:

Առաջին հայացքից Համո Սահյանի պապն իր նմաններից ոչնչով չտարբերվող ևսահայեցական մի կերպար է.

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը:
Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է
Եվ բոլոր կամերը
Մեն-մենակ քարել է...

Միևնույն պապը, կարծեք, կեցողության չափանիշ է դառնում բոլորի և բոլոր ժամանակների համար:

Եվ քանի որ ինքն էլ բնության մի մասն է՝ որպես մի բուռ արդար հող, խառնվում է իր գոյության հազարամյա պատմությանը:

Բանաստեղծությունն ավարտվում է մարդու փոխակերպության և այլագոյության փիլիսոփայությամբ.

Մի օր էլ, երբ հանկարծ
Ծաղկել են ծնկները,
Չարմանքից քարացել,
Ամոթից շիվներ է:
Թողել է նա մահը
Եվ շունչը պահել է,
Եվ հետո քրտինքը
Ճակատին պառել է:
Եվ պապը ակոխում
Պատկել ու քնել է,
Խառնվել այն հողին,
Որ իրեն սնել է:

Եվ ահա ոչ միայն Դարբասում ու Սիսիանում, այլև ամբողջ Սյունիքում հայտնի Ստեփանյան գերդաստանի զավակներ Արամ և Արմեն Ստեփանյանների մեջ միտք է հղացել՝ բանդակի տեսքով հավերժացնել պապի կերպարը՝ հիմքում դնելով Համո Սահյանի «Պապը» բանաստեղծությունը:

Շատ հետաքրքիր և աննախադեպ

այդ գաղափարը բարձր մակարդակով կյանքի է կոչել բանդակագործ, Երևանի գեղարվեստի ակադեմիայի բանդակի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, վաստակավոր նկարիչ, ՀՀ Նախագահի և պետական մրցանակների դափնեկիր Գեոիկ Բաղդասարյանը:

Արդյունքում բարձրարժեք ու բարձրաճաշակ մի գործ, բրոնզաձուլյալ մի արձան (ճարտարապետ՝ Նուրե Պետրոսյան): Քանդակն ավելի քան բնական է, ինչպես բնական է Համո Սահյանի բանն ու բանը:

Գեոիկ Բաղդասարյանը Համո Սահյանի մտերիմներից էր և նրա արվեստի երկրպագուներից: Համո Սահյանի մի քանի փոքրածավալ բանդակներ է ստեղծել, հեղինակն է նաև բանաստեղծի հուշարձանի, որ 2004թ. տեղադրվեց Սիսիանի կենտրոնական հրապարակում:

Մեզ հետ զրույցում ահա թե ինչպես ներկայացրեց պապի հուշարձանը Գեոիկ Բաղդասարյանը. «Դասական ոճի բանդակ է, ֆիգուրը՝ բրոնզաձուլյալ, 2,5մ բարձրությամբ: Պատվանդանը բազալտից է՝ 3մ x 3մ x 50սմ չափերով: Պապը հիշեցնում է ծառ՝ արմատներով հայրենի հողի մեջ ընկղմված, որը հավերժորեն կենդանի է: Կերպարը լրացվում է դեռահաս աղջկա բանդակով, ով գրկին գառ ունի. դա մաքրության, անմեղության, ազնվության, նոր ու գալիք սերունդների խորհրդանշանն է: Մեծ իմաստով դա հայի հավերժության խորհրդանշանն է, մեր հող ու ջրի տիրոջ խորհրդանշանը»:

Պապի արձանի մասին մեր պատկերացումն ամբողջացնում է Արամ Ստեփանյանը. «Այս հողը մեզ են ավանդել մեր նախնիները, մենք պետք է արժանապատիվ տեղը լինելք մեր երկրի և նույն կերպ փոխանցելք գալիք սերունդներին: Պապը՝ հայրենի հողից սկիզբ առած, այս հողի տերն է, իսկ մաքրության և ապագայի խորհրդանշանը աղջիկը նոր սերնդի կերպավորումն է: Եվ այդ ամենը միասին հայի ու Հայաստան աշխարհի հավերժությունն են արտացոլում»:

Համո Սահյանի որդին՝ Նաիրի Սահյանը, ով նույնպես մասնակցում էր տոնակատարությանը, ուղիղ կապ չի տեսնում «Պապը» բանաստեղծության և ստեղծված բանդակի միջև (թեև հիմքում, նրա կարծիքով, այդ բանաստեղծությունն է ընկած), բայց և բրոնզաձուլյալ պապի մեջ յուրաքանչյուր ոք, արդարացիորեն, իր պապին է տեսնում:

Ըստ Նաիրի Սահյանի. «Պապի արձանն ինձ շատ դուր եկավ, հրաշալի գործ է: Մտահղացումը շատ լավն է, գործն էլ հիանալի է արել Գեոիկ Բաղդասարյանը: Արձանը խոր իմաստ ունի. դա մեծերի, ավագ սերնդի հանդեպ



հարգանքի արտահայտություն է, ինչը հիմա մեզանում պակասում է»:

Պապի բրոնզաձույլ արձանը տեղադրվել է Դարբասի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու բակում, որտեղ հոկտեմբերի 4-ին հավաքվել էին հարյուրավոր մարդիկ Սիսիանից, Գորիսից, Կապանից, մարզի գյուղերից ու մայրաքաղաքից:

Ողջույնի և օրհնության խոսքով հանդես եկավ Դարբաս համայնքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու և հարակից յոթ գյուղական համայնքի հոգևոր հովիվ, արժանապատիվ տեր Ընծա քահանա Միրզոյանը:

Ելույթներ ունեցան Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Ստեփանյան գերդաստանի ներկայացուցիչ Արմեն Ստեփանյանը, Դարբասի համայնքի ղեկավար Մայիս Միրզոյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Հչորս Դավթյանը, ուրիշներ:

Արձանի բացման արարողությունը վերածվեց մեծ ու հաճելի տոնակատարության, որին առանձնակի շուք հաղորդեցին Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի երգի ու պարի խմբակների սաների ելույթները:

Եկեղեցուն կից գործող բրուտագործության, նկարչության և ուլունքագործության խմբակների սաներն էլ ցուցադրեցին իրենց լավագույն ստեղծագործությունները:

Ի դեպ, կիրակնօրյա դպրոցը ևս գործում է Ստեփանյան եղբայրների հովանավորությամբ:



Չանդեը, ինչպես և սպասվում էր, չէր կարող լինել առանց ասմունքի. սահյանական պոեզիայի մի շարք գործեր ներկայացրին Լորի դպրոցի աշակերտները:

Չուշարձանի բացման, այդ առիթով հայրենի բնօրրանին ու ամբողջ Լորածորին տոնական օր պարգևած Ստեփանյան գերդաստանին վերստին

երախտագիտության խոսք ենք հղում:

Պապի հուշարձանի ստեղծումը այդ գերդաստանի հերթական նախաձեռնությունն է: Բայց առաջինը՝ ընտանիքի ավագի՝ Ներսես Ստեփանյանի մահվանից հետո: Եվ պապի՝ բրոնզաձույլ արձանի տեսքով վերադարձով, կարծեք, յուրօրինակ սեր և պատկառանք է արտահայտ-





Վրում Նաև Լերսես Ստեփանյանի, գերդաստանի մյուս մեծերի հիշատակի հանդես:

Այդ գերդաստանի մտքով ու շանքով է կառուցվել Դարբասի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին (Նավակատիքը տեղի է ունեցել 2010թ. մայիսի 5-ին):

Լերսես Ստեփանյանի և որդիների

Ներդրումով է 2012-ին վերակառուցվել գյուղի մերձակայքի միջնադարյան կամուրջը՝ Արզվանի կամուրջը:

Այդ գերդաստանի ներդրումով են 2010թ. Շամբում գործարկվել պահածոների և ջրերի գործարանները, որոնք ոչ միայն հանրապետության ամենաարդիական ձեռնարկությունների շարքում են, այլև մոտ 100 հոգու համար կայուն

աշխատատեղ են, ինչը մեծ նպաստ է Լորածորի գյուղերի բնակչության զբաղվածության խնդրի լուծման, ինչպես և տարածաշրջանի գյուղերում աճեցվող պտղի ու բանջարեղենի մթերման գործում:

ՍԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱԼ
17 ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 2015 Թ.
«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» N27

ՀՈՂՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՅԱԳՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՄԱՐԻՆ

Համո Սահյանն իմ հուշերում

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 30

կավարժական ինստիտուտի Հայոց լեզվի և գրականության ամբիոն է ներկայանում Շամբայու շրջանի Մադրաս գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Սերգեյ Էֆենդիյանը, խնդրում, որ կազմակերպենք հանդիպում Համո Սահյանի հետ իրենց դպրոցում: Հաճույքով կազմակերպեցինք այդ հանդիպումը: Ցնծում էր դպրոցի աշակերտական կուլեկտիվը: Չորս հազար բնակիչ ունեցող այդ պատմական գյուղի դպրոցն ուներ մոտ հազար աշակերտ:

Հանդիպումն Յ.Սահյանի հետ դարձավ հայ դարավոր պոեզիայի և արժանապատիվ ժառանգության ծիսաձևաված տոն: Աշակերտների մի զգալի խումբ հայոց լեզվի հմուտ շեշտադրությամբ ու առոգանությամբ ներկայացրեց ականավոր բանաստեղծի մի երգաչափ՝ հյուսված հայաբնույթ թեմաների սահյանական լեզվամտածողության

երանգներով:

Հանդիպման առաջին խոսքը պատկանում էր ինձ: Ճիշտն ասած, հուզված էի, որովհետև պետք է բնութագրեի Մեծն Համո Սահյանի պոեզիան: Առ այսօր գոհունակությամբ եմ հիշում այն ելույթս, որ ունեցա մեր հնամյա դպրոցներից մեկում:

Ելույթս ավարտեցի Մեծն Համո Սահյանին ընծայած իմ բանաստեղծությամբ, որ բերում եմ ամբողջությամբ:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ
«Արտերս, արտերս վարած, Պարտերս մարած մեռնեի»:
Յ. Սահյան

*Համո Սահյան, թասդ բեր,
Տաղ ու սաքի ուժ ես Դու,
Մեծ արվեստի դասդ բեր,
Քեզ n^o վ կասի. - Հուշ ես Դու:
Խիղճը կորցրած աշխարհում
Անբիծ խղճի հերկ ես Դու,
Ինքդ սիրո մի գարուն,*

*Միրո անառ բերդ ես Դու:
Մարերի մեջ երկնահաս
Մի աստղագարդ սար ես Դու,
Փառքդ հասել է Պառնաս,
Մի խոսքաշեն դար ես Դու:
Ժողովրդիդ սերը սուրբ
Մրտիդ միջով է հոսում,
Համո Սահյան, էլ ինչո՞ւ
Պարտքի մասին ես խոսում:*

Ելույթիս ժամանակ մեկ-մեկ հայացքս ուղղում էի դեպի գրողների այն շարքը, որի կենտրոնում մեծ բանաստեղծն էր: Ավելորդ չեմ համարում ընդգծել ժամանակի այն թեւածող կարծիքը, որ Համո Սահյանը ստեղծագործական արմատներով գալիս է Գրիգոր Նարեկացու դպրոցից, ողջունում Լերսես Շնորհալյուն, խոնարհվում Նահապետ Քուչակի առջև, համբուրում Սայաթ-Նովայի աստղաշող աչքը, ստանում Խ.Աբովյանի, Դ.Վարուժանի, Ե.Հարենցի, Սիամանթոյի օրինանքն ու մտնում հայոց մշակույթի աստղագարդ տաճար:

Դպրոցի աշակերտների հետ հանդիպումն ավարտելուց հետո ուսուցչախումբում կազմակերպվեց մտքերի փոխանակում, որը դարձավ սահյանական պոեզիայի երանգներով համեմված սրտապարար միջոցառման շարունակություն:

«ԻՆՁ ԿԸՆՇԵՆ ՍՄԵՆ ԱՆՎԱՍ ՕՐԸ ԲԱՅՎԵԼԻՍ»

«Սյունյաց երկրի» հատուկ համարը՝ նվիրված բանաստեղծի 90-ամյակին

19-20, 2004թ., հովանավոր՝ «Կապանի ԼՅԿ» ՓԲԸ տնօրեն Մարտուն Ջակոբյան



«ԻՆՁ ԿԸՇԵՆ ԱՄԵՆ ԱՆՎԱՍ ՕՐԸ ԲԱՅՎԵԼԻՍ»

«Այունյաց երկրի» հատուկ համարը՝
նվիրված բանաստեղծի 100-ամյակին

N 6, 2014թ., հովանավորներ՝ «Գեղի գոլը» ՍՊԸ (խորհրդի
Նախագահ՝ Սուրեն Խաչատրյան), ՀՀ մշակույթի
Նախարարություն (Նախարար՝ Հասմիկ Պողոսյան), Սիսիանի
քաղաքապետարան (քաղաքապետ՝ Աղասի Հակոբջանյան),
«Արսեն և Ներսես» ՍՊԸ (Նախագահ՝ Ներսես Ստեփանյան):





«ԻՆՁ ԿՐԻՇԵՆ ԱՄԵՆ ԱՆՉԱՄ ՕՐԸ ԲԱՅՎԵԼԻՍ»



2 023թ. հոկտեմբերի 20-ին Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում տեղի ունեցավ մեծ բանաստեղծ Յամո Սահյանի կիսանդրու բացումը: Ելույթ ունեցան որդին՝ Նահրի Սահյանը, Յամո Սահյանի անվան գրադարանի տնօրեն Նազենի Արզումանյանը, ասմունքող Արսեն Ղազարյանը, ՀԳՄ 2-րդ քարտուղար Պետրոս Դեմիրճյանը, բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը, վշակույթի գործիչ Աղաս Թաղևոսյանը, հրապարակախոս, գրող Յովհաննես Պապիկյանը, և, իհարկե, կիսանդրու քանդակագործ Տիգրան Արզումանյանը: Ելույթներով հանդես եկան Յամո Սահյանի անվան դպրոցի եվ այլ դպրոցների սաներ՝ կատարելով մեծ պոետի և՛ բանաստեղծությունները, և՛ նրա խոսքերով գրված երգերը: Ծաղկաշատ ու խնկաբույր էր մեծ պոետի կիսանդրու բացման արարողությունը:

**Երևանի
Կոմիտասի
անվան
պանթեոնում
կանգնեցվեց
Համո Սահյանի
կիսանդրին**

ՇԱՄԱՐԻ ՖՈՏՈՒՄԸ



Գորիս, Սերո Խանզադյանն ու Համո Սահյանը գորիսեցի մամիկների հետ



Մի ակնթարթ 1986 թ. հուլիսին Մեղրիում կայացած արվեստի և գրականության փառատոնի շրջանակում ընթերցողների հետ հանդիպումից: Գրողների հետ է ՀԿԿ շրջկոմի 1-ին քարտուղար Ալբերտ Հարությունյանը



Մեղրիում 1986թ. հուլիսին արվեստի և գրականության փառատոնի օրերին



ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՒԼԵՐՈՍԸ

Բանաստեղծի 70-ամյակը նշվեց Միսիանում





Համո Սահյանի տուն- թանգարանը

Գտնվում է Այուրիքի մարզի Սիսիանի
Լոր գյուղում: Նախագծված է ճարտա-
րապետներ Ռազմիկ Մանուկյանի և
Տիգրան Մանուկյանի կողմից:
Բացվել է 2016 թվականի ապրիլի 14-
ին՝ բանաստեղծի ծննդյան օրը:

Այդտեղ գտնվում է նրա գրասեղանը,
որի վրա աշխատել է 10 տարուց
ավելի, ժամացույցներ, լուսանկարներ,
մակագրված նվեր ստացած գրքեր:
Տուն-թանգարանի բակում կանգնեցվել
է Համո Սահյանի կիսանդրին: ●



Լոր գյուղն առավել հայտնի դարձավ որպես մեծ քնարերգու Ջամո Սահյանի ծննդավայր: Գյուղի մուտքն ազդարարում է խաչարձան-մատուռը, որին տեղացիները Սպիտակ կամ Լորիկի խաչ են անվանում (1271թ.), որը կառուցել է Լորիկ իշխանը՝ որպես իր հոր ու մոր մահարձան: Գյուղի «մեյդանում»՝ Սուրբ Գեորգ եկեղեցին է:



Բարի աչքով նայես, Աստվա՛ծ, Իմ այս մի բուռ Հայաստանին

Համո Սահյան

Հայաստա՛ն, անուկ տալիս,
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալևոր կամուրջի հոնքին
Ծիծառի մի բույն եմ հիշում,
Թեքված մի մատուռ եմ հիշում
Եվ բերդի տեղահան մի դուռ,
Ավերակ տաճարի մի վեմ
Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Հիշում եմ լքված մի թոնիր,
Բերանին մամռոտած մի խուփ,
Մամռոտած որմի խոռոչում
Մասրենու վարսաթափ մի թուփ,
Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խոռված մի ցուպ, –
Եվ հեռվում ինչ-որ ուշացած
Ձիերի դոփյուն եմ հիշում:

Անուկ տալիս

Արևոտ մի սար եմ հիշում,
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու –
Շուրթերին հայրեն ու տաղիկ,
Ցորենի կանաչ արտի մեջ
Առվույտի կապույտ մի ծաղիկ
Եվ արտի եզրին՝ մենավոր
Մի բարդու շրշյուն եմ հիշում:

